

**ՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՆԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԵՐ



ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
(A COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES)

ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
(СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

20

Ծ°êðàä ²ðø. ²ԽÖ°²Ü
ø²î°Ü²Խ²ð

203



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES

203

ԵՐԵՎԱՆ
2019

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ:**

Խմբագրական խորհուրդ

Ա.Ա. Մելքոնյան (նախագահ), Կ.Հ. Խաչատրյան (նախագահի
տեղակալ), Ա.Ա. Խառատյան, Հ.Մ. Հարությունյան,
Ա.Ի. Շահնազարյան, Հ.Ղ. Մուրադյան, Հ.Կ. Սուրիասյան
(պատ. քարտուղար)

Редакционная коллегия

А.А. Мелконян (председатель), К.Г. Хачатрян (заместитель
председателя), А.А. Харатян, Г.М. Арутюнян, А.И. Шахназарян,
А.Г. Мурадян, А.К. Сукиасян (отв. секретарь)

Editorial board

A.A. Melkonyan (Chairman of the Board), K.H. Khachatryan
(Deputy Chairman of the Board), A.A. Kharatyan,
H.M. Harutyunyan, A.I. Shahnazaryan, H.Gh. Muradyan,
H.K. Sukiasyan (Executive Secretary)

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» տարեգրքի հերթական՝ 20-րդ համարում հրատարակվող հոդվածները սկզբնաղբյուրների, մանուկի հրապարակումների, հայրենի և համաշխարհային պատմագիտական գրականության լայն հենքի վրա լույս են սփռում Հայոց նորագույն և արդի ժամանակաշրջանի պատմության առանձին հիմնահարցերի վրա:

Տարեգրքում հրատարակվում են նաև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների խորհրդի 39-րդ գիտական նստաշրջանում կարդացված որոշ զեկուցումներ:

ՀԱՅԿ Շ. ՄԱՀՏԵՍՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ

**ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ
ԽՆԴԻՐԸ ԹԻՖԼԻՍՅԱՆ ԶԵՄՍՏՎԱՅԻՆ
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐՈՒՄ
(1917 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14–15)**

Բանալի բառեր` Անդրկովկասյան հատուկ կոմիտե, զեմստվո, վարչատարածքային բաժանում, նախագիծ, հանձնաժողով, կուսակցություն, բանաձև, քվեարկություն, նահանգներ, գավառներ:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո Անդրկովկասի վարչատարածքային բաժանման խնդիրը դառնում է ամենաքննարկվող հարցերից մեկը: Այդ հարցի լուծումից էր կախված երկրամասում զեմստվային հաստատությունների կազմումն ու ներմուծումը, բարեփոխումների իրականացումը, Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի ընտրությունների նախապատրաստումն ու անցկացումը, ազգային տարածքների սահմանագծումը և ազգային հարցի լուծումը: Թեմայի ուսումնասիրությունն այսօր արդիական է, քանի որ սահմանային վեճերը, որոնք ժառանգություն ենք ստացել Ցարական Ռուսաստանի վարած քաղաքականության արդյունքում, և որի հետևանքներից է տարածաշրջանում պարբերաբար կրկնվող ռազմական բախումները, հնարավոր կլինեն լուծել դեռևս 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո հարցի վերաբերյալ անցկացվող

խորհրդակցություններում, որոնցից առանձնահատուկ դեր ուներ 1917 թ. հոկտեմբերի 14–15-ին Թիֆլիսի զեմստվային խորհրդակցությունը: Այն նշանակալից էր ինչպես մասնակիցների քանակով և հասարակական-քաղաքական ուժերի ընդգրկվածության առումով, այնպես էլ խորհրդակցության առջև դրված խնդիրներով, որոնց լուծումով, փաստորեն, կփակվեր ազգային հարցի խնդիրն Անդրկովկասում: Այդ ամենի համար ստեղծվել էին բացառիկ պայմաններ, սակայն վրաց-թաթարական քաղաքական ուժերի ջանքերով հարցն այդպես էլ լուծում չի ստանում, ինչի մասին կներկայացնենք ստորև:

1917 թ. մայիսին Պետրոգրադում Համառուսաստանյան Ժամանակավոր Կառավարությանը կից կազմվում է Հատուկ խորհրդակցություն¹, որը պետք է զբաղվեր Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի գումարման նախապատրաստման աշխատանքներով: Խորհրդակցությանը մասնակցելու համար Ռուսաստանի բոլոր ազգություններից ներկայացուցիչներ են հրավիրվում Պետրոգրադ, որոնք մասնակցում են ինչպես Հատուկ խորհրդակցության, այնպես էլ Ժամանակավոր կառավարության ներքին գործերի նախարարությանը կից գործող տեղական ինքնակառավարման և կառավարման հանձնաժողովի նիստերի աշխատանքներին, որոնց ընթացքի վերաբերյալ պարբերաբար տեղեկացնում էին Անդրկովկասում Ժամանակավոր իշխանություն հանդիսացող Անդրկովկասյան հատուկ կոմիտեին²: Աշխատանքների ընթացքում պարզվում է, որ Անդրկովկասում անհրաժեշտ է սահմանների նոր բաժանում իրականաց-

¹ «Вестник Временного Правительства», Петроград, 25-ого мая, 1917, N 62 (108).

² «Համբաւաբեր», Թիֆլիս, յուլիսի 2, 1917, N 25:

նել³, առանց որի հնարավոր չէր լինի երկրամասում լուծել ազգային հարցը, ներմուծել տեղական ինքնակառավարման հիմնարկություններ, կատարել բարեփոխումներ և այլն: Այդ ամենի վերաբերյալ ևս հայտնվում է Անդրկովկասյան հատուկ կոմիտեին՝ շեշտելով, որ անդրկովկասյան գլխավոր ազգությունների ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողովի կողմից կազմվել է երկրամասի վարչատարածքային բաժանման նախագիծ, որը կուղարկվի տեղական իշխանությունների և հասարակական-քաղաքական ուժերի քննարկմանն ու եզրակացությանը ժամանակավոր կառավարության ներքին գործերի նախարարության կողմից հաստատվելուց հետո⁴:

Հանձնաժողովի աշխատանքներին հայ պատվիրակները ներկայացել էին բավականին պատրաստված, որոնք իրենց հետ ունեին արդեն պատրաստի վարչատարածքային բաժանման նախագիծ՝ կազմված ազգային սկզբունքի հիման վրա: Հատուկ, տեղական ինքնակառավարման և կառավարման հանձնաժողովների կողմից ընդունված նախագծի համար հիմք է հանդիսանում հայ պատվիրակների կողմից ներկայացված նախագիծը⁵: Այն հաստատվում է Ներքին գործերի նախարարության կողմից և ստանում «նախարարական ծրագիր» անվանումը⁶: Պետք է նշել, որ նախագիծն ամբողջությամբ հավանության է արժանանում հայ, վրացի, մասամբ նաև թաթար պատվիրակների կողմից, որոնք իրենց առարկությունները հիմնավորում էին ոչ թե ազգային սկզբունքի տեսանկյունից, այլ բացառապես տնտեսական և տեխնիկական գործոններով: Օրինակ՝ նրանք

³ «Հորիզոն», Թիֆլիս, 30 սեպտեմբերի, 1917, N 209:

⁴ «Тифлисский Листок», Тифлис, N 156, 15-го июля, 1917:

⁵ «Յառաջ», Բարու, 10 հոկտեմբերի, 1917, N 12:

ևս ընդունում էին վարչատարածքային նոր բաժանման անհրաժեշտությունը, սակայն առարկության շեշտը դնում էին ջրօգտագործման, քոչի, անտառտնտեսության և այլ հարցերի լուծման անհրաժեշտության վրա, որոնք ունեին տեխնիկական բնույթ և լուծելի էին: Հետագայում կտեսնենք, որ և՛ վրացիները, և՛ թաթարները կիրառարվեն իրենց իսկ կողմից ընդունված նախագծից: Նշյալ թեմայով ուսումնասիրությունները բավականին սակավ են, իսկ վրացի և ադրբեջանցի պատմաբաններն ու քաղաքական գործիչներն ընդհանրապես աշխատում են այս թեմային չանդրադառնալ՝ հուսալով, որ այն մոռացության կմատնվի: Սակայն արխիվային փաստաթղթերի առկայությունը ու դրանց ուսումնասիրությունը նոր լույս են սփռում հարցի վերաբերյալ: Որպես ասվածի ապացույց՝ բավական է նշել այն փաստը, որ այդ օրերին Պետրոգրադյան խորհրդակցության մասնակից, վրաց պատվիրակության և տեղական ինքնակառավարման ու կառավարման հանձնաժողովի վարչատարածքային բաժանման ենթահանձնաժողովի նախագահ Զուրաբ Ավալովն իր հուշերում չի անդրադառնում այդ ամենին՝ բավարարվելով միայն տողատակում ավելացնելով այն մասին, որ ինքը չի ցանկանում անդրադառնալ Պետրոգրադյան խորհրդակցություններին⁷, չնայած, որ հենց նրա գլխավորած պատվիրակությունն ընդունում է այդ նախագիծը:

Նախագծի ընդունումից հետո 1917 թ. օգոստոսի 13-ին Պետրոգրադում Կովկասի գործերի կոմիսար Վլադիմիր Նաբոկովն այն Անդրկովկասի հատուկ կոմիտեի քննությանն ու եզրա-

⁶ «Մշակ», Թիֆլիս, 13 օգոստոսի, 1917, N 170:

⁷ **Авалов З.**, Независимость Грузии в международной политике 1918–1921 гг.: Воспоминания. Очерки, Париж, 1924, с. 8.

կացությանն է ուղարկում՝ պատասխանի համար սահմանելով մեկամսյա ժամկետ⁸։ Ըստ ընդունված նախագծի՝ Արևելյան Անդրկովկասը բաժանվելու էր երկու մասի՝ թաթարական և հայկական։ Գանձակի նահանգը կազմվելու էր Ղազախ, Գանձակ, Զիվանշիր, Շուշի գավառների լեռնային հայաբնակ մասերից, Զանգեզուրի գավառն ամբողջապես՝ բացառությամբ Բարգուշատի հովտի մահմեդականներով բնակեցված մի քանի գյուղական հասարակությունների, որոնք միացվելու էին Կարյագինի թաթարական գավառին։ Կարյագինի հայկական մասը միացվելու էր Շուշիի գավառին։ Գանձակ քաղաքը բաժանվելու էր երկու մասի՝ հայկական և թուրքական, Երևան նահանգի Ալեքսանդրապոլի գավառը դառնալու էր առանձին նահանգ, որին միանալու էին Կարսի մարզի Կարսի և Կաղզվանի շրջանները, Թիֆլիսի նահանգի կազմում գտնվող Լոռու շրջանը, Ախալքալաքի գավառը, Ծալկայի հայկական գյուղերը։ Երևանի նահանգի մնացած գավառներում ևս նախատեսվում էր իրականացնել որոշ ներքին փոփոխություններ⁹։

Պետրոգրադից ստանալով նախագիծը՝ Անդրկովկասյան հատուկ կոմիտեին կից ձևավորվում է վարչատարածքային բաժանման հանձնաժողով՝ Նոյ Ժորդանիայի գլխավորությամբ, որի կազմում ընդգրկվում են ներկայացուցիչներ անդրկովկասյան երեք ազգություններից՝ յուրաքանչյուրից հինգական անձ¹⁰։ Հանձնաժողովի աշխատանքների ընթացքում նախագծի քննարկման և ընդհանուր եզրակացություն գալու հարցը ձգձգվում է վրաց-թաթարական ներկայացուցիչների անհիմն,

⁸ «Հորիզոն», 30 սեպտեմբերի, 1917, N 209:

⁹ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 375, ց. 1, գ. 69, թ. 3–20:

¹⁰ «Кавказское Слово», Тифлис, 29-ое августа, 1917, N 190:

մերժողական դիրքորոշման պատճառով, որոնք շատ հաճախ նույնիսկ չէին էլ ներկայանում նիստերի աշխատանքներին¹¹։ Ի վերջո, հոկտեմբերին ժամանակավոր կառավարության ճնշմամբ հարցին լուծում տալու համար հրավիրվում է Անդրկովկասյան հատուկ կոմիտեին կից զեմստվային խորհրդակցություն։

Անդրկովկասյան հատուկ կոմիտեի 1917 թ. հոկտեմբերի 11-ի նիստին վարչատարածքային բաժանման հանձնաժողովի անդամները կարճ ելույթներ են ունենում Անդրկովկասի վարչատարածքային բաժանման հարցի շուրջ ընթացող աշխատանքներին ընդհանուր համաձայնության գալու անհնարինության վերաբերյալ։ Որոշվում է վարչատարածքային բաժանման հանձնաժողովի անդամների առավել մանրամասն զեկույցները քննարկել հոկտեմբերի 14-ին կայանալիք զեմստվային խորհրդակցության ժամանակ, որն իր նշանակությամբ կլիներ ամենակարևորներից մեկն Անդրկովկասի ներքաղաքական կյանքում¹²։ Բացի Անդրկովկասյան հատուկ կոմիտեի և վարչատարածքային բաժանման հանձնաժողովի անդամներից, խորհրդակցությանը մասնակցելու համար հրավերներ են ուղարկվում ազգային խորհուրդներին, քաղաքական կուսակցություններին, երկրային խորհուրդներին, Թիֆլիսի քաղաքային դոմային¹³։

1917 թ. հոկտեմբերի 14-ին բացվում է Անդրկովկասյան հատուկ կոմիտեին կից զեմստվային խորհրդակցության առաջին նիստը՝ Ա. Չխենկելու նախագահությամբ, որին ներկա էին Մ. Զաֆարովը, Մ. Պապաջանյանը, Երկրային կենտրոնների,

¹¹ ՀԱԱ, ֆ. 375, ց. 1, գ. 70, թ. 1–8։

¹² Վրաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՎԱԱ), ֆ. 2080, ց. 1, գ. 12, թ. 142։

¹³ «Кавказское Слово», 14-ое октября, 1917, N 229։

Թիֆլիսի քաղաքային դումայի և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ: Նիստը չնայած ուներ կուսակցական կազմ, սակայն կրում էր ազգային բնույթ: Սկզբում ելույթ է ունենում վարչատարածքային բաժանման հանձնաժողովի քարտուղար, սոցիալ-դեմոկրատ Ղազար Տեր-Ղազարյանը, ով ներկայացնում է կատարված աշխատանքների արդյունքները: Նա հայտնում է, որ երկուսուկես ամսվա ընթացքում վարչատարածքային բաժանման հարցի շուրջ հանձնաժողովում ընդհանուր համաձայնություն չի կայացվել, բացի մի քանի կետերի շուրջ՝ օրինակ բերելով այն, որ եթե մի կողմից մահմեդականներն ընդվզում են Ելիզավետպոլի նահանգը Գյանջա գետով երկու՝ հայկական և մահմեդականական շրջանների բաժանման դեմ, ապա մյուս կողմից, անհրաժեշտ են համարում նահանգը վարչատարածքային բաժանման ենթարկել կանտոնային եղանակով: Ղ. Տեր-Ղազարյանն առաջարկում է թաթարների կողմից ներկայացվող հիմնական առարկելի հարցերի վերաբերյալ (ինչպիսիք են՝ արոտավայրերի, ջրօգտագործման, քոչի, անտառտնտեսության) ստեղծել միջկանտոնալ խորհուրդ: Անցնելով Երևանի նահանգին՝ նշում է, որ նրա շուրջ համաձայնություն ընդհանրապես չի կայացվել, իսկ վրացիներն էլ ընդվզում են Թիֆլիս նահանգի Ախալքալաքի և Բորչալուի գավառներն Ալեքսանդրապոլի նահանգի միացման դեմ՝ չնայած պետրոգրադյան խորհրդակցություններին արդեն տվել էին իրենց համաձայնությունը¹⁴:

Ղ. Տեր-Ղազարյանի ելույթից հետո Ա. Չխենկելին հայտնում է Ժամանակավոր կառավարության ներքին գործերի նախարա-

¹⁴ ՎԱԱ, ֆ. 2080, ց. 1, գ. 13 թ. 147:

րությանը կից հատուկ երկրային խորհրդակցության նախագահ Բորիս Վեսելովսկու առաջարկի մասին¹⁵, ըստ որի պետք է անհապաղ զեմստվային հիմնարկություն մտցվեր Անդրկովկասի այն նահանգներում, որտեղ գոյություն չունեին վիճելի տարածքներ՝ հետաձգելով մնացած գավառներում զեմստվոների ներմուծումը մինչև տարածքային հարցերի վերջնական լուծումը, ինչը Չխենկելին անընդունելի էր համարում, քանի որ, ըստ նրա, եթե սպասեին վերջնական համաձայնության, ապա Անդրկովկասի մեծ մասը երկար ժամանակ կմնար առանց զեմստվոյի և բարեփոխումների: Այդ պատճառով առաջարկում է Անդրկովկասի ոչ վիճելի տարածքներում անհապաղ ներմուծել զեմստվո, իսկ վիճելի շրջաններում ներմուծել մաս-մաս՝ Սահմանադիր ժողովի ընրություններից հետո սահմանների շուրջ ընդհանուր համաձայնություն ձեռք բերելուն զուգահեռ: Այդ կապակցությամբ պետք էր անհապաղ միջնորդություն ուղարկել ժամանակավոր կառավարությանը՝ միաժամանակ չդադարեցնելով վարչատարածքային բաժանման նախագծի քննարկման աշխատանքները:

Չխենկելու առաջարկին դեմ են հանդես գալիս հայ և ռուս ներկայացուցիչները՝ դաշնակցականներ Խաչատուր Կարճիկյանը, Ավետիք Շահխաթունյանը, Գևորգ Խատիսյանը, սոցիալ-դեմոկրատ Ղ. Տեր-Ղազարյանը, սոցիալիստ-հեղափոխական Արշամ Խոնդկարյանը, Ֆյոդր Լեբեդևը, Ժողովրդական ազատություն կուսակցության ներկայացուցիչներ իշխ. Գևորգ Թումանովը, Գևորգ Մելիք-Ղարաբյոզյանը և այլք¹⁶, ովքեր գտնում էին, որ Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի գումարումից հետո վարչատարածքային սահմանների փոփոխության հարցը

¹⁵ «Республика», Тифлис, 14-ого октября, 1917, N 80:

¹⁶ ՎԱԱ, ֆ. 2080, ց. 1, գ. 13, թ. 149:

հնարավոր չի լինի իրականացնել Անդրկովկասյան հատուկ կոմիտեի միջոցով, քանի որ ստիպված կլինեին սպասել նոր օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների ձևավորմանը, ինչն էլ կհետաձգեր հարցի լուծումը դարձյալ անորոշ ժամանակով: Հայ պատվիրակներն առաջարկում էին առաջին հերթին իրականացնել վարչատարածքային բաժանումներ՝ հարցի շուրջ համաձայնության գալով, գտնելով որ չի կարելի տարանջատել զեմստվոյի հարցը վարչատարածքային բաժանումների հարցից, իսկ նոր հանձնաժողով կազմելն անիմաստ էին համարում, քանի որ նրանում ևս նույն խնդիրներն առաջ կգային: Գ. Խատիսյանը հիշեցնում է, որ դեռևս Պետրոգրադի խորհրդակցությունում համաձայնություն է կայացել, ինչպես հայ-մահմեդականական, այնպես էլ հայ-վրացական հարաբերությունների տեսանկյունից:

Մենշևիկ Ա. Չխենկելու առաջարկն աջակցություն է գտնում ինչպես վրացիների, այնպես էլ թաթարների կողմից, որոնք ևս հանդես են գալիս ելույթներով և առաջարկություններով: Վրաց ազգային-դեմոկրատներ Գեորգի Մաչաբելին, Գեորգի Գվազավան պահի հրամայականն են համարում անհապաղ Անդրկովկասի ոչ վիճելի տարածքներում զեմստվոյի ներմուծման անհրաժեշտությունը, իսկ սպասել սահմանների շուրջ համաձայնության գալուն մինչև Սահմանադիր ժողովի գումարումը, անհնար են համարում: Մուսավաթական Լյուֆթալի բեյ Բեհբութովը, մահմեդականական սոցիալիստական բլոկի անդամ Ահմեդ բեյ Պեպինովը, թաթար սոցիալ-դեմոկրատական «Հումմեթ» կուսակցության ներկայացուցիչ Ակպեր աղա Շեյխ ու Իսլամովը հայտարարում են, որ մահմեդականները պատրաստ չեն լուծելու վարչատարածքային բաժանման հարցը, քանի որ նրա շուրջ

համաձայնության գալն այդ պահին անհնար է և դարձյալ միանում են Ա. Չխենկելու առաջարկին: Այնուհետև ելույթ է ունենում անդրկովկասյան մահմեդականական կենտրոնի ներկայացուցիչ Խուդադաթ բեյ Մելիք-Ասլանովը, ով իր և մահմեդական մտավորականության անունից իրեն իրավունք է վերապահում հայտարարել, որ նախարարական ծրագիրն անընդունելի է և պաշտպանում է Չխենկելու առաջարկը, իսկ վարչատարածքային բաժանման հարցի վերաբերյալ առաջարկում է նոր քննարկումներ ծավալել: Անդրկովկասում հրեաների ներկայացուցիչ Մատվեյ Գրուզենբերգը, Միացյալ լեռնցիների միության ներկայացուցիչ Թադո-Գադին ևս պաշտպանում են Ա. Չխենկելու առաջարկը:

Քննարկումներից հետո նոր առաջարկությամբ են հանդես գալիս բոլշևիկ Ֆիլիպ Մախարաձեն, կադետ, իշխան Գ. Թումանովը, մենշևիկ Նոյ Ռամիշվիլին, սոցիալ-դեմոկրատ Ղ. Տեր-Ղազարյանը:

Ֆ. Մախարաձեն գտնում էր, որ վարչատարածքային բաժանման հարցերի շուրջ քննարկումները հանձնաժողովներում անօգուտ են, քանի որ վիճելի հարցերը պետք է լուծվեն տեղերում՝ առաջարկելով Անդրկովկասում զեմստվո ներմուծել ամենուր և միաժամանակ, իսկ սահմանների հարցը տեղերում լուծել:

Մենշևիկ Ն. Ռամիշվիլին ևս պաշտպանում է Ա. Չխենկելու առաջարկը՝ այն տարբերությամբ, որ հրաժարվում էր նահանգային զեմստվոյից ընդհանրապես՝ կողմնակից լինելով երկաստիճան՝ վոլոստային (շրջանային) և գավառական զեմստվոների:

Գ. Թումանովը հանդես է գալիս Ա. Չխենկելու առաջարկի դեմ՝ գտնելով, որ անհապաղ, միաժամանակ և ամենուր պետք է ներմուծվի շրջանային զեմստվո՝ վերջիններին հնարավորութ-

յուն ընձեռնելով միավորվելու միությունների մեջ: Նա գտնում է, որ վարչատարածքային փոփոխությունների հարցը իշխանությունների խնդիրն է, իսկ առանց զեմստվոյի գոյատևելն անհնար է, քանի որ զեմստվոն այն հիմքն է, առանց որի անհնար կլինի կազմակերպել հասարակական-քաղաքական կյանքը:

Ղ. Տեր-Ղազարյանն էլ հայտնում է, որ նախարարական ծրագիրն ամբողջությամբ ընդունում է, այն «իրենը համարելով», քանի որ նրանում էր տեսնում ազգային հարցի լուծման բանալին՝ առաջարկելով այն անմիջապես ընդունել՝ իրականացնելով վարչատարածքային փոփոխությունները, իսկ հետո նոր միայն զեմստվային հիմնարկություններ ներմուծել երկրամասում¹⁷:

Ա. Չխենկելու, Ղ. Տեր-Ղազարյանի, Գ. Թումանովի և Ֆ. Մախարաձեի կողմից առաջարկված բանաձևերի քվեարկությունը կադետ Գ. Մելիք-Ղարազյոզյանի առաջարկությամբ հետաձգվում է հաջորդ նիստին, որը տեղի է ունենում հոկտեմբերի 15-ին: Նիստը դարձյալ նախագահում էր Ա. Չխենկելին: Նիստի սկզբին նոր բանաձևով հանդես է գալիս Ա. ա. Շեյխ ուլ Իսլամովը, ով առաջարկում է իր կազմած վարչատարածքային բաժանման ծրագիրն ընդունել որպես հիմք Անդրկովկասում վարչատարածքային բաժանումներ իրականացնելու համար: Այնուհետև անցնում են առաջարկությունների քվեարկությանը:

Ֆ. Մախարաձեն նշում է, որ բոլոր առաջարկություններն ունեն ընդհանուր մի դրույթ՝ Անդրկովկասում անհապաղ զեմստվոների ներմուծման վերաբերյալ օրենքի կազմում և հրապարակայնացում ժամանակավոր կառավարության կողմից, ավելացնում, որ տարաձայնությունները գլխավորապես վարչատարած-

¹⁷ Նույն տեղում, թ. 149:

քային բաժանումների վերաբերյալ են: Ապա առաջարկում է քննարկել և քվեարկել առաջարկություններն առանձին կետերով՝ հիմք ընդունելով Ա. Չխենկելու բանաձևը:

Ղ. Տեր-Ղազարյանը հայտնում է, որ Չխենկելու բանաձևի որոշ կետեր իր համար ընդունելի են և նա կքվեարկի ի օգուտ նրանց, այն պայմանով, որ իր բանաձևն էլ քվեարկության դրվի:

Քվեարկության արդյունքում բանաձևն ամբողջությամբ ընդունվում է 23 կողմ և 9 դեմ ձայների հարաբերակցությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

1. Ժամանակավոր կառավարության դեկրետով ամբողջ Անդրկովկասում անհապաղ մտցվելու էր զեմստվային դրություն:

2. Ժամանակավոր կառավարության դեկրետով հանձնարարվում էր Անդրկովկասյան հատուկ կոմիտեին անհապաղ զեմստվո մտցնել այն նահանգներում, մարզերում և գավառներում, ուր վարչական սահմանների հարց չէր առաջանա:

3. Ժամանակավոր կառավարության դեկրետով վիճելի շրջաններում զեմստվոյի ներմուծման նախապայման համարվելու էր վարչատարածքային սահմանների փոփոխությունները¹⁸:

4. Վիճելի նահանգներում, մարզերում և գավառներում Անդրկովկասյան հատուկ կոմիտեին իրավունք էր վերապահվում մտցնելու մանր շրջանային զեմստվո՝ միաժամանակ լուծելով վարչատարածքային բաժանման հարցի ամեն մի առանձին դեպք:

5. Ժամանակավոր կառավարության դեկրետով վիճելի շրջանների վարչատարածքային բաժանման ծրագրի մշակումը

¹⁸ Վիճելի շրջաններ էին համարվում ամբողջ Երևանի նահանգը, Ելիզավետպոլի նահանգը՝ բացի Նուխու և Արեշի գավառներից, Կարսի մարզի Կարսի և Կադզվանի շրջանները, Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի և Բորչալուի գավառները:

հանձնարարում էր Անդրկովկասյան հատուկ կոմիտեին՝ տեղերում վիճելի հարցերը լուծելու իրավունքով:

6. Ժամանակավոր կառավարության դեկրետի հրատարակումից մեկ ամսվա ընթացքում Անդրկովկասի վարչատարածքային սահմանների փոփոխության հարցի շուրջ տեղերում համաձայնության գալուց հետո երկրամասում պետք է մտցվեր տեղական ինքնակառավարման մարմիններ, որն էլ կհաստատվեր Ժամանակավոր կառավարության կողմից:

Ղ. Տեր-Ղազարյանն առաջարկում է պայմանավորվածության համաձայն քվեարկության դնել նաև իր բանաձևը, ինչը մերժվում է 22 դեմ, 10 կողմ ձայների հարաբերակցությամբ: Այդ ժամանակ Խ. Կարճիկյանը Հ.Յ. Դաշնակցություն կուսակցության անունից հայտարարում է, որ ստեղծված դրությունում իրենք հրաժարվում են շարունակել վարչատարածքային բաժանման վերաբերյալ տարվող աշխատանքներին հետագա մասնակցությունից, և որպես բոյկոտ լքում են նիստերի դահլիճը:

Չնայած այն հանգամանքին, որ այդ խորհրդակցության գլխավոր նպատակն Անդրկովկասում ազգային հարցի լուծման համար հիմք հանդիսացող վարչատարածքային բաժանման խնդրի լուծումն էր, սակայն, ինչպես տեսանք, այն վրաց և թաթար ներկայացուցիչների ջանքերով հետաձգվում է անորոշ ժամանակով: Պատճառն այն էր, որ նրանց ձեռնտու էր գոյություն ունեցող վարչատարածքային միավորներն առանց փոփոխությունների, քանի որ ամենուր կազմելով մեծամասնություն Սահմանադիր ժողովի ընտրությունների արդյունքում կունենային ավելի մեծ թվով պատգամավորներ և կկարողանային անցկացնել իրենց կողմից առաջարկված նախագծերը, իշխանության մարմիններում կլինեին գերիշխող, իսկ ազգային սահմանների

գծման դեպքում իրենց տարածքները կկազմվեին ի հաշիվ հայկական պատմական հողերի: Հայերի համար հարցը կենսական նշանակություն ուներ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայերն Անդրկովկասի ընդհանուր թվով 55 գավառներում, մարզերում, շրջաններում միայն Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Էջմիածնի, Ախալքալակի և Շուշիի գավառներում էին մեծամասնություն կազմում: Ուշագրավ է այն հանգամանքը, որ նիստի հաջորդ օրը՝ հոկտեմբերի 16-ին, Անդրկովկասյան հատուկ կոմիտեի որոշմամբ վարչատարածքային սահմանների փոփոխության հանձնաժողովի անդամ Ա. աղա Շեյխ ու Իսլամովը, ով պարբերաբար բացակայում էր հանձնաժողովի նիստերի աշխատանքներից, Անդրկովկասում զեմստվային աշխատանքների գործում ունեցած հատուկ ավանդի համար ստանում է 900 ռուբլի պարգևավճար¹⁹, ինչից կարելի է ենթադրել, որ նա հատուկ դերակատարում է ունեցել հարցի ձախողման համար տարվող աշխատանքներում:

Խորհրդակցությունը մեծ արձագանք է ունենում առաջադեմ հասարակության և հասարակական-քաղաքական տարբեր ուժերի և պարբերական մամուլի կողմից, որոնք իրենց դժգոհությունն էին արտահայտում ժամանակավոր կառավարությանն ու Անդրկովկասյան հատուկ կոմիտեին ուղղված բազմաթիվ գրություններում, քանի որ հարցի լուծման ձգձգումն ու վրաց-թաթարական ուժերի ապակառուցողական դիրքորոշումը հարցի լուծման նկատմամբ տարածաշրջանում կհանգեցներ նոր կոնֆլիկտների և ռազմական բախումների, ինչի ականատեսն ենք մինչև այսօր:

¹⁹ ՎԱԱ, ֆ. 2080, ց. 1, գ. 13, թ. 166:

Гайк Ш. Магтесян, *Институт истории НАН РА*, **Вопрос административно-территориального деления Закавказья в обсуждениях земского совещания (1917 г., 14–15 октября).**

Летом 1917 г. Министерство внутренних дел Временного правительства направило на обсуждение местных властей проект об административном переделе Закавказского края. Этой целью при ОЗАКОМ-е созывается Особая комиссия, где на земском совещании вопрос рассматривается. Из-за большинства грузин и татар на совещании принимаются антиармянские резолюции.

Hayk Sh. Mahtesyan, *Institute of History of the NAS RA*, **The Issues of Administrative and Territorial Divisions of the Transcaucasus in the Discussion of the Zemstvo Sessions (14–15 October, 1917).**

In the summer of 1917 the Ministry of Internal Affairs of the Provisional Government submitted a draft on the administrative redistribution of the Transcaucasian territory for discussion by local authorities. For this purpose, the Special Commission is convened under OZAKOM where they discussed the issue at the Zemstvo session. Due to the majority of Georgians and Tatars participating in the sessions anti-Armenian resolutions were adopted.

ԱՐԱՄ Ս. ՍԱՅԻՅԱՆ

ԳԱԱ պարմության ինստիտուտ, պ.գ.թ.

ՊՈՆՏՈՍԻ ՀԱՐՑԸ ԵՎ ՀԱՅ-ՀՈՒՆԱԿԱՆ ՉՍՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր՝ Հայաստանի Հանրապետություն, Պոնտոս, Թուրքիա, ցեղասպանություն, Մուսթաֆա Քեմալ, Էնֆեթերիոս Վենիզելոս, Կարս, Տրապիզոն:

1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսի զինադադարով Օսմանյան կայսրությունն ընդունեց իր պարտությունն Առաջին աշխարհամարտում և դուրս եկավ պատերազմից: Թուրքական զորքերը հետ քաշվեցին Անդրկովկասից և հայկական զորքերը բրիտանական զորամասերի օգնությամբ վերականգնեցին մինչև 1914 թ. եղած ռուս-թուրքական սահմանը, որն այժմ դարձել էր հայ-թուրքական: Սակայն բրիտանացիները, ի տարբերություն Մուդրոսի զինադադարից հետո Մոսուլի վիլայեթի գրավմանը, հրաժարվեցին թուրքական զորքերից մաքրել Արևմտյան Հայաստանը և Պոնտոսը՝ բավարարվելով միայն Սամսունում (հուն.՝ Ամիս) փոքրաքանակ բրիտանական զորամաս տեղակայելով: Այս փաստը թույլ չտվեց, որպեսզի արևմտահայերը կարողանային պատերազմից հետո վերադառնալ իրենց տները. տեղի թուրք-քրդական բնակչությունը, հենվելով չզինաթափված և չզորացրված թուրքական կայազորների վրա, ոչ միայն չէին թողնում հայերին վերադառնալ իրենց օջախները,

այլև թուրք սպաների ղեկավարությամբ պարբերաբար հարձակումներ էին գործում Հայաստանի Հանրապետության սահմանապահների և սահմանային գյուղերի վրա: Իսկ թուրքական հրամանատարությունը Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության հետ խոռովություններ էր հրահրում Հայաստանի մահմեդականների շրջանում, ինչպես նաև աջակցում ադրբեջանական բանակին հարձակումներ գործել Սյունիքի և Արցախի վրա¹:

Թուրքական իշխանությունների այսօրինակ քաղաքականության հիմնական նպատակներից մեկն էլ Փարիզի խաղաղության կոնֆերանսում Օսմանյան կայսրության հետ պայմանագրի կնքման պահին Արևմտյան Հայաստանում հայերի բացակայության ապահովումն էր, ինչը մեծացնում էր թուրքական պետության կազմի մեջ նրա մնալու հավանականությունը:

Սակայն թուրքերի համար Պոնտոսի հույների առումով խնդիրն ավելի բարդ էր: Պոնտոսի հույները թեև Առաջին աշխարհամարտի ժամանակ ենթարկվել էին կոտորածների, սակայն զգալի մասը փրկվել էր ջարդերից: Պոնտոսի մոտ 700 հազար հունական բնակչությունից տարբեր հաշվարկներով սպանվել էին 170-ից² մինչև 257 հազարը³: Պատերազմի ավարտին Պոնտոսի անտառածածկ լեռներում (հատկապես արևմուտքում) շատ ակտիվ գործում էին հույն պարտիզանների ջոկատները, որոնց թվաքանակը տարբեր աղբյուրներում 18.000-ից⁴ 30.000

¹ Հայաստանի Հանրապետությունում թուրք-ադրբեջանական դավադրությունների և սահմանային ընդհարումների մասին ավելի մանրամասն տե՛ս **Վիդալ Վ.**, Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918–1920 թթ. (հետախուզություն, բանակ, ՆԳՆ), Երևան, 2015:

² Տե՛ս <http://www.pontos-news.gr/pontic-article/3515/i-genoktonia-ton-pontion>

³ Տե՛ս **Rene Paux**, *Deportation et Repatriement Grecs en Turquie*, Paris, 1919.

⁴ Տե՛ս <http://www.opsne.gr/history.asp?sec=1-8>

էր⁵: Մուդրուսի զինադադարից հետո իրենց բնակավայրերը վերադարձան տասնյակ հազարավոր հույներ ինչպես արքայական վայրերից, այնպես էլ Ռուսաստանից, որտեղ փախել էին 1918 թ. սկզբին նահանջող ռուսական բանակի հետ, և լեռներից՝ պարտիզաններն իրենց ընտանիքների հետ միասին: Նրանց հետ միասին բրիտանական էսկադրային ականակրի վրա Պոնտոս վերադարձավ Ամասիայի մետրոպոլիտ Գերմանը (Կարավանգեղիս)⁶, ով իր ձեռքը վերցրեց Պոնտոսի հույների ղեկավարումը:

Թուրքական իշխանությունների և մահմեդական (թուրքեր և լազեր) բնակչության՝ հույների վերադարձի նկատմամբ վերաբերմունքն իհարկե խիստ բացասական էր և պարբերաբար տեղի էին ունենում սպանություններ և այլ կարգի բռնություններ հույների նկատմամբ, սակայն նախ դրանք լայնածավալ չէին, քանի որ թուրքական իշխանությունները վախենում էին Դաշնակից երկրների հիմնավորված միջամտությունից (առավել ևս, որ Սամսունում տեղակայված էր նրանց զորախումբը), և հետո հունական ջոկատները, հատկապես Պոնտոսի արևմուտքում՝ Սինոպ – Սամսուն – Ամասիա գծի վրա, համարժեք պատասխան էին տալիս, ինչը շատ դեպքերում զսպում էր թուրքերին: Փաստացի օսմանյան իշխանության իրավասությունը տարածվում էր մեծ քաղաքների վրա, իսկ գյուղերում իրավիճակի տերերը հունական պարտիզանական ջոկատներն էին⁷: Նրանք զինամթերք

⁵ Տե՛ս <http://www.turansam.org/makale.php?id=428>

⁶ **Մետրոպոլիտ Գերման** (Սոփիանոս Կարավանգեղիս, 1866–1935), Կաստորիայի (1900–1908), Ամասիայի (1908–1922) և Հոնիայի (1922–1924) մետրոպոլիտ, Արևմտյան Մակեդոնիայի և Պոնտոսի հույների քաղաքական ղեկավարը և ինքնապաշտպանությունների կազմակերպիչը:

⁷ Տե՛ս **Paul Dumont**, Mustafa Kemal, Paris, 1983, p. 19–21.

էին ստանում Կովկասի հույների կողմից և նրանց հետ միասին ծրագրավորում հարձակումները թուրքերի վրա:

Փարիզի խաղաղության վեհաժողովը հույսեր էր արթնացրել Պոնտոսի, ինչպես նաև Հայաստանի, Վրաստանի և Ռուսաստանի հարավի հույների մոտ, որ Պոնտոսը կամ պետք է հռչակվի անկախ պետություն, կամ էլ պետք է դառնա Հունաստանի մի մասը: 1919 թ. հունվարին Թիֆլիսում տեղի ունեցավ «Հույների ազգային 3-րդ խորհուրդը», որտեղ բացի փախստականների հարցից քննարկվեց նաև Հունաստանի կառավարություն պատվիրակություն ուղարկելու հարցը: Նույն ամսին հիմնադրվում է Հայաստանի հույների ազգային խորհուրդը, իսկ Ռուսաստանի հարավի հունական կազմակերպությունները ընտրում են Պոնտոսի ազգային խորհուրդ: Ընդ որում հունական կազմակերպությունները ազգային ինքնավարություն էին ցանկանում ստանալ նաև Անդրկովկասի և Հարավային Ռուսաստանի հույներով բնակեցված շրջանների համար: Այսպես՝ Ռուսաստանի հույների կենտրոնական խորհուրդը դիմեց հունական կառավարությանը՝ Խաղաղության վեհաժողովում իրենց ազատության ապահովման և ինքնորոշման պահանջը պաշտպանելու խնդրանքով: Բուն Փարիզի Խաղաղության Վեհաժողովում Պոնտոսի հույների շահերը պաշտպանելու նպատակով Եվրոպայում բնակվող պոնտացիները ստեղծեցին «Պոնտոս» կազմակերպությունը, որի նախագահին էր Կոստանտինոս Կոստանտինիդիսը⁸:

⁸ Կոստանտինոս Կաստանտինիդիս (1856–1930), ծնունդով Պոնտացի հույն վաճառական, անկախ Պոնտոսի կողմնակիցներից և Պոնտոսի հույների պաշտպանը Փարիզի Խաղաղության Վեհաժողովում:

Հունական հասարակությունը պահանջում էր իր կառավարությունից ընդառաջ գնալ Պոնտոսի հույներին և հայտարարել Պոնտոսի անկախության մասին՝ ուղարկելով այնտեղ զորքեր: Սակայն հունական կառավարությունը՝ վարչապետ Էլեֆթերիոս Վենիզելոսի գլխավորությամբ, ինչպես նաև հունական Գլխավոր շտաբը շատ լավ հասկանում էին, որ դրանք անիրականանալի ծրագրեր էին՝ վեր փոքր Հունաստանի ուժերից: Լինելով իրատես՝ Վենիզելոսը իրավացիորեն գտնում էր, որ Հունաստանն ի վիճակի չի լինելու ազատագրել Պոնտոսը Օսմանյան կայսրությունից և ապահովել նրա անվտանգությունը: Բացի այդ՝ նման քայլեր իրականացնելու դեպքում տեղի հունական բնակչությունը կոչնչացվի մի քանի անգամ ավել մահմեդական բնակչության կողմից: Ըստ նրա՝ ամենաշատը, որ կարող էր ակնկալել Հունաստանը, Արևելյան Թրակիան էր՝ առանց նեղուցների և Կոստանդնուպոլսի, որոնց միջազգային կամ ամերիկյան կառավարումը կապահովեր հունական բնակչության անվտանգությունը: Ինչ վերաբերում էր Փոքր Ասիային, ապա նա կարծում էր, որ Հունաստանի ուժերը կբավարարեր միայն Ջմյուռնիան (Իզմիրը) և նրա շրջակայքն ազատագրելու համար, որտեղ կկենտրոնանային Փոքր Ասիայից գաղթած հույն փախստականները⁹: Սակայն ամենագլխավորն այն էր, որ Վենիզելոսն իր քայլերը համաձայնեցնում էր Դաշնակիցների հետ, առանց որոնց ռազմական ուժերի և ֆինանսների Հունաստանը չէր կարող պատերազմել Օսմանյան կայսրության հետ: Հաշվի առնելով այս բոլոր գործոնները (որոնցից ամենակարևորը Դաշնակիցների բացասական դիրքորոշումն էր դեպի Պոնտոս հու-

⁹ St'u **Douglas Dakin**, *The Unification of Greece 1770–1923*, London, 1972, p. 336.

նական զորքեր ուղարկելու հարցում)՝ Վենիզելուսը մերժեց Պոնտոսի հույների դիմումը և 1919 թվականի փետրվարի 4-ին հայտարարեց ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնին, որ չնայած Պոնտոսի հույների՝ սեփական անկախ պետություն ունենալու ցանկությանը, պաշտոնական Աթենքը կողմ է, որպեսզի Տրապիզոնի վիլայեթը (իմա՝ Պոնտոսը), մտնի անկախ Հայաստանի Հանրապետության կազմի մեջ:

Այս հայտարարությունը խորը հիասթափություն առաջացրեց Պոնտոսի հույների շրջանում և Տրապիզոնի մետրոպոլիտ Խրիսանթոսի¹⁰ գլխավորությամբ տեղի մի քանի կազմակերպություններ փորձեցին Փարիզի Խաղաղության Վեհաժողովում ներկայանալ Հունաստանից առանձին պատվիրակության կազմով: Հիասթափությունն ավելի խորացավ, երբ հայտնի դարձավ, որ Վենիզելուսը հունական զորքերը (1 կորպուս՝ բաղկացած երկու դիվիզիայից՝ 23 հազար զինվոր) Պոնտոս ուղարկելու փոխարեն, Ֆրանսիայի խնդրանքով 1919 թ. հունվարի սկզբին ուղարկել է Ղրիմ, Օդեսա, Խերսոն և Նիկոլաև՝ բոլշևիկյան Ռուսաստանի դեմ ինտերվենցիային մասնակցելու համար: Տեղի տալով հունական հասարակության մեջ իր դեմ բարձրացող դժգոհության ալիքին՝ Վենիզելուսը ստիպված է լինում վերանայել իր դիրքորոշումը Պոնտոսի և Կովկասի հույների նկատմամբ:

Սակայն իրավիճակը կտրուկ փոխվեց 1919 թ. մայիսի կեսերին: 1919 թ. մայիսի 15-ին հունական 20 հազարանոց բանակը, համաձայն Մուդրոսում կնքված զինադադարի 7-րդ կետի, ըստ որի դաշնակից զորքերն իրավունք էին ստանում գրավել Օս-

¹⁰ **Արքեպիսկոպոս Խրիսանթոս** (Խաբիլաու Ֆիլիպպիդիս, 1881–1949), Հունական ուղղափառ եկեղեցու եպիսկոպոս, Տրապիզոնի մետրոպոլիտ, Հունական

մանյան կայսրության ցանկացած ռազմավարական կետ, եթե կար սպառնալիք՝ ուղղված Դաշնակիցների անվտանգությանը, գրավում է Զմյուռնիա (Իզմիր) քաղաքը, իսկ այնուհետև սկսում են նորանոր տարածքներ զբաղեցնել Փոքր Ասիայում: Սա կարելի է շրջադարձային կետ համարել, քանի որ Իզմիրի գրավումն առիթ դարձավ, որ Ստամբուլի սուլթանական կառավարության և Դաշնակիցների կողմից արևելյան վիլայեթներ որպես երրորդ բանակի տեսուչ ուղարկված գեներալ Մուսթաֆա Քեմալը 1919 թ. մայիսի 19-ին Սամսունում հոչակի ազգային շարժում օտարերկրյա անհավատ զավթիչների դեմ: Մուսթաֆա Քեմալը կայսրության մահմեդական ժողովուրդների մեծ մասի մոտ ուներ անպարտ զորավարի համբավ, և նրա կոչը շատ արագ արձագանք գտավ արևելյան վիլայեթների բնակչության և այնտեղ տեղակայված թուրքական զորամասերի շրջանում: Սամսունում Մ. Քեմալը հանդիպում է խնդրում մետրոպոլիտ Գերմանից: Վերջինս, սակայն, հրաժարվում է հանդիպել՝ համարելով դա ոչ պետքական: 20 օր Սամսունում մնալուց հետո Մ. Քեմալն անցնում է Սեբաստիա (Սվաս) և շատ քիչ ժամանակ անց ստացվում են առաջին լուրերը թուրքական չեթենների (որոնց թուրքական պատմագրությունն անվանում է ազատագրական պայքարի առաջին ջոկատներ) ջոկատների և նրանց կողմից կազմակերպված տեղի հույների նկատմամբ իրականացված կոտորածների, տեղահանությունների և թալանի մասին:

Մ. Քեմալն իր շուրջն է համախմբում տարածաշրջանի իմամներին, որոնք մզկիթներում մահմեդականներին կոչ էին

ուղղափառ եկեղեցու գահերեց (1938–1941), 20-րդ դարի առաջին քառորդի Պոնտոսի հոգևոր և քաղաքական առաջնորդներից մեկը:

անում զենք վերցնել և պայքարել ինչպես «դավաճանների (նկատի են առնվում հույները), որոնք չեն հարգում այն հացը, որ թուրքերը տվել են նրանց, այնպես էլ երկիրը զավթած թշնամու դեմ»¹¹: Մայիսի 29-ին Մ. Քեմալն իր շտաբը տեղափոխում է Հավլա, քանի որ իր՝ դաշնակիցների և հույների դեմ պայքարելու կոչերի համար Սամսունում տեղակայված անգլիական ստորաբաժանման սպաները կարող էին ձերբակալել նրան: Հավլայում նա իր մոտ է հրավիրում պոնտական հույների գլխավոր դահիճներից Թոփալ Օսման աղային (ազգությամբ լազ), որը միանգամից համաձայնում է դառնալ նրա հրամանատարներից և ամենաջերմ համախոհներից մեկը: Ավելորդ չէ նշել, որ իր հավատարմության համար Օսման աղան որոշ ժամանակ հանդիսանում էր Մ. Քեմալի թիկնազորի պետը: Մ. Քեմալն Օսման աղայի հրամանատարության տակ գործող մի քանի ջոկատները միավորում է և ստեղծում մեկ գումարտակ, իսկ վերջինիս նշանակում այդ գումարտակի հրամանատար: Քեմալի օգնությամբ Օսման աղան դառնում է Գիրեսունի (հուն. Կիրասոն) քաղաքապետը, և տեղի հույների նկատմամբ բռնություններն ավելի են սաստկանում: Ակնհայտ էր, որ Մուսթաֆա Քեմալը և նրա կողմնակիցներն իրենց առջև նպատակ են դրել օր առաջ մաքրել Պոնտոսը հույներից՝ արհամարհելով անգամ Սև ծովում անգլիացիների և ֆրանսիացիների ռազմական ներկայությունը: Դրությունը 1919 թ. ամռանն այնքան էր վատացել հույների համար, որ Բաթումում գտնվող պոնտացի հույների մշտական համագումարի նախագահ Վասիլիս Իոննիդիսը դիմում է Կոստանդնուպոլսում Հունաստանի դեսպանություն՝ խնդրելով ան-

¹¹ Տե՛ս **Фотиадис К.**, Геноцид греков Понта, Салоники, 2015, с. 289.

հապաղ սկսել Պոնտոսի գրավումը Դաշնակից տերությունների օգնությամբ: Սակայն Դաշնակից տերությունները ոչ միայն չէին ուզում օգնել Հունաստանին, այլև արգելեցին նրան ռազմական ներխուժում իրականացնել Պոնտոս: Հունաստանի վարչապետ Է. Վենիզելոսը, հասկանալով, որ Հունաստանն ի վիճակի չէ միայնակ օգնել Պոնտոսին, սկսեց դաշնակիցներ փնտրել Կովկասում: Այդ նպատակով նա Վրաստան և Հայաստան է ուղարկում գնդապետներ Դիմիտրիոս Կաթենիոտիսին¹² և Ի. Ստավրիդակիսին¹³:

Ի. Ստավրիդակիսը, ով 1919 թ. օգոստոսի 5-ից մինչև 1920 թ. հունվարը Կովկասում Հունաստանի դիվանագիտական միսիայի ղեկավարն էր, 1919 թ. նոյեմբերի 15 (28)-ին գաղտնի զեկուցագիր է ներկայացնում Հունաստանի արտաքին գործերի նախարար Ն. Պոլիտիսին¹⁴, որտեղ ներկայացնում է իր տեսակետները Կովկասում, իսկ ավելի ճիշտ՝ Հայաստանում, հունական կանոնավոր բանակի օգնությամբ հունական զինվորական կազմավորումներ ստեղծելու վերաբերյալ, որոնք միանալով Պոնտոսի հունական պարտիզանական ջոկատներին, հայկական բանակի հետ պետք է հարվածեին քեմալական ուժերին

¹² **Դիմիտրիոս Կաթենիոտիս** (1882–1947), հունական բանակի գեներալ, մասնակցել է Բալկանյան պատերազմին, Առաջին աշխարհամարտին և հույն-թուրքական պատերազմին: Մինչև Երկրորդ աշխարհամարտը եղել է Ֆրանսիայում ռազմական կցորդ, XI դիվիզիայի հրամանատար, Պատերազմի դպրոցի պետ, իսկ 1933 թ. հունական բանակի Գլխավոր շտաբի պետը (մինչև 1940–1941 թթ. հույն-իտալական պատերազմը): Զորացրվել էր Է. Վենիզելոսի կողմնակից լինելու պատճառով:

¹³ Ցավոք սրտի, **Ի. Ստավրիդակիսի** մասին անձնական տվյալներ գտնելու մեր բոլոր փորձերն անհաջող անցան:

¹⁴ **Նիկոլաս Պոլիտիս** (1872–1942), իրավաբան, դիվանագետ, երեք անգամ եղել է Հունաստանի արտգործնախարարը (1917–1918, 1919–1920 և 1922–1924): 1920 թ. եղել է Ազգերի լիգայում Հունաստանի առաջին ներկայացուցիչը: 1920–1922 և 1924–1925 թթ. եղել է Ֆրանսիայում Հունաստանի դեսպանը:

արևելքից և շարժվելով դեպի արևմուտք՝ Զմյուռնիայում ասի հանված և Փոքր Ասիայի խորքը շարժվող հունական 20 հազարանոց զորքին ընդառաջ՝ արքանի մեջ առնելին և ջախջախելին քեմալական շարժումը: Այսպիսով, եզրակացնում է Ստավրիդակիսը, Հունաստանին եզակի հնարավորություն է տրված ոչ միայն լուծել Պոնտոսի հարցը, այլև Փոքր Ասիայում վերջնականապես լուծել թուրքերի ազգային շարժման (քեմալիզմի) խնդիրը: Ըստ նրա՝ Կովկասում հնարավոր էր զինվորագրել 60 հազար հույների, որոնք կազմում էին հույն բնակչության 10 տոկոսը¹⁵: Միաժամանակ նա խնդրում է նախարարին, որ հունական կառավարությունը միջնորդի Հայաստանի Հանրապետության առջև, որպեսզի Կարսի մարզի հույն զինապարտները չզորակոչվեն հայկական բանակ, քանի որ, ըստ նրա, դա հիմք կտար Վրաստանի և Հարավային Ռուսաստանի կառավարություններին նման քայլեր անել, ինչը կխախտեր Հունաստանի չեզոքությունը Ռուսաստանի ներքին գործերում, որը հռչակվել էր «Ուկրաինական արշավի» ծախողումից հետո: Միակ տեղը, որտեղ պետք էր սկսել հունական ջոկատների կազմավորումը, ըստ Ստավրիդակիսի, Հայաստանն էր, քանի որ նախ նա անմիջական սահման ուներ Թուրքիայի հետ, և հետո, ի տարբերություն վրացիների, հայերը խիստ շահագրգռված էին իրենց հողերի ազատագրմամբ և հույների հետ ունեին նույն ընդհանուր թշնամին:

Հայաստանում հունական զորամասերի ստեղծմանը հայկական կողմը դրական արձագանքեց: Օգոստոսի կեսին Երևա-

¹⁵ Հունական արխիվային փաստաթղթեր հայ-հունական հարաբերությունների մասին Առաջին հանրապետության շրջանում (1918–1920), թարգմ.՝ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1998, էջ 15:

նում Ստավրիդակիսի և Տրապիզոնի մետրոպոլիտ Խրիսանթոսի հետ բանակցությունների ժամանակ Հայաստանի վարչապետ Ա. Խատիսյանը դրական պատասխան տվեց հույների այդ մտադրությանը: Ավելին՝ Խատիսյանը հայտնում է, որ հայկական բանակի պահեստներում կա 40 միլիոն Լեբել մականիշի հրացանների փամփուշտներ, և հույների գործն ավելի կհեշտանա, եթե Հայաստան ուղարկվող հունական զորամասերը զինված լինեն այդ մականիշի հրացաններով՝ միաժամանակ առաջարկելով փոխանակել մի քանի միլիոն փամփուշտ որոշակի քանակությամբ Լեբել հրացանների հետ: Հետաքրքրական է, որ Ստավրիդակիսն առաջարկում է Պոլիտիսին Հայաստանին ցուցաբերվող օգնությունը և Հայաստանում ձևավորվող հունական զինվորական ստորաբաժանումների կազմավորումը Թուրքիային ընդհանրապես և Պոնտոսի թուրքերին մասնավորապես ներկայացնել ոչ թե որպես Պոնտոսի հույների պաշտպանության համար իրականացվող գործողություններ, այլ որպես Հունաստանի թագավորության օգնությունը Հայաստանի Հանրապետությանը և այնտեղ (գլխավորապես Կարսի մարզում) բնակվող հույների պաշտպանության նպատակով իրականացվող միջոցառումներ¹⁶: 1919 թ. կեսերից Հայկական իշխանությունների համաձայնությամբ և հունական բանակի սպաների աջակցությամբ (գեներալ-մայոր Անանիո) Կարսի մարզի հույն զինապարտներից կազմավորվում են առաջին հունական ստորաբաժանումները: Նրանք պետք է իրենց գյուղերը պաշտպանեին թուրք-քրդական հարձակումներից: Արդեն օգոստոսի վերջերին հայկական բանակի կանոնավոր զորամասերի հետ այս ինքնա-

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 18:

պաշտպանական ջոկատները Կարսի մերձակայքում գտնվող Կարաուրգան բնակավայրի մոտ ջախջախում են թշնամուն և ետ շարտում նրանց¹⁷: Նույն ժամանակ հայկական և հունական կողմերի միջև համաձայնեցվում է Կարսի մարզի հունական ինքնապաշտպանական ջոկատների կարգավիճակը: ՀՀ զինվորական նախարար Քրիստափոր Արարատյանը Թիֆլիսում ՀՀ դեսպանության ռազմական կցորդ, գեներալ-մայոր Հովհաննես Քիշմիշյանին օգոստոսի 19-ի հեռագրով հանձնարարում է հաղորդել հունական առաքելության ղեկավարին (Ի. Ստավրիդակիս), որ Կառավարությունը հավանություն է տվել հունական բնակչությունից առանձին ջոկատների ստեղծման ծրագրին՝ պայմանով, որ Հունաստանը կմատակարարի սպառազինություն և հանդերձանք, իսկ ընթացիկ ծախսերը կհոգա հայկական կողմը: 1920 թ. մայիսին այս ջոկատները, ինչպես նաև Կարսի մարզից զորակոչված հույները ներառվում էին Կարսի մարզում տեղակայված ՀՀ Սահմանապահ ծառայությունում¹⁸:

Գնդապետ Կաթենիոտիսի 26 զեկուցագրերում, որոնք ներառում են Պոնտոսի հարցի զարգացման երեք փուլերը, մանրամասն ներկայացվում է Պոնտոսում տիրող իրավիճակը, իրատեսորեն տալիս հարցի լուծման հնարավոր ճանապարհը, ինչքան էլ այն ընդունելի չլիներ Պոնտոսի հույների համար: Առաջին փուլում 1919 թ. մայիսի 14-ին Հունաստանի վարչապետին, արտաքին գործերի նախարարին, ռազմական (պաշտպանության) նախարարին և Զմյուռնիայում գտնվող հունական էքսպեդիցիոն կորպուսի հրամանատարին ուղարկված զեկուցագրում

¹⁷ Տե՛ս **Ռամազյան Ս.**, Հայ-հունական ռազմական առնչությունների և համագործակցության պատմություն, Երևան, 2010, էջ 160:

¹⁸ Տե՛ս նույն տեղում:

նշում է, որ Պոնտոսի՝ Թուրքիայից ազատագրվելու հարցը պետք է կապել Արևմտյան Հայաստանի ազատագրման հետ, սակայն Պոնտոսի հույները վստահ լինելով իրենց ուժերին և Թուրքիայի թուլությանը, ինչպես նաև Հունաստանի ռազմական օգնությանը և Դաշնակից տերությունների՝ իրենց հանդեպ բարեհաճ տրամադրվածությանը, դեմ էին Արևմտյան Հայաստանի հետ անջատվելուն՝ վախենալով, որ կկլանվեն հայերի կողմից¹⁹։ Հաջորդ գեկուցագրերում նա նշում է Պոնտոսի հունական կազմակերպությունների առաջնորդների շատ կարևոր թերության քաղաքականությունից և դիվանագիտությունից բացարձակ անտեղյակության մասին, որը շատ վնասներ էր հասցնում Պոնտոսի՝ թուրքական լծից ազատագրման գործին։

Երկրորդ փուլում Կաթենիոտիսն անդրադառնում է պոնտացի հույների՝ Մեծ տերություններին Պոնտոսի մանդատը վերցնելու հեռագիր-խնդրանքներին և Հունաստանի տարածքում ապրող պոնտացիներից զինվորական կազմավորումներ ստեղծելու խնդիրներին։ Քննարկվում է նաև հայ-պոնտական դաշնային (ֆեդերատիվ) պետության ստեղծմանն ուղղված հայ-հունական բանակցությունները, որոնք ավելի լուրջ ընթացք ստացան երրորդ փուլում, երբ ակնհայտ էր արդեն, որ Պոնտոսն իր ուժերով չի կարող դիմակայել օրեցօր հզորացող քեմալականներին։ Այստեղ նա նորից ընդգծում է Պոնտոսի առաջնորդների անհեռատեսությունը և քաղաքական ու դիվանագիտական սխալ հաշվարկները, որոնք ի վերջո հանգեցրեցին նոր կոտորածների և Պոնտոսի վերջնական կորստին։ Մասնավորապես, Պոնտոսի հույների առաջնորդների հաշվարկները, թե Մեծ տերություններ-

¹⁹ Տե՛ս Հունական արխիվային փաստաթղթեր..., էջ 32։

որը կվերցնեն իրենց մանդատը, կամ այնքան բարեհաճ կլինեն իրենց, հանդեպ, որ կթողնեն Հունաստանին օգնել իրենց սխալ դուրս եկան: ԱՄՆ-ն մերժեց մանդատը, քանի որ ամերիկյան ռազմաքաղաքական ղեկավարությունը համաձայն էր վերցնել ամբողջ Թուրքիայի մանդատը (նեղուցներով հանդերձ), այլ ոչ թե միայն նրա արևելյան նահանգներին: Իսկ Մեծ Բրիտանիան ոչ միայն մերժեց Պոնտոսի մանդատը, այլև արգելեց հունական կառավարությանը պոնտացի հույներից Հունաստանի տարբեր վայրերում կազմավորված զինվորական ստորաբաժանումները կամ հունական կանոնավոր բանակի զորամասերը տեղափոխել Բաթում (որն այդ ժամանակ գրավված էր նրանց կողմից), իսկ այնտեղից էլ՝ Պոնտոս²⁰:

Երևանում 1920 թ. հունվարին տեղի ունեցած հայ-պոնտական բանակցություններում պոնտական կողմը՝ Տրապիզոնի մետրոպոլիտ Ալ. Խրիսանթոսը (ով նաև Փարիզի Խաղաղության Վեհաժողովում պոնտական պատվիրակության ղեկավարն էր) և գնդապետ Ստավրիդակիսը, Հայաստանի վարչապետ Խատիսյանին և խորհրդարանի Ռազմական հարցերի գծով կոմիտեի նախագահ Մինաս Տեր-Մինասյանին (Ռուբեն) ներկայացրեց Պոնտոսի ղեկավարների պատկերացումներն ապագա հայ-հունական դաշնային պետության վերաբերյալ: Դրանք բաղկացած էին վեց կետից: Ըստ պոնտական կողմի՝ պետք է կազմավորվեր Պոնտա-Հայկական կոնֆեդերացիա, որտեղ կողմերը պետք է ունենային իրենց սեփական օրենսդրությունը, խորհրդարանը, նախարարությունները և նույնիսկ բանակները, որոնք, սակայն, պետք է ունենային միասնական հրամանատա-

²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 48–53:

րություն և նախարարություն: Միասնական պետք է լինեին արտաքին քաղաքականությունը, դրամական, փոստի և հեռագրական կապի, հեռահաղորդակցությունների ճանապարհների համակարգերը: Պետք է նշել, որ այս ծրագիրն անիրատեսական էր և չէր արտահայտում փաստացի իրականությունը, այն է՝ Հայաստանի Հանրապետությունն արդեն կայացած պետություն էր իր պետական ինստիտուտներով, իսկ Պոնտոսի հույները չունեին ոչինչ, բացի լեռնային անտառներում դեգերող պարտիզանական խմբերից: Իրական իշխանությունն այնտեղ պատկանում էր թուրքերին, որոնք թվաքանակով երկու անգամ ավել էին հույներից: Բացի այդ, Պոնտոսի հույներն իրենց թվաքանակով մի քանի անգամ զիջում էին Հայաստանի բնակչությանը և պարզ էր, որ ապագա կոնֆեդերացիայի հոգսերի ծանրությունն ընկնելու է Հայաստանի վրա: Այսինքն՝ հույները պահանջում էին հավասար իրավունքներ քիչ պարտականությունների դեպքում: Սա գիտակցում էին Հայաստանի կառավարությունում: Ալ. Խատիսյանը պատասխան նամակում շարադրել էր հայկական կողմի պատկերացումները, ըստ որոնց Պոնտոսը մտնում էր Հայաստանի կազմի մեջ որպես ֆեդերատիվ միավոր (ոչ կոնֆեդերատիվ)՝ միասնական բանակով, դրամով, ցամաքային և ծովային հեռահաղորդակցությամբ, կապով (փոստ և հեռագրական կապ) և Խորհրդարանով: Պոնտոսը պետք է ունենար ազատություն իր ներքին հարցերը լուծելու և դրա համար անհրաժեշտ մարմինները (տեղական խորհրդարան) ստեղծելու մեջ: Փարիզի Խաղաղության վեհաժողովում երկու պատվիրակությունները պետք է գործեին միասնաբար²¹: Հունական կողմն

²¹ Տե՛ս նույն տեղում, էջ 66:

առարկեց բանակի առումով երկու նկատառումներով: Նրանք գտնում էին, որ բանակը չի կարող միասնական լինել լեզվական, Հունաստանից եկող համալրումների, կառուցվածքի և այլ պատճառներով: Եվ երկրորդ՝ Պոնտոսի բանակն իր փոքրության և դրա համեմատ Պոնտոսի տարածքի մեծության պատճառով պետք է մնա այդտեղ: Հայկական կողմը համաձայնեց այդ նկատառումների հետ: Պայմանագիրը կնքվեց Երևանում՝ Ալ. Խատիսյանի տանը հունվարի 2-ին: 1920 թ. հունվարի 7-ին Հայաստանի կառավարությունը հաստատեց պայմանագիրը²²:

Այս պայմանագրի կնքումը հիմք է տալիս կնքելու էլ ավելի համապարփակ՝ հայ-հունական պայմանագիրը: Սակայն հայպոնտական միասնական պետության դեմ են արտահայտվում Եվրոպայում բնակվող հույները: Ակնհայտ է, որ ապրելով տարածաշրջանից հեռու և տեղյակ չլինելով իրադրության իրական վիճակից, նրանք սխալմամբ կարծում էին, թե Պոնտոսի հույները Հունաստանի օգնությամբ ի վիճակի էին առանց հայերի պայքարել Պոնտոսի անկախության համար և Դաշնակից տերություններն իրենց պետք է անպայման օգնեին այդ հարցում: «Պոնտոս» կազմակերպության նախագահ Կ. Կոստանտինիդիսը Փարիզի Վեհաժողովում բողոք է ներկայացնում հայկական ծրագրերի դեմ: Նա և նրա կազմակերպության անդամները հայտարարում են, թե չեն ուզում թուրքական լուծը փոխարինել հայկականով և որ իրենք պատրաստ են զենքով պաշտպանել իրենց իրավունքները²³: Այս վտանգավոր գծությունը դադարեցնելու նպատակով տեղի ունեցան բանակցություններ Հայ

²² Տե՛ս **Թորոսյան Ծ.**, Ծովային ելքի հիմնահարցը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունում, Երևան, 2017, էջ 42:

²³ Տե՛ս նույն տեղում, էջ 39:

ազգային առաջին համագումարի և «Պոնտոս»-ի ներկայացուցիչների միջև, որտեղ հույները մերժեցին հայկական պետության կազմի մեջ ներքին ինքնավարություն ունենալու առաջարկը և դրա փոխարեն իրենք առաջարկեցին Հայաստանին ազատ ելք դեպի Ռիզե և Աթինե նավահանգիստները: Իսկ հայկական կողմը համաձայն էր Հայաստանի և Պոնտոսի դաշնությանը Շվեյցարիայի օրինակով: Պետք է նշել, որ Պոնտոսի հույներին հայերի հետ դաշնություն կազմելու ծրագրի դեմ ընդդիմանալուն աջակցում էին վրացիները (թե՛ կառավարությունը և թե՛ Փարիզում վրացական պատվիրակությունը), որոնք իրենք էին ցանկանում զավթել Արդահանը, Օլթին և Արդվինը: Այդ տարածաշրջանում վրացական հատուկ ծառայությունները համագործակցում էին թուրք-քրդական ուժերի հետ՝ ընդդեմ հայերի²⁴:

Է. Վենիզելոսի կարգադրությամբ գնդապետ Կաթենիոտիսը (ով նաև Փարիզում հունական պատվիրակության ղեկավարն էր) Թիֆլիսում փետրվարի կեսին ՀՀ արտգործնախարար Ալ. Խատիսյանի հետ նոր պայմանագիր են կնքում, ըստ որի կողմերը համաձայնության էին գալիս քեմալականների դեմ միասնական ճակատ ստեղծելու մեջ: Ըստ այդ պայմանագրի՝ Հայաստանը որպես սեփականություն ստանում էր մի նավահանգիստ Ռիզե քաղաքի մոտակայքում, իսկ Պոնտոսը դառնում էր անկախ պետություն՝ կազմելով համադաշնություն Հայաստանի հետ: Փարիզի հայկական պատվիրակությունը Ավետիս Ահարոնյանի և Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ դեմ էր այդ պայմանագրին՝ գտնելով, որ հայկական կողմն ավելորդ զիջո-

²⁴ Կարսի մարզում վրացիների գործունեության մասին տե՛ս **Վիրաբյան Վ.**, Հայկական հետախուզությունը Առաջին Հանրապետության տարիներին (1918–

ղականություն է հանդես բերել հույների նկատմամբ: Պետք է նշել, որ հետագա ամիսներին Հայաստանի պատվիրակության՝ Պոնտոսը հայկական պետության մեջ ներառելու պահանջներն է՛լ ավելի ամրապնդվեցին ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռով, ըստ որի Տրապիզոնն իր շրջակայքով պետք է մտներ Հայաստանի կազմի մեջ:

Սակայն 1920 թ. ձմռանը, երբ ընթանում էին հայ-պոնտական բանակցությունները, տարածաշրջանում տեղի ունեցան իրադարձություններ, որոնք արմատապես փոխեցին ռազմաքաղաքական իրավիճակը: Նախ՝ հունվարի 28-ին օսմանյան խորհրդարանը, չդիմանալով օրեցօր հզորացող Մուսթաֆա Քեմալի ճնշմանը, ընդունեց «Ազգային ուխտ»-ը, ինչը նշանակում էր, որ երկրում փաստացի իշխանությունը պատկանում էր Քեմալին, այլ ոչ թե սուլթանական կառավարությանը: Այս իրադարձությունը պայքարի ազդակ հանդիսացավ թուրքերի մեծ մասի համար: Հասկանալի է, որ անմիջապես սրվեցին հարաբերությունները Քեմալի և Դաշնակից տերությունների միջև, ինչը մարտի 16-ին հանգեցրեց վերջիններիս կողմից Կոստանդնուպոլսի գրավմանը: Սակայն դա տվեց հակառակ արդյունք. թուրքերը ոչ միայն չընկճվեցին, այլև հազարներով միացան Քեմալի ջոկատներին: Այս իրավիճակն ազատ էր արձակում Քեմալի ձեռքերը Թուրքիան բոլոր քրիստոնյաներից մաքրելու գործում: Ծայրահեղականացված թուրքական հասարակությունը պահանջում էր ոչնչացնել մինչև վերջին քրիստոնյան:

Երկրորդ իրադարձությունը բոլշևիկյան Ռուսաստանի ներխուժումն էր Անդրկովկաս: Քեմալական շարժման դաշնակցի

1920 թթ.), Երևան, 2003, էջ 74–75: Փարիզում վրացական պատվիրակության մասին տե՛ս **Թորոսյան Շ.**, նշվ. աշխ., էջ 43:

հայտնվելը տարածաշրջանում միանգամից փոխեց ուժերի հավասարակշռությունը հոգուտ թուրք-ռուսական դաշինքի: Ասել, թե բոլշևիկների հայտնվելը, կամ նրանց ջերմ հարաբերությունները Քեմալի հետ անակնկալ էր, ճիշտ չէ: Դեռևս 1919 թ. մայիսի 1-ով և 16-ով թվագրված՝ հայկական հետախուզության սպաներ պորուչիկ Հովհան Խան-Կոտուրսկու (ղեկավար), լեյտենանտ Վարանովսկու և շտաբս-կապիտան Տիգրան Դևոյանի զեկուցագրերի համաձայն՝ թուրքերը Տրապիզոնից մինչև վրացական սահմանն ընկած տարածքներում զանգվածաբար զինում էին լազերին և տեղի թուրքերին, Տրապիզոնում տեղակայված էր 5 հազարանոց թուրքական զորախումբ, կատարվում էր զորահավաք իբր ժանդարմերիայի շարքերը լրացնելու համար (քանի որ ըստ Մուդրոսի զինադադարի թուրքերն իրավունք չունեին համալրելու բանակը), բայց իրականում զորակոչվածներն ուղարկվում էին Էրզրում՝ Հայաստանի սահմաններին մոտ: Իսկ արտաքին քաղաքականության առումով ընդգծվում էր, որ թուրքերն իրենց երկրի փրկությունը տեսնում էին միայն ռուս բոլշևիկների մեջ և Տրապիզոնում շատ ուժեղ էր բոլշևիկների ազդեցությունը²⁵: Այսինքն այս իրադարձությունները տեղի էին ունենում մինչև Քեմալի քաղաքական ասպարեզում հայտնվելը:

Ռուս բոլշևիկները՝ հանձինս հայերի և հույների, տեսնում էին Անտանտի դաշնակիցների, որոնք, ըստ իրենց, հանդիսանալով վերջինիս կույր գործիքները, ցանկանում էին արյան մեջ խեղդել թուրքերի և իրենց ազատագրական պայքարը: Վերջին հանգամանքը պայմանավորված էր նրանով, որ Է. Վենիզելոսի քաղաքական կոպիտ սխալի հետևանքով հունական էքսպեդի-

²⁵ Տե՛ս Վիրաբյան Վ., Հայկական հետախուզությունը Առաջին Հանրապետության տարիներին (1918–1920 թթ.), Երևան, 2003, էջ 57–58:

ցիոն կորպուսը ֆրանսիական զորքերի կազմում 1919 թ. ծմռանը և գարնանը կռվում էր բուլշևիկների դեմ Ղրիմում և Հարավային Ուկրաինայում (տխրահոջակ Ուկրաինական արշավը)՝ վաստակելով նրանց ատելությունն ու թշնամանքը, որն աղետալի հետևանքներ կունենա հունական բանակի համար 1921–1922 թթ. և Պոնտոսի հունագրկման հարցում:

Կոստանդնուպոլսի գրավումը Դաշնակիցների կողմից և քեմալական շարժման տարածումը Հունաստանի և Մեծ Բրիտանիայի կառավարություններին ստիպեց 1920 թ. ամռանը Փոքր Ասիայում սկսել լայնածավալ հարձակում: Պետք է նշել, որ չնայած թուրքական հասարակությունում ունեցած աջակցությանը, քեմալական շարժումը ռազմական տեսակետից բավականին թույլ էր, և նույնիսկ հունական բանակը միայնակ կարող էր շատ ծանր հարվածներ հասցնել վերջինիս, ինչը և տեղի ունեցավ 1920 թ. հունիսի 22-ին: Բրիտանական զորքերը՝ ներառյալ նաև ծովային և ռազմաօդային, մասնակցում էին փոքր ծավալներով: Քեմալական ջոկատներն այդ շրջանում ներկայացված էին ավելի շատ անկանոն պարտիզանական ջոկատներով, քանի որ կանոնավոր զորամասերն այդ ժամանակ ներգրավված էին արևելքում և հարավում՝ այսինքն Հայաստանում և Իրաքում՝ Մեծ Բրիտանիայի դեմ ռազմագործողություններում: Սակայն այդ կանոնավոր զորամասերը շատ վատ էին զինված և շատ վատ էին մատակարարվում սննդով: Սպաներն ու զինվորներն ամիսներով աշխատավարձ չէին ստանում: Մինչև սեպտեմբերի 3-ը բրիտանա-հունական զորքերը գրավեցին Աքիսար (հունիսի 22), Քըրքաղաչ, Սոմա, Սալիլի (հունիսի 24), Ալաշեհիր (հունիսի 25), Քուլա (հունիսի 28), Բալըքեսիր (հունիսի 30), Բանդըրմա, Քըրմասթը, Քարաջաբեյ (հուլիսի 2), Նազիլլի (հուլիսի 3), Գեմ-

լիք, Մուդանյա (հուլիսի 6), Բուրսա (հուլիսի 8), Քարամյուրսել (հուլիսի 11), Իզնիկ (հուլիսի 12), Գեդիզ, Ուլուքեյ (օգոստոսի 28), Ուշաք (օգոստոսի 29) և Սիմալ (սեպտեմբերի 3) քաղաքները²⁶: Ընդհանուր առմամբ այս ամառային հարձակման ընթացքում հունական զորքերն առաջ էին շարժվել մոտ 200 կմ²⁷:

Սակայն աշնանն ամեն ինչ կտրուկ փոխվում է հոգուտ Մ. Քեմալի: Դեռ ամռանը Խորհրդային Ռուսաստանի XI կարմիր բանակն արդեն խորհրդայնացած Ադրբեջանի կարմիր բանակի հետ միասին իրագործելով ագրեսիա Հայաստանի Հանրապետության դեմ, կարողանում են զավթել Արցախը, Սյունիքի մի մասը և ցամաքային կապ հաստատել քեմալական զորքերի հետ Նախիջևանում: Այս փաստը թույլ է տալիս բոլշևիկներին լայնածավալ օգնություն ցույց տալ թուրքերին Բաքու-Նախիջևան երկաթգծով (կար նաև ծովային ուղին՝ Նովոռուսիյսկից դեպի թուրքական սևծովյան նավահանգիստներ): 1920 թվականի ամռանը (հուլիսի 2) Մոսկվայից Անկարա ուղևորվեց Յան Ուսմալ-Անգարսկու²⁸ ղեկավարած պատվիրակությունը, որը նպատակ ուներ դիվանագիտական հարաբերություններ հաստատել Անկարայի թուրքական կառավարության հետ: Օգոստոսի 30-ին Կարաքյոսեում (Ադրի) այս պատվիրակությունը թուրքական կողմին փոխանցեց 200,6 կգ ոսկի, որի մի մասն օգտագործվեց

²⁶ Տե՛ս **Ahmet Nural Öztürk**: Kula, Katakekaumene (Yanık göre): 2000 yıl önce Strabon'un adını koyduğu yöre, Öğrenci Basimevi, İzmir, 1986, s. 137–138. Տե՛ս նաև **Münir Sayhan**: Milli Mücadele'de Çivril, (1919–1922), Kitsan, Denizli, 2006, s. 15–18.

²⁷ Տե՛ս **Geoffrey Jukes, Peter Simkins, Michael Hickey**: The First World War: The Mediterranean Front 1914–1923, Osprey Publishing, Oxford, 2002, p. 13.

²⁸ **Յան Ուսմալ-Անգարսկի** (1893–1938), ազգությամբ՝ լատվիացի, ռուսաստանյան բոլշևիկ և խորհրդային դիվանագետ ու պետական գործիչ: 1920 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին եղել է Անկարայում ՌՍԴԲՀ-ի ներկայացուցչության խորհրդական, Թուրքիայում ՌՍԴԲՀ գործերի հավատարմատար: Ստալինյան բռնաճնշումների զոհ:

թուրքական արևելյան ռազմաճակատի սպաներին աշխատավարձ վճարելու համար, իսկ մնացած մասն ուղարկվեց Անկարա²⁹: Իսկ ընդհանուր առմամբ, մի փոքր առաջ անցնելով նշենք, որ Խորհրդային Ռուսաստանը քեմալական կառավարությանը փոխանցել է 39 հազար հրացան, 327 գնդացիր, 54 թնդանոթ, 63 միլիոն փամփուշտ, 147 հազար արկ, ինչպես նաև սվիններ, թրեր, ձեռքի նոնակներ, հակագազեր և այլ սպառազինություններ: Բոլշևիկներն օգնում էին թուրքերին տեղափոխել արևելյան ռազմաճակատում եղած սպառազինությունը և այլ ռազմական հանդերձանքը, որոնց մի մասը պատկանել էր ցարական բանակին, իսկ հետո անցել էր հայկական բանակին և ընկել էր թուրքերի ձեռքը հայ-թուրքական 1920 թվականի պատերազմի ժամանակ, դեպի արևմտյան ռազմաճակատ Բաթումի նավահանգստից Սինոպ նավերով տեղափոխելով: Այս ճանապարհով արևմտյան ռազմաճակատ տեղափոխվեց 113 միավոր ծանր հրետանի, որոնց մի մասը Կարսի ամրոցի ծանր պաշարողական հրետանին էր: Լենինի անմիջական հրահանգով քեմալական կառավարությանը որպես անհատույց վարկ տրվեց տասը միլիոն ռուբլի ոսկով, որի շնորհիվ Ֆրանսիայից, Իտալիայից, Գերմանիայից թուրքերը ձեռք բերեցին 1500 թեթև գնդացիր, 2735 արկղ փամփուշտ, տասը անգար, չորս ավիացիոն շարժիչ, քսան ինքնաթիռ, երեք ռադիոկայան, 200 բեռնատար ավտոմեքենա, ինչպես նաև այլ սպառազինություններ, հանդերձանք, նավթամթերք և սննդամթերք³⁰: Ստանալով այսպիսի ահռելի օգնություն՝ Մուսթաֆա Քեմալը կարողացավ պաշտպանությունից անցնել հարձակման և վճռական հաղթանակներ տանել

²⁹ Ст'а СССР и Турция 1917–1979, Москва, 1981, с. 32.

³⁰ Ст'а նույն տեղում, էջ 46:

հունական ու հայկական զորքերի դեմ: Բացի այդ՝ հունական փոքրասիական արշավանքին թշնամաբար տրամադրվեցին Իտալիան և Ֆրանսիան, որոնք իրենք էին ուզում զավթել այդ հողերը և վախենում էին Մեծ Բրիտանիայի ազդեցության աճից: Նրանք սկսեցին համագործակցել Մ. Քեմալի հետ ընդդեմ հույների և անգլիացիների: Շատ կարճ ժամանակ անց անգլիացիներն էլ լքում են թե՛ հայերին և թե՛ հույներին՝ աստիճանաբար համագործակցելով Մ. Քեմալի հետ՝ համարելով նրան միակ ուժը, որ կարող էր կանգնեցնել ռուս բոլշևիկներին:

1920 թ. սեպտեմբերի 22-ի լույս 23-ի գիշերը, վերջացնելով բոլոր նախապատրաստությունները, քեմալական զորքերը հարձակվեցին Հայաստանի Հանրապետության վրա: Հայկական զորքերը, չստանալով օգնություն իր դաշնակիցներից, այդ թվում՝ Հունաստանից, արագորեն նահանջում էին՝ մեկը մյուսի ետևից տալով կարևոր ռազմավարական կետերն ու քաղաքները: Հոկտեմբերի 30-ին ընկավ Կարսը և ամբողջ Կարսի մարզն անցավ թուրքերի տիրապետության տակ: Սա ողբերգական նշանակություն ունեցավ ոչ միայն հայերի, այլև այնտեղ բնակվող 70 հազար հույների համար (13 գյուղ Գյուլեում և 8-ը Արդահանում և այլ բնակավայրերում), որոնք ծանր զրկանքներով անցան բարձր լեռները և 20 օր հետո հասան Բաթում: Երկու գյուղերի բնակիչները, ովքեր հրաժարվեցին գաղթել, սրի քաշվեցին թուրքերի կողմից: Հետագայում նրանք, ինչպես նաև Պոնտոսից գաղթածները, Բաթումից և Նովոռոսիյսկից տեղափոխվեցին Հունաստան:

1920 թ. դեկտեմբերի 2-ին Քեմալական Թուրքիայի հետ կնքված Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանի համար ծանր պարտությամբ ավարտվեց այս պատերազմը: Նույն օրը

բուլճարիկների հետ կնքված Երևանի պայմանագրով Հայաստանի Հանրապետության կառավարությունն իշխանությունը փոխանցեց հայ բուլճարիկներից կազմված Ռազմհեղկոմին, իսկ փաստացի՝ Հայաստանը կորցրեց իր անկախությունը, դարձավ Խորհրդային Ռուսաստանի հերթական գաղութը և անցավ Դաշնակից տերությունների և Հունաստանի թշնամիների ճամբարը:

Ինչ վերաբերում է Պոնտոսին, ապա քանի դեռ թուրքական զորքերը չէին կարողանում առավելության հասնել հունական բանակի նկատմամբ, Մ. Քեմալը չէր համարձակվում վերջնականապես լուծել Պոնտոսի հունագրկման հարցը: Եվ միայն Սաքարիայի ճակատամարտից հետո Պոնտոսում հույների նկատմամբ բռնությունները շարունակվեցին: Նորից հույներին «մահվան քարավաններով» ուղարկում էին Փոքր Ասիայի խորքը, որտեղից, որպես կանոն, վերադառնում էր 25 %-ը: Սովորական երևույթ էին դարձել ուղղակի ջարդերը՝ գյուղերի ամբողջական ոչնչացմամբ: 1922 թ. աշնանը, երբ սկսվեցին Լոզանի հաշտության բանակցությունները, Պոնտոսում մնացել էին աննշան քանակությամբ հույներ, որոնք, համաձայն Հունաստանի և Թուրքիայի միջև կնքված բնակչության փոխանակման պայմանագրի, անցան Հունաստան: Բայց լեռներում և անտառներում մնացել էին դեռ հարյուրավոր պարտիզաններ, որոնք չէին հավատում այդ պայմանագրի գոյությանը՝ կարծելով, թե դա թուրքական իշխանությունների հերթական ծուղակն է: Նրանք իրենց ընտանիքներով մարտերով անցան Խորհրդային Միություն, որտեղից էլ՝ Հունաստան:

Լոզանի պայմանագիրը վերջնականապես խորտակեց ինչպես հայերի հույսերը Թուրքիայում «Հայկական օջախ» ունենա-

լու, այնպես էլ հույների հույսերը Պոնտոսում գոնե ինքնավարություն ունենալու: Արտաքին և ներքին տարբեր գործոնների պատճառով հայ-հունական չստացված զինակցությունն աղետալի հետևանքներ ունեցավ ինչպես Արևմտյան Հայաստանի, այնպես էլ Պոնտոսի համար:

Եզրակացություններ

Հայաստանի և Հունաստանի միջև չստացված զինակցության պատճառով Թուրքիայի կողմից կրված պարտությունները և որպես դրա հետևանք՝ Արևմտյան Հայաստանի և Պոնտոսի կորուստները հետևանք էին մի շարք արտաքին և ներքին պատճառների, որոնց բացահայտումը և վերլուծությունը չափազանց կարևոր է ներկայիս համաշխարհային և տարածաշրջանային ծավալվող իրադարձություններում նմանատիպ սխալները չկրկնելու նպատակով:

ա) ներքին պատճառների մեծ մասը բաժին է ընկնում պոնտական հույներին, որոնք տրվելով Դաշնակիցների և Հունաստանի օգնության սին հույսերին, իրատեսորեն չգնահատեցին իրական իրադրությունը և համագործակցության փոխարեն փաստացի խանգարում էին օր առաջ Հայաստանի և Պոնտոսի միավորմանը և համատեղ ուժերով հակաքեմալական ճակատ ստեղծելու ջանքերին: Դա մեծ մասամբ արդյունք էր այն բանի, որ պոնտական հույների առաջնորդները ռազմական, քաղաքական գործիչներ կամ դիվանագետներ չէին, և նրանց սխալները աղետալի հետևանքներ ունեցան առաջին հերթին հույների համար:

բ) իր մեղքի բաժինն ունի նաև հայկական կողմը. հայկական կառավարություն՝ ի դեմս Ա. Խատիսյանի և Ռ. Տեր-Մինաս-

յանի, 1920 թ. փետրվարին Թիֆլիսում Հունաստանի հետ կնքված պայմանագրով չարդարացված զիջումների գնաց, ինչը հիմք տվեց պոնտացի հույներին ավելի կոշտացնել իրենց դիրքորոշումը և թուլացնել հայկական պատվիրակության դիրքերը Փարիզում: Կարևոր պատճառ էր նաև կառավարության և պատվիրակության անհամագործակցությունը և միասնական դիրքորոշման չհանգելը:

գ) արտաքին պատճառներից ամենակարևորն իհարկե քեմալա-բուլշևիկյան մերձեցումն էր: Ռուս բուլշևիկների համար քեմալականները դիտվում էին որպես իրենց բնական դաշնակիցներ, որոնք պետք է պատվար հանդիսանային իրենց հարավային սահմանների և Անտանտի տերությունների միջև: Հայաստանի Հանրապետությունը դիտվում էր որպես Անտանտի դաշնակից և նրանց հենակետ՝ Բաքվի նավթին տիրանալու համար: Նույնն էր նաև Պոնտոսի դեպքում, և հասկանալի էր, որ ռուսներն ամեն ինչ անելու էին, որպեսզի իրենց հարավային ծովային և ցամաքային սահմաններին մոտ Անտանտը ռազմածովային բազա չունենար:

դ) ինչ վերաբերում է Մ. Քեմալին, ապա նա, շարունակելով երիտթուրքերի քաղաքականությունը, իր առջև նպատակ էր դրել Թուրքիայում ընդհանրապես ոչնչացնել քրիստոնյաներին: Սա հատկապես վերաբերում էր հայերին և հույներին, որոնք իր սահմանների մոտ ունեին իրենց պետությունները և օգտագործելու էին ամեն առիթ իրենց մայր հայրենիքներին միանալու համար: Բացի այդ՝ հայերի և հույների ներկայությունն իրենց բնօրրաններում Հայաստանին և Հունաստանին հիմք էր տալու օրինական կարգով պահանջել այդ տարածքները որպես թուրքերի կողմից անարդարաբար բռնազավթված: Եվ հասկանալի

է, որ քեմալական իշխանությունն ամեն ինչ անելու էր, որ այդ հողերում ոչ մի հայ և հույն չմնար:

ե) Պոնտոսի համար աղետալի հետևանքներ ունեցան նաև Հունաստանի ռազմաքաղաքական դեկավարության կողմից թույլ տրված կոպիտ սխալները, մասնավորապես՝ վարչապետ Է. Վենիզելոսի կողմից հունական զորքերը Խորհրդային Ռուսաստանի դեմ ուղարկելը, ինչի պատճառով Հունաստանը բուլղարիկների համար դարձրեց թշնամի երկիր՝ այստեղից բխող բացասական բոլոր հետևանքներով, որոնք 1921–1922 թթ. բուլղարանգի նման հարվածեցին Հունաստանին և նրա բանակին: Դրան գումարվեց՝ 1920 թ. նոյեմբերին կայացած խորհրդարանական ընտրությունների ժամանակ Վենիզելոսի պարտությունը, ինչը բացասաբար անդրադարձավ պատերազմի ընթացքի վրա: Ճակատագրական սխալներ կատարեց նաև հունական փոքրասիական էքսպեդիցիոն կորպուսի հրամանատարությունը, երբ Աֆյոն-Կարահիսար-Էսքիշեհիրի հաղթական ճակատամարտից հետո Քյութահյա ժամանեց Սամսունի մետրոպոլիտ Գերմանը գեներալ Վիկտոր Դուսմանիսից դեպի Պոնտոս ծովով մեկ գունդ ուղարկելու խնդրանքով, որն իր շուրջը միավորելով տեղի պարտիզանական ջոկատները կհարվածեր քեմալական ուժերին թիկունքից, ստացավ վերջինից վճռական մերժում այն պատճառաբանությամբ, թե այսպես թե այնպես մեկ ամսից ինքը կլինի Անկարայում: Բացի այդ, թեև Հայաստանի իշխանությունները ամեն կերպ աջակցում և ընդառաջում էին հունական կողմին, վերջինս գործնական ոչ մի քայլ չկատարեց Հայաստանի տարածքում հունական զինվորական ստորաբաժանումներ ստեղծելու համար:

զ) հունական հարցի ընդհանրապես և պոնտական հարցի համար մասնավորապես մահացու հարված էր ի սկզբանե Իտալիայի և Ֆրանսիայի, իսկ 1920 թ աշնանից նաև Մեծ Բրիտանիայի բացասական, իսկ որոշ դեպքերում նաև՝ թշնամական դիրքորոշումը: Հույների կողմից Զմյուռնիայի ազատագրումից անմիջապես հետո Իտալիան թշնամական դիրք բռնեց և սկսեց աջակցել Քեմալին: Նա ոչ միայն իր զորքերը դուրս բերեց Հարավարևմտյան Անատոլիայից (Անթալիա, Բողրում Մարմարիս, Քոնիա, Սպարտա), այլև բուլղարիկյան ոսկու դիմաց Քեմալին վաճառում էր սպառազինություն: Նույն կերպ վարվեց և Ֆրանսիան, ով զիջեց Կիլիկիան, Մարաշը և Այնթափը թուրքերին և 1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում հաշտության պայմանագիր կնքեց Քեմալի հետ: Չնայած Ուկրաինական արշավանքին մասնակցելու դիմաց Փարիզի վեհաժողովում հունական շահերը պաշտպանելու Ժ. Կլեմանսոյի խոստումին՝ 1920–1921 թթ. Ֆրանսիան ոչ միայն չպաշտպանեց, այլև թշնամական դիրք բռնեց հունական արշավանքի նկատմամբ: Սա հնարավորություն տվեց վերջինիս Կիլիկիայի արդեն նախկին ռազմակատից ազատված զորքերը նետել հունական ճակատ, ինչը շատ ծանր հետևանքներ ունեցավ հունական բանակի համար:

է) սակայն հայերի և հույների համար ամենաողբերգական հետևանքներն ունեցավ Մեծ Բրիտանիայի դիրքորոշումը: Մ. Քեմալի ապստամբության հենց սկզբից բրիտանական իշխանությունները միտք չունեին նրան չեզոքացնել, այլ նրան դիտում էին որպես Թուրքիան քաղաքականապես երկու մասի բաժանող, սուլթանական կառավարությանն ընդդիմադիր ուժ, որին կարելի է օգտագործել իր խամաճիկային խաղերի մեջ: Մեծ Բրիտանիան ոչ մի նպատակ չունեի հզորացնելու Հունաստա-

նին և նրան արգելում էր զորքեր ուղարկել Պոնտոս: Նման քաղաքականություն վարում էր նաև Հայաստանի հանդեպ՝ խոչընդոտելով Արցախի միացումը Հայաստանին, «չեզոք գոտի» անվանումով Լոռիի փաստացի օտարումը Հայաստանից, հայկական բանակի զինանոցներից, խախտելով միջազգային օրենքները, ուժի սպառալիքով տարբեր սպառազինությունների (հատկապես ծանր հրետանու) դուրս էր բերում երկրից և այլն: Այս պարագայում ինքնըստինքյան հասկանալի էր, որ Մեծ Բրիտանիան խոչընդոտելու էր Հայաստանի և Պոնտոսի միավորմանը: Բոլշևիկյան Ռուսաստանի հայտնվելը Անդրկովկասում նոր ռազմաքաղաքական իրադրություն ստեղծեց տարածաշրջանում, ինչին շատ արագ արձագանքեցին անգլիական իշխանությունները: Ակնհայտ էր, որ ռուս բոլշևիկներն իրենց առջև նպատակ էին դրել տարածել հեղափոխությունը ողջ Մերձավոր Արևելքում և Հարավային Ասիայում՝ Հնդկաստանում (այդ նպատակի համար Վ. Լենինը օգտագործում էր Էնվերին, ով պատրաստակամություն էր հայտնել ապստամբեցնել Հյուսիսային Հնդկաստանի և Աֆղանստանի մահմեդական ցեղերին անգլիացիների դեմ): Իրերի վերլուծումը բերեց բրիտանացիներին այն համոզման, որ ռուսներին ի վիճակի է կանգնեցնել միայն թուրքական բանակը: 1920 թ. աշնան սկզբից հույները մնացին մենակ օրեցօր հզորացող թուրքական ռազմական մեքենայի առջև: Բրիտանացիները չօգնեցին նաև հայերին: Ավելին՝ 1920 թ. սեպտեմբերին սկսված թուրք-հայկական պատերազմից առաջ նրանք Կարսի որոշ ծանր թնդանոթներ տարել էին: Այսինքն՝ բրիտանացիներն ամեն ինչ անում էին. որպեսզի Կարսի ռազմավարական ամրոցը, որն իրավամբ համարվում էր Մերձավոր Արևելքի կարևորագույն բանալիներից մեկը, ընկնի ոչ թե ռուս-

ների, այլ թուրքերի ձեռքը, ինչը և տեղի ունեցավ: Բրիտանացի-ների համար պարզ էր, որ Մ. Քեմալը ոչ մի ցանկություն չունեւ բոլշևիկների հետ մերձենալու, այլ ուղիներ էր փնտրում ջերմ հարաբերություններ հաստատելու Եվրոպայի տերությունների հետ, ինչը և տեղի ունեցավ Լոզանի կոնֆերանսում, երբ նա կտրուկ շրջադարձ կատարեց դեպի Դաշնակից տերությունները՝ փակելով բոլշևիզմի մուտքը Մերձավոր Արևելք:

ը) իր բացասական դերակատարումն ունեցավ նաև Վրաստանը, որն ամեն կերպ խոչընդոտում էր հայ-պոնտական միացմանը: Փարիզում վրացական պատվիրակությունը դեմ արտահայտվեց Տրապիզոնը Հայաստանին հանձնելու ծրագրերին և ամեն կերպ աջակցում էր պոնտական պատվիրակությանն այդ հարցում: Բացի այդ, վրացական իշխանությունները Կարսի մարզում և հատկապես նրա հյուսիսային շրջաններում՝ Արդահանում, Արդվինում և Օլթիում, աջակցում էին թուրք-քրդական ուժերին՝ նպատակ ունենալով անջատել այդ շրջանները Հայաստանից և բռնակցել Վրաստանին:

Այսպիսով, վերը նշված արտաքին և ներքին պատճառներով պայմանավորված՝ հայ-հունական զինակցության ձախողումը հանգեցրեց նրան, որ քեմալական Թուրքիան կարողացավ արտաքին ուժերի օգնությամբ առանձին-առանձին պարտության մատնել Հայաստանին և Հունաստանին և վերջնականապես հայերին ու հույներին դուրս մղել Արևմտյան Հայաստանից, Պոնտոսից և Փոքր Ասիայից:

Арам С. Саиян, *Институт истории НАН РА, к.и.н.*, Понтийский вопрос и несостоявшееся армяно-греческое военное сотрудничество.

После Мудросского перемирия ситуация в Понте оставалась сложной. В отличие от армян, турки не истребили греков полностью и после войны в Понте по разным подсчётам оставались примерно 200 тыс. греков. Примерно столько же были вынуждены перебираться в южные области России или Кавказ. Понтийские греки стремились к отделению Понта от Турции и созданию независимого государства. Для достижения своих целей на Парижской мирной конференции, в России, Греции и Париже были созданы общественные организации, главными из которых были Парижская (Понтос) и Тифлисская.

Понтийские греки полагали получить помощь и Греции, однако премьер-министр Греции Элефтериос Венизелос считал, что Греция не сможет в одиночку справиться с этим. Союзные же государства высказались резко против и отвергли просьбы понтийцев о помощи. В сложившейся ситуации единственным выходом руководство Греции считало армяно-понтийский военно-политический союз, а именно – вхождение Понта в состав Республики Армения. Его убеждение ещё больше укрепилось, когда на Парижской мирной конференции армянская делегация потребовала для Армении выхода к морю, а именно часть Понта с его столицей – городом-портом Трапезундом (Трабзон). Это требование нашло своё отражение в арбитражном решении президента США Вудро Вильсона от 22 ноября 1920 г.

Однако понтийские греки были против этих планов. Организация «Понтос» обратилась с жалобой к Союзным державам в

Париже. Понтийцы согласны были на конфедерацию с сохранением независимости Понта. Однако на это не соглашалась армянская сторона.

Усиление кемалистского движения и вторжение большевистской России в Закавказье вынудило понтийцев согласиться с условиями армянской стороны. В январе 1920 г. в Ереване было подписано соглашение о создании армяно-понтийского государства, по которому Понт и Армения объединялись в конфедерацию. Однако кемалистско-большевистская агрессия против Армении и негативная позиция Союзнических держав по отношению к армяно-греческому военному союзу и греческому наступлению против кемалистов не позволили этим планам осуществиться. В конечном итоге это привело к поражению Армении и Греции от кемалистской Турции и окончательному изгнанию армянского и греческого населения из Понта и Западной Армении.

Aram S. Sayiyan, *Institute of History of the NAS RA, PhD in History, The Pontic Question and the failed Armenian-Greek Military Cooperation.*

After the armistice of Mudros, the situation in Pontus was very difficult. Unlike the Armenians, the Turks did not completely exterminate the Greeks, and after the war, according to various calculations, there were about 200 thousand Greeks in Pontus. About the same number of people were forced to move to the southern regions of Russia or the Caucasus. The Pontic Greeks wanted to separate Pontus from Turkey and create an independent state. To achieve their goals in the Paris Peace Conference public

organizations were created in the Caucasus, Russia, Greece and Paris, the main of which were the Parisian (Pontos) and Tiflis.

The Pontic Greeks believed that Greece would also get help, but Greek Prime Minister Eleftherios Venizelos believed that Greece would not be able to cope with this alone. And the Allied States strongly opposed this and themselves rejected the requests of the Pontians for help. In this situation, the military-political leadership of Greece saw the only way out in the Armenian-Pontic military-political Union, namely, the entry of Pontus into the Republic of Armenia. His conviction was further strengthened when, at the Paris Peace Conference, the Armenian delegation demanded access to the sea for Armenia, namely a part of Pontus with its capital – the port city of Trapizon. And this requirement is reflected in the arbitral award of US President Woodrow Wilson.

However, the Pontic Greeks were against these plans. The organization “Pontos” filed a complaint with the Allied powers in Paris. In this regard, it was supported by the Georgian delegation, which itself wanted to capture the northern part of the Kars region of Armenia. The Pontians agreed to a Confederation with the preservation of the independence of Pontus. However, the Armenian side did not agree to this, because it had more responsibilities with equal rights. In addition, the Greeks of Pontus did not have any power in Pontus, where they were inferior to the Muslims (Turks and Lazs) in number several times.

But the strengthening of the Kemalist movement and the invasion of the South Caucasus by Bolshevik Russia forced the Pontians to accept the conditions of the Armenian side. In January 1920, an agreement on the establishment of the Armenian-Pontic

state was signed in Yerevan. But in February, in Tiflis, an agreement was signed between the Armenian and Greek sides on the creation of a joint anti-kemalist front, according to which Pontus and Armenia were united into a Confederation. However, the Kemal-Bolshevik aggression against Armenia and the negative attitude of the Allied powers towards the Armenian-Greek military Alliance and the Greek offensive against the Kemalists did not allow these plans to come true. This led to the defeat of Armenia and Greece from Turkey and the final expulsion of the Armenian and Greek population from Pontus and Western Armenia.

ՄԱՐԻԱՄ Վ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, ք.գ.թ.

**ՄԻԱՅՅԱԼ ԵՎ ԱՆԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ ՊՈԼՍԱՀԱՅ
ՄԱՄՈՒԼԻ ԷՋԵՐՈՒՄ**

Բանալի բառեր՝ Կոստանդնուպոլիս, արևմտահայ մամուլ, Միացյալ և Անկախ Հայաստան, արքերական, Հայոց ցեղասպանություն, քաղաքականություն, Հայ ուսմկավարներ, Ժողովրդական կուսակցություն, դաշնակցական ուղղվածություն ունեցող թերթեր, հայացքներ:

1918 թ. դեկտեմբերին Հայաստանի Հանրապետության կառավարությունը Փարիզի Խաղաղության վեհաժողով մեկնող հայկական պատվիրակությանը հրահանգել էր այնտեղ պաշտպանել Միացյալ Հայաստանի գաղափարը¹:

Արդեն 1919 թ. մայիսի 26-ին և 27-ին հանրապետության Գործադիր մարմինն ընդունեց «Միացյալ Հայաստանի» և «Հայաստանի խորհրդարանի համալրման» մասին օրենքները², իսկ մայիսի 28-ին կատարվեց հայտարարություն Հայաստանի 2 մասերի միավորման և Միացյալ ու Անկախ Հայաստան հռչակելու մասին³: Մայիսի 28-ին տեղի ունեցած կառավարության նիստում վարչապետի պաշտոնակատար Ալեքսանդր Խատիսյանը կարդաց Հայաստանի 2 մասերի միավորման վերաբերյալ պաշ-

¹ Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, Երևան, 2010, էջ 75:

² Նույն տեղում, էջ 73–74:

³ Նույն տեղում, էջ 74:

տոնական հայտարարագիր-հոշակագրի տեքստը⁴։ Այդ հայտարարությունը սկիզբ դրեց երկրի կոալիցիոն իշխանական 2 հիմնական ուժերի՝ ՀՅԴ-ի և ՀԺԿ-ի միջև լուրջ տարածայնությունների, ինչի հետևանքով Ժողովրդական կուսակցությունը դուրս եկավ կառավարական կոալիցիայից։ Պառակտման հիմնական պատճառն այն էր, որ կառավարությունը, «առանց խորհրդարանի գիտության ու ՀԺԿ գաղափարակից Արևմտահայ Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշայի (1851–1930) համաձայնության, պաշտոնական հայտարարություն արեց Միացյալ և Անկախ Հայաստանի հոշակման և Հայաստանի Խորհուրդը արևմտահայ 12 ներկայացուցիչներով համալրելու մասին»⁵։ Սա երևացող արտաքին պատճառն էր։ Վտանգավորը չերևացող ներքին պատճառն էր, այսինքն՝ ապագա Միացյալ և Անկախ Հայաստանի կառավարության կազմի ու վարչապետի ընտրության խնդիրն էր⁶։ Ինչպես վկայել էր Սիմոն Վրացյանը, Պողոս Նուբարն ու նրա կողմնակիցները, թեև սկզբունքորեն կողմ էին Միացյալ և Անկախ Հայաստանի մասին հայտարարությանը, սակայն գտնում էին, որ «բոլոր մարդկային և աստվածային օրենքներով Միացյալ Հայաստանի կառավարությունը պետք է կազմվեր Փարիզում և անպայման Պողոս փաշա Նուբարի նախագահության տակ»⁷։

⁴ Նույն տեղում։

⁵ **Հակոբյան Ա.**, Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ., Երևան, 2018, էջ 58–59։

⁶ **Գալոյան Գ.**, Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., Երևան, 1999, էջ 92–93։

⁷ **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 290։

Ստորև կփորձենք անդրադառնալ վերոհիշյալ հիմնախնդրին՝ հիմնվելով պոլսահայ առաջատար պարբերականների հրապարակումների վրա:

«Ճակատամարտ» օրաթերթը հրատարակվում էր ցեղասպանությունից մազապուրծ եղած դաշնակցական գործիչների ջանքերով: Այն ոչ պաշտոնապես համարվում էր ՀՅԴ Արևմտյան բյուրոյի «Ազատամարտ» պաշտոնաթերթի իրավահաջորդը: Այս պարբերականն անվերապահորեն ընդունում և պաշտպանում էր Միացյալ Հայաստանի գաղափարը: Դրա էջերում չկա հակառակ բովանդակության որևէ հրապարակում: Պոլսահայ պարբերականներից միայն այս թերթն է հանգամանորեն ներկայացրել խորհրդարանի այն նիստը, որտեղ ընդունվել էր Միացյալ Հայաստանի մասին հռչակագիրը⁸: Ըստ այդ հրապարակման՝ դեպի խորհրդարան շարժվող բազմության առջևից արևմտահայ և արևելահայ երիտասարդների ուղեկցությամբ քայլել էր ազատագրված և Միացյալ Հայաստանը խորհրդանշող սպիտակագգեստ մի կին⁹: «Օրինակելի կարգապահությամբ զօրքը և հասարակութիւնը բռնած էին խորհրդարանի մուտքին փողոցը: Օտարերկրեայ և հարևան պետութիւններու ներկայացուցիչները, Կաթողիկոսը, հիւրեր ու խումն հասարակութիւնը սրբազան հպարտութեամբ մը ներս կը մտնէին խորհրդարանի սրահէն՝ լսելու համար Միացեալ Հայաստանի անկախութեան յայտարարութիւնը»¹⁰, - գրված էր թերթում: Վարչապետն ընթերցել էր Միացյալ, Անկախ և Ազատ Հայաստանի մասին կառավարության պաշտոնական հայտարար-

⁸ «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1 հուլիսի, 1919 թ. («Միացյալ Հայաստանի հայտարարությունը»):

⁹ Նույն տեղում:

րագիրը՝ «որոտընդոստ կեցցէներով ու ծափերով ընդհատուած»¹¹: Այն կարդացվել էր նաև ֆրանսերեն՝ դաշնակից պետությունների ներկայացուցիչների համար¹²: Ապա խորհրդարանի կազմում էին ընդունել արևմտահայ 12 պատգամավորի՝ «որպէս իրական միացման վաւերացում՝ համաձայն արևմտահայ համագումարի փետր.ի 6ի որոշման»¹³: Հանդիսավոր նիստի ավարտին Ա. Խատիսյանը հրավիրյալ պաշտոնատար անձանց հետ դուրս էր եկել խորհրդարանի պատշգամբ և բալկոն հավաքված բազմության համար կարդացել էր Միացյալ Հայաստանի մասին հայտարարագիրը. «Այդ պահուն թնդանոթի 30 հարուածներ ազդարարեցին հայութեան այս օրուան նշանակութիւնն ու մեծութիւնը»¹⁴:

Պարբերականը տպագրել էր Արևմտահայ խորհրդի Գործադիր մարմնի մայիսի 28-ի՝ Հայաստանի վարչապետին ուղղած հայտարարությունը¹⁵: Այնտեղ փաստված էր հետևյալը. «Գործադիր մարմինը, որպէս Հայաստանի Հանրապետութեան սահմաններում ապրող արևմտահայերի ներկայացուցչական օրկան... սրտագին ողջունում է կառավարութեան կատարած ակտը և պատրաստակամութիւնն է յայտնում... իր գործօն մասնակցութիւնը բերել Միացեալ Հայաստանի գաղափարն իրականացնելու... համար»¹⁶:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում («Արևմտահայ փախստականներու Գործադիր մարմինն ալ համաձայն է»):

¹⁶ Նույն տեղում:

«Ճակատամարտն», առանց որևէ մեկնաբանության, տպագրել էր Միացյալ Հայաստանի անկախության հայտարարագրի պատճենը¹⁷, իսկ խմբագրականում արել էր մի ուշագրավ դիտողություն. «Մեզի համար Անկախ և Միացեալ Հայաստանի հռչակման ամենիսէն առաջ՝ զայն իրականացնելու դժուարութիւններն են կարելորդ»¹⁸: Նույն մտահոգությունն արտահայտել էր Կարո Սասունին՝ գրելով. «Եթե քաղաքական աշխարհի մէջ Միացեալ և Անկախ Հայաստանը յայտարարուի վերջնականօրէն, այս գեղեցիկ նշանաբանը պէտք ունի իրական կեանքի մէջ մեծ դժուարութիւններով գլուխ գալու»¹⁹: Հոդվածագիրն անդրադարձել էր թեր և դեմ կարծիքներին՝ պաշտպանելով ՀՅԴ տեսակետն այդ խնդրում: Նա նաև համոզմունք էր հայտնել, թե Միացյալ Հայաստանի կերտման գործը հաջողությամբ պսակելու համար անհրաժեշտ էր արտաքին քաղաքականության մեջ հաջողություններ գրանցելը, իսկ ներքին կյանքում՝ արևմտահայ և արևելահայ բոլոր կարող ուժերը միավորելը²⁰:

«Շանթ» շաբաթաթերթը ողջունել էր Միացյալ, Անկախ և Ազատ Հայաստանի մասին կառավարության հայտարարությունը: Մկրտիչ Պարսամյանը «Միացյալ և Անկախ Հայաստան» խմբագրականում հետաքրքիր զուգահեռներ էր անցկացրել մայիսի 28-ին հայության կյանքում կատարված կարևոր 2 իրադարձությունների միջև՝ գրելով. «Մայիս քսանըրորը, ըլլալով հայ հանրապետութեան յայտարարութեան թուականը, կը դառնայ նաեւ Միացեալ և Անկախ Հայաստանի պաշտօնական արտա-

¹⁷ Նույն տեղում, 26 հունիսի, 1919 թ. («Հայտարարագիր Միացյալ Հայաստանի»):

¹⁸ Նույն տեղում («Երևույթները և իրականությունը»):

¹⁹ Նույն տեղում, 29 հունիսի, 1919 թ. («Միացյալ և Անկախ Հայաստան»):

²⁰ Նույն տեղում:

յայտութիւնը»²¹: Նա իրողություն էր համարել Միացեալ և Անկախ Հայաստանը՝ կոչ անելով «անիմաստ և անզօր» բանավեճերով չքանդել եղածը²²:

«Ժամանակ» օրաթերթը, ստանալով Միացյալ և Անկախ Հայաստանի մասին մայիսի 28-ին ընդունված հայտարարության մասին ընդունված լուրը, անմիջապես փորձել էր արձագանքել՝ տալով իր գնահատականը²³: Դրա համաձայն՝ այդ ձեռնարկն իր գաղափարակիցների համար «անըմբռնելի պիտի մնայ յաւէտ», քանզի «անօթութենէ օրական 100–200 հայի մեռած պահուն, փոխանակ զանոնք ազատելու, ի՞նչպէս կ'ըլլայ, որ Երևանի Հանրապետութիւնը այսպիսի քաղաքական անիմաստ քայլեր կ'առնէ, չենք հասկնար»²⁴: «Ժամանակն» առանց մեկնաբանության տպագրել էր Հայ ռամկավար կուսակցության Կ. Պոլսի Խորհրդի հայտարարությունը, որտեղ արտահայտված էին նրանց մոտեցումները Միացեալ և Անկախ Հայաստանի որոշման մասին²⁵: Այդտեղ նշվում էր, որ Երևանի Հանրապետությունը, առանց ստանալու խորհրդարանի համաձայնությունն ու Փարիզի Ազգային պատվիրակության հավանությունը, հայտարարել էր Միացյալ և Անկախ Հայաստան՝ ինքնիրեն հռչակելով ամբողջական Հայաստանի կառավարություն և Երևանի խորհրդարանի մեջ ընդունելով 12 անհատի՝ իբրև արևմտահայության ներկայացուցիչների²⁶: Հայ ռամկավարները

²¹ «Շանթ», Կ. Պոլիս, 12 հուլիսի, 1919 թ., («Միացյալ և Անկախ Հայաստան»):

²² Նույն տեղում:

²³ «Ժամանակ», Կ. Պոլիս, 14 հունիսի, 1919 թ. («Հայ Հանրապետության կոչը»):

²⁴ Նույն տեղում:

²⁵ Նույն տեղում, 26 հունիսի, 1919 թ. («Հայտարարություն Հայ ռամկավար կուսակցության»):

²⁶ Նույն տեղում:

փաստելով, թե միացյալ ու անկախ Հայաստանի իրականացումը ամբողջ հայության բաղձանքն էր, ինչի մասին 1918 թ. նոյեմբերին հռչակել էր Փարիզի Ազգային պատվիրակությունը, հայտարարում էին հետևյալը. «Հայ ռամկավար կուսակցութիւնը, որպէս ներկայացուցիչ գաղափարային զօրաւոր հոսանքի մը, ծայնակցելով Կովկասի Հայ ժողովրդական կուսակցութեան, Երեւանի կառավարութիւնը չի ճանչնար որպէս ամբողջական Հայաստանի կառավարութիւն և մայիս 28ի քայլը կը նկատէ ապօրինի»²⁷: Բերվում էին նրանց կարծիքով ընդունելի փաստարկներ, թե Երևանի կառավարությունն ինչու՝ չէր կարող ճանաչվել իբրև ամբողջական Հայաստանի կառավարություն: Ըստ այդմ՝ կառավարությունը չպետք է պարտադրվեր, այլ պետք է ընտրվեր ժողովրդի կողմից, այնինչ «տարագրուած, փախստական ու գաղթական հայութիւնը տակաւին վերադարձած չէ իր մայրենի հողը, ուր միայն հնարաւորութիւն պիտի ունենայ իր ծայնը լսելի ընելու ընտրութեանց համար»²⁸: Խորհրդարանում ընդգրկված 12 արևմտահայերը չէին ներկայացնում նույնիսկ Կովկասում ապաստանած գաղթականներին. «Անոնք ներկայացուցիչն են միայն սահմանափակ թիւով համախոհներու»²⁹: Ըստ այս կուսակցության Կ.Պոլսի Խորհրդի՝ «թրքահայութեան միակ օրինաւոր և իրաւասու մարմինն է Բարիզի Ազգ. պատուիրակութիւնը, որ ընտրուած էր ո՛չ միայն ներկայ Թուրքիոյ հայութեան, այլ արտասահման և Կովկաս ապաստանած գաղթականութեան կողմէ»³⁰: Հայ ռամկավարների Կ.Պոլսի Խորհուրդը կուսակցության անունից իր բողոքն էր արտահայտել Երևանի կա-

²⁷ Նույն տեղում:

²⁸ Նույն տեղում:

²⁹ Նույն տեղում:

ռավարության «այս փութկոտ ընթացքին դէմ», ինչպես նաև իր կատարյալ վստահությունն էր հայտնել «Բարիզի Ազգ. պատուիրակության և անոր պատկառելի նախագահ Պօղոս Նուպար փաշայի»³¹:

«Ազատ և Միացյալ Հայաստանի հռչակումը Երևանի մեջ» վերնագրով խմբագրականն ամբողջացնում էր «Ժամանակի» տեսակետները խնդրո առարկա հարցի վերաբերյալ³²: «Հայ ազգին մէջ կայ ստուար թիւ մը խորհողներու, որ այդ հռչակումին հետեանքը քաղաքական մեծ սխալ մը և ազգին ընդհանրութեան իրաւանց ոտնահարութիւն մը կը համարեն»³³, - կարդում ենք թերթում:

Քանի որ «Ժամանակի»՝ այս թեմայով տպագրված խմբագրականները, վերլուծականները, լուրերը և հայտարարություններն ունեն բացառապես հիշյալ որոշումը մերժող ու դատապարտող բնույթ, ապա կարող ենք եզրակացնել, որ պարբերականը համակարծիք էր եղել հենց վերջին բովանդակությամբ նյութերում արտահայտված մոտեցումներին:

Վահան Շահիրիմանի խմբագրությամբ լույս տեսած «Արագած» շաբաթաթերթի մայիս-հուլիս ամիսների խմբագրականներում հստակորեն արտահայտված էր պարբերականի մոտեցումը Միացյալ և Անկախ Հայաստանի մասին ընդունված հայտարարության վերաբերյալ: «Արագածն» անվերապահորեն կողմ էր եղել այդ գաղափարին, բայց անընդունելի էր համարել դրան հասնելու միջոցներն ու ճանապարհները: «Մեծ տոնը» վերնագ-

³⁰ Նույն տեղում:

³¹ Նույն տեղում:

³² Նույն տեղում, 29 հուլիսի, 1919 թ. («Ազատ և միացյալ Հայաստանի հռչակումը Երևանի մեջ»):

³³ Նույն տեղում:

րով խմբագրականում, օրինակ, տեղեկացնելով Կ.Պոլսում Հայաստանի 1-ին հանրապետության հիմնադրման անդրանիկ տարեդարձի առթիվ կազմակերպված տոնախմբության մասին, գրված էր, թե այդ նորակազմ պետությունը «կորիզը պիտի դառնայ վաղուան Միացեալ, Ազատ ու Անկախ Հայաստանին»³⁴։ Հրապարակման համաձայն՝ տոնակատարության մասնակիցները ճառագել էին «անպատում» ուրախությամբ, քանի որ «գոհացում գտած էին հայոց բաղձանքները՝ Միացեալ ու Անկախ Հայաստանի վերջնական կազմութեամբ»³⁵։ Մեկ այլ՝ «Քանի որ կուզեն» վերնագրված խմբագրականի մեջ Վ. Շահիրմանն, անդրադառնալով թուրքական թերթերում հնչած այն տեսակետին, թե 1915 թ. «մարդասպանութեան ու պղծումի զանգուածային դէպքերը, որոնք ամբողջ աշխարհը սարսռացուցին», կատարվել էին ոչ թե թուրքական իշխանությունների կամ պետական հատուկ մշակված և հայության հանդեպ իր իսկ բնօրրան հայրենիքում հայաջինջ ծրագրից ելնելով, այլ դրանք մի «աննշան խմբակի» կողմից էին կազմակերպվել, պնդում էր հակառակը՝ հենվելով վկայությունների և փաստերի վրա³⁶։ Թուրքերը կարող են շարունակել Հայոց ցեղասպանության ուրացման իրենց քաղաքականությունը, իսկ հայերը չպիտի դադարեին այն «դիմակազերծ ընելէ, քանի որ իրենք կ'ուզեն դա»³⁷։ Իր վերլուծությունը հողվածագիրն ավարտել էր այն պնդմամբ, թե իշխան Սապահ Էդդինը և նրան համակարծիք մյուս թուրքերը չէին կարող արդարության հասնել՝ առանց «հայուն ճակատագիրը թուրք վարչութենէն անջատելու, առանց Ազատ ու Ան-

³⁴ «Արագած», Կ. Պոլիս, 31 մայիսի, 1919 թ., էջ 249 («Մեծ տոնը»)։

³⁵ Նույն տեղում։

³⁶ Նույն տեղում, 28 հունիսի, 1919 թ., էջ 297 («Քանի որ կուզեն»)։

կախ ու Միացեալ Հայաստանի՝ մը, որ զերծ պիտի ըլլայ ամեն կերպ ազդեցութենէն գողերու և մարդասպաններու խմբակի՛ն, որ դարերէ ի վեր ճարակած է Պապը Ալիի սրահներուն մէջ՝ ասարառութիւն ու պղծութիւն ու ջարդ ու բռնաբարութիւն թելադրելով իր համարին արբանեակներուն, որոնց ամբողջութիւնը կը կոչուի թուրք ժողովուրդ»³⁸:

«Արագած» շաբաթաթերթի վերոհիշյալ և այլ հրապարակումները մեզ բերում են այն համոզման, որ այս պարբերականը, մի կողմից՝ ընդունել էր Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը, մյուս կողմից՝ անընդունելի էր համարել դրա պատճառով հայության տարբեր շրջանակներում սկսված երկպառակությունը: Տեղին է մեջբերել այս հատվածը. «Երեւանի Հանրապետութեան կառավարութիւնը 1919 մայիս 28ին, Միացեալ Հայաստանի անկախութիւնը հռչակած է՝ յայտարարելով նոյն ատեն, թէ Հանրապետութեան խորհրդարանը ամբողջ Հայաստանի ժողովուրդը շաղկապող բարձրագոյն օրէնսդիր և գործադիր իշխանութիւնն է: Քաղաքական այս ծանրակշիռ քայլը մեծ յուզում առաջ բերած է, սակայն, ժողովրդական կուսակցութեան մէջ, որ պարտաւորեց Դահլիճին մէջ ունեցած իր անդամները հրաժարիլ: Երեւանի խորհրդարանին այս անակնկալ քայլը կարելի է հարուած մը նկատել՝ ուղղուած Բարիզի հայկ. պատուիրակութեան, որ ցարդ կը գործէր յանուն ամբողջ հայութեան և յանուն Միացեալ Հայաստանի: Ինչու՞ այս աճապարանքը, ինչու՞ այս նոր երկպառակութիւնը»³⁹:

³⁷ Նույն տեղում, էջ 299:

³⁸ Նույն տեղում:

³⁹ Նույն տեղում, էջ 308 («Արձագանք»):

Թերթն իր ընդդիմախոսների հիմնական կռիվները համարում էր Միացյալ Հայաստանի կառավարության կազմության խնդիրը, որը սերտորեն շաղկապում էր նոր խորհրդարանի ընտրությունների հետ: «Հոդ է, որ հարցը կը կնճռոտի: Ժողովրդական և այլ կուսակցություններ Միացյալ Հայաստանի կառավարության պետքը չէ, որ կը մերժեն: Անոնք կը բողոքեն ա՛յն ձեւին դէմ, որով կազմուած է կառավարութիւնը, և որուն մէջ կը տեսնեն շատեր զեղծում, կամայականութիւն»⁴⁰: Նման պայմաններում, պարբերականի խմբագրակազմի կարծիքով, կառավարությունը պետք է լիներ ժամանակավոր, բայց կարելի եղածին չափ՝ ուժեղ այնքանով, որքանով նրա շուրջ համերաշխորեն կհամախմբվեին ազգային զանազան հոսանքները, կազմակերպությունները, հաստատությունները⁴¹: Ըստ «Արագածի» դիրքորոշման՝ զորեղ և ողջ հայության վստահությունը, համակրանքն ու օժանդակությունը վայելող կառավարություն ունենալու համար չպետք էր անտեսել Փարիզում գործող հայկական պատվիրակությանը⁴²: Միայն էր համարում այդ պատվիրակությունը միայն դիվանագիտական մարմին նկատելը՝ գտնելով, թե նրա իրավասությունները սահմանափակ էին. «Լաւագոյն պիտի ըլլար, որ մէկ կողմէն՝ Երեւանի Հանրապետութեան ներկայացուցիչները, միւս կողմէն՝ Բարիզի հայկ. պատգամաւորութիւնը համախորհուրդ ընտրէին Միացյալ Հայաստանի առժամեայ կառավարութիւնը, որ պիտի գործէր ու ղեկավարէր մինչեւ ա՛յն օրը, ուր Միացյալ Հայաստանի սահմանները կը ճշդուին, տարագրեալները կը վերադառնան և բնականոն կեանքը կը վերսկ-

⁴⁰ Նույն տեղում, 5 հուլիսի, 1919 թ., էջ 320 («Միացյալ Հայաստանի անկախությունը և կառավարությունը»):

⁴¹ Նույն տեղում:

սի: Անկէ վերջ Միացեալ Հայաստանի հայութիւնն է, որ իր օրինաւոր քուէովը պիտի ընտրէ բուն օրէնսդիր ժողովը, որմէ կը բղխի գործադիր իշխանութիւնը»⁴³:

Ամփոփում

Ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ Միացյալ և Անկախ Հայաստանի մասին հայտարարութիւնն ու կոչը, դրանց առնչվող կողմ և դեմ կարծիքներն ու տեսակետները իրենց արձագանքն են գտել Կ. Պոլսում լույս տեսնող հայկական առաջատար պարբերականներում: Այդ հրապարակումների ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ դրանք միանշանակ չեն ընդունվել Հայոց ցեղասպանութիւնից հետո Թուրքիայի մայրաքաղաքում հավաքված արևմտահայության գաղափարական տարբեր տեսակետներ ունեցող շերտերի կողմից: Կարծիքները կարելի է բաժանել 2 խմբի:

- 1-ին տեսակետն արտահայտող պարբերականները («Ճակատամարտ», «Շանթ») ունենին դաշնակցական ուղղվածություն կամ համակիր էին այդ կուսակցության դիրքորոշումներին: Դրանք համամիտ էին այդ որոշմանը:

- 2-րդ տեսակետն արտահայտում էին Հայ ռամկավարների և Ժողովրդական կուսակցությունների մոտեցումները պաշտպանող պոլսահայ պարբերականները («Ժամանակ», «Արագած»), որոնց կարծիքով՝ այդ հայտարարութիւնը չէր ամբողջացնում ողջ արևմտահայության կամ նրա մեծամասնության տեսակետները:

⁴² Նույն տեղում:

⁴³ Նույն տեղում:

Այս խմբերի մեջ ընդգրկված պոլսահայ պարբերականները բերում էին փաստարկներ՝ իրենց պատկերացումները հիմնավորելու համար: Ընդ որում, պետք է ասել, որ դրանք բավական համոզիչ էին, թեև կյանքը ցույց տվեց, որ կենսունակ էին Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը պաշտպանողների հրապարակումները:

100 տարվա հեռավորությունից այսօր կարող ենք արձանագրել, որ հիմնված հայոց պետականությունը, թեկուզ դեռևս իր փոքրածավալ տարածքով, հանգամանքների բերումով վերածվեց համահայկական և հայակենտրոն հայրենիքի, դարձավ աշխարհասփյուռ հայության սիրտը, որն առաջնորդում է միահամուռ ջանքերով պահանջատիրական պայքարի՝ հանուն Միացյալ Հայաստանի և հանուն մեր բռնազավթված բնօրրան-հայրենիքի բոլոր մասերի միավորման:

Мариам В. Овсепян, *Институт истории НАН РА, к.ф.н.*, Отклик прессы издаваемой в Константинополе на объявление о Единой и Независимой Армении.

Объявление о Единой и Независимой Армении нашло широкий отклик на страницах армянских передовых изданий Константинополя. Изучение этих публикаций показывает, что слоями западноармянского общества они воспринимались неоднозначно. Мнения разделились на 2 группы.

Первая группа – это издания имеющие дашнакское направление. Естественно, что они поддерживали политику проводимую властями 1-ой армянской республики и целиком были единодушны с этим решением.

Другую точку зрения поддерживали издания, которые разделяли взгляды Армянских рамкаваров и Народной партии. Они считали, что это Объявление не поддерживается большинством западных армян.

Для обоснования своих видений издания приводили свои доводы, которые были довольно таки вескими. Публикации, поддерживающие идею Единой и Независимой Армении были более живучи.

Mariam V. Hovsepyan, *Institute of History of the NAS RA, PhD in Philology, The Reaction of the Statement on United and Independent Armenia on the Pages of the Armenian Press of Constantinople.*

The statement on a united and independent Armenia found its response on the pages of Armenian leading publications of Constantinople. The study of these publications shows that they were ambiguously accepted by layers of different ideological views of Western Armenians gathered in the capital of Turkey after the Armenian Genocide. These points of view can be divided into 2 groups:

The publications expressing the first point of view had federative orientation. Naturally, they defended the policy pursued by the authorities of the First Republic of Armenia and agreed with this decision.

The second point of view was expressed by the publications of Constantinople supporting the approaches of the Armenian Ramgavar party and the Populist party, in the opinion of which this statement did not generalize the views of the majority of Wes-

tern Armenians.

The publications of Constantinople involved in these groups brought arguments to substantiate their ideas. At the same time, they were quite convincing, although life has shown that the publications of the defenders of the idea of a united and independent Armenia were viable.

ԳՈՒՐԳԵՆ Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԳԱԱ պարմության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԻՋԻՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1921–1925 ԹԹ.)**

Քանալի քաներ՝ ուսումնարան, համալսարան, դպրոց, կոմկուս, մանկավարժ, տեխնիկում, մասնագիտական կրթություն:

1920-ական թվականներին Խորհրդային Հայաստանում հիմք է դրվում միջին մասնագիտական կրթական համակարգին, քանի որ նորաստեղծ իշխանությունը ծգտում էր շուտափույթ վերականգնել ժողովրդական տնտեսությունը, պայմաններ ստեղծել տնտեսության հետագա զարգացման համար: Հարկ ենք համարում նշել, որ այս գործընթացը սկսվել էր դեռևս Հայաստանի առաջին Հանրապետության օրոք և կարելի է փաստել, որ որոշակի աշխատանք էր տարվել միջին մասնագիտական կրթական հաստատությունների ստեղծման ուղղությամբ: Հանրապետության տարբեր քաղաքներում՝ Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում և Նոր Բայազետում հիմնվել էին միջին մասնագիտական դպրոցներ՝ գյուղատնտեսական, բժշկական, տեխնիկական, զինվորական: Բացվել էին տարբեր մասնագիտությունների գծով դասընթացներ՝ փոստ-հեռագրական ծառայողների, մեխանիկների և վերահսկիչների, հաշվա-

պահական, առևտրական, գյուղատնտեսական, բժշկական և այլն:

Փաստորեն Հայաստանի առաջին Հանրապետության օրոք արդեն ստեղծվել էին առաջին միջնակարգ մասնագիտական կրթական հաստատությունները, որը արհեստավարժ կադրերով կհամալրեր տնտեսության տարբեր բնագավառները:

Խորհրդային իշխանության հաստատումից հետո Հայաստանի հեղափոխական կոմիտեն (Հայհեղկոմ) քայլեր է ձեռնարկում երկրում կրթական հաստատությունների վերաբացման ուղղությամբ: Ժողկրթության բնագավառի աշխատանքները ղեկավարելու նպատակով 1920 թ. դեկտեմբերի 12-ին կազմավորվեց Լուսավորության ժողովրդական կոմիսարիատը, որի առաջնահերթ խնդիրն էր՝ վերսկսել ընդհատված կրթական հաստատությունների աշխատանքը¹:

Լուսժողկոմատի կազմում այլ բաժինների թվում ստեղծվում է արվեստագիտական-տեխնիկական բաժինը: 1921 թ. փետրվարին տեղի են ունենում բարեփոխումներ: Այսպես՝ այլ բաժինների թվում բացվում է արհեստագիտական-տեխնիկական բաժինը, որն էլ պիտի իրականացներ միջին մասնագիտական կադրերի պատրաստումը: Բաժնի վարիչ է նշանակվում Նուշիկ Զավարյանը²: Հետագայում՝ բաժնի գործառույթների ընդլայնման հետ կապված, այն դառնում է վարչություն՝ Արհեստագիտական լուսավորության գլխավոր վարչություն (արհլուսգլխավարչություն), որի պետ է նշանակվում հմուտ մանկավարժ Տ. Մուշեղյանը:

¹ ՀԽՍՀ ղեկընտնների և հրամանների ժողովածու, պրակ 1, Էջմիածին, 1921, էջ 8:

² **Խուղոյան Ս.**, Սովետահայ դպրոցի պատմությունը, Երևան, 1973, էջ 24:

Հայաստանի պետական – կուսակցական ղեկավարությունը 1921 թ. հրապարակեց մի շարք որոշումներ՝ կապված հանրապետության բարձրագույն և միջնակարգ կրթություն ունեցող որակյալ մասնագետների հետ՝ հանձնես ուսուցիչների, գյուղատնտեսների, անասնաբույժների, բժշկասանիտարական աշխատողների և այլն: Նրանք պարտավոր էին հաշվառման կանգնել և աշխատանքի անցնել³: Հատկապես կարևոր դեր խաղաց ժողկոմխորհի նախագահ Ա. Մյասնիկյանի և ժողտնտխորհի նախագահ Ս. Լուկաշինի նամակ ուղերձները՝ արտերկրի հայ մտավորականությանը՝ գալ և ձեռնամուխ լինել հայրենաց վերաշինությանը: Հայ մտավորականներից շատերը պատրաստ էին վերադառնալ մայր հայրենիք: Սակայն նրանց մի հատվածը հարկադրված էր հրաժարվել՝ քաղաքական և սոցիալ-տնտեսական պայմաններից ելնելով: Այնուամենայնիվ, 1921–1923 թթ. Խորհրդային Հայաստան եկան ականավոր արվեստագետներ՝ գեղանկարիչ Մ. Սարյանը, ճարտարապետ Ա. Թամանյանը, երգահան Ռ. Մելիքյանը, գիտնականներ՝ գրականագետ Մ. Աբեղյանը, լեզվաբան Հ. Աճառյանը և ուրիշները:

Հայ մեծանուն գեղանկարիչ Մ. Սարյանի եռանդուն գործունեության շնորհիվ՝ 1921 թ. վերջերին հիմնադրվում է գեղարվեստական ուսումնարան: Իր հուշերում Մ. Սարյանը վկայում է. «Գեղարվեստական ուսումնարանի համար ընտրեցինք Կոնդի շենքերից մեկը, որի պատշգամից բացվում էր Արարատի հրաշագեղ տեսարանը: Շատ հարմար տեղ էր նման հաստատության համար... Առաջին ձեռնարկումներից մեկն էլ այն էր, որ հրավիրեցի նկարիչների, արվեստագետների: Ամեն կողմից

³ ՀԽՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1, էջ 44:

կարճ ժամանակում հավաքվեցին հայ կուլտուրայի մշակներից շատերը»⁴: 1922 թ. փետրվարին ուսումնարանը 50 սաներով սկսեցին պարապմունքները: Այս կրթական հաստատությունը պատրաստում էր գեղանկարչության և կիրառական արվեստի միջին որակավորման մասնագետներ, որի կայացման գործում կարևոր դերակատարում ունեցավ ճարտարապետ Ա. Թամանյանը: Նրա անմիջական գլխավորությամբ կազմվեցին ուսումնական ծրագրերը: Մեկ տարի անց բացվեց գեղարվեստական ուսումնարանի սովորողների աշխատանքների ցուցահանդեսը: Արդեն 1923/1924 ուս. տարում գեղարվեստի ուսումնարանում սովորում էին 180 ուսանող, որոնց դասավանդում էին 13 մանկավարժներ⁵: 1926 թ. ուս. տարվանից ուսումնական հաստատությանը շնորհվեց գեղարվեստական-արդյունաբերական տեխնիկումի կարգավիճակ:

Հայ ականավոր երգահան Ռ. Մելիքյանի ջանքերի շնորհիվ 1920-ական թթ. հիմնադրվում է Երևանի երաժշտական ստուդիան (ուսումնարանը, որն այժմ կրում է նրա անունը): Իր ընկերոջը՝ ջութակահար Դավիթ Սողոմոնյանին գրած նամակում, նա հատուկ շեշտում է. «Այս 5–6 ամսվա ընթացքում հազիվ թէ մի երկրում արած լինեն այնքան բան, ինչ որ արել ենք մենք այստեղ մի քանի նվիրված մարդկանցով...»⁶: Ականավոր հայ արվեստագետների այս բեղմնավոր գործունեությունը վկայում է թե՛ ինչպիսի նվիրվածությամբ էին նրանք աշխատում հայրենիքի վերանշինության գործում:

⁴ Հուրիխանյան Փ., Միջնակարգ մասնագիտական կրթությունը Սովետական Հայաստանում, Երևան, 1969, էջ 52–53:

⁵ «Խորհրդային Հայաստան», 25 մայիսի, 1924 թ., N 119:

⁶ Հուրիխանյան Փ., նշվ. աշխ., էջ 58:

Մտավոր և տնտեսապես ապահով հայրենիք ստեղծելու պահանջմունքները այդքանով չէին կարող բավարարվել:

Ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման համար անհրաժեշտ էր պատրաստել սեփական մասնագիտական կադրեր: Նորաստեղծ խորհրդային իշխանությունը միայն 1921 թ. աշնանը կարողացավ ուշադրությունը սևեռել միջնակարգ մասնագիտական հաստատությունների վերաբացման աշխատանքներին: 1921 թ. հոկտեմբերին Երևանի համալսարանում վերսկսվեցին պարապմունքները: 1923 թ. հունվարին համալսարանին կից կազմակերպվում է բանվորական ֆակուլտետ՝ (բանֆակ)՝ 226 ուսանող և ուսանողուհի, որոնց մեծ մասը կրթությունը շարունակում էր համալսարանում, իսկ որոշ մասն աշխատանքի էին անցնում որպես միջին մասնագիտական կադրեր: Բանֆակ էր գործում նաև Ալեքսանդրապոլում⁷: 1925/1926 ուս. տարում ԵՊՀ բանֆակը տվեց իր առաջին շրջանավարտները՝ 28 հոգի, որոնցից 23-ը իրենց ուսումը շարունակեցին համալսարանում: 1920-ական թթ. վերջին պետական կուսակցական մարմինների կողմից որոշում ընդունվեց բանֆակների հենքի հիման վրա նոր տեխնիկումներ ստեղծելու մասին: Պետք է նշել, որ խորհրդային իշխանության առաջին տարիներին համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողությունը գերծանրաբեռնված մանկավարժական աշխատանք էին կատարում: Դասավանդում էին տարբեր կրթական հաստատություններում, աշխատում էին պետական գերատեսչություններում: Կազմակերպչական մեծ աշխատանք է կատար-

⁷ «Հոկտեմբեր – նոյեմբեր», Տարեգիրք, Երևան, 1932:

վում նաև միջին մասնագիտական բնագավառի որակյալ կադրեր պատրաստելու նպատակով:

Ժողկոմխորհի առաջնահերթ խնդիրներից մեկն էր պետական մարմիններն ապահովել մասնագիտական կադրերով: Հատկապես ծանր էր իրավիճակը գավառներում, որտեղ պետական-կուսակցական ապարատում և տեղական տարբեր գերատեսչություններում միջին մասնագիտական աշխատանքի էին ընդունում տարրական դպրոցներ ավարտածներին: Տեղական կուսակցական մարմիններին հրահանգ էր իջեցված հաշվի առնել սոցիալական ծագումը և կոմկուսին անդամակցությունը՝ առաջնահերթությունը տալով բանվորներին և գյուղացիներին՝ նույնիսկ եթե կիսագրագետ էին, նոր միայն մտավորականներին:

1921 թ. նոյեմբերին վերաբացվում են դեռևս Հայաստանի առաջին Հանրապետության օրոք հիմնված Երևանի և Ալեքսանդրապոլի տեխնիկական դպրոցները (հիմնադրվել են 1920 թ. հուլիսին)⁸: Խորհրդային Ռուսաստանի օրինակով՝ դրանք վերանվանվում են ինդուստրիալ տեխնիկումներ: Ինչպես նախկինում՝ այդ կրթական հաստատություններն ունեին երկու բաժիններ՝ մեխանիկական և շինարարական: Երևանի ինդուստրիալ տեխնիկումը տեղավորված էր ընդամենը երկու սենյակում, իսկ փայտամշակման ու մեխանիկական արհեստանոցը՝ նկուղում: 1921–1922 ուս. տարում սովորողների թիվը հասնում էր 60-ի, որոնց մեծ մասը մանկատան որբեր էին⁹: Քանի որ շենքային պայմանները բավականին ծանր էին, իսկ ուսանողների թիվն անընդհատ աճում էր, 1920-ական թթ. առաջին կեսին այն մի

⁸ Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 461:

⁹ Հուրիխանյան Փ., Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության զարգացումը Սովետական Հայաստանում 50 տարում, Երևան, 1975, էջ 22–23:

քանի անգամ տեղափոխվեց մշակութային տարբեր հաստատություններ՝ Կուլտուրայի տուն, հանրակրթական դպրոցներ: Միայն 1926 թ. որոշում է ընդունվում կառուցել տեխնիկումի համար հատուկ մասնաշենք: 1920-ական թթ. ընթացքում աստիճանաբար բաժինների թիվն ավելացավ՝ քիմիական, էլեկտրամեխանիկական, լեռամետալուրգիական, գյուղմեխանիզացիայի և այլն: 1924–1925 ուս. տարում Երևանի ինդուստրիալ տեխնիկումը տվեց առաջին շրջանավարտները՝ 29 հոգի՝ 16-ը մեխանիկական, 13-ը շինարարական մասնագիտություններով: 1925/26 ուս. տարում՝ 15 մեխանիկ, 7 շինարար¹⁰: Ալեքսանդրապոլի ինդուստրիալ տեխնիկումն ուներ 3 բաժիններ՝ 70 սովորողներով և 16 ուսուցիչներով: Այն տեղավորված էր նախկին Առևտրական ուսումնարանի շենքի մի հատվածում¹¹:

Ակադեմիկոս, ճարտարապետ Ա. Թամանյանը պետական մարմիններից պահանջում էր հատուկ ուշադրություն հատկացնել միջին արհեստավարժ կադրերի պատրաստմանը, հատկապես շինարարական տարբեր մասնագիտությունների համար: 1923 թ. հուլիսին նա գրությամբ դիմում է Կենտրոնական արհեստանոցային դպրոցի վարիչին (տնօրենին), որպեսզի զարգացնեն խճանկարի պատրաստման շինարարական մասնագիտությանը: «Հայաստանի շինարարության մեջ խոշոր նշանակություն տալով մոզաիկ (խճանկար – **Պ.Վ.**) աշխատանքներին, անհրաժեշտ են համարում պատրաստել մոզաիկի մասնագետներ: Ուստի խնդրում են Ձեզ, Ձեր աշակերտներից 10 հոգի ուղարկել առաջին հիվանդանոցը՝ այս աշխատանքների հետ ծանոթանալու համար, որտեղ և կատարվում են հիշյալ աշխա-

¹⁰ «Ճողովորդական լուսավորություն», Երևան, 1927, հ. 1, էջ 16:

¹¹ ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 63, թ. 63ա:

տանքները՝ մասնագետ Ադամյանի ղեկավարությամբ», - գրում է Ա. Թամանյանը¹²:

Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ հիմնական բնագավառներից էր գյուղատնտեսությունը, որի տեսակարար կշիռն զգալի էր: Հանրապետությունում դրա վերականգնումը և հետագա զարգացումը շատ բանով կախված էր ժամանակակից գյուղատնտեսական մեթոդների կիրառումից: Լուսժողկոմատը քայլեր է ձեռնարկում գյուղատնտեսական միջնակարգ կրթության կազմակերպման և զարգացման նպատակով: Հիմնականում այդ դպրոցները բացվում էին տեղական իշխանությունների նախաձեռնությամբ և գյուղական համայնքների աջակցությամբ՝ առանց հաշվի առնելու դրանց մասնագիտական ուղղվածության համար անհրաժեշտ ֆինանսական ծախսերը: 1923 թ. բացվում է Օշականի գյուղատնտեսական տեխնիկումը, որի հարցը քննարկվում է Լուսժողկոմատի կոլեգիայի նիստում: «Օշականի տեխնիկումը լոկ անունով է այդպիսին կոչվում: Այդ տեխնիկումը գյուղատնտեսական չի եղել և այս պայմաններում չէր կարող լինել, որովհետև տեխնիկումի համար պահանջված կենդանի ուժեր՝ մասնագետ դասատուներ չունենք, բացի այդ դպրոցն իսպառ զուրկ է աշխատանքի պրոցեսի համար պահանջված գործիքներից, մեքենաներից և այլ պարագաներից», - նշված է արձանագրության մեջ¹³: Վերաբացվում են Նոր Բայազետի և Ալեքսանդրապոլի գյուղատնտեսական դպրոցներ (հիմնադրվել են 1919–1920 թթ.): 1920-ական թթ. առաջին կեսին գյուղատնտեսական դպրոցների թիվն ընդլայնվեց: Մասնագիտական դպրոցներ բացվեցին Դարալագյազում, Դվինում, Կապանում,

¹² Ալեքսանդր Թամանյան (1878–1936), Երևան, 2000, էջ 172:

¹³ ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 1, թ. 7:

Ստեփանավանում և մի քանի այլ բնակավայրերում: Այս գյուղատնտեսական դպրոցները, ելնելով տեղական պայմաններից, ունեին կաթնատնտեսական, մեղվաբուծական, ծխախոտագործական, հողագործական և այլ բաժիններ¹⁴: Այս մասնագիտական դպրոցները տեղաբաշխված էին հանրապետության տարբեր շրջաններում:

Սակայն դրանց թիվը բավարար չի կարելի համարել: 1923 թ. լուսժողովում Ա. Մոսվյանը, «Ժողովրդական լուսավորության հերթական խնդիրները» զեկուցման մեջ՝ անրադառնալով տեխնիկումներին, նշում է. «Բախտավոր վիճակում չեն երկրորդ աստիճանի դպրոցները, կամ տեխնիկումները: Թվով չափազանց սակավ մեր երկրի համար, զուրկ ամենակարևոր գործիքներից, կարող ուսուցիչներից, դասագրքերից և այլ հարմարություններից – մեր տեխնիկումները փաստորեն սովերներ են միայն, որ ապրում են լավ օրերի հույսով»¹⁵: Կոլլեգիան որոշում է ընդունում 11 գյուղատնտեսական դպրոցներին տալ Ա աստիճանի կարգավիճակ 3-ամյա դասընթացով: Այսինքն՝ այս դպրոցները ուսուցման առաջին տարում պետք է գործեին որպես հանրակրթական դպրոցներ, և միայն երկրորդ տարում մասնագիտական դասընթացներ անցնեին: Հաշվի առնելով, որ հանրակրթական 2-րդ աստիճանի դպրոցներում կրթական մակարդակը բավարար է միջին մասնագիտական կադրեր պատրաստելու համար, դրանց ևս տրված էր մասնագիտական թեքում՝ մտցվում էին կոոպերացիա, մանկավարժություն, հոգեբանություն, վիճակագրություն և աշխատանքի գիտական կազմակերպում առարկա-

¹⁴ Նույն տեղում, գ. 213, թ. 13:

¹⁵ **Մոսվյան Ա.**, Հոդվածներ և ճառեր, Երևան, 1961, էջ 167:

ները¹⁶: «Նույն ձևով պիտի փոփոխություն կրեն նաև երկրորդ աստիճանի դպրոցները, որ կոչվում են տեխնիկումներ: Այստեղ մասնագիտացումը կարելի և պիտի կատարել ավելի սուր, զանազան տեխնիկումներին տալով այս կամ այն շեշտված ուղղությունը, նայած տվյալ վայրի կարիքներին», - նշված է Ա. Մռավյանի «Ժողովրդական լուսավորության հերթական խնդիրները» հոդվածի մեջ (1923 թ.)¹⁷: Հատկապես դա վերաբերվում էր գավառներում գործող գյուղատնտեսական տեխնիկումներին: Բացի այդ, սկսում են գործել մասնագիտական տարբեր դասընթացներ:

1920-ական թթ. երկրորդ կեսին այս դպրոցների մեծ մասը նորից վերանվանվեցին տեխնիկումներ:

Ինչպես տեսնում ենք, տեխնիկումները չունեին անհրաժեշտ մասնաշենքեր, չկար նյութատեխնիկական բազա, սարքավորումներ, որակյալ մանկավարժական կադրեր: Մանկավարժ մասնագետները հարկադրված էին ժամանակի մեծ մասը հատկացնել իրենց հիմնական աշխատանքին: Միջին մասնագիտական հաստատություններում չկար անհրաժեշտ դասագրքեր և ուսումնամեթոդական ձեռնարկներ: Սովորողները գիտելիքներ ստանում էին միայն տեսականորեն՝ մանկավարժների դասախոսությունների շնորհիվ: Հատկապես վատ էր ֆինանսական միջոցների հատկացումը: Խորհրդային Հայաստանի կառավարությունը հարկադրված էր սուղ ֆինանսական միջոցներ տրամադրել միջին մասնագիտական հաստատություններին: 1924 թ. հուլիսին Անդրկովկասյան Կենտգործկոմը որոշում ընդունեց տեղական ֆինանսական ժամանակավոր կանոնադրության

¹⁶ Խուրդյան Ա., նշվ. աշխ., էջ 100–101:

¹⁷ Մռավյան Ա., Հոդվածներ և ճառեր, Երևան, 1961, էջ 171:

մասին, որի հոդված 27-ում նշվում էր, որ գյուղատնտեսական դպրոցները, մասնագիտական տեխնիկական հաստատությունները, գեղարվեստական-կրթական հաստատությունները, կարճատև դասընթացները, 2-րդ աստիճանի դպրոցները և տեխնիկումները պահվելու էին տեղական բյուջեի հաշվին: Այդ կրթօջախներում աշխատող մանկավարժների աշխատավարձը ևս տրվելու էր տեղական միջոցներից¹⁸: Առավել բարդ իրավիճակում հայտնվեցին կրթական այն հաստատությունները, որոնց մեծ մասը ենթակա էր փակման, քանի որ չունեին անհրաժեշտ ֆինանսական միջոցներ: Լուսժողկոմատի արհիւսգլխավարի տեղակալ Կ. Աբովյանի՝ Հոդժողկոմատին ուղղված զեկուցագրում նշվում է. «Այս գյուղդպրոցներից Ղփչաղինը (Լենինականի գավառ), Օշականինը և Արմավիրինը (Էջմիածնի գավառ) կանգնած են նույնիսկ փակման վտանգի առաջ»¹⁹: Գավառներում միջին մասնագիտական հիմնարկներում կար ընդամենը 5 բարձրագույն կրթությամբ մասնագետ, մնացածը միջնակարգ և տարրական կրթությամբ էին²⁰: Հատկապես մեծ էր մանկավարժների և սովորողների արտահոսքը գավառներից դեպի մայրաքաղաք:

Փաստորեն՝ պետական աջակցությունը դառնում էր խորհրդանշական: Կրթական հաստատությունների պահպանման համար ահռելի ծանրությունն իրենց վրա էին վերցնում տեղական իշխանությունները և բնակչությունը, որոնց ֆինանսական վիճակն այնքան էլ բարվոք չէր: Միջին մասնագիտական հաստատություններին հատկացվում էր Լուսժողկոմատի բյուջեի

¹⁸ Բանվորա-գյուղացիական կառավարության օրենքների և որոշումների հավաքածու, Երևան, 1924, հ. 5, էջ 213:

¹⁹ ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 206, թ. 1:

5.7%-ը²¹: Լուսժողկոմատը միջին մասնագիտական կադրեր պատրաստման հարցում փորձում էր համագործակցել շահագրգիռ տարբեր գերատեսչությունների հետ: «Մինչև այժմ արդյունաբերական կրթությամբ շահագրգռված գերատեսչություններն ու հիմնարկությունները նվազ հետաքրքրություն են հանդես բերել Արհիլուսագլխավարչության կողմից ծեռնարկված արդյունաբերական կրթության սիստեմի ամրապնդման գործում», - նշվում է «Արդյունաբերության կրթությունը Հայաստանում» հոդվածում, («Ժողովրդական լուսավորություն» Ե., 1926, հ. 1, էջ 9)²²: Հող-ժողկոմատը և այլ գերատեսչություններ բավարարվում էին որոշ ֆինանսական հատկացումներ կատարելով մասնագետ կադրերի պատրաստման գործում: Դրա շնորհիվ է, որ նկատվում է արհեստագիտական լուսավորական հիմնարկների քանակա-կան աճ՝ 1925 թ.՝ մոտ 90 %, ավելանում է նաև սովորողների թիվը՝ 11 %-ով, մանկավարժներինը՝ 42 %-ով: Սակայն դա ևս բավարար համարել չի կարելի²³:

Միջին մասնագիտական կադրերի պատրաստման հարցերով զբաղվում էր նաև Մերձավոր Արևելքի Ամերիկյան կոմիտեն, որի մանկատներում կազմակերպվել էին արհեստագիտական դպրոցներ: 1923 թ. լուսժողկոմ Ա. Մռավյանը դիմում է Ամերկոմի լիազոր ներկայացուցիչ Էլդերին՝ մանկատներում կրթական գործի կազմակերպման խնդրանքով: Փաստաթղթում նշվում էր. «Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ որբանոցների սաները ավելի կարիք ունեն մոտ ապագայում ինքնուրույն պրոֆեսիոնալ տեխնիկական աշխատանքի անցնելու,

²⁰ Նույն տեղում, թ. 2:

²¹ «Ժողովրդական լուսավորություն», Երևան, 1926, հ. 1, էջ 9:

²² Նույն տեղում, 1927, հ. 1, էջ 15:

անհրաժեշտ է պրոֆտեխնիկական կրթությանը զարկ տալ: Այս տեսակետից անհրաժեշտ է ներկայումս գոյություն ունեցող Ա աստիճանի դպրոցներին կից բանալ տեխնիկումներ, գլխավորապես գյուղատնտեսական»: Դպրոցները պետք է գործեին աշխատանքային դպրոցի պահանջներին համապատասխան: Նախատեսվում էր նաև աղջիկների համար բացել մասնագիտական արհեստանոց-դպրոց²⁴: Ամերկոմի միջոցների հաշվին մանկատներում գործում էին 3 երկրորդ աստիճանի դպրոցներ, որոնց տրված էր գյուղատնտեսական թեքում՝ 574 աշակերտ – աշակերտուհի, 13 մանկավարժ²⁵:

Հանրապետության տեխնիկումներից և մասնագիտական դպրոցներից միայն Երևանի և Լենինականի ինդուստրիալ տեխնիկումներն ունեին քիմիայի և ֆիզիկայի կաբինետներ, այն էլ բավականին համեստ սարքավորումներով: Լուսժողկոմատը որոշ քայլեր է ձեռնարկում մասնագիտական դպրոցների նյութատեխնիկական բազա ստեղծելու համար: Քիմիայի և ֆիզիկայի կաբինետների համար սարքավորումներ են հատկացվում Դիլիջանի, Նոր Բայազետի և Քեշիշքենդի դպրոցներին²⁶:

1925 թ. հունիսին ՀամԿ/ԲԿ Կենտկոմում հատուկ քննարկման առարկա է դառնում միջին մասնագիտական կրթության հարցը: «Տեխնիկումների մասին» ընդունված որոշման մեջ՝ կուսակցության և պետական մարմիններին հանձնարարվում էր մեծ ուշադրություն հատկացնել տեխնիկումներին, դիտելով այս կրթական հիմնարկները որպես միջին մասնագիտական որակավորում տրվող հիմնական հաստատությունը: Հատկացնել

²³ Նույն տեղում, 1926, հ. 1, էջ 8–9:

²⁴ «Հայագիտության հարցեր» հանդես, Երևան, 2014, հ. 1, էջ 206:

²⁵ ՀԱԱ, ֆ. 163, ց. 3, գ. 1710, թ. 88:

առանձին շենքեր, բարելավել նյութատեխնիկական բազան, ստեղծել մասնագիտական դասագրքեր, ուսումնական ծրագրեր և մեթոդական ձեռնարկներ: Անհրաժեշտ էր համարվում վերակառուցել արհիլուսիհիմնարկների աշխատանքները և աստիճանաբար վերացնել միջին մասնագիտական հաստատությունների բազմազանությունը²⁷:

1926 թ. տվյալներով հանրապետության տարածքում արհիլուսիհիմնարկների հետևյալ պատկերն էր՝ գործում էր՝ 12 երկրորդ աստիճանի դպրոց՝ 2441 աշակերտով, 17 գյուղերիտ դպրոց՝ 987 աշակերտով, 11 տեխնիկում, որից 5-ը՝ մանկավարժական, երկուսը՝ ինդուստրիալ և գեղարվեստական թեքումով՝ 1420 սովորողով, արհեստագիտական դպրոցները 34-ն էին, որից 8-ը՝ գյուղատնտեսական թեքումով, մնացածը՝ տարբեր մասնագիտական ուղղվածության՝ 2142 սովորողով²⁸: Երևանում և Լենինականում գործում էին 21 կարճատև մասնագիտական դասընթացներ և մեկ արհեստանոց-դպրոց՝ 692 սովորողներով²⁹: Արհիլուսգլխավարչության միջին մասնագիտական հիմնարկներում աշխատում էին ընդամենը 317 մանկավարժներ, որը բավարար համարել չի կարելի:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ վերոնշյալ տվյալները վկայում են, որ հանրապետության տարածքում դրվել էին միջին մասնագիտական կրթական համակարգի հիմքերը և պայմաններ էին ստեղծվել նրա հետագա զարգացման համար: Չունենալով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ և մանկավարժա-

²⁶ ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 206, թ. 1:

²⁷ Известия ЦК ВКП(б), Москва, 1925, N 22–23, с. 5.

²⁸ ՀԱԱ, ֆ. 163, ց. 3, գ. 1710, թ. 89:

²⁹ Խորհրդային Հայաստանը թվերով, վիճակագրական տեղեկատու. 1923–1927, Երևան, 1928, էջ 36–37:

կան որակյալ կադրեր, պետական – կուսակցական ղեկավարությունը հիմնականում ուշադրությունը կենտրոնացրել էր միջին մասնագիտական հաստատությունների քանակական աճին: Հանրապետությունում գործում էին տարբեր տիպի միջին մասնագիտական հաստատություններ՝ մեծ մասամբ առանց ուսումնական կայուն ծրագրերի և կանոնադրության: Անհրաժեշտ էր համակարգել դրանց գործունեությունը՝ դրանց տալով որակական իմաստ, հարստացնելով նյութատեխնիկական բազան: Այս խնդրի կենսագործումը տեղի ունեցավ 1920-ական թվականների երկրորդ կեսին, երբ երկրում լայն թափով սկսեց զարգանալ ժողովրդական տնտեսությունը:

Гурген В. Варданян, *Институт истории НАН РА, к.и.н., доцент*, Из истории формирования системы средне-специального образования в Советской Армении (1921–1925 гг.).

В Первой Республике Армения были созданы предпосылки для развития средне-специального образования. Эти работы продолжались после установления Советской власти. Была создана целая система средне-специальных образовательных учреждений, в которую вошли сельхозшколы, специальные средние школы, техникумы, профессиональные курсы. К сожалению, они не имели достаточного финансового обеспечения и материально-технической базы. Данные задачи были решены на втором этапе, после 1925 года, когда началось повышение качества средне-специального образования.

Gurgen V. Vardanyan, *Associate Professor at the Institute of History of the NAS RA, PhD in History*, **From the History of the Formation of the Secondary Specialized Education in the First Republic of Armenia (1921–1925).**

In the First Republic of Armenia, preconditions were created for the development of secondary specialized education. This work continued after the establishment of Soviet power. A whole system of secondary specialized educational institutions was created, which included agricultural schools, special secondary schools, technical schools, professional courses. Unfortunately, they did not have sufficient financial support and material and technical base. These tasks were solved at the second stage, after 1925, when the quality of secondary specialized education began to improve.

ՀԱՄՈ Վ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԳԱԱ պարմության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ

**ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ
(ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՎԱԳՆԵՐ)**

Քանալի քաներ՝ եկեղեցի, հոգևորական, իշխանություն, բռնագրավումներ, նամակ, առօրյա:

Բոլշևիկների հակակրոնական գաղափարախոսության մեջ եկեղեցին ընկալվում էր միմիայն իբրև «հին կարգերի մնացուկ», «ժողովրդական զանգվածների գիտակցությունը թունավորելու միջոց» և խոչընդոտ՝ բնակչության «կոմունիստական դաստիարակության» համար: 1920 թ. դեկտեմբերին Հայաստանի խորհրդայնացումից հետո նոր իշխանությունները բազմաթույթ քայլեր իրականացրեցին Հայ առաքելական եկեղեցու և հոգևորականների դեմը սահմանափակելու նպատակով: Առաջնահերթ պետականացվեցին Հայոց եկեղեցուն պատկանող հաստատությունները: Նշենք, որ 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Խորհրդային Ռուսաստանում ռուս ուղղափառ եկեղեցուն պատկանող հարստությունների, շարժական և անշարժ գույքի բռնագրավման գործընթաց էր սկսվել: Այն հատկապես մեծ ծավալներ ընդունեց 1920-ական թվականների

սկզբին¹: Այս պայմաններում ավելորդ է խոսել մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում եկեղեցու ունենալիք դերի մասին:

Հայաստանի հեղկոմը ևս նպատակային քայլեր ձեռնարկեց Հայ եկեղեցու ունեցվածքը բռնագրավելու ուղղությամբ: Հեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 17-ի դեկրետով Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ՀՍԽՀ) տարածքում գործող բոլոր ազգությունների հոգևոր հիմնարկությունների մշակութային և կրթական հաստատությունները պետականացվեցին և հանձնվեցին լուսավորության ժողովրդական կոմիսարիատին²: Նույն դեկտեմբերի 17-ին ՀՍԽՀ լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանի ստորագրած հրամանի համաձայն՝ այդ հաստատությունները փոխանցվեցին տեղական հեղկոմների լուսավորության բաժիններին: Որպես բացառություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճեմարանը, հնագիտական և ազգագրական թանգարանները, մատենադարանն ու տպարանն անմիջապես ենթարկվելու էին լուսժողկոմատին՝ վերակազմվելով վերջինի կողմից նշանակվող կոմիսարի ղեկավարությամբ: Լուսժողկոմի դեկտեմբերի 20-ի հրամանով Էջմիածնի վանական կրթամշակութային բոլոր նախկին հաստատությունների կոմիսար նշանակվեց երիտասարդ մտավորական՝ պատմաբան, լեզվաբան, արվեստագետ, սոցիալիստ-հեղափոխական (էսէռ) Լևոն Լիսիցյանը, որին իրավունք վերապահվեց բռնագրավել համապետական նշանակություն ունեցող «բոլոր հնություններն ու գեղար-

¹ Русская Православная церковь в советское время (1917–1991). Материалы и документы по истории отношений между государством и церковью, составитель **Г. Штриккер**, Москва, 1995, с. 46–94.

² ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ I (1920 թ. նոյեմբերի 29 – 1921 թ. փետրվարի 18), Էջմիածին, 1921, էջ 16:

վեստական գործերը»: Հայիեդկոմի 1921 թ. փետրվարի 5-ի դեկրետով Էջմիածնի պետականացված մշակութային ու կրթական հաստատությունների միավորմամբ ստեղծվեց Հայաստանի գիտական առաջին հիմնարկությունը՝ Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտը: Մինչ այդ այն շուրջ մեկ ամիս փաստացի գործում էր³:

Այդուհանդերձ, տեսնում ենք, որ Հայաստանի խորհրդայնացմանը հաջորդող առաջին շաբաթներին նոր իշխանության ներկայացուցիչների հակակրոնական և հակաեկեղեցական քայլերում որոշակի զգուշավորություն կար: Առժամանակ մասնակի հաշվի էին նստում բնակչության կրոնական զգացմունքների հետ, զգուշանում կտրուկ գործողություններ կատարելուց: Ասվածի վկայություններից է ռազմական գործերի ժողկոմ Ավիս Նուրիջանյանի 1921 թ. հունվարի 9-ի հրամանը՝ Հիսուս Քրիստոսի ծննդյան առթիվ զինծառայողներին պարենի և կերակրի կրկնակի բաժին տրամադրելու մասին⁴:

Մայր Աթոռին պատկանող կրթամշակութային հաստատությունները պետականացնելը խորհրդային Հայաստանի ղեկավարության հակակրոնական և հակաեկեղեցական գործունեության միայն առաջին քայլն էր: Լուսժողկոմի 1920 թ. դեկտեմբերի 31-ի երկու հրամաններով պետական, հասարակական և մասնավոր դպրոցներում արգելվեց կրոնական առարկաների դասավանդումը, հոգևորականներին արգելվեց պաշտոնավա-

³ Մանրամասն տե՛ս Մուքիսեան Հ., Վաերագրեր Մայր Աթոռի կրթամշակութային հաստատությունների պետականացման եւ Կուլտուր-պատմական ինստիտուտի հիմնադրման մասին, «Էջմիածին», 2013, յուլիս (Է), էջ 72–96, նույնի՝ Եկեղեցու սեփականության բռնագրավումը խորհրդային Հայաստանում (1920 թ. դեկտեմբեր – 1921 թ. փետրվար), «Լրաբեր հասարակական գիտությունների», 2014, N 1, էջ 95–102:

⁴ «Կոմունիստ», Երևան, 13 հունվարի 1921, N 31:

րել դպրոցներում և կրթամշակութային այլ հաստատություններում: Միայն կարգաթող լինելու դեպքում նախկին հոգևորականները կարող էին ստանձնել տվյալ պաշտոնները (այն էլ լուսժողկոմատի հատուկ թույլտվության դեպքում): Արգելքը խախտողներին սպառնում էր «հեղափոխական տրիբունալի» դատը⁵: ՀՍԽՀ ներքին գործերի ժողկոմատի 1923 թ. մայիսի 16-ով թվագրված գրություններից մեկում նշվում էր, որ քահանաներն ու եկեղեցական ծառայողներն իրավունք չունեն դաստիարակելու մինչև 16 տարեկան երեխաներին: Կարգը խախտողները ենթակա էին պատասխանատվության⁶:

1922 թ. փետրվարի 4-ին ընդունված ՀՍԽՀ անդրանիկ Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն «բոլոր աշխատավորները»՝ առանց ազգության կամ դավանանքի տարբերության, հավասար իրավունքներ էին ունենալու: Սահմանադրության 4-րդ հոդվածի համաձայն այլ մասնավոր սեփականությունների շարքում պետականացվում էին նաև կրոնական հաստատությունների շարժական ու անշարժ գույքը, իսկ 6-րդ հոդվածի «ա» կետի համաձայն էլ եկեղեցին անջատվում էր պետությունից, դպրոցն էլ, իր հերթին, անջատվում էր եկեղեցուց: Եկեղեցին վերածվում էր «հավատացյալների մասնավոր համայնքի»: Ավելին, բոլոր քաղաքացիներին իրավունք էր տրվում ազատորեն կրոնական և հակակրոնական քարոզչություն իրականացնել: Ուշադրություն դարձնենք այն իրողության վրա, որ Սահմանադրության 2-րդ հոդվածը վերաբերվում էր միայն «աշխատավորների» իրավունքներին: Եվ քանի որ հոգևորականներն իբրև «շահագործող դասակարգ», «անաշխատ եկամուտով ապ-

⁵ ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1, էջ 43–44:

⁶ Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 112, ց. 2, գ. 5, թ. 38:

րողներ», այս խավի մեջ չէին մտնում, ուստի, համաձայն Սահմանադրության 5-րդ հոդվածի, գրկված էին քաղաքական ու քաղաքացիական (ընտրելու, ընտրվելու) իրավունքներից, չէին կարող նաև պաշտոններ վարել⁷: Փաստորեն, «աշխատավոր ժողովրդի իշխանության» քողի տակ Խորհրդային Հայաստանի քաղաքացիների որոշակի մասը, այդ թվում՝ հոգևորականները, գրկված էին հավասար իրավունքներից ու հնարավորություններից:

Այս դրույթներին հաջորդեց ՀՍԽՀ կենտրոնական գործադիր կոմիտեի 1922 թ. սեպտեմբերի 26-ի դեկրետը դավանանքի ազատության մասին: Դեկրետով կրոնական ծիսակատարությունների ազատությունը թույլատրվում էր այն դեպքում, երբ դա չէր խանգարում հասարակական կարգն ու քաղաքացիների իրավունքները: Արգելվում էր կրոնական հաստատություններին պարտադիր հարկերի ու տուրքերի վճարումը, աշխարհիկ կրթական հաստատություններում կրոնի դասավանդումը և այլն: Այս ակտով բոլոր կրոնական համայնքները գրկվում էին սեփականության իրավունքից և պետության կողմից իրավական անձ չէին ճանաչվում, այլ մասնավոր ընկերությունների կարգավիճակին էին հավասարեցվում: Կրոնական հաստատություններին պատկանող շարժական ու անշարժ գույքը, այդ թվում՝ եկեղեցիները, մատուռներն ու աղոթատները, պետական սեփականություն էին հայտարարվում, որոնք տեղական իշխանությունները «կարող են տալ համապատասխան կրոնական ընկերութ-

⁷ ՀՍԽՀ Սահմանադրություն, «ՀՍԽՀ դեկրետների եւ որոշումների հավաքածու», Երեւան, 1922, N 8, էջ 57–58:

յունների պաշտամունքի կարիքների համար»⁸: Այս ամենն օրենսդրորեն, իսկ իրական կյանքում առավել կոշտ միջոցներով սահմանափակում էր եկեղեցու ու հոգևորականների իրավասությունները:

Բանն այնտեղ էր հասել, որ մինչև իսկ սահմանափակված էր հավատացյալների ժողովների գումարումը, նրանցից նվիրատվություններ ընդունելն ու հոգաբարձուների ընտրությունների անցկացումը: Յուրաքանչյուր քայլի համար կրոնի սպասավորը պետք է նախապես ստանար տեղական իշխանությունների թույլտվությունը: Այսպես՝ 1924 թ. մարտին Երևանի թեմի առաջնորդական փոխանորդ Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը Երևանի գավգործկոմի նախագահ Արամ Շահգեղյանի հետ պայմանավորվել էր, որպեսզի Գառնու շրջանի գործակալ Գրիգոր ավագ քահանան հավատացյալների ժողովներ գումարելու, նրանցից նվիրատվություններ ընդունելու, հոգաբարձուների ընտրություններ անցկացնելու իրավունք ունենա՝ այդ մասին նախապես տեղեկացնելով գյուղական գործկոմների նախագահներին⁹: Սակայն երբ քահանան ներկայացել է Ղամարլուի շրջգործկոմի նախագահին և տեղեկացրել Խորեն սրբազանի ձեռք բերած պայմանավորվածության մասին, վերջինը հրաժարվել է թույլտվություն տալ՝ պատճառաբանելով, որ Ա. Շահգեղյանն իրեն ոչինչ չի ասել¹⁰: Այսինքն՝ գործունեության յուրաքանչյուր բնագավառում հոգևորականները ստիպված էին մանր ու մեծ բազմաթիվ խոչընդոտներ հաղթահարել:

⁸ ՀՄԽՀ դեկրետների և որոշումների հավաքածու, Երևան, 1922, N 18, էջ 216–217:

⁹ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2408, թ. 1–2:

¹⁰ Նույն տեղում, թ. 3:

1920-ական թվականների սկզբներին ԽՍՀՄ-ում քարոզվող կանանց և տղամարդկանց իրավահավասարության, բարքերի ազատության քաղաքականությունը Խորհրդային Հայաստանում ևս հանգեցրել էր նրան, որ երիտասարդներն ամուսնանալիս հաճախ խուսափում էին ոչ միայն եկեղեցի, այլև քաղաքացիական կացության ակտերի գրանցման վարչության («Զագս») տեղական բաժիններ հաճախելուց: Այս փաստը նույնիսկ որոշ պաշտոնյաների համար էր անսովոր: Մեկ օրինակ ներկայացնենք: 1923 թ. հունվարի 6-ին Դարալագյազի գավգործկոմի «Զագս»-ի ենթաբաժնի վարիչը վերադասից կարծիք էր հարցնում, թե ինչպես վարվել, երբ նորապսակները փոխադարձ համաձայնությամբ ապրում են իրար հետ՝ շրջանցելով «Զագս»-ը և եկեղեցին¹¹: Ներքին գործերի ժողկոմատի «Զագս»-ի վարչության պաշտոնյաներից մեկը սրամիտ պատասխանել էր հարցմանը. «Տարօրինակ հարց եք տալիս: Ոչինչ, ապրում են, թող ապրեն: Իսկ եթե դուք շատ եք հետաքրքրվում նրանց վիճակով, դիտեք»¹²: Հայտնի իրողություն է, որ կոմունիստ գործիչները քննարկվող ժամանակահատվածում բնակավայրերում պարբերաբար «կարմիր մկրտություններ» և «կարմիր հարսանիքներ» էին կազմակերպում՝ դրանով փորձելով փոխարինել եկեղեցուն: 1920-ականների խորհրդահայ մամուլը լեցուն էր ասվածը փաստող վկայություններով:

Պետության կողմից կրոնական կազմակերպությունների, հավատացյալների, հոգևորականների գործունեությունը խոչընդոտելու, աննպաստ պայմաններում դնելու բազմաբնույթ գործողություններ էին իրականացվում: Այս առումով «կարևոր» գոր-

¹¹ ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 756, թ. 1:

¹² Նույն տեղում:

ծառույթներ էր վերապահված Ներքին գործերի ժողկոմատին: Բանն այնտեղ էր հասել, որ ՆԳԺԿ-ն հոգևորականներին թույլատրում կամ արգելում էր կրոնական ծեսեր իրականացնել: Ասվածը հաստատող օրինակ ներայացնենք. 1926 թ. մարտի 31-ին Նոր Բայազետի գավգործկոմին ուղղված գրությամբ ներքգործ ժողկոմ Հովհաննես Դուրգարյանը տեղեկացնում էր, որ, իբրև Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի կողմից Նոր Բայազետի և Ծաղկաձորի շրջանների ժամանակավոր փոխանորդի և քարոզիչի, ժողկոմատի կողմից Հովհաննես վարդապետ Հուսանին թույլ է տրվում «կատարել հոգևորական ծեսեր խորհրդային օրենքներով թույլատրված սահմաններում»¹³:

Նշվածի շարունակություն կարելի է համարել ոչ ավել, ոչ պակաս՝ Հայ առաքելական եկեղեցու սպասավորների՝ հանրապետությունում ազատ տեղաշարժի սահմանափակումները: Ասվածը վերաբերում էր նույնիսկ թեմական առաջնորդներին, ովքեր իրենց նստավայրից բացակայելու համար ներքին գործերի ժողկոմատից պետք է հատուկ «թույլտվություն» ունենային, այնուհետև օպերատիվ կերպով տեղեկացնեին իրենց տեղաշարժի, գտնվելու վայրի փոփոխման մասին: Այսպես՝ 1929 թ. մայիսի 22-ին ՀՍԽՀ ներքգործ ժողկոմին ուղղված նամակում Շիրակի թեմի առաջնորդ Արտակ եպիսկոպոս Սմբատյանը տեղեկացնում էր. «Հայտնում եմ Ձեզ ի գիտություն, որ ես Էջմիածնից վերադարձել եմ պաշտոնատեղիս՝ Լենինական»: Փաստաթղթի վրա ժողկոմատի վարչական վարչության պետ Ա. Վարդանյանը մայիսի 27-ին մակագրել է. «Առնել ի գիտություն»¹⁴: Ավելին, թեմական առաջնորդները նույնիսկ թեմի տարածքում շրջագայելու

¹³ ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 446, թ. 7:

¹⁴ Նույն տեղում, գ. 482, թ. 23:

նպատակով պետք է ՆԳԺԿ-ից համապատասխան «թույլտվություն» ստանային: Ներքին գործերի ժողկոմատի կողմից Լոռի-Փամբակի գավառոձկումի վարչական բաժնին ուղղված մի հրահանգից տեղեկանում ենք, որ Շիրակի թեմի առաջնորդ Արտակ եպիսկոպոսին թույլատրվում էր շրջել միայն թեմի՝ կազմակերպված հավատացյալների համայնքներ ունեցող բնակավայրերում¹⁵: Տեղական ցանկացած մանր ու միջին պաշտոնյա (մանավանդ երբ կոմկուսի անդամ էր կամ կոմերիտական) արգելքներ էր ստեղծում հոգևորականների համար: Վերը թվարկված վարչակազմակերպչական գործողությունները միտված էին պայմաններ ստեղծել բնակչության շրջանում տարվելիք հակաեկեղեցական ու հակակրոնական քարոզչության արմատավորման համար:

Հարկ է փաստել, որ տարբեր առիթներով Խորհրդային Հայաստանի որոշ բարձրաստիճան պաշտոնյաներ հայտարարում էին, որ պետությունը բարյացակամ է տրամադրված Հայ առաքելական եկեղեցու ու հոգևորականների հանդեպ: Մասնավորապես ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Սարգիս Լուկաշինը 1923 թ. դեկտեմբերին Տաթևի վանք կատարած այցելության ժամանակ հայտարարել էր, որ եկեղեցականներն ու հավատացյալները լիակատար ազատություն են վայելում և ոչ ոք իրավունք չունի նրանց նկատմամբ խոչընդոտներ հարուցել կամ անպատվել¹⁶: Նմանատիպ հայտարարությունները գործնականում ոչինչ չէին տալիս հոգևորականներին. որևէ կերպ չէր թեթևանում նրանց հոգսաշատ առօրյան: Ս. Լուկաշինի այցին հաջորդող շաբաթներին ևս Սյունիքի բնակավայրերի կոմերիտականներն

¹⁵ Նույն տեղում, թ. 64:

¹⁶ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2611, թ. 4:

ու տեղական պաշտոնյաները շարունակում էին կողոպտել եկեղեցիները, դրանք դարձնել պահեստներ, հալածել ու անվանարկել հոգևորականներին ու հավատացյալներին¹⁷:

Ունեցած արտոնություններից զրկվելն ու պետության վարած հակակրոնական ու հակաեկեղեցական քաղաքականությունը հոգևորականների համար չափազանց ծանր, անհրապույր դրություն էր ստեղծել: Այս խնդրին է վերաբերում 1923 թ. հուլիսի 9-ին Շիրակի թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոս Շխյանի կողմից Ղարաքիլիսայի գավգործկոմին ուղղված գրությունը: Թեմակալը գրության հենց սկզբում կարծես ձգտում է նախապես հավաստիացնել, որ ինքը տեղյակ է խորհրդային երկրի օրենքներից՝ ընդգծելով. «Գիտեմ, որ արգելված է և չի թույլատրվում նախկին սովորությամբ պտղի արդյունք հավաքելը էջմիածնի անունով»: Այնուհետև, մինչև բուն խնդրին անցնելը, նա միամտորեն շեշտում էր, որ ՀՍԽՀ բարձրագույն իշխանությունը թեմերի առաջնորդների վրա արգելք չի դրել ժողովրդի կողմից կամավոր տրվելիք նվերներն ընդունելու հարցում և յուրաքանչյուրն ազատ է իր սեփականությունը կամավոր նվիրելու ում որ ցանկանա, այդ թվում՝ թեմի առաջնորդին: Չափազանց հետաքրքիր է այն իրողությունը, որ թեմակալ առաջնորդը խնդրում էր պարտադիր տուրքերն արգելելուց հետո գոնե հավատացյալների կամավոր նվիրատվություններին արգելք չհանդիսանալ՝ շեշտելով, թե իշխանությունները շատ լավ գիտեն, որ հոգևորականները «օդով չեն ապրում, այլ ժողովրդի կամավոր նվերներով»¹⁸: Սա առավելապես վերաբերվում էր եկեղեցական պաշտոնյաներին, իսկ գյուղական քահանաների հիմնական մա-

¹⁷ Նույն տեղում, թ. 1 և շրջ.:

¹⁸ ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 5, թ. 60 և շրջ.:

սը զբաղվում էր գյուղատնտեսական աշխատանքներով: Փաստորեն, բարձրաստիճան հոգևորականի հայտարարությունը, թե հոգևոր դասը շարունակում է բնակչությունից կամավոր նվերների ակնկալել, Խորհրդային Հայաստանի իշխանությունների ու իշխող կուսակցության համար կարող էր միմիայն հավաստիացում լինել, որ «տերտերները չեն փոխվել ու չեն փոխվում», այն է՝ նրանք շարունակում են «անաշխատ եկամուտով ապրել», ինչը Խորհրդային գաղափարախոսության և արժեհամակարգի տեսակետից դատապարտելի երևույթ էր:

Եկեղեցու եկամտի որոշակի մասը գոյանում էր մոմի վաճառքից: Տեղական որոշ ղեկավարներ արգելքներ էին հարուցում նաև մոմավաճառության հարցում: Այսպես՝ 1927 թ. սեպտեմբերի 22-ին Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Գևորգ արք. Չորեքյանը ՀՍԽՀ ներքգործողկոմին հայտնում էր, որ Նոր Բայազետի գավգործկոմը երեք ամիս առաջ քաղաքի երկու եկեղեցիներում մոմավաճառությունն արգելել է: Շեշտելով, որ մյուս միութենական հանրապետություններում մոմավաճառությունն արգելող դեկրետ կամ հրահանգ չկա, խնդրում էր Նոր Բայազետի գավգործկոմին հրահանգել վերացնելու արգելքը և քայլեր ձեռնարկել, որպեսզի գավգործկոմներն ու տեղգործկոմները, համաձայն Խորհրդային օրենսդրության, չմիջամտեն եկեղեցու կրոնական բնույթի ներքին գործերին¹⁹: Փաստորեն, բանն այնտեղ էր հասել, որ հոգևորականների ցանկությունը գոնե կրոնի ու եկեղեցու իրավունքներն էականորեն սահմանափակած Խորհրդային օրենսդրության պահպանումն էր, քանի որ

¹⁹ ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 476, թ. 111:

տեղական ղեկավարների ու կուսկազմակերպությունների կամայականությունները չափ ու սահման չէին ճանաչում:

Որպեսզի քահանաները հրաժարվեին իրենց առաքելությունից, նրանց նկատմամբ գործադրվում էին ոչ միայն վարչական, հոգեբանական, այլև ֆինանսական ճնշումներ: Իշխանությունների նման քայլերից մեկն էլ քահանաներին անհատական հարկերով ու տուրքերով ծանրաբեռնելն էր: Երբեմն սահմանված տարեկան տուրքը կարող էր մի քանի անգամ գերազանցել քահանայի մեկ տարվա եկամուտը: Այս գործելակերպն առանձնապես տարածված էր 1920-ականների երկրորդ կեսին, ինչը շարունակվեց նաև 1930-ականներին: Հայաստանի ազգային արխիվի թիվ 409 (Գերագույն հոգևոր խորհուրդ) ֆոնդում բազմաթիվ են իրենց վրա հարկ սահմանելու առթիվ հուսահատության մեջ հայտնված գյուղական քահանաների դիմումները Գերագույն հոգևոր խորհրդին: Նրանցից որոշները ճնշումներին չէին դիմանում և իրենց ու ընտանիքների գոյությունը պահպանելու համար կարգաթող էին լինում: Կային նաև չափազանց նվիրյալ, իրենց գիտակից կյանքն ազգին ու եկեղեցուն նվիրաբերած հոգևորականներ, ովքեր ատամները սեղմած դիմանում էին օրեցօր ուժգնացող ճնշումներին ու հալածանքներին: Օրինակ՝ ոչ գյուղատնտեսական վաստակով ապրելու համար Նոր Բայազետի գավառի Ալիդըլիս գյուղի երկու քահանաների վրա 1929 թ. համար 348-ական ռուբլի հարկ էր սահմանվել: Սա այն դեպքում, երբ նրանցից յուրաքանչյուրի տարեկան եկամուտը (իրենց հավաստմամբ) կազմում էր 40–50 ռուբլի, ինչը գոյանում էր մկրտությունից (50 կոպեկ, որից 10 կոպեկը եկեղեցու վառելիքինն էր), թաղումից (1 ռուբլի), պսակից (1 ռուբլի) ստացված գումարներից: Հայտնելով այս մասին՝ գյուղի հոգևոր հովիվ Մելիք-

սեթ քահանա Չաթոյանցը ուշադրության արժանի վկայություն ունի իշխանության ներկայացուցիչների մոտեցումների վերաբերյալ. «Շարունակ մեզ առաջարկում են, թե մենք դիտմամբ կծանրաբեռնենք ձեզ անհատական տուրքերով, որպեսզի դուք քահանայությունից դուրս գաք: Բայց քա՛վ լիցի այդ, միմիայն կմահանամ քահանայական կոչման տակ, թող մուրացկանությամբ անեմ»²⁰: Առավել խոստում է 1929 թ. հունիսի 15-ին Գերագույն հոգևոր խորհրդին ուղղված Վայոց ձորի գործակալ Եղիշե աբեղայի զեկուցագիրը. «Ըստ այսմ պատիվ ունեմ ամենախոնարհորեն հայտնելու Գերագույն Հոգևոր խորհրդիդ 1929 թվի մյուս հարկի՝ քահանայական օգտագործվելու եկամուտ են որոշել 300-ից մինչև 500-ի, նաև 1000 ռուբլով, որի մասին քահանայքը դիմելով ինձ լաց են լինում իրենց չքավորության մասին, բոլորովին ապրուստից զրկված, ոչ մի եկամուտ ժողովրդից, ուժից դուրս հարկերի, տուրքերի պիտի ենթարկվեն: Միանգամայն ուժասպառ և սովի դռանը կանգնած, սովի են մատնված: Անցյալ տարիները մի կերպ ունեցած-չունեցածներս վաճառինք, տվինք, բայց այժմս ոչ մի հնարավորություն չունենք, չենք կարող տալ այդ ծանր հարկերը: Ուստի խնդրեմ Գերագույն Հոգևոր խորհրդիդ միջոցներ ձեռք առնելու և անել հայրախնամ կարգադրություն ազատել տալու մեզ այս ծանր տուրքերից»²¹:

Սակայն ոչ բոլոր քահանաներն էին պատրաստ տարիներ շարունակ անարդյունք դիմագրավել չդադարող հալածանքներին ու անարգանքին, տնտեսական ճնշումներին, իրենց և ընտանիքի անդամների իրավունքների սահմանափակումներին (այդ թվում՝ դպրոցահասակ երեխաների կրթության իրավուն-

²⁰ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2471, թ. 34:

²¹ Նույն տեղում, թ. 43 և շրջ.:

քին): Այս ամենի հետևանքով ողջ հանրապետության տարածքում սկսեցին մեծ թիվ կազմել կարգաթողությունները: Իշխանությունների կողմից վարվող հակակրոնական և հակաեկեղեցական բիրտ քաղաքականությունը մեղմացնելու մտահոգությամբ՝ 1927 թ. նոյեմբերի 17-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն, իսկ 1930 թ. դեկտեմբերի 29-ին կաթողիկոսական տեղապահ Խորեն արք. Մուրադբեկյանը հայությանն ուղղված կոնդակներ հրապարակեցին՝ համապատասխանաբար 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխության և Հայաստանի խորհրդայնացման 10-ամյակների առթիվ²²: Սակայն այս քայլերը չէին կարող և չփոխեցին եկեղեցու նկատմամբ հանրապետությունում վարվող քաղաքականությունը:

Անմխիթար էր ոչ միայն գյուղական քահանաների, այլև Մայր Աթոռի միաբանների կենցաղային պայմանները: Ասվածը վերաբերում է ոչ միայն շարքային, այլև բարձրաստիճան հոգևորականներին: Վերը գրվածը փաստող բազմաթիվ արխիվային վավերագրեր են պահվում Ազգային արխիվում: Ընդամենը մեկ օրինակ ներկայացնենք: Մայր Աթոռի եկեղեցական օրացույցները 1920–1930-ական թթ. հիմնականում կազմում էր Արիստակես եպիսկոպոսը՝ դրա համար որոշակի վարձատրություն ստանալով: 1930 թ. հուլիսի 8-ին կաթողիկոսի տեղապահ Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանին ուղղված դիմումում նա խնդրում էր իր կազմած 1931 թ. օրացույցի համար վճարելու փոխարեն նորոգել տալ իր սենյակը՝ հիշեցնելով, որ այդ մասին «երեք տարի առաջ խոստացել եք»²³: Փաստորեն, բարձրաստիճան հոգևորականները տարիներ շարունակ սպասում էին կենցաղային

²² ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 703, թ. 183 և շրջ., ֆ. 409, ց. 1, գ. 85, թ. 2 և շրջ., 4:

²³ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 124, թ. 2:

պայմանների բարելավմանը: Սա պայմանավորված էր այն իրողությամբ, որ տարեցտարի պակասում էր Մայր Աթոռի եկամուտները, ինչը ՀՍԽՀ պետական-կուսակցական ղեկավարության հակակրոնական, հավատացյալերին եկեղեցուց հեռացնելուն ուղղված քաղաքականության հետևանք էր:

Խորհրդային Հայաստանում իրականացվող հակակրոնական գաղափարաքարոզչական աշխատանքների, կրոնի սպասավորների հանդեպ իրականացվող անվանարկման, հալածանքների արդյունքում բնակչության գերակշիռ մեծամասնությունը հեռացավ եկեղեցուց: Եկեղեցի հաճախելը դիտվում էր իբրև «հին արժեքներին» հետևելու քայլ: Նույնիսկ հավատացյալ մարդիկ խուսափում էին եկեղեցի հաճախել, կրոնական ծեսերին մասնակցել՝ պետության արժեքային համակարգի կրողների և նրանց ընդօրինակողների հանրային պարսավանքին չարժանանալու համար: Այս ամենը հատկապես գյուղական բնակավայրերում հանգեցրեց եկեղեցուց դուրս՝ տներում, գաղտնի պսակների և մկրտությունների տարածմանը, ինչը փաստացի «ծեռնտու էր» և՛ քաղաքացուն, և՛ քահանային: Քահանայի «շահն» այն էր, որ ստացած նվիրատվությունն այս դեպքում կարող էր թաքցնել՝ ոչինչ չուղարկելով թեմակալ առաջնորդին, ինչպես նաև խուսափել իշխանությունների «ուշադրությանն» արժանանալուց: Այս դեպքում քահանաները, սոցիալական պայմաններից ելնելով, շրջանցում էին այն իրողությունը, որ Հայ առաքելական եկեղեցու կանոններով եկեղեցուց դուրս պսակ և մկրտություն կատարելն արգելվում էր: Խորհրդային կարգերից առաջ այդպիսի արարողություններն օրինական չէին համարվում, իսկ այն իրականացրած հոգևորականը պատժվում էր: Թեմակալ առաջնորդները չէին կարող անտեսել այս հանգա-

մանքը: 1929 թ. դեկտեմբերի 8-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին ուղղված զեկուցագրում Շիրակի թեմի առաջնորդ Արտակ եպիսկոպոս Սմբատյանը տեղեկացնում էր, որ թեմում «պսակների մեծ մասը կատարվում են գաղտնի՝ տներում» և խնդրում որևէ կարգադրություն անել այդ մասին²⁴: Նույնը բնորոշ էր նաև հանրապետության մյուս շրջաններին:

Չափազանց կարևոր է անդրադառնալ Խորհրդային Հայաստանում իրականացվող հակակրոնական ու հակակեղեցական քաղաքականությանը բնակչության վերաբերմունքին, նրանց արձագանքներին: Այս դեպքում ևս չափազանց դժվար է միանշանակ գնահատական տալ, թե ժողովրդի համար եկեղեցին երբ է ընկալվում իբրև ազգային արժեք, իսկ երբ՝ պաշտամունքի վայր: Նման խորհրդածության առիթ է տալիս ստորև բերվող օրինակը:

1926 թ. հուլիսի 23-ին իր մահկանացուն կնքեց Երևանի Ազատ եկեղեցական եղբայրության անդամ, կարգալույծ եղած Աշոտ արքեպիսկոպոս Շխյանը (ավագանի անունը՝ Նիկողայոս Շխյան): Նրա մահվան ու թաղման առթիվ 100 օրինակով թողուցիկ տպագրվեց և տարածվեց Երևանում, ուր հանգուցյալը նշվում էր իբրև «Աշոտ արքեպիսկոպոս Շխյան»²⁵: Հանգուցյալի կողմնակիցներն ինքնուրույն որոշեցին նրան հուղարկավորել Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցու գավիթում՝ բարերար Ներսես Թաիրյանի արձանի հարևանությամբ: Բանն այն է, որ եկեղեցիների գավիթներում հուղարկավորությունները բացառիկ երևույթ էին և թույլատրվում էին անձամբ կաթողիկոսի կողմից: Լուսժողկոմ Ասքանազ Մռավյանի հետ հանդիպելու նպատակով հուլիսի

²⁴ Նույն տեղում, գ. 100, թ. 3 և շրջ.:

²⁵ Նույն տեղում, գ. 64, թ. 40:

23-ին Էջմիածնից Երևան ժամանած Խորեն և Բագրատ արքեպիսկոպոսները երբ հուլիսի 24-ին այցելում են Սուրբ Սարգիս եկեղեցի, տեսնում են, որ մի խումբ քաղաքացիներ եկեղեցու գավիթում գերեզման են փորում՝ հայտարարելով, թե այդտեղ հուղարկավորվելու է Աշոտ արքեպիսկոպոսը: Արքեպիսկոպոսների խոսքերով՝ «այդ հանդուգն արարքի առաջն առնելու համար» նրանք դիմում են տարբեր պետական մարմինների, նաև ՀԿ(Բ)Կ կենտկոմի քարտուղար Աշոտ Հովհաննիսյանին: Վերջինին ուղղված նամակում ներկայացնելով իրադրությունը՝ Մայր Աթոռի միաբանները տեղեկացնում էին, որ իրենց հայտնի չէ, թե ում կարգադրությամբ է եկեղեցուն կից գերեզման փորվում նախկին արքեպիսկոպոսին հուղարկավորելու համար. «համենայն դեպս, դա վիրավորանք է (չգիտենք՝ գիտությամբ թե անգիտությամբ) Ամենայն Հայոց կաթողիկոսին և Էջմիածնին»: Նրանք Կենտկոմի քարտուղարին խնդրում էին. «այդ անպատեհության առաջն առնել, քանի որ բոլոր հանգամանքները Ձեզ հայտնի են»: Այս բողոքներն անհետևանք չմնացին. երեկոյան եկեղեցի ժամանած քաղաքի միլիցիայի պետի կարգադրությամբ գերեզմանափոսը փակվեց²⁶:

Այս իրադարձության ծավալման ընթացքում մեզ առավել հետաքրքրում է սովորական քաղաքացիների, հավատացյալների արձագանքը, ովքեր անտարբեր, դիտորդի դերում չեն գտնվել: Քաղաքի որոշ թվով հայ մտավորականներ և ժողովրդի ներկայացուցիչներ հավաքվել էին Առաջնորդարանի բակում՝ իրենց բողոքն արտահայտելով կատարվող հակաեկեղեցական քայլի դեմ: Նրանք Առաջնորդարանի տարածքից «գոհ սրտով

²⁶ Նույն տեղում, թ. 41–42:

վերադարձան» միայն այն ժամանակ, երբ գերեզմանափոսը փակելու կարգադրություն ստացվեց²⁷: Սա ուշադրության արժանի փաստ է և վկայում է բնակչության շրջանում կրոնական զգացմունքների առկայության, եկեղեցին պաշտպանելու ցանկության մասին: Այս դեպքում միանշանակ չէ, թե քաղաքացիների շրջանում սրանցից որն էր առաջնայինը: Բացառված չէ, որ բնակչության անտարբերության պարագայում բարձրաստիճան հոգևորականների դիմումներն անհետևանք մնային:

Բնակչության շրջանում կրոնական զգացմունքների առկայության և առանձնապես եկեղեցական ավանդույթները պահպանելու ձգտման մասին է վկայում նաև հետևյալ փաստը: Տեղական իշխանությունները տարբեր քայլերի էին դիմում հոգևորականների գործունեությունը խոչընդոտելու, եկեղեցիները փակելու համար: Այսպես՝ քութեշ հիվանդության պատճառով բժիշկների հորդորով 1928 թ. աշնանը փակվել էին Շիրակի թեմի Մեծ Պարնիի շրջանի եկեղեցիները: Հիվանդության վերջանալուց հետո եկեղեցիների հետ միաժամանակ փակված դպրոցները վերաբացվել էին, սակայն տեղական իշխանությունները ձգձգում և թույլ չէին տալիս եկեղեցիները բացել՝ փորձելով խոչընդոտել Սուրբ Ծննդյան տոների կատարումը²⁸: Մեծ Պարնիի շրջանի գործակալ Հովսեփ քահանա Տեր-Ներսիսյանը 1929 թ. հունվարի 16-ին Գերագույն հոգևոր խորհրդին այս առթիվ գրում էր, որ Մեծ Պարնի գյուղի կոմիսարն իրեն կարգադրել է «չկատարել ո՛չ երեկոյան ճրագալույցի և ո՛չ առավոտյան պատարագը», սակայն ինքը ոչ միայն չէր ենթարկվել, այլև հարևան գյուղերի քահանաներին հորդորել էր պատշաճ կերպով կատարել

²⁷ Նույն տեղում, թ. 41:

²⁸ ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 482, թ. 20:

իրենց պարտականությունները²⁹: 1929 թ. հունվարի 5–6-ին՝ Սուրբ Ծննդյան տոների ժամանակ, շրջանի մի քանի գյուղերում հավատացյալ բնակչությունը բացում է եկեղեցիները, ուր քահանաները ժամերգություն են կատարում: Որոշ քահանաներ հավատացյալների հորդորով գոյություն ունեցող եկեղեցական ավանդույթի համաձայն ջրօրհների հանդեսը գետի վրա էին կատարել, ինչի պատճառով այդ քահանաները ձերբակալվում են: Ձերբակալված քահանաներից Համամլուի հոգևոր հովիվ Հովհաննես քահանա Տեր-Կարապետյանը ոչ միայն դրամական տուգանքի ենթարկվեց, այլև դատապարտվեց 1.5 տարվա ազատազրկման³⁰: Վերջինս բանտարկությունից վաղաժամկետ ազատվեց միայն գյուղի 127 բնակչի կողմից ստորագրված դիմումագրի հիման վրա, որտեղ վերջինները հավաստիացնում էին, որ իրենց հորդորների արդյունքում է քահանան գետում արարողություն կատարել: Երևանի ուղղիչ տնից ազատվելուց հետո հուսալքված ծերունագարդ քահանան հրաժարվում է հոգևոր կոչումից³¹:

Հավատացյալների՝ եկեղեցուն և քրիստոնեական կրոնին ջերմեռանդ նվիրվածության բացառիկ օրինակ է Նոր Բայազետի Ներքին Քուլաղոսան գյուղի բնակիչների պահվածքը, որոնք 1929 թ. գարնանը կազմակերպված կերպով ընդդիմացան գյուղի եկեղեցին քանդելու տեղական իշխանությունների որոշմանը: 1929 թ. մայիսի 7-ին գումարված ժողովում նրանք դեմ արտահայտվեցին եկեղեցու քանդմանը և 362 ստորագրություններով համապատասխան համախոսական ուղարկեցին Էջմիածին՝ Գե-

²⁹ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2471, թ. 6:

³⁰ ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 482, թ. 20 և շրջ.:

³¹ Նույն տեղում, թ. 19, 21–22 շրջ.:

րագույն հոգևոր խորհրդին³²: Գյուղացիների պայքարն իր դրական պտուղները տվեց:

Ինչպես տեսնում ենք, բնակչության շրջանում կրոնական զգացմունքների արմատախիլ անելուն ուղղված կուսակցական-պետական քաղաքականությունը միշտ չէ, որ սպասված արդյունքն էր ունենում: Այդուհանդերձ, չենք կարող չնկատել, որ հակակրոնական և հակաեկեղեցական քարոզչությունը հատկապես խորը արմատներ էր ձգում պատանիների շրջանում: Ընդգծենք, որ Մայր Աթոռ ուղարկած զեկուցագրերում 1920-ականների սկզբներից սկսած գյուղական քահանաներն առավելապես գանգատվում էին իրենց հանդեպ կոմերիտականների, դարոցահասակ երեխաների ու պատանիների վերաբերմունքից: Հաջորդ տարիներին սա կարծես օրինաչափություն դարձավ:

Նոր Բայազետի շրջանային հոգևոր խորհրդի նախագահող Հովհաննես ավագ քահանա Տեր-Հովհաննիսյանը 1929 թ. մայիսի 17-ով թվագրվող զեկուցագրում հատկապես շեշտում է վերը նշյալ իրողության մասին՝ նշելով. «Ամեն տեղ քահանաները ծաղր ու ծանակի ենթակա են, երկյուղից չենք կարող հրապարակ դուրս գալ, պոռում են չորս կողմից՝ վա՛յ տե՛ր, տե՛ր, տե՛ր, կծո՛ւ սատանա տեռանք, հայիոյում են մորուք, բերան, հավատ, հոգի: Մեկալ օր քաղաքի քահանաներս նստած էինք եկեղեցու բակ, աշակերտները գալիս մեր վրա ջուր թափում ու փախնում էին: Այս որ քաղաքն է լինում, հապա գյուղեր ինչ չեն անում: Խեղճ քահանաները ոչխարի լռությամբ տանում են: Եկեղեցու պատերի վրա, դռան վրա այնպիսի խայտառակ և անպատիվ

³² ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2471, թ. 27–29 և շրջ.:

խոսքեր են գրում, որ ամաչում ենք ասելու ու գրելու: Յանկալի էր, որ կառավարությունը բարեհաճեր վերջ տալու այս անկուտուրական և կոպիտ վարմունքին»³³: Իզուր էր հոգևորականը միատմտորեն հույս փայփայում, թե ՀՄԽՀ իշխանությունները վերջ կտան եկեղեցու ու եկեղեցականների հալածանքերին, ծաղր ու ծանակին: Առջևում ողբերգական 1937 թվականն էր:

Ցավալիորեն, եկեղեցիների և հոգևորականների հանդեպ աշակերտների այս վերաբերմունքը համատարած երևույթ էր: Նման բովանդակությամբ բազմաթիվ փաստաթղթեր են պահվում ՀԱԱ-ի Գերագույն հոգևոր խորհրդի ֆոնդում: Ներկայացնենք դրանցից ևս մեկը: 1929 թ. մայիսի 4-ին Էջմիածնի Ներքին Խաթունարխ գյուղի քահանա Անդրեաս Տեր-Անդրեասյանը հայտնում էր, որ գյուղի դպրոցի աշակերտները եկեղեցու դռան վրա կավիճով անվայել խոսքեր են գրում քահանաների և եկեղեցու հասցեին, քարեր են նետում եկեղեցու լուսամուտներից ներս, կոտրում լուսամուտները: «Ավանդույթի ուժով» դպրոցի վարիչն անհետևանք էր թողնում քահանայի բողոքները³⁴:

Խորհրդային իշխանությունների հակակրոնական ու հակաեկեղեցական հետևողական քաղաքականությունը և դա կանխելուն ուղղված անարդյունք պայքարը տարիների ընթացքում հուսահատեցնում էր հավատացյալներին: Ասվածի մասին է վկայում հետևյալ օրինակը: 1929 թ. հունվարի 1-ին Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսին ուղղված զեկուցագրում նկարագրելով Վայոց ձորի Մալիշկա գյուղի Սուրբ Գևորգ եկեղեցու բռնագրավումը, այդտեղ պահվող սրբանկարների ու գրքերի այրումը, եկեղեցու լիազորները (Եփրեմ Հակոբյան, Մաթեոս Ստեփան-

³³ Նույն տեղում, թ. 26:

³⁴ Նույն տեղում, թ. 17:

յան, Հովհաննես Շահբազյան) հուսահատությունից գրում էին, որ իրենց հույսը մնացել է Մայր Աթոռն ու վեհափառը, սակայն իրենց դիմումները որևէ հետևանք չեն ունենում: «Մենք մեռած ենք և թաղված չենք, այսքան բողոքում ենք և լիազոր մարդիկ ենք ուղարկում, ոչ մի պատասխան չենք ստանում», - գրում էին նրանք³⁵: Իրականությունը անտեղյակ գյուղացիները չէին էլ կարող երևակայել, որ Խորհրդային համակարգի դեմ իրենց նման անզոր էր նաև Ամենայն Հայոց կաթողիկոսը:

Նշված օրինակները վերաբերում են 1920-ականներին: Դժվար չէ կռահել, թե ինչպիսի պայմաններում էին գտնվում հոգևորականները 1930-ականներին և առանձնապես Մեծ բռնաճնշումների օրերին:

Ամփոփելով՝ նշենք, որ դժվար է միանշանակ գնահատական տալ եկեղեցու նկատմամբ հասարակության, նույնիսկ իշխանությունների վերաբերմունքին՝ ելնելով նյութին վերաբերող բազմազան, հաճախ իրարամերժ փաստերից: Ակնհայտ է մի բան. կոմունիստական կուսակցությունն այս հարցում տանում էր հետևողական քաղաքականություն՝ ճիշտ ընտրելով քարոզչության օբյեկտին և ճիշտ օգտագործելով ազգաբնակչության կրոնական զգացմունքների վրա ներազդելու մեթոդները: Ակնհայտ է, որ Խորհրդային Հայաստանի պետական-կուսակցական ղեկավարությանն առաջին հերթին անհրաժեշտ էր բնակչության դրական արձագանքն իրենց քաղաքականությանը: Այդ իսկ պատճառով առավել նրբանկատ էին ընտրվում եկեղեցուն վարկաբեկելու մեթոդները:

³⁵ Նույն տեղում, թ. 7:

Այս ամենով հանդերձ՝ հարկ է արձանագրել, որ 1920-ական թվականներին Խորհրդային Հայաստանում իրականացվող հակակրոնական քաղաքականությունն իր վերջնական նպատակին չձառայեց. բնակչության շրջանում շարունակում էին զգալի քանակ կազմել Հայ առաքելական եկեղեցու և կրոնական այլ ուսմունքների հետևորդները: Այլ խնդիր է, որ 1930-ականների երկրորդ կեսին ԽՍՀՄ-ում քաղաքական բռնաճնշումների ուժգնացման պայմաններում հավատացյալներն «ընդհատակ անցան»: Երկրորդ համաշխարհային պատերազմի բռնկումը փրկողակ հանդիսացավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար: Խորհրդային իշխանությունը չէր կարող հաշվի չառնել պատերազմական պայմաններում բնակչության շրջանում կրոնական զգացմունքների աճի իրողությունն ու պատերազմող խորհրդային բանակներին Հայոց եկեղեցու ցուցաբերած նկատելի օժանդակությունը: Ուստի՝ զգալիորեն փոխվեց Մայր Աթոռի նկատմամբ պետության վերաբերմունքը:

Амо К. Сукиасян, *Институт истории НАН РА, к.и.н., доцент, Священнослужители в Советской Армении в 1920-е гг. (эпизоды повседневной жизни).*

В 1920-е годы в связи с антирелигиозной и антицерковной политикой, проводившейся в Советской Армении, правомочие церкви и священнослужителей, а также право на свободу передвижения служителей Армянской Апостольской церкви в республике были жестко ограничены. Священнослужители были лишены гражданских прав, а религиозные учреждения лишены права собственности. Лишение привилегий, а также административ-

ное, психологическое и финансовое давление создавали очень тяжелое, неприглядное положение для священнослужителей.

Не все священники были готовы годами безрезультатно противостоять непрекращающимся преследованиям и унижениям, экономическому давлению и ограничениям прав членов их семей (включая право на образование детей школьного возраста). В результате отречение от сана распространялось среди священнослужителей, а большинство населения ушло из церкви. Антирелигиозная пропаганда особенно укоренилась в среде подростков и молодежи. Однако антирелигиозная политика, проводившаяся в Советской Армении в 1920-е гг., не достигла своей конечной цели. Последователи Армянской Апостольской церкви, а также других религиозных учений продолжали составлять значительное число среди населения.

Hamo K. Sukiasyan, Associate Professor at the Institute of History of the NAS RA, PhD in History, *The Clergy in Soviet Armenia in the 1920s (episodes of everyday life)*.

In the 1920s due to the anti-religious campaign and anti-church policy in Soviet Armenia, the authority of the church and the clergy, even the right of freedom of movement of the Armenian Apostolic Church servants in the republic were severely restricted. The clergymen were deprived of their civil rights, and the religious institutions were deprived of their property rights. Deprivation of privileges, administrative, psychological and financial pressures created a very difficult, unpleasant situation for the clergymen.

Not all the priests were ready to endure years of incessant persecution and humiliation, economic pressures, and restrictions on the rights of their family members (including the right to education of school-age children). As a result, a number of clergymen in the republic renounced holy orders, and the majority of the population left the church. Anti-religious propaganda was especially deep-rooted among teenagers and young people. However, the anti-religious policy pursued in Soviet Armenia in the 1920s did not serve its ultimate goal. The followers of the Armenian Apostolic Church as well as of other religious teachings continued to form a significant number among the population.

СТЕПАН Г. ГАРИБДЖАНЫАН

Институт истории НАН РА, к.и.н.

СОЗДАНИЕ И ДЕЯТЕЛЬНОСТЬ ТРОПИЧЕСКОГО ИНСТИТУТА АРМЕНИИ

Ключевые слова: Армения, СССР, тропические станции, малярийные пункты, заболевания.

До установления Советской власти в Армении не было научных учреждений в области здравоохранения. Тяжелое наследие от прежних правителей получил созданный в 1920 г. Народный комиссариат здравоохранения ССР Армении. В республике царил голод, повсюду распространялись эпидемии целого ряда инфекционных заболеваний-паразитарных тифов, кишечных инфекций, малярии. Трудности в организации эффективной борьбы с этими эпидемиями усугублялись крайней нехваткой врачей и среднего медицинского персонала. Только Советская власть создала все условия для успешной организации борьбы с малярией и другими тропическими заболеваниями. Наркоматом здравоохранения ССРА уже с начала 1920-х годов были созданы противомаларийные отряды, тропические станции, диспансеры, врачебные и фельдшерские малярийные пункты. В некоторые районы республики были направлены экспедиции, осуществлявшие на местах проведение некоторых мероприятий по борьбе с малярией, в основном организацию массового лечения больных.

Вскоре возникла необходимость создания руководящего центра, который бы возглавлял все дело противомалерийной борьбы, в республике и проводил в жизнь необходимые организационные, исследовательские, лечебно-профилактические, научно-исследовательские и иные мероприятия, связанные с этой борьбой.

13 июля 1923 г. Наркомздравом Армении был отдан приказ за № 192 об организации Тропического института ССРА, который стал центром научно-исследовательской, научно-организационной и научно-практической работы по борьбе с малярией и рядом других паразитарных заболеваний в республике¹. Он был первым научно-исследовательским медицинским учреждением на территории Армении и вторым в СССР по времени организации после Московского тропинститута среди институтов, проводивших исследования в области борьбы против тропических заболеваний. Официальное открытие Тропического института состоялось 4 сентября 1923 г. На открытии торжества присутствовали заместитель председателя Закавказского Совнаркома А. Мясникян, председатель ЦИК Армении С. Амбарцумян, все наркомы, представители государственных, общественных учреждений, прессы и гости. Торжественное заседание открыл Наркомздрав Армении С. Лазарян, после вступительного слова которого выступил председатель заседания С. Амбарцумян. Говоря о роли и значении Тропического института он остановился на плодотворной работе, проделанной институтом за короткий промежуток времени его существования и о том содействии, которое

¹ См.: Институт эпидемиологии, вирусологии и медицинской паразитологии имени А.Б. Алексаняна. Ереван, 1973. С. 4; С конца августа 1923 г. Тропический

впредь должны оказывать все учреждения в деятельности института. Слова приветствия сказали А. Мясникян, заместитель председателя Совнаркома Армении А. Мравян, от Московского тропического института профессор К.И. Скрыбин².

Перед Тропинститутом стояла задача помочь органам здравоохранения молодой республики организацией научно-исследовательской работы по разработке и осуществлению рациональных методов борьбы с малярией, широкое распространение которой наносило огромный ущерб здоровью населения и народному хозяйству. С первых дней организации институт неуклонно следовал принципу увязки научно-исследовательской работы с повседневной практикой борьбы с малярией и другими паразитарными болезнями (гельминтозов, лейшманиозов, кишечных протозоозов, лихорадки папатачи и др), оказание организационно – практической помощи органам здравоохранения, научно-практическое руководство молодыми противомаларийными учреждениями и, наконец, подготовка кадров специалистов³. В этом большом деле ценную помощь и содействие оказал Московский тропический институт, который в первый же год командировал в Армению ряд ответственных руководителей и других сотрудников (К.И. Скрыбина, Е.И. Марциновского, В.И. Кедровского, П.П. Попова и Н.П. Попова), которые сыграли существенную роль в постановке работы отделений и других подразделе-

институт начал принимать больных (см.: Национальный архив Армении. Ф. 118. Оп. 1. Д. 151. Л. 57).

² См.: Хорурдаин Айастан (Советская Армения). 1923. 7 сентября. На арм. яз.

³ См.: **Пирумов Х.Н.** 10 лет деятельности Тропического института НКЗдрава ССР Армении (1923–1933) // Труды Тропического института Наркомздрава ССР Армении. Выпуск второй. Посвящается десятилетию института (1923–1933). Эривань, 1935. С. 12–13.

ний института, в обучении новых кадров. С их участием были организованы первые экспедиции по изучению некоторых районов республики, а также первые курсы по подготовке работников для периферических учреждений. Институт направлял своих сотрудников в Москву, Ленинград, Харьков, а также в европейские страны в научные командировки для усовершенствования⁴.

С начала основания до переименования в конце 1930-х годов Тропинститут имел следующую структуру: 1. Клиническое отделение (зав. Е.Г. Карапетян) со стационаром и с амбулаторией (зав. А.Б. Саркисян); 2. Микробиологическое отделение (зав. А.И. Исаакян) с подотделами бактериологическим и протозоологическим (зав. Ш.М. Тер-Матевосян). В дальнейшем это отделение было преобразовано в протозоологическое, а бактериологический подотдел был свернут; 3. Энтомологическое отделение (зав. сперва П.П. Попов, потом М.Н. Кешишян, с 1929 г. – А.А. Мирзоян); 4. Гельминтологическое (зав. Е.В. Калантарян). С 1926 по 1928 г. при Тропинституте функционировало также патологоанатомическое отделение (зав. Р.А. Мурадов), со смертью которого (19 декабря 1928 г.) отделение было свернуто. В 1929 г. было развернуто гематологическое отделение (зав. А.Б. Саркисян), а в 1930 г. – эпидемиологическое (зав. Х.Н. Пирумов). В начале 1933 г. с эпидемиологическим отделением слилось бактериологическое. В 1937 г. была открыта бруцеллезная лаборато-

⁴ Подробно см.: *Д-р П.П. Попов*. Тропический институт Армении и его задачи // Труды Тропического института Армении. Издание Народного комиссариата здравоохранения Армении. Под редакцией профессоров Е. Марциновского и К. Скрябина. Ответственный редактор проф. К.И. Скрябин. 1924. Т. 1. Москва-Эривань, 1926. С. 3–8; *Гарибджанян Степан*. Научные связи Армении в области медицины (1920-е годы) // Медицинская наука Армении. 2017. Т. LVII. №2. С. 119–122.

рия. В 1941 г. в связи с изменением профиля института эта лаборатория была изъята из ведения последнего и преобразована в самостоятельную бруцеллезную станцию⁵.

Первым директором Тропинститута был Нерсес Акопян (впоследствии доктор медицинских наук, профессор). В 1925–1927 гг. временно исполняющим обязанности директора являлся врач Мигран Кешишян, затем до августа 1928 г. – врач Ерванд Карапетян, после него до 1941 г. должность директора занимал доктор медицинских наук, профессор Христафор Пирумов.

Вопросы изучения малярии и мер борьбы с ней занимали первостепенное место в работе Тропинститута. В первый период особенно много внимания уделялось изучению распространения малярии по различным районам республики. Задача эта выполнялась вначале только работниками института, а затем, с постепенным развертыванием сети противомаларийных учреждений, в работе стали принимать активное участие и они, получая необходимое руководство и указания, в частности, от эпидемиологического отделения института. через 2 года результаты этого изучения дали возможность ориентировочно разделить республику на ряд малярийных зон, что легло в основу соответствующих постановлений Совнаркома ССР Армении⁶. Инсти-

⁵ Подробнее см.: *Пирумов Х.Н.* 10 лет деятельности Тропического института НКЗдрава ССР Армении (1923–1933). С. 14–17; *Проф. Оганесян Л.А.* История медицины в Армении с древнейших времен до наших дней. Врачи, медицинская литература и лечебные учреждения у армян в Армении и за ее пределами. В 5 частях. Часть пятая. Ереван, 1947. С. 223–224.

⁶ См.: Декрет СНК ССР Армении о мерах борьбы против малярии 1923 г. 21 мая; Постановление СНК ССР Армении по борьбе с малярией 9 сентября 1925 года; постановление СНК ССР Армении (от 30 апреля 1926 г.) о списке сильно и умеренно малярийных городов и участков Республики // Труды II-го За-

тут принимал активное участие в работах малярийных комитетов при Совнаркомх ЗСФСР и ССРА. Он оказывал огромную помощь в организации и руководстве работой периферических тропических учреждений. Из года в год росла сеть тропических станций и пунктов: в 1923 г. действовала 1 станция и 2 пункта; в 1924 г. – 5 станций и 13 пунктов; в 1925 г. – 8 станций и 13 пунктов; в 1926 г. – 10 станций и 14 пунктов⁷.

Выступая с отчетным докладом на IV съезде Советов Армении (март 1925 г.), председатель Совнаркома республики Саркис Лукашин подчеркивал: «В области здравоохранения мы достигли огромных успехов, что можем считаться образцовыми в пределах Советского Союза. В уездах мы имеем несколько тропических станций, а в центре-Тропический институт, работу которых можно считать образцовой в нынешних условиях, как об этом свидетельствует ряд руководящих товарищей, работающих на этом поприще»⁸.

В отделениях института велись работы по изучению малярийного паразита, влияния малярии на кровь, кроветворные и другие органы, гемоагглютинационных групп, экспериментальной малярии и др. Энтомологическое и эпидемиологическое отделения занимались различными вопросами по биологии малярийного комара, по выявлению распространенных в отдельных

кавказского малярийного съезда. Тифлис, 1929. С. 123–126; Деятельность Народного комиссариата здравоохранения в 1923 г. // Отчет 1922–1923 гг. народных комиссариатов Социалистической Советской Республики Армения. Ереван, 1925. С. 357. На арм. яз.; Национальный архив Армении. Ф. 118. Оп. 1. Д. 269. Л. 541.

⁷ См.: Национальный архив Армении. Ф. 1. Оп. 4. Д. 32. Л. 38; *Меликян А.* Первый малярийный съезд в Ереване // Бжшакан андес (Медицинский журнал). 1927. № 2. С. 126. На арм. яз.

⁸ Хорурдаин Айастан. 1925. 17 марта.

районах видов, наблюдениями над изменениями качественного и количественного их состава, причинами этих изменений⁹.

С первых же годов деятельности института его научными сотрудниками был обнаружен ряд заболеваний, до того не наблюдавшихся в республике – висцеральный и кожный лейшманиозы, спруоподыбные заболевания, клещевой возвратный тиф, бруцеллез, пеллагра. Были выявлены и очаги распространения этих заболеваний, что открывало перспективы для их скорейшей ликвидации¹⁰.

Обследовательская и экспедиционная работа гельминтологического отделения выявила необычайное распространение глистных инвазий в республике: в некоторых районах глистная поражаемость населения доходила до 100%. Всего в Армении этим отделением обнаружен 21 вид паразитических червей. Отделение стало периодически проводить мероприятия по массовой дегельминтизации населения, в первую очередь среди организованных групп населения, детей-школьников, а также взрослых, работающих в некоторых производственных предприятиях, в местах расселения иммигрантов¹¹. В 1936–1938 гг. были поставлены опыты по выяснению непосредственных и отдаленных результатов массовой дегельминтизации среди организованных групп детей, а через периферическую сеть также среди коллективов взрослых. В течение ряда лет изучались различные воп-

⁹ См. *Пирумов Х.Н.* 10 лет деятельности Тропического института НКЗдрава ССР Армении (1923–1933). С. 21.

¹⁰ См.: *Проф. Оганесян Л.А.* История медицины в Армении с древнейших времен до наших дней... Часть пятая. С. 225.

¹¹ См. там же. С. 227–228.

росы, связанные с биологией распространенного в республике гименолепидоза¹².

Протозоологическое отделение занималось вопросами экспериментального и паразитологического характера для изучения ряда методов по биологии, эпидемиологии и культивированию дизентерийной амёбы и других кишечных простозоа. Основное внимание было сосредоточено на вопросах амебной дизентерии, проведено изучение ее распространения в пяти новых районах, велись работы по изучению распространения в республике и эпидемиологии балантидиаза и кокцидиоза. Проводились также экспериментальные работы с восприимчивыми животными, в частности, с хомячками для выяснения их роли, как возможных источников вируса лейшманиоза в природе¹³.

Клиническое отделение института разрабатывало вопросы лечения тропических заболеваний. Много времени и внимания было уделено различным методам лечения малярии, малярийных спленимагалий, бруцеллеза и др.; испытывалось действие переливания крови, лизатотерапии и др. при лечении различных тропических болезней. Через стационар Клинического отдела института только за 1933–1937 годы прошло 1503 больных¹⁴.

С 1938 г. Тропинститут начал заниматься также лихорадкой паппатачи, инфекцией, широко распространенной по республи-

¹² См.: *Пирумов Х.Н.* Краткий обзор деятельности Тропического института Арм. ССР за 1933–1938 гг.// Труды Тропического института Наркомздрава Армянской ССР. Выпуск третий. Посвящается 15-ти летию института (1923–1938). Ереван, 1939. С. 8–9.

¹³ См. там же. С. 8; *Проф. Оганесян Л.А.* История медицины в Армении с древнейших времен до наших дней... Часть пятая. С. 229–230.

¹⁴ См.: *Пирумов Х.Н.* Краткий обзор деятельности Тропического института Арм. ССР за 1933–1938 гг. С. 9.

ке. Работа велась в направлении изыскания методов массовой серопрофилактики этой лихорадки. С 1938 г. при институте была организована специальная лаборатория, которая наряду с научно-исследовательской работой также готовила антиген и мелитин для снабжения всех лабораторий Армении¹⁵.

Эпидемиологическое отделение института своими консультациями и руководством принимало активное участие в работах хозяйственных организаций, заинтересованных в проведении тех или иных гидротехнических работ, имеющих конечной целью оздоровление заболоченных районов. В результате этого было осушено довольно большое количество водоемов, а также проведено много и иного рода оздоровительных мероприятий – уничтожение личинок комаров нефтеванием или парижской зеленью, регулировка посева чалтыка, борьба с зимующими комами и пр.¹⁶.

Институтом ежегодно организовывались научные экспедиции в те или иные районы республики, в очаги наибольшего распространения паразитарных заболеваний, которые сыграли большую роль в деле организации борьбы с изучаемым заболеванием. Основными целями этих экспедиций были: научная или обследовательская работа для выяснения наличия или степени зараженности населения теми или другими заболеваниями; сбор материалов по передатчикам болезней или по изучению биологии этих передатчиков; ознакомление эпидемиологической обстановкой на местах для разработки соответствующих оздоро-

¹⁵ См. там же.

¹⁶ См.: Проф. **Оганесян Л.А.** История медицины в Армении с древнейших времен до наших дней... Часть пятая. С. 231.

вительных мероприятий, практическая помощь местным тропустановкам и медикосанитарным учреждениям в их повседневной работе по выявлению и лечению больных и т.д. В 1923–1930 гг. было организовано 13 экспедиций, в 1931–1935 гг. – 18, в 1936–1940 гг. – 35¹⁷. Кроме продолжительных экспедиций, которыми были собраны весьма ценные научно-практические материалы по вопросам о тропзаболеваемости в Армении, практиковались также краткосрочные выезды на места путем командировок отдельных научных сотрудников для проведения научно-исследовательских работ, инструктажа, консультаций и пр. В 1923–1930 гг. научными сотрудниками института было совершено 19 посещений малярийных учреждений, в 1931–1935 гг. – 191, в 1936–1940 гг. – 384¹⁸.

Тропический институт провел большую работу также в области подготовки и специализации высших и средних медицинских кадров по борьбе с заболеваниями. Для подготовки кадров врачей-маляриологов ежегодно при институте организовывались курсы и выделялись рабочие места. Так, в 1923–1930 гг. было подготовлено 73 врача, в 1931–1935 гг. – 39 врачей, в 1936–1940 гг. – 106. через эти курсы за более чем 15 лет было пропущено и обучено около 200 врачей и не менее 400 медсестер, лаборантов, бонификаторов и прочих средних медицинских работников¹⁹.

¹⁷ См.: Цатурян А.Т. Краткий обзор деятельности Института малярии и медицинской паразитологии Армянской ССР за 1923–1950 гг. // Труды Института малярии и медицинской паразитологии. Выпуск пятый. Ереван, 1951. С. 9.

¹⁸ См. там же. С. 10.

¹⁹ См. там же.

С 1932 г. Тропинститут установил связь с биологическим факультетом Педагогического института Наркомпроса ССРА, направляющим своих студентов в отделение института на производственную практику по биологии²⁰. Педагогическая деятельность Тропинститута велась прежде всего по линии подготовки студентов Ереванского медицинского института по тропической патологии и борьбе с тропическими заболеваниями. Работа в этом направлении была начата с осени 1933 г., когда при Мединституте была открыта кафедра тропической медицины с преподаванием паразитологии, эпидемиологии и клиники тропических заболеваний (заведующий – Х.Н. Пирумов), просуществовавшая до 1952 г.²¹.

Результаты научно-исследовательских работ систематически докладывались авторами на внутренних научных конференциях, а также на различных съездах, конференциях и совещаниях других институтов, научных обществ и т.д.²². Научными работниками Тропинститута было выполнено около 300 работ, из них только на союзных, закавказских и республиканских съездах доложено 102 научные работы. В научных журналах, сборниках и прочих изданиях напечатано 108 работ до конца 1938г. Под ру-

²⁰ См. *Пирумов Х.Н.* 10 лет деятельности Тропического института НКЗдрава ССР Армении (1923–1933). С. 37.

²¹ См.: *Пирумов Х.Н.* Краткий обзор деятельности Тропического института Арм. ССР за 1933–1938 гг. С. 13; *Проф. Оганесян Л.А.* История медицины в Армении с древнейших времен до наших дней... Часть пятая. С. 231.

²² Подробно см.: Труды II-го Закавказского малярийного съезда. Тифлис, 1929. 419 с.; Труды III съезда по борьбе с малярией и другими тропическими заболеваниями в ССР Армении, состоявшегося в гор. Эривани 5–9 марта 1931 года. Эривань, 1933. 164 с.; Труды II-го Закавказского съезда по борьбе с малярией и другими тропическими заболеваниями. Гор. Баку 20–26 января 1936г. Тбилиси, 1939. 558 с.; *Пирумов Х.Н.* Роль противомаларийных съездов и совещаний в ликвидации малярии в Армении// История естествознания и техники в Армении. Сборник научных трудов. VIII. Ереван, 1987. С. 203–213. На арм. яз.

ководством Тропинститута работниками периферических тропических установок выполнено и напечатано около 30 научных работ²³. За все время существования институту удалось выпустить 3 тома «Трудов» - в 1926, 1935 и 1939 гг.

10 декабря 1933 г. в зале Дома работников просвещения состоялось торжественное заседание, посвященное 10-летию юбилею Тропического института ССРА. В нем участвовали все делегаты IV республиканского противомаларийного съезда, представители от научно-исследовательских институтов и медицинских учреждений Наркомата здравоохранения Армении, от нескольких промышленных предприятий Еревана, от Армянского совета профессиональных союзов, от Лечебно-санитарного союза, от Секции научных работников, а также гости из Грузии, Азербайджана, Абхазии, Закавказской железной дороги²⁴.

Заседание открыл Наркомздрав ССРА Геворк Гевондян. С докладом о 10-летней деятельности Тропического института Армении выступил его директор Христафор Пирумов. Он кратко остановился на тех задачах, которые выполнил институт в прошедшие годы, наметил перспективы его дальнейшей работы. Затем председатель зачитал поздравительные письма председателя Центрального исполнительного комитета ССРА Серго Мартияна и заместителя председателя Совета народных комиссаров Арамаиса Ерзинкяна. Были получены приветственные телег-

²³ См.: *Аствацатрян Б.А.* 15 лет Тропического института Армянской ССР// Труды Тропического института Наркомздрава Армянской ССР. Выпуск третий. Посвящается 15-ти летию института (1923–1938). Ереван, 1939. С. 5.

²⁴ См. Торжественное заседание, посвященное 10-летию юбилею Тропинститута// Арохчапаутян фронтум (На фронте здравоохранения). 1934. 1–2. Январь-февраль. С. 40. На арм. яз.

раммы от Зоологического института Академии наук СССР, тропических институтов Москвы, Грузии, Азербайджана, Таджикистана, Туркестана, Микробиологического института Северного Кавказа, Медицинского общества Нахичевана, Здраводела Закавказских железных дорог, Закавказского малярийного комитета, отдельных товарищеских городов СССР²⁵. Высоко оценивая 10-летнюю плодотворную работу по руководству борьбы с малярией и другими тропическими заболеваниями, Президиум ЦИК Армении своим постановлением наградил Тропический институт ССРА «Почетной грамотой», а его директору Х.Н. Пирумяну присвоено звание Героя Труда. Этим же постановлением Совнарком ССРА было предложено предоставить средства с целью постройки нового здания Тропического института до конца 1936 года²⁶.

Неоценимый вклад в области ликвидации малярии и других паразитарных заболеваний в нашей республике внесли заслуженные ученые и врачи Абгар Исаакян, Елена Калантарян, Шаварш Тер-Матевосян, Серик Ананян, Роза Карапетян, Астхик Бадалян, Маргарит Салинян, Анна Чубкова, Мария Саркисян, Ваан Садоян, Карапет Мартиросян, Асатур Мирзоян, Сенекерим Мкртчян, Арцрун Кцоян, Анна Цатурян и др. Во многом благодаря их усилиям уже в конце 1930-х годов в Армении заболеваемость малярией снизилась в 2-2,5 раза, а смертность – в 4-5 раз.

²⁵ Подробно см. там же. С. 41–44; Хорурдаин Айастан. 1933. 10 декабря.

²⁶ См. Хорурдаин Айастан. 1933. 12 декабря; Арохчапутян фронтум. 1934. 1–2. Январь-февраль. С. 42.

Тропический институт ССР Армении, являясь первенцем медицинских научно-исследовательских учреждений нашей республики, был одним из лучших здравоохранительных очагов своего времени. В 1939 г. он был переименован в Институт малярии и медицинской паразитологии.

Ստեփան Գ. Ղարիբջանյան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ., Հայաստանի տրոպիկական ինստիտուտի ստեղծումն ու գործունեությունը:

Խորհրդային իշխանության հաստատումից անմիջապես հետո Հայաստանի առողջապահական մարմինները կտրուկ միջոցներ ձեռնարկեցին այնպիսի չարիքների դեմ, ինչպիսիք էին խոլերան, տիֆը, դիզենտերիան և այլ հիվանդություններ, իսկ արդեն 1923 թ. սկզբից ծավալուն և կազմակերպված պայքար մղվեց ամենատարածված համաճարակի՝ մալարիայի վերացման ուղղությամբ: 1923 թ. հուլիսին հիմնադրվեց տրոպիկական հիվանդությունների դեմ պայքարի գիտահետազոտական, գիտամեթոդական և գիտակազմակերպական կենտրոն՝ ՀԽՍՀ տրոպիկական ինստիտուտ, որը ժամանակի առումով Մոսկվայի տրոպիկաինստիտուտից հետո երկրորդն էր նախկին Խորհրդային Միությունում:

Ինստիտուտի բաժանմունքներում աշխատանքներ էին տարվում մալարիայի մակաբույծներն ուսումնասիրելու, լեյշմանիոզ, ամիոբային դիզենտերիա, կալա-ազար, պապատույչի տենդ, բոր, բրուցելոզ հիվանդությունների տարածման աղբյուրների հայտնաբերման և բուժման ուղղությամբ: Ինստիտուտի գիտաշխատողները հարատարակել են ավելի քան 150 մենագ-

րություն և հողված, լույս ընծայել «Աշխատությունների» 3 ժողովածու: Մշակվեցին մալարիան և այլ հիվանդությունները զանազան պատրաստուկներով բուժելու հատուկ հրահանգներ, օրենսդրական նախագծեր, համապատասխան բարձրության վրա դրվեց սանիտարական վիճակագրության գործը: 1930-ական թթ. վերջին Հայաստանում մալարիայով հիվանդացությունը նվազեց 2–2,5, իսկ մահացությունը՝ 4–5 անգամ:

ՀԽՍՀ տրոպիկական ինստիտուտը, լինելով մեր հանրապետության անդրանիկ բժշկագիտական օջախը, իր ժամանակի առողջապահական լավագույն գիտահետազոտական հիմնարկներից էր: 1939 թ. այն վերանվանվեց Մալարիայի և բժշկական մակաբուծաբանության ինստիտուտի:

Stepan G. Gharibjanyan, *Institute of History of the NAS RA, PhD in History, The Establishment and Activities of the Tropical Institute of Armenia.*

Immediately after the Soviet power was established, Armenian health authorities took drastic measures against such diseases as cholera, typhoid, dysentery, and other diseases, and from 1923 onwards, an extensive and organized fight was led against the most widespread malaria epidemic. In July 1923, a scientific-research, scientific-methodical and scientific-organizational center for the fight against tropical diseases was established – the Tropical Institute of the Armenian SSR, which was the second in the former Soviet Union after the Moscow Tropical Institute.

The Institute's departments were conducting research to detect and treat malaria parasites, leishmaniasis, amebic

dysentery, visceral leishmaniasis (also called kala-azar), fever, leprosy, brucellosis. The Institute's researchers have published more than 150 monographs and articles, as well as three collections of "Works". Specific guidelines, legislative drafts for the treatment of malaria and other diseases were developed, and the sanitary statistics work was at an appropriate height. At the end of the 1930s in Armenia, the incidence of malaria decreased from 2 to 2.5 times, and mortality dropped to 4–5 times.

The Tropical Institute of the Armenian SSR, being the first medical center of our republic, was one of the best health research institutes of its time. In 1939 it was renamed the Institute of Malaria and Medical Parasitology.

ՍԵՂԱ Տ. ՕՀԱՆԵԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ.

**ԻՐԱՔԻ ՀԱԻՐԷԶՔ ԵՎ ՅԱՐԱԿԻՑ ԳԻՒՂԵՐՈՒ
ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ, ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ
(1929–1970-ԱԿԱՆ ԹԹ.)**

Բանալի բառեր՝ Միջագետք/Իրաք, Պաքուբա, Նահիր Օմար, Հալեզք, Լեւոն Շաղոյեան, Բարեսիրական կազմակերպություններ:

Համաշխարհային Առաջին Պատերազմին, Արեւմտեան Հայաստանի և Թուրքիոյ հայաբնակ տարրեր բնակավայրերէն, նա՛եւ Ատրպատականի բազմահազար ժողովուրդը (հայ և ասորի), ճաշակելով ամէն տեսակի զրկանք, բազմիցս կոտորակուած, Պարսկաստանի տարրեր բնակավայրերուն մէջ շարունակ կռուելով վերջապէս ոտք կը դնէ Իրաքի հիւրընկալ հողին վրայ, Բրիտանական իշխանութիւններուն կողմէ պատրաստուած Պաքուբայի 3.000 վրաններէ բաղկացած վրանաւանին մէջ:

Այս վրանաւանը, ուր 1918 թուականի Օգոստոս ամսուն, ապաստան գտած էր աւելի քան 18.000¹ գաղթական հայութիւնը մեծամասնութեամբ՝ Վասպուրականցի, աստիճանաբար կը մեծնայ՝ գաղթականական նորանոր խումբերու ժամանումով, և այս-

¹ Վանի վերջին նահանջի մեկնարկին (1918 թ. Մարտ 21-ին) ժողովուրդի թուաքանակն էր 26.183 շունչ: Սակայն, Պաքուբա հասած գաղթականներուն թիւն էր 18.219 անձ, որմէ 15.000 վանեցիներ, Սալմաստցիներ՝ 719, Սուլդուգցիներ և Ուրմեցիներ՝ 2.500 անձ: Ծանապարհին զոհուածներու/կորսուածներու թիւն էր 10730 անձ (**Օհանեան Ս.**, Իրաքի Հայ Համայնքը 20-րդ դարուն, Երևան, 2016, էջ 35–36):

պէս երկու տարի շարունակ բնակավայրը կը դառնայ այս հոծ բազմութեան:

Այնուամենայնիւ, Իրաքին լիարժէք քաղաքական անկախութիւն տալու բրիտանական իշխանութիւններու տուած իրենց խոստումէն հրաժարելուն հետեանքով՝ 1920 թուականին ծայր կու տայ Պաքուբայի և շրջաններու արաբ ազատականներու ըմբոստութիւնը ընդդէմ վերոյիշեալ իշխանութիւններուն: Յարձակումներ կը կատարուին նա՛եւ հայ-ասորական գաղթակայանին վրայ, որպէս անգլիացիներու հովանաւորութեան տակ գտնուող կառոյց: Արաբներու արձակած գնդակներէն հայ գաղթականները ունեցան 30 զոհ և 70 վիրաւոր: Անգլիական օդուժը կը ռմբակոծէ Պաքուբա գիւղաքաղաքը՝ ահ ու սարսափ պատճառելով տարագիր ժողովուրդին: Այս և այլեայլ պատճառներով բրիտանացիները հարկադրուած, կ'որոշեն այս ընդարձակ գաղթակայանը դատարկել և հայերը փոխադրել Իրաքի հարաւային կողմը, Նահիր Օմար կոչուած խոնաւ և անառողջ վայրը՝ Պասրա քաղաքէն 40 քիլոմետր դէպի հիւսիս, իսկ ասորիները՝ Իրաքի հիւսիսային կողմը գտնուող քանի մը գիւղերուն մէջ²:

Այս գաղթակայանը այսպէս ալ կը մնայ մինչեւ 1921 թ. Յունիս ամիսը, երբ բրիտանական իշխանութիւնները հրամայեցին գաղթակայանի ցրումը: Սոյն թուականի Յուլիս 11-էն սկսեալ, շաբաթական 1400 անձ պարտադրուած լքելու էր գաղթակայանը: Պաքուբայի Հայ Փախստականներու Կոմիտէն³ ղեկավարու-

² **Գէորգեան Մխիթար**, Վասպուրականէն՝ Պաղտատ եւ Պասրայի անապատները, «Հայրենիք Ամսագիր», 1965, թիւ 4, էջ 41–49:

³ Այս Կոմիտէն կազմուած էր Պաքուբայի մէջ հանգրուանած գաղթականութեան կողմէ 1919 թ.: Անդամներն էին Լեւոն Շաղոյեան (առաւելագոյն քուէ ստացող), Սամուէլ Մեսրոպեան, Վահրամ վարդապետ Կանաչեան, Հայրապետ Մելքումեան, Արսէն Հացագործեան, Աւետիս Վարդանեան, Արսէն Կէօրկիզեան, Սահակ Ջօյօեան և Տիգրան Մկրտիչեան: Կազմուեցաւ նաեւ դատական մարմին մը, հետեւեալ-

թեամբ՝ Լեւոն (Փաշա) Շաղոյեանի, մտահոգուած այս ժողովուրդի ճակատագիրով վստահ էր, որ այս ցրումը բացասական արդիւնք պիտի ունենար և պիտի յանգէր իր ժողովուրդի այլասերման և ֆիզիքական բնաջնջման: Ուստի, բազմիցս դիմելով Ազգային Պատուիրակութեան նախագահ՝ Պօղոս Նուպար փաշային կը նշէ. «...կառավարութիւնը գաղթականութեան վրայէն իր պատասխանատւութիւնը կը վերցնէ բոլորովին, հազարաւորներու արեան գնով մազապործ հայ ազգի այս բեկորը սովամահութեան և այլասերման սարսափի տակ կը ցրուէ արդէն: Յրումէն յետոյ փորձել կրկին անգամ ի մի հաւաքել այս դժբախտները անկարելի պիտի ըլլայ: Ըստ կառավարութեան հրահանգին, քէմիկին մէջ մինչեւ Օգոստոս 15-ը պիտի մնան 5.000-ի չափ անկարներ, որբեր և որբեայրիներ, որոնց պահելու պատասխանատւութիւնը կառավարութիւնը առաջարկած է Պաղպարի Ազգային Մարմինին: 2.000 տղամարդ իրենց ընտանիքներով 6.000–7.000 շունչ, իրենց սեփական միջոցներով պէտք է ապրին Միջագետքի մէջ: Կլիմային անվարժ լինել, աշխատանքի, բժշկական հոգաբարոյութեան և հիւանդանոցային յարմարութեանց բացարձակ չգոյութեան պատճառով, այս գաղթականները պիտի այլասերուին և բնաջնջուին...»⁴: Ուստի, այս ժողովուրդը գլխաւորութեամբ՝ իր ղեկավար մարմինին, որոշեց կառչիլ իր հաւաքականութեան գաղափարին գաղթակայանին մէջ, քանզի իր վերջին փրկութիւնը կը գտնէր հե՛նց այս միասնական կեան-

ներէ. Սիմօն Զարուխիկեան, Կեւոն Օվիկեան, Ուրմեցի Օննիկ, Աւետիս Աւետիսեան, Արշակ Տէր Գալուստեան, Էկմայցի Նշան, Խաւէնցի Միհրան: Կովկասահայ Հայրապետ Մելքումեանը որպէս փաստարան, կը ստանձնէ դատարանի կազմակերպութեան գործը և հարկ եղած կարգադրութիւնները կընէ (Վարդանեան Եղիշէ, Անապատէ Անապատ, Ս.Ղազար – Վենետիկ, 1923, էջ 246–247):

⁴ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 773:

քին մէջ: Սակայն, կառավարութիւնը (բրիտանական) գաղթաւանը ցրելու իր որոշումը արդէ՛ն կը գործադրէր հանգիստ և խաղաղ միջոցներով՝ կասեցնելով աշխատանքի ընդունակ բոլոր տղամարդկանց և անոնց ընտանիքներուն նպաստը⁵:

Այսպէսով, երկու ամսուան ընթացքին, 1.200 պարսկահայեր անցան Պարսկաստան, մնացածներու մեծամասնութիւնը՝ երկար բանակցութիւններէ ետք պատկան մարմիններուն հետ, 9.000 անձ ներգաղթեց Հայաստան: Իսկ երբ ներգաղթի շարունակութեան յոյսերը բոլորովին ցնդեցան, տապալուած գաղթակայանի մէջ մնացած գաղթականներէն 500 անձ, 1922–1923 թուականներուն, անցան Աբադան, Անգլեիի րանեան նաւային ընկերութեան մօտ աշխատելու: Ուրիշ հազարաւորներ ալ հարկադրուած ցրուեցան Իրաքի զանազան կողմերը՝ Պասրա, Հապպանիա, Քէրքուկ, Մուսուլ և մանաւանդ Պաղտատ:

1923 թուականին, հայրենդարձութենէն ետք, Նահր Օմարի մէջ տակաւին կը մնային քանի մը հազար գաղթականներ: Վերջիններուս հայրենիք տեղափոխելու համար, երկրորդ յանձնախումբ մը նախագահութեամբ՝ Տէր Յովհաննէս վրդ. Հիսեանի, կ'առաքուի Հնդկաստան և Հեռաւոր Արեւելք, որուն առաքելութիւնը դարձեալ յաջողութեամբ կը պսակուի:

Նահր Օմարի գաղթակայանը, բրիտանական հովանաւորութիւնը վերացուելէն ետք, իր սեփական միջոցներով գոյատեւեց մինչեւ 1929 թուականը, օժանդակութիւն ստանալով ազգային տարբեր հաստատութիւններէ և անհատ բարեգործներէ: Այս գաղթակայանը, իր գոյութեան 9–10 տարիներու ընթացքին (1920–1929), ունեցաւ իր վրանաշէն եկեղեցին, վրանաշէն դպրո-

⁵ Եղյն:

ցը և նոյնիսկ վրանաշէն թատրոնը⁶: Դպրոցը հաստատուած է 1920 թ., ուր կը յաճախէին 800-է⁷ աւելի երկսեռ աշակերտներ և 30 ուսուցիչ-ուսուցչուհիներ:

Սակայն, լեռնային կլիմային վարժ վասպուրականցիները երկար և տեսական պահել Նահր Օմարի նման խոնաւ և անառողջ միջավայրի մէջ այլեւս կարելի չէր: Ուստի, այդ օրերուն Միջագետք գտնուող ազգային հանրայայտ գործիչ Վահան Փափագեանը (Կոմս), Լեւոն (փաշա) Շաղոյեանին հետ, Իրաքի հիւսիսային շրջանը ուսումնասիրելէ ետք, Հաւրէզք և շրջակայ գիւղերը յարմար և հողամշակման համար նպաստաւոր կը գտնեն Նահր Օմարի մէջ մնացած ժողովուրդը սոյն շրջանը փոխադրելու: Հետեւաբար, գաղթակայանի նօսրանալէն ետք, և հակառակ հայրենիք վերադառնալու բազմաթիւ դիմումներուն⁸, Գաղթականութեան Կոմիտէի անդամները, ղեկավարութեամբ՝ Լեւոն Շաղոյեանի հարկադրուած հաւաքելով մնացած գաղթականները, որոնց մեծամասնութիւնը վասպուրականցի երկրագործներ էին, 1929 Հոկտեմբերէն սկսեալ փոխադրեցին զանոնք վերոյիշեալ շրջանը, որ կը գտնուէր Մուսուլէն 40 մղոն դէպի հիւսիս⁹:

Լեւոն Շաղոյեանի կողմէ վասպուրականցիները այս շրջանը փոխադրելու դրդապատճառի մասին ահա՛ թէ ինչ կը պատմէ

⁶ Սկզբնական շրջանին վրաններէ բաղկացած էր, սակայն, անգլիացիներուն կողմէ վրանաւանք վերացուելէն ետք, վրանները կը փոխարինուին հիւղակներով, և այդպէս կը շարունակուի մինչեւ 1929–1930 թուականը՝ ժողովուրդի վերջնական ցրումով դէպի Իրաքի մեծ քաղաքներ՝ Պասրա, Պաղտատ, Մուսուլ եւ այլն և հիւսիսային շրջանի գիւղեր, իւրաքանչիւրը ըստ իր աշխատանքին:

⁷ Սկզբնական շրջանին (1920 թ.) Նահր Օմարի դպրոցը ունէր 1500 երկսեռ աշակերտութիւն, սակայն ներգաղթէն ետք այս թիւը կ'իջնէ մինչեւ 800-ը:

⁸ ՀԱՄ, ֆ. 430, ց. 1, գ. 773:

⁹ Հաւրէզք, Վարի և Վերի Պասիտքէ, Սմայել Աւա և Քլեյանա հիմնադրուած են 1929 թ. և գոյատեւած են մինչեւ 1940-ականի վերջերը: 1974-ին բոլորովին կը դատարկուին, 2003-էն ետք, Հաւրէզքը կրկին կը վերակենդանանայ նախկին Հաւրէզքահայերու ժառանգներու վերաբնակեցումով:

դերասանապետ Մանուէլ Մարութեանը¹⁰, որ 1933 թուականին հիւրաբար կը գտնուէր Հաւրէզք Լեւոն Շաղոյեանի յարկին տակ, մէջբերելով վերջինիս խօսքերը. «...գիւղացիները շաւր անգամ ծմբան քաղցած էին մնում, չնայած որ մի քիչ ցորեն ունէին, բայց նրանք ձեռք չէին տալիս, որպէսզի գարնան ցանէին և նոր հունձք ստանային: Դա կոչուում էր սերմնացու: Ես էլ այս ժողովուրդը բերել եմ ու պահում եմ որպէս սերմնացու, որպէսզի երբ մի օր վերադառնանք մեր ւաւեր վաթանը, գիւղացի ունենանք, գութան, մաճ և արօր բռնող ունենանք: Գիւղացին երբ ապրում է քաղաքում, նա դառնում է քաղքցի, վարժում է այնտեղի սովորութիւններին, կենցաղին և դադարում է գիւղացի լինելուց: Դառնում է շօճէր (վարորդ), խանութպան, մոռանում է գութանն ու արօրը: Սրանց ուզում եմ կապել հողին, որ վերադարձին՝ գիւղացի ունենանք և ոչ թէ չարչի.. »¹¹:

Ուրեմն, Նահր Օմարի անապատի կիզիչ արեւին տակ 8–9 տարի (1920–1929) տառապելէն ետք, Վաստուրականցի ժողովուրդի մնացորդացը փոխադրուած և հաստատուած է Հաւրէզք գիւղը, որ հայրենիքի սահմաններէն դուրս և Հայոց Յեղասպանութենէն ետք, կը հանդիսանայ առաջին զուտ հայաբնակ գիւղը: Մի քանի տարուան ընթացքին, Իրաքի զանազան շրջանները գտնուող մեր ժողովուրդի բեկորներէն անոնք, որոնք իրենց նոր բնակավայրերուն մէջ դժուարացած էին օրապահիկ մը հայթայթել գոյատեւելու համար, պարբերաբար եկած և

¹⁰ Օհանեան Ս., նշվ. աշխ., էջ 187:

¹¹ Մանուէլ Մարութեան, «Վարազ» պարբերաթերթ Վաստուրականի Հայրենակցական Միութեան, թիւ 49, 2002, Բրբբանք, ԱՄՆ, էջ 43–53: 1933 թուականը անկլինադարձ կը հանդիսանայ Իրաքի թատերական կեանքին մէջ, երբ Մ. Մարութեանը կ'այցելէ Պաղտատ և Մուսուլ: Փաշայի հրաւերով Հաւրէզքի մէջ եւս ելոյթ կ'ունենայ ներկայացնելով «Բօրթաթօ»ն, մեծ տպաւորութիւն ձգելով ներկաներուն վրայ:

հաստատուած են Հաւրէգքի ժողովուրդի կողքին: Այս բոլոր մը ժողովուրդի գերբնական ջանքերով է, որ երկար տարիներէ ի վեր այս անմարդաբնակ և ամայի վայրը վերածուեցաւ տիպար գիւղաքաղաքի մը, և արժանացաւ շրջապատի օտար ժողովուրդներու և պետական շրջանակներու գնահատութեան՝ իր ունեցած համեստ բայց կանոնաւոր տուներով, փողոցներով, նորակառոյց դպրոցով, եկեղեցիով, դեղատունով և ջուրի զոյգ քահրէզներով¹²:

1930-ի տարեշրջանը Հաւրէգքի ժողովուրդին համար եղաւ ֆիզիքական աշխատանքի արդիւնաւէտ շրջան մը: Հապճեպով շինուած տուներուն վրայ բնակիչները աւելցուցին նոր սենեակներ, խոհանոց, ախոռ, գոմ և ուրիշ անհրաժեշտ մասեր: Հաւաքաբար հիմը դրուեցաւ գիւղի եկեղեցիին, որուն երկարութիւնը 80, իսկ լայնութիւնը 30 ոտք էր: Այս համեստ եկեղեցին, սակայն, զուրկ էր եկեղեցական սպասներէ և Սուրբ Գիրքերէ: Ուստի, Լեւոն (փաշա) Շաղոյեան կը դիմէ Առաջնորդական փոխանորդ Հայոց Եպիսկոպոսի, Տէր Մամբրէ եպս. Սիրունեանին հետեւեալ խնդրանքով.

«...Ինչպէս ծանօթ է ձեր սրբազնութեան, Մուսուլի հիւսիսը, Զախոյի շրջանը կը գտնուի նորահաստաւ Հաւրէգք գիւղը, որ թէեւ ունի համեստ եկեղեցի մը, բայց զուրկ է եկեղեցական սպասներէ և Ս. Գիրքերէ: Մեր գիւղի քահանային Տէր Յովհաննէս քինյ. Յակոբեանի ջերմ խնդրանքին միացնելով իմ խնդրանքս կը դիմեմ ձեզ, այն հաստատար յոյսով, որ ձեր Սրբազնութիւնը բարեացակամ պիտի գտնուի և հետեւեալ անհրաժեշտ

¹² Լեւոն Շաղոյեանի արխիւ, Երեւան, Իրաքի Հայ Կոմիտէ, Տեղեկագիր No. 196, 15 Դեկտեմբեր 1932:

սպասները և Սուրբ Գիրքերը պիտի տրամադրէ մեր գիտլի եկեղեցիին.

1- Ճաշոց

2- Արեանի Շարական

3- Մայր Մաշտոց

4- Բուրվառ

5- Թագ, վական, շուրջառ, փորուրար, բազպան, գօտի և յարակից մասեր:

Յոյս ունիմ, որ ձեր Սրբազնութիւնը նկատողութեան պիտի առնէ և պատշաճ կարգադրութիւն մը պիտի ընէ, որքան կարելի է շուր, մեր եկեղեցին օժտելու համար թանկագին և անհրաժեշտ սպասներով:

Կանխայայտ շնորհակալութիւններով, մնամ որդիական ջերմ զգացումներով՝

Լեւոն Շաղոյեան»¹³:

Ամենէն կենսականը սակայն խմելու ջուրն էր, զոր ապահովելու համար փորուեցան երկու քահրէզներ:

Ինչպէս վերը նշեցինք, Իրաքի զանազան վայրերու մէջ տեղաւորուած բաւական թիւով հայեր իրենց ընտանիքներով սկսան թափուիլ Հաւրէզք: Մեծ թիւով ընտանիքներ եկան Քէրքուէն, Պաղտատէն և մինչեւ իսկ Մուսուլէն, Չախոյէն և Տըհօքէն, որ շարունակուեցաւ մինչեւ 1932 թուականը: Բոլոր նորեկներուն համար տրուեցաւ ամէն տեսակի հնարաւորութիւն, ինչպէս՝ հողատարածք, փոխադրութեան մասնակի ծախս, մշակելի արտեր եւ այլն¹⁴:

¹³ Լեւոն Շաղոյեանի արխիւ (Գահիրէէն գրուած նամակ 16 Սեպտեմբեր 1933):

¹⁴ Վարդանեան Գեղամ, Տոմար Ազգային Վասպուրականէն մինչեւ. Իրաք, Լոս Անճելըս, 1992, էջ 162–163:

Հարեգք այլեւս եւրոպականացած գիւղ էր դարձած և Զախօ ու Տրիօք շրջաններուն կեդրոնատեղի: Իր եկեղեցիով, դպրոցով և կարգ ու կանոնով ու վար ու ցանքով ո՛չ միայն քիւրտ, եգիպտացի, արաբ և այլ ժողովուրդներու հիացմունքի առարկայ, այլ անոնց զանազան մթերքներու սպառման վայր դարձած էր¹⁵:

Հարեգք գիւղի հողատարածքը, որ այնքան բարեհաճութեամբ տրամադրուեցաւ հայ գաղթականութեան Իրաքի կառավարութեան կողմէ, 1932 թուականին արդէն անբաւարար կը նկատուէր տարբեր վայրերէ պարբերաբար ապաստան հայցող մեր հայրենակիցներուն: Այս իսկ պատճառով, Գաղթականութեան Կոմիտէն ստիպուած եղաւ, մի քանի նուիրեալ ազգայիններու օգնութեամբ և բաժնեկցութեամբ՝ Դըրիօք գաւառակին¹⁶ մէջ գտնուող Քլէպին կոչուած գիւղը եւս գնել, ուր հաստատուեցան շուրջ 13 ընտանիք:

Այս ժողովուրդին տնտեսական վիճակը բարելաւելու, և զիրենք ինքնաբաւ դարձնելու համար, Գաղթականութեան Կոմիտէն իր տրամադրութեան տակ գտնուած ֆօնտը ամբողջութեամբ յատկացուց այս նպատակին: Սակայն, զանազան աղբիւրներէ ստացուած գումարները եւս անզօր եղան մեղմելու ժողովուրդին վիճակը, քանի որ ժողովուրդը բառին լայն առումով հիւծուած էր, իսկ միւս կողմէ բնութիւնն ալ անբարեհաճ գտնուեցաւ՝ երկու տարի շարունակ ցանքերը ենթարկելով վնասակար միջատներու յատկապէ՛ս մորեխի հասցուցած ավերին, անձրեւներու սակաւութեան եւայլն: Ժողովուրդը, որ հազիւ կարգի դրած էր իր գործերը, հիմնովին կը տուժէ: Երկրագոր-

¹⁵ Նոյն:

¹⁶ Դըրիօք քաղաքը կը գտնուի Իրաքի Քիւրդիստանի ինքնավար մարզին մէջ, որ ներկայիս կը հանդիսանայ տոյն մարզի արդի գլխաւոր քաղաքներէն մին:

ծական անհրաժեշտ նիւթերու և գործիքներու պակասը նոյնպէս կուգար լրացնելու գիւղին պատուհասած վնասները¹⁷:

Հետեւեալ վիճակագրութիւնը, զոր քաղած ենք Լեւոն Շաղոյեանի արխիւէն, կը ներկայացնէ այս շրջանին մէջ հաստատուած գիւղերու բնակիչներուն թուաքանակը և նիւթական ու տնտեսական պատկերը¹⁸.

Գիւղ	Ընտանիք	Անձ	Ինքնաբաւ	Միջակ	Անկարող	Ծերունիներ և որբայրիներ
Հարէզք	304	1125	57	103	114	30
ԻսմայիլԱա	29	112	12	8	6	1
Վերին Պասիտկէ	10	46	4	1	4	1
Վարի Պասիտկէ	29	101	13	10	5	1
Բաջիթ	6	18	5	-	1	-
Քլէպին	13	46	6	4	3	-
Ընդհ.գումար	391	1448	97	126	133	33

Գիւղի հիմնադրման և զարգացման համար օգնութեան ձեռք մեկնեցին Իրաքի և արտասահմանի մէջ գտնուող հասարակական միութիւնները և անհատ բարերարներ: Ժողովուրդը գիւղ հասնելէն ետք, երկրագործութենէ բացի ուրիշ գործով զբաղուելու հնարաւորութիւն չունէր, քանզի բոլորն ալ հողամշակներ եղած էին իրենց ծննդավայր/հայրենիքին մէջ: Իսկ այս շրջաններուն մէջ օտար հաստատութիւններ կամ գործեր չկային: Երկրագործութեամբ զբաղուելու համար, հարկաւոր էին լծկաններ և սերմնացու, որոնք անհասանելի էին ժողովուրդին: Ուստի, Հայ Գաղթականութեան Կոմիտէի նախագահ Լեւոն Շաղոյեանի հրահանգով, նամակներ/կոչքեր կ'ուղղուին Իրաքի և արտասահ-

¹⁷ Լեւոն Շաղոյեանի Արխիւ, Երեւան, Իրաքի Հայ Կոմիտէի Տեղեկագիր No. 196, 15 Դեկտեմբեր 1932:

¹⁸ Նոյն:

մանի հասարակական և բարեգործական մարմիններուն/միութիւններուն՝ նիւթական և բարոյական օժանդակութիւն փութացնելու ժողովուրդին մինչեւ որ վերջինս հնարաւորութիւն ունենար ինքնաբաւ դառնալու: Այս կոչին ընդառաջեցին՝ Վասպուրականի Վերաշինութեան Միութիւնը (Տիթորոյթի Մարմին), Համա-Վասպուրականցիներու Ընդհանուր Միութիւնը, Հայ Կարմիր Խաչը, Իրաքի Հայ Կարօտելոց Խնամակալութիւնը, Պասրայի Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութիւնը և անհատ բարերարներ ինչպէս նաեւ Հայկ. Բարեգործական Ընդհանուր Միութիւնը: Վերջինս, ի մէջ այլոց, Հաւրէզքի հայոց 159 չքաւոր ընտանիքներու համար լծկաններ, կաթնատու անասուններ, բեռնակիր կենդանիներ գնելու համար տրամադրած է պէտք եղած գումարը¹⁹:

Շատ կարճ ժամանակ անց, Հաւրէզք գիւղը կ'ունենայ հայօրէն գոյատեւելու բոլոր հոգեւոր-ազգային-հասարակական կեդրոնները ինչպէս եկեղեցի, դպրոց, գրադարան, մարզական-սկաւառական կանոնաւոր խումբեր²⁰, եւայլն: Յատկապէ՛ս գիւղի դպրոցի հիմնադրութեան և կահաւորման համար մեծապէս նպաստեցին արտասահմանի յարգոյ հասարակութիւնը, որ աւելի դիւրութիւններ ստեղծեց աշակերտներուն համար գրասեղաններ և աթոռներ մատակարարելու: Վասպուրականի Կանանց Միութիւնը (Պաղտատի մասնաճիւղ) կը հանգանակէ 12 իրաքեան տինար և գնելով 770 եարդ²¹ կերպասեղէն՝ հագուստներ կը

¹⁹ Նամակ/Տեղեկագիր՝ պատրաստուած Իրաքի Հայ Կոմիտէի կողմէն ուղղուած Հայկ. Բարեգործական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչութեան, Հաւրէզք 10 Հոկտեմբեր 1932: Լ. Շաղոյեանի արխիւ, Հաւրէզքի թղթածրար:

²⁰ Հաւրէզքի սկաւառական խումբի ղեկավարին նամակ/խնդրանքը Դեկտեմբեր 23, 1932 ուղղուած Լեւոն Շաղոյեանին՝ սկաւառներուն մարզական գլխարկներով ապահովելու: Լեւոն Շաղոյեանի արխիւ, Հաւրէզք գիւղի հիմնադրութիւն, Նոյն:

²¹ Անգլիական երկարութեան չափ – 1 եարդ = 3 ոտք և 36 ինչ:

կարէ և կ'առաքէ վերոյիշեալ դպրոցի 220 երկսեռ աշակերտներուն²²:

Այս առնչութեամբ, յիշատակութեան արժանի է Հայ Կարմիր Խաչի²³ կեդրոնական կոմիտէի նամակ-պատասխանը ուղղուած Հայ Գաղթականաց Կոմիտէի ատենապետ Լեւոն Շաղոյեանի կոչերուն՝ սատարելու ազգապահպան այս կառոյցի հիմնադրութեան աշխատանքներուն, օտարութեան մէջ հայեցի դաստիարակութեանը աջակցելու: Ստորեւ Հայ Կարմիր Խաչի բազմաթիւ նամակներէն մին.

«Ազնիւ Հայրենակից,

Ձեր վարչութեան²⁴ նամակները ստացած ենք:

Անհունապէս ուրախ ենք, որ մեր անցեալ շրջանին ուղարկած 250 տղարով յաջողած է ձեր Կոմիտէն կառուցանել Հաւրէզ գիւղի մէջ մեր և ձեր դպրոցին շէնքը և ընդունիլ բաւականաչափ աշակերտութիւն, չքաւոր հայրենակիցներուն տալու համար հայրենի լոյս և դաստիարակութիւն:

Ձեզ նեղութենէ ազատելու համար, և որպէսզի կարողանաք մնացած այն պակասները հոգալ, որոնց թուումն մասանցը ըրած էք ձեր տեղեկագրին մէջ, կը փութանք հասցնել ձեզ եւս երկու հարիւր յիսուն տղարի չէք մը, հանուած արեւնապետ Լեւոն Շաղոյեանի անունին:

Կահաւորումը, ուսուցչութիւնը եւայլն, կարելի է, կը կարծենք, հոգալ այս գումարով:

²² Նամակ ուղղուած Հայ Գաղթականաց Կոմիտէի նախագահ՝ Լեւոն Շաղոյեանին, Պաղտատ, 29 Օգոստոս 1934, Լ. Շաղոյեանի արխիւ, Հաւրէզի թղթածրար, ՀՅԴ Կեդրոնական արխիւ Երևան:

²³ Հետագային՝ Հայ Օգնութեան Միութիւն:

²⁴ Հայ Գաղթականաց Կոմիտէի վարչութիւն:

Շապր կը ցաւինք, մեր սիրելիներ՛ր, որ մեր հասկացողութեան և մեր կամեցողութեան չափով լայն չեն Հայ Կարմիր Խաչի նիւթական միջոցները՝ ներկայ տարեշրջանին մասնաւորապէս: Այլապէս ձեզ անելիով կը բաղձայինք օժանդակել: Գիտէք, որ միշտ ձեզի հետ եղած ենք 1924-էն ի վեր...: Մեր կարելին խնայած չենք հերոսական ժողովուրդի մը բեկորներուն:

Հայ Կարմիր Խաչի Կեդրոնական Վարչութիւն»²⁵:

Նոր դպրոցի վերաբացումը տեղի ունեցած է 1933 թուականի Դեկտեմբեր 4-ին, ուր չորս ուսուցիչներու և երեք ուսուցչուհիներու առաջնորդութեամբ տարուած է պէտք եղած աշխատանքը: Աշակերտութեան թիւը հասած է 220-ի, որոնցմէ՝ 123-ը մանչ և 97-ը աղջիկ: Դպրոցի տնօրէնն էր Գաղթականութեան Կոմիտէի ատենադպիր՝ Գեղամ Վարդանեանը, որ միաժամանակ վերականցու էր գիւղի հիմնադրման և գիւղական հետազայ բոլոր աշխատանքներուն:

Դպրոցը, որ բաժնուած էր եօթը կարգերու, որոնցմէ երկուքը մանկապարտէզի բաժինը կը կազմէին, մնայուն պիտոճէ չունենալուն պատճառով, կը գոյատեւէր մի միայն նուիրատուութիւններով, որ բնականաբար, պէտք եղած բաւարարութիւնը չէր կրնալ տալ դպրոցի յառաջդիմութեան: Դասագիրքերու և գրեական շատ մը պիտոյքներու պակասը եւս զգալի եղած է:

Հարէզքի դպրոցի շինութեան իր համեստ օժանդակութիւնը բերած է նաեւ՝ Պասալի նորաստեղծ Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութիւնը.

«Մեծարգոյ Պ. Լ. Շաղոյեան

Մարգիլ, 9 Սեպտ. 1932

²⁵ Հայ Կարմիր Խաչի Կեդրոնական Վարչութիւն, Բոստոն, Դեկտ. 5, 1930: Լեւոն Շաղոյեանի արխիւ, ՀՅԴ Կեդրոնական Կոմիտէ, Երեւան:

Արենապետը՝ Իրաքի Հայ Կոմիտեի

Սրացած ենք ձեր Հաւրէճը, 29 Յուլիս 1932 թուակիր նամակը, որով կը խնդրէիք որ Միութիւնս հարիւր ռուփիի գումարով մը օժանդակէ ձեր նորակառոյց դպրոցի շինութեան, այժմ ուրախ ենք պարասխանելու ձեզ, որ Միութիւնս ուրախութեամբ ընդառաջած է ձեր խնդրանքին և ահա ներփակ կը ստանաք եօթ Իրաքեան դինարի գումար մը, որ համարժէք է հարիւր ռուփիին:

Բաղձալով ձեզ յաջողութիւն ձեր բոլոր ձեռնարկներուն մէջ մնամք.

Յարգանք՝ Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութիւն-Պասրա»²⁶:

Լեւոն Շաղոյեանի դիմումին ի պատասխան, հանրայայտ հասարակական գործիչ և մանկավարժ՝ Լեւոն Շանթ այս գիւղի դպրոցը օժտած է իր հեղինակած դասագիրքերով – Այբենարան և Լուսաբեր²⁷:

Դպրոցը իր առողջապահական և կրթական ամէն մանրամասնութիւններով նախանձելի դիրք մը գրաւած էր շրջանի բոլոր գիւղերուն մէջ: Կ'ուսուցանուէր հայերէն ամբողջ կարգի դասեր, նա՛եւ անգլերէն: Սակայն, նիւթապէս տակաւին ի վիճակի չէր արաբերէնի դասատու մը վարձել, որ այս երկրին մէջ ապրող ամէն անհատի համար կարեւորագոյն դասերէն մէկն էր:

Գիւղը ունեցաւ նաեւ իր ընթերցասրահը, որ կը պարունակէր բազմապիսի և բազմաժանր գիրքերու հաւաքածոյ մը: Ուշադրութեան արժանի է, որ գիւղացիներու զբաղմունքը բա-

²⁶ Լեւոն Շաղոյեանի արխիւ:

ցառապէս գիւղատնտեսութիւնն էր, ուստի Ամերիկայի Համա-
Վասպորականի Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վար-
չութիւնը կը հրահանգէ իր հովանաւորութեան տակ գտնուող
Հայ Գիւղատնտես Ուսանողներու Օգնութեան Յանձնախումբին,
որպէսզի գիւղատնտեսութեան վերաբերեալ մասնագիտական
գիրքեր առաքուի Հաւրէզք: Այս գիրքերը (98 կտոր գիրք Գիւ-
ղատնտեսական Մատենաշարի հրատարակութիւններէն) կը
հասնին հասցէատիրոջ 1938 թուականին²⁸:

Իրաքի Հայ Կարօտելոց Խնամակալութիւնը, ինչպէս երկրի
բոլոր հայաշատ քաղաքներուն-գիւղերուն մէջ, Հաւրէզքի մէջ եւս
կը հիմնէ մասնաճիւղ մը անցած դարու երեսունական թուական-
ներուն սկիզբները: Խնամակալութեան գլխաւոր գործը կ'ըլլայ
տեական նիւթական և բարոյական օգնութիւն ցուցաբերել գաղ-
թականներուն, որուն սուր կարիքը այնքան կը զգացուէր տարի-
ներով տառապած այս ժողովուրդին կողմէն:

Այսպէսով, Տարիներու ընթացքին, այս և յարակից գիւղերու
բնակչութեան թիւը կը բազմապատկուի, հասնելով մինչեւ 450–
500 տունի 2.450 անձով²⁹: Գիւղապետն էր Լեւոն Շաղոյեանը,
որ կը վայելէր և՛ ժողովուրդի և՛ կառավարութեան անվերապահ
համակրանքն ու յարգանքը:

Այնուամենայնիւ, այս հանգիստ կեանքը վիճակուած չէր շա-
րունակական բնոյթ ունենալու, քանզի 1930-ականներուն վերջե-

²⁷ Լեւոն Շաղոյեանի արխիւ, Նամակ Լեւոն Շանթի ստորագրութեամբ, 8 Հոկ-
տեմբեր 1938, Հաւրէզք թղթածրար – ՀՅԴ Կ.Կոմիտէի Կեդրոնական արխիւ,
Երեւան:

²⁸ Նամակ Հայ Գիւղատնտես Ուսանողներու Օգնութեան Յանձնախումբին
կողմէ, Աղեքսանդրիա, 5 Փետրուար 1938 հասցէագրուած Լ. Շաղոյեանին, Մուսուլ
(Լեւոն Շաղոյեանի արխիւ – ՀՅԴ Կ.Կոմիտէի արխիւ, Երեւան – Հաւրէզք թղթա-
ծրար):

²⁹ Հայ Կեանքը Հաւրէզքի մէջ՝ Տեղեկագիր 13 Մարտ 1934, Լեւոն Շաղոյեանի
արխիւ:

րը կը սկսի այս գիւղերու անկման շրջանը, որուն գլխաւոր պատճառն էր զանազան միջատներուն՝ բերքին հասցուցած անդառնալի վնասները: Բնակիչները հարկադրուած կը հեռանան գիւղերէն՝ քաղաքներուն մէջ իրենց ապրուստը հոգալու: 1943 թուականին, եկեղեցին և դպրոցը փլած էին և անոնց ատաղծը գործածուած այլ նպատակներու: 1947 թուականին, Պասիտկէ գիւղի բնակիչներէն շատեր կը ներգաղթեն Հայաստան, և կը տեղաւորուին Լենինական – Գիւմրի քաղաքին մէջ³⁰:

Հարէգք զուտ հայաբնակ գիւղը, որ 1974 թուականին տարբեր պատճառներով, բոլորովին դատարկուած էր իր բնակիչներէն, 2003 թուականի իրադարձութիւններէն ետք, կրկին կը վերակենդանանայ՝ այնտեղ տեղափոխուած իր նախկին բնակիչներուն ժառանգներով: Այժմ գիւղը ունի նորակառոյց յարմարաւէտ բնակարաններ, եկեղեցի՝ Ս.Սարգիս (օծուած 2015 թ.) անունով և հարիւր ընտանիքէ աւելի բնակչութիւն: Նորակառոյց Մշակոյթի տունը կոչուած է մեծ հայրենասէր, ազգային գործիչ՝ Լեւոն Շաղոյեանի անունով:



**Ս. Սարգիս, Հարէգք գիւղի
նորակառոյց եկեղեցին, 2015 թ.**

³⁰ ՀԱԱ, ֆ. 362, ց. 16, գ. 44:

**Седа Д. Оганян, *Институт истории НАН РА, к.и.н.*,
Возникновение и упадок армянского Хаврезка и прилегающих деревень (1929–1970-е годы).**

В июне 1921 года власти Британии упразднили патронаж над лагерем беженцев в Нахр Омаре (север Басры) и распорядились расселить его жителей. После долгих и утомительных переговоров между заинтересованными сторонами 9.000 беженцев были репатриированы в Армению. Остальные поселились в разных городах и деревнях гостеприимного Ирака. В 1929 году в вышеупомянутом лагере все еще оставались беженцы, в основном крестьяне и фермеры из Васпураканской области. Климат в Нахр Омаре был невыносимым для людей, привыкших к жизни на Армянском нагорье, поэтому президент Комитета армянских беженцев Левон Шагоян (после получения разрешения от иракских властей) перевез их в деревни с умеренным климатом, расположенные на севере Ирака. Беженцы оставались там до второй половины прошлого века. Этими деревнями были: Хаврезк, Южная Пасидка, Северная Пасидка, Исмаил ава и Хлебна.

Жизнь в деревнях протекала своим чередом вплоть до конца 1930 года, когда начинается их упадок вследствие неоправданного вреда, который наносили пшеничным полям различные насекомые. В результате, молодежь начала перебираться из деревень в большие города за лучшими перспективами. В 1974 году Хаврезк опустел и превратился в военную базу. Однако, после событий 2003 года, потомки прежних жителей вернулись в деревню, где ныне у них есть свой собственный храм, школа и дом культуры, названный в честь основателя – Левона Шагояна.

Seda D. Ohanian, *Institute of History of the NAS RA, PhD in History, The Establishment and Decline of the Armenian Havrezq and its Surrounding Villages (1929–1970s).*

In June 1921 the British authorities lifted its patronage of the refugee camp in Nahr Omar (North of Basra) and ordered the dispersal of its inhabitants. After long and tiring negotiations between all the interesting parties, 9.000 refugees repatriated to Armenia. The rest settled down in various cities and villages of hospitable Iraq.

In 1929, there still remained some refugees in the abovementioned camp, who were mostly peasants and farmers from Vaspourakan region. The climate in Nahr Omar was unbearable for the people accustomed to living in the Armenian Highlands. Therefore, the president of the Armenian Refugees' Committee Levon Shaghoyan (after getting permission from the Iraqi authorities), transferred them to some villages situated in the north of Iraq, where the climate was temperate and felt like the one in their homeland. They stayed there until second half of the last century. These villages were Havrezq, South Pasidke, North Pasidke, Ismail ava and Klebna.

The life in these villages went on very smoothly until late 1930, when the decline of these villages gave its first sign because of various insects causing irrevocable harm to the wheat fields. As a result, the youth started to leave for the big cities to better their prospects. In 1974, Havrezq was completely deserted and became an army base. However, after the events of 2003, this village came to life again by the inheritors of its original inhabitants, who have now their own church, school and culture house which is called by its original founder Levon Shaghoyan.

ԳԱԳԻԿ Ա. ԺԱՄՀԱՐՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ.

**ՈՒՇ ՍՏԱԼԻՆՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ
ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Բանալի բառեր՝ Խորհրդային առօրեականություն, ուշ ստա-
լինիզմ, հետազոտական արդի մոտեցումներ, ռուսաստանյան պատ-
մաբաններ:

Խորհրդային պատմագիտության մեջ Խորհրդային սոցիա-
լական կյանքը և առօրեականության պատմությունը, որպես կա-
նոն, արտացոլված չեն եղել: Լավագույն դեպքում այս խնդիրնե-
րը լուսաբանվել են մասնակիորեն՝ քաղաքական պատմության
համատեքստում: Ինչպես նշում է պատմաբան Աննա Գրիգո-
րևան, Խորհրդային սոցիալական կյանքը լուսաբանող առաջին
ռուսումնասիրությունների ի հայտ գալը պայմանավորված էր
խրուշչովյան ծնհալի բերած որոշ ազատականացման հետ, սա-
կայն նույնիսկ այս շրջանի հետազոտություններում սոցիալա-
կան իրողությունները խորությամբ չէին լուսաբանվում: Սրանք
վերաբերվում էին միայն սոցիալ-կենցաղային պայմանների բա-
րելավման ու քաղաքացիների կենսամակարդակի բարձրացման

ուղղությամբ կոմունիստական կուսակցության վարած քաղաքականությանը¹:

Հետխորհրդային ռուսական պատմագիտության մեջ հետազոտական մոտեցումների թարմացման հետ կապված մտահոգությունը պայմանավորված էր խորհրդային պատմության ուսումնասիրություններում գաղափարականացված մոտեցումներից ձերբազատվելու անհրաժեշտությամբ: Սակայն միայն գաղափարախոսական ժառանգությունից ձերբազատումը չէր կարող պատմության հիմնարար և ամբողջական հետազոտությունների երաշխիք հանդիսանալ, քանի դեռ ուսումնասիրություններում կգերիշխեին խորհրդային պատմությունը միայն որպես խորհրդային պետության և կոմունիստական կուսակցության պատմությունն ընկալելու մտայնությունը: Անգամ քաղաքական պատմության վերաիմաստավորումը և պատմության ներկայացումն առանց գաղափարախոսական կաղապարների չեն կարող հանդիսանալ պատմության օբյեկտիվ հետազոտության երաշխիքներ, քանի դեռ նրանում արտացոլված չէ սոցիալական կյանքը: Արդի ռուսական պատմագրության մեջ այսօր առկա է այն հաստատուն համոզմունքը, որ խորհրդային պատմության օբյեկտիվության առաջնային երաշխիքը պետք է լինի նրա ամբողջականությունը, այսինքն՝ հետազոտության կիզակետում պետք է գտնվեն պատմության բոլոր մասնակիցները: Իսկ սա ենթադրում է պատմության նոր մոտեցումների որդեգրում,

¹ Григорьева А., Советская повседневность и уровень жизни населения СССР в 1953–1964 гг.: к постановке проблемы (<https://cyberleninka.ru/article/n/sovetskaya-povsednevnost-i-uroven-zhizni-naseleniya-sssr-v-1953-1964-gg-k-postan-ovke-problemy>) (дата обращения 10.11.2019) (Ա. Գրիգորևայի նշած ուսումնասիրություններից Հայաստանում հայտնի է Հ. Հարությունյանի աշխատությունը (Հարությունյան Հ., Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը (1938–1960), Երևան, 1987):

որոնք համադրում են խորհրդային տարիների քաղաքական և սոցիալական գործընթացները, և այս առումով խորհրդային առօրեականությունը ձեռք է բերում հետազոտական մեծ գրավ-չություն և կարևորություն: «Առօրեականություն և գաղափարա-խոսություն, հոետորաբանություն և պրակտիկա. իրենց բնույ-թով տարբեր այս գործընթացներն են ձևավորում այն իրակա-նությունը, որը միտված է անցյալը խորությամբ հասկանալուն և բացատրելուն, այլ ոչ թե նրա չեզոք նկարագիրը ստանալուն, կամ էլ պարզապես գովերգելուն կամ քննադատելուն»²:

Արդի ռուսական պատմագրության մեջ խորհրդային սո-ցիալական կյանքի ուսումնասիրությունների համար արդիական են մեթոդոլոգիական արդյունավետ բազայի ընտրության, ուսումնասիրության առարկայի թեմատիկ բովանդակության և խորհրդային պատմության ժամանակագրական սահմանների հստակեցման խնդիրները: Ու չնայած այս հարցում դեռևս շա-րունակվող քննարկումներին և փնտրտուքներին, ռուսական պատմագրության մեջ արդեն առկա է միասնական մոտեցում, ըստ որի սոցիալական պատմությունը և պատմական մարդա-բանությունը (անթրոպոլոգիա) համարվում են ժամանակակից պատմագիտական իմացության հիմք, իսկ միկրովերլուծությունն (микроанализ) ու առօրեականության պատմությունը՝ նրա մեթո-դոլոգիական հենքը³:

Ինչ վերաբերում է խորհրդային պատմության պարբերաց-մանը, այստեղ նույնպես սոցիալական պատմությունն ունի իր ուրույն մոտեցումը, որը ճանաչված մշակութաբան Օլեգ Լեյբո-

² Ярская-Смирнова, Романов, Лебина, Советская социальная политика: сце-ны и действующие лица, 1940–1985, Москва, Вариант, 2008. <https://publications.hse.ru/chapters/89572684> (дата обращения 17.11.2019).

վիչը դիպուկ ձևակերպում է այսպես. «պատմությունը երբեմն հաշտ չէ օրացույցի հետ: Նոր դարաշրջանները հազվադեպ են համնկնում տասնամյակներին»⁴: Դժվար չէ նկատել, որ հետազոտողի համար այս դեպքում դարաշրջանը բնութագրվում է սոցիալ-քաղաքական և մշակութային գործընթացներով, որոնք չունեն հստակ թվագրվող ժամանակագրական սահմաններ: Խորհրդային պատմության տարբեր ժամանակահատվածները հաճախ ընդունված է եղել կապել խորհրդային առաջնորդների անվան հետ, և այս համատեքստում ամենաշատ քննարկված և հետազոտություններում արտացոլված դարաշրջանը համարվում է ստալինիզմի դարաշրջանը՝ որպես քաղաքական ամբողջատիրական համակարգի ներդրման և ամրապնդման դարաշրջան: Սակայն պետք է նկատի ունենալ, որ ինչպես «ստալինիզմը», այնպես էլ ամբողջատիրությունը խորհրդային Միությունում չի ավարտվում Ի. Ստալինի մահով: Այս եզրույթները խորհրդանշում են խորհրդային քաղաքական համակարգի որոշակի օրինաչափություններ, որոնք այս կամ այն չափով արտահայտվեցին նաև հետագա տարիներին: Օ. Լեյբովիչը, օրինակ, ուշ ստալինիզմի դարաշրջան է համարում խորհրդային պատմության հետպատերազմյան առաջին տասնամյակը՝ Ն. Խրուշչովի կառավարման սկզբնական տարիները, փաստորեն, նույնպես ներառելով սրանց մեջ⁵:

³ Նույն տեղում:

⁴ **Лейбович О.**, В городе М. Очерки социальной повседневности советской провинции в 40–50-х гг., Москва, РОССПЭН, https://royallib.com/book/leybovich_oleg/v_gorode_m_ocherki_sotsialnoy_povsednevnosti_sovetskoy_provintsii_v_4050h_gg.html (дата обращения 17.11.2019).

⁵ **Лейбович О.**, Дом о трех этажах, или как изучать повседневность поздней сталинской эпохи, https://s3.amazonaws.com/academia.edu.documents/31019877/%D0%B4%D0%BE%D0%B8_%D0%BE_%D1%82%D1%80%D0%B5%D1%85_%D1%8D

Եթե արևմտյան պատմաբաններին առավել շատ հետաքրքրել է վաղ ստալինյան դարաշրջանը, որը թվագրվում է 1920-ականների վերջից մինչև 1930-ականների վերջը, այսինքն՝ մինչև Հայրենական պատերազմի սկիզբը, ապա արդի ռուսական պատմագրության մեջ այսօր առավել արդիական է «ստալինիզմի» ամբողջական պատմության վերհանումը, բնականաբար կարևորվում են նաև ստալինյան կառավարման ուշ շրջանի իրողությունները, որոնք ընդգրկում են հետպատերազմյան վերականգնման տարիները: Աննա Կիմեռլինգն արևմտյան պատմագրության կողմից վաղ ստալինյան դարաշրջանին նախապատվություն տալը բացատրում է նրանով, որ արևմտյան պատմագրությունը խորհրդային պատմության ուսումնասիրություններում տուրք է տալիս վերակառուցման շրջանին բնորոշ հետազոտական ավանդույթներին, որոնց համաձայն ստալինիզմը ներկայացվում էր քննադատական երանգներով և բացասական լույսի ներքո: Եվ նրա բռնատիրական էությունը ցույց տալու համար ընդունված էր հիմնվել ներկուսակցական քաղաքական բռնաճնշումների, Մեծ տեռորի, կոլեկտիվացման և առաջին հնգամյակի վերաբերյալ օրինակների վրա⁶:

Սակայն վերադառնանք խորհրդային պատմության արդի ռուսական պատմագրությանը: Այստեղ հատկապես հետպատերազմյան տարիները, կամ, ինչպես նշվեց, ուշ ստալինյան դարաշրջանը ներկայացված է բազմազան և հարուստ գրականությամբ: Դատելով հրապարակի վրա եղած նյութերից՝ այս դարա-

%D1%82%D0%B0%D0%B6%D0%B0%D1%85.pdf?response-content-disposition=inlinene%3B%20filename%3D31019877.pdf (дата обращения 17.11.2019).

⁶ **Кимерлинг А.**, Выполнять и лукавить, политические кампании поздней сталинской эпохи, Москва, ВШЭ, 2017, <https://www.twirpx.com/file/2352037/> (дата обращения 17.11.2019).

շրջանը ռուսաստանցի հետազոտողներին հետաքրքրում է և՛ մշակութաբանական, և՛ մարդաբանական, և՛ սոցիոլոգիական տեսանկյունից: Արդյունքում՝ հետազոտությունները շոշափում են խորհրդային սոցիալական պատմությանն առնչվող ամենատարբեր թեմաներ՝ սոցիալիստական մշակույթը որպես հանրային տրամադրությունները վերահսկող գաղափարախոսական գործիք, սոցիալական տարբեր խմբերի գոյապահպանման մարտավարություններ, առօրեական կյանքը քաղաքական համակարգի վերահսկողության տիրույթում ու նրանից դուրս և այլն: Ռուսաստանյան պատմագրությանը, ի թիվս նշված թեմաների, բնորոշ են նաև առօրեականության պատմության հետազոտության առարկայի և խնդիրների վերաբերյալ տեսական վերլուծությունները: Քանի որ խորհրդային սոցիալական պատմությունն այսօր բավական մեծ հեղինակություն է վայելում Ռուսաստանում, և այս ուղղության հետազոտողները բազմաթիվ են, բոլորին ներկայացնելը մեկ հոդվածի շրջանակներում անհնար է: Այդ իսկ պատճառով կանդրադառնանք այն հեղինակներին, որոնց ներդրումը առավել մեծ է նշված ժամանակաշրջանի խորհրդային առօրեականության հետազոտությունների մեթոդաբանական և բովանդակային խնդիրների առաջադրման և լուսաբանման մեջ:

Ելենա Զուբկովա: Պատմաբան Ե. Զուբկովան հետպատերազմական ժամանակաշրջանի խորհրդային պատմության նշանավոր ուսումնասիրողներից է: Նա համոզված է, որ խորհրդային պատմության օբյեկտիվ ուսումնասիրությունը հնարավոր է միայն հետազոտություններում բացառապես քաղաքական և տնտեսական պատմությանը տուրք տալուց հրաժարվելով: Հեղինակը նշում է, որ այն բանից հետո, երբ սոցիալական

պատմությունը յուրօրինակ վերելք ապրեց, արդեն վերացել է անհրաժեշտությունն ապացուցել, որ մարդկանց մտային ուղղվածությունն ու հոգեբանական կողմնորոշումները հանդիսանում են քաղաքական և տնտեսական զարգացման ինքնուրույն գործոններ, որովհետև նրանք ազդում են սոցիալական վարքի առանձնահատկությունների վրա և էապես կանխորոշում են որոշումների ընդունման մեխանիզմները՝ նաև իշխանական մարմիններում⁷: Առաջնորդվելով այս տրամաբանությամբ՝ Ջուբկովան իր աշխատություններում մշտապես ներկայացնում է խորհրդային քաղաքացուն՝ իր հույզերով, իր տրամադրություններով, քաղաքական համակարգի հարուցած դժվարություններին իր դիմակայելու կարողություններով: Խորհրդային կյանքը նրա հետազոտություններում հառնում է իր ողջ բազմազանությամբ և հակասականությամբ: Արժեքավոր են Ջուբկովայի դիտարկումները նաև խորհրդային քաղաքական ամբողջատիրական համակարգի վերաբերյալ: Օրինակ՝ իր «Հետպատերազմյան խորհրդային հասարակությունը. քաղաքականություն և առօրյա (1945–1953)» աշխատության մեջ Ջուբկովան ժամանակակիցների հուշերի, արխիվային վավերագրերի, ինչպես նաև վիճակագրական հարուստ տեղեկությունների և խորհրդային մամուլի հրապարակումների ու գրականության միջոցով հետաքրքիր մանրամասներ է ներկայացնում նախկին ճակատայինների առօրյայի մասին: Ջուբկովան իր դիպուկ հիմնավորումներով կարողանում է ցրել այն առասպելը, թե խորհրդային պետությունը գնահատում էր իր հերոսներին, ցույց է տալիս ընդհանուր քաղաքական մթնոլորտը, որում պատերազմից վերա-

⁷ Зубкова Е., Послевоенное советское общество: Политика и повседневность. 1945–1953, Москва, РОССПЭН, 1999, с. 2.

դարձածները դիտարկվում էին որպես արտասահմանում եղած, այնտեղի բուրժուական կենցաղին ծանոթացած «նեոդեկար-րիստներ», որոնց դեմ պայքարը կապահովագրեր պետությանը անցանկալի սոցիալական և քաղաքական ցնցումներից: Հետևողական շարադրանքով Զուբկովան ցույց է տալիս, որ խորհրդային իշխանությունները գաղափարախոսական նուրբ աշխատանքով կարողացան յուրացնել խորհրդային քաղաքացու՝ աներևակայելի զրկանքներով ձեռք բերված հաղթանակը և այն վերագրելի Ստալինին: Հետևաբար՝ պատերազմից վերադարձածները զրկվեցին սոցիալական պաշտպանվածության իրավունքից և մնացածի հետ կիսեցին հետպատերազմյան ժամանակաշրջանի զրկանքները⁸: Գրքում պատկերավոր ձևով ներկայացված են հետպատերազմյան ժամանակներին բնորոշ հանրային տրամադրությունները. սրանք բացահայտվում են կուսակցական գաղափարախոսական մեքենայի քարոզած ոգևորության, հասարակության լավատեսության և մարդկային բազում հիասթափությունների պատմությունների հակադրություններով: Զուբկովան մանրամասն ներկայացնում է խորհրդային հասարակության մեջ տեղի ունեցած սոցիալ-տնտեսական փոփոխությունները պատերազմից հետո և ցույց է տալիս այն, ինչը, չնայած հասարակության մեծ մասի ակնկալիքներին, մնաց անփոփոխ, այն է՝ պետության կողմից կիրառվող բռնատիրական քաղաքականությունը:

Իր մեկ այլ ուսումնասիրության մեջ Զուբկովան անդրադարձել է 1940–1960-ական թվականներին խորհրդային Միության հասարակության այսպես ասած «մարգինալացված» շերտերին,

⁸ Նույն տեղում, էջ 28–49:

այն է՝ սոցիալական «շեղված» վարքագծով քաղաքացիների խմբերին (աղքատներ, անտուններ, հարբեցողներ, մարմնավաճառներ, թափառաշրջիկներ և այլն)⁹։ Ծավալուն հողվածում Զուբկովան, անդրադառնալով հիմնահարցի վերաբերյալ տարբեր ուսումնասիրողների մոտեցումներին, ամբողջացնում է «մարգինալ» երևույթի իմաստները պետության և հասարակության՝ իրարից խիստ տարբերվող ընկալումներում։ Այստեղ Զուբկովան շեշտը դնում է խորհրդային իշխանության՝ հակասոցիալական վարքագիծ դրսևորող խմբերի հետ տարվող քաղաքականության փոփոխությունների վրա՝ հեռանալով այդ խմբերի առօրյա կյանքի նկարագրություններից։ Սակայն հողվածն արժեքավոր է նրանով, որ սոցիալական այսպես ասած «շեղված» (դեհանտ) վարքագծի խնդիրը խորհրդային առօրեականության հետազոտական հիմնախնդիրներից է, ավելի ճիշտ՝ խորհրդային առօրեականության հետազոտության մեթոդներից, երբ հասարակության կյանքը դիտարկվում է «նորմայի» և «անոմալիայի» հակադրություններում։ Զուբկովան այս մեթոդի անհրաժեշտությունը բացատրում է այսպես. «Այն հարցի պատասխանը, թե խորհրդային հասարակության և խորհրդային վարչակարգի էությունն ընկալելու տեսակետից ինչ նոր բան կարող է տալ այնպիսի խնդրի վերլուծությունը, ինչպիսին է հակասոցիալական և մարգինալ խմբերի դրությունը, թվում է թե, ակնհայտ է. «Ոչինչ ավելի շատ չի կարող ասել «նորմայի» մասին, քան դրանից շեղումները։ Այդ իսկ պատճառով անդրադարձը սոցիալական շեղումներին, անկասկած, նոր հեռանկարներ է բացում թե

⁹ Зубкова Е., На «краю» советского общества. маргинальные группы населения и государственная политика. 1940–1960-е годы, Российская история № 5, 2009, с. 101–118. <https://www.twirpx.com/file/811117/grant/> (дата обращения 20.10.2019).

խորհրդային առօրեականության, թե «պետություն-անհատ», «հասարակություն-իշխանություն» համակարգերում հարաբերությունների հետազոտության համար»¹⁰: Այս մոտեցումը բավական տարածված է ռուսաստանյան պատմագրության մեջ: Իր հետազոտություններում, արդեն առօրյա կյանքի ավելի վառ նկարագրություններով, անդրադարձել է նաև մեկ այլ նշանավոր հետազոտող՝ Նատալյա Լեբինան, որին կանդրադառնանք ստորև:

Նատալյա Լեբինա: Նատալյա Լեբինայի ամենահայտնի աշխատությունները կարելի է համարել «խորհրդային քաղաքի առօրյա կյանքը. նորմաներ և անոմալիաներ (1920–1930-ական թթ.)» և «խորհրդային առօրեականություն. նորմաներ և անոմալիաներ: Ռազմական կոմունիզմից դեպի մեծ ոճ» մենագրությունները: Ստալինյան և հետստալինյան դարաշրջանի խորհրդային առօրեականության պատմությունը այս ուսումնասիրություններում ներկայացվում է յուրօրինակ մոտեցմամբ: Խոսքը գնում է հետազոտական այն եղանակի մասին, որը հիմնվում է այսպես կոչված դեֆինիտ տեսության վրա: Այս մոտեցման էությունն առօրեականության հետազոտությունն է նորմա-անոմալիա դիֆխոտոմիայի (երկճյուղավորման) համատեքստում: Եթե Ե. Զուբկովայի մոտ այս մոտեցումը կիրառվում է մասնակիորեն, այսպես ասած դրվագային դրսևորումներով, ապա Լեբինայի մոտ այն հանդիսանում է հետազոտության հայեցակարգ և մարտավարություն, որով նա առաջնորդվում է՝ ցույց տալու համար խորհրդային օրենքներով և իշխանական նորմատիվներով կարգավորվող առօրեականության հակադրությունը խորհրդային

¹⁰ Նույն տեղում:

քաղաքացիների կյանքի իրական պայմաններին և սրանցում ծնվող սոցիալական վարքագծի տարբեր մոդելներին: Հատկանշական է, որ երկրորդ աշխատության մեջ Լեբինան հիմնականում ընդլայնել է ուսումնասիրության ժամանակագրական սահմանները՝ ամբողջացնելով ստալինյան դարաշրջանի առօրեականության պատմության հիմնախնդրի ուսումնասիրությունը: Լեբինան ուշ ստալինյան դարաշրջանն անվանում է «մեծ ոճ»-ի դարաշրջան՝ նշելով, որ թեպետև «մեծ ոճ» արտահայտությունը վերաբերում է ճարտարապետության, արվեստի և գրականության ոլորտներին, սակայն ավելի հաճախ այն կիրառում են ավտորիտար և ամբողջատիրական վարչակարգերի պատմական-մարդաբանական նկարագրությունների համար¹¹: Մեծ ոճն այս համատեքստում բնորոշում է ստալինիզմն իր «կայսերական վեհությամբ»¹², որի տակ հեղինակը հասկանում էր ստալինյան իշխանության անսահմանափակությունն ու նրա բացառիկ ազդեցությունը խորհրդային քաղաքացու առօրյա կյանքում: Ինչպես և այլ հեղինակներ, Լեբինան նույնպես համոզված է, որ, լինելով ամբողջատիրական իշխանություն, ստալինիզմը փորձում էր ձևավորել իր որդեգրած գաղափարախոսական սկզբունքներին համապատասխանող առօրեականություն, որում խորհրդային քաղաքացին պետք է զգար սոցիալիստական հասարակության մեջ ապրելու հպարտությունն ու երջանկությունը: Ու, եթե 1930-ական թվականներին խորհրդային իշխանությունը փորձում էր սոցիալական շեղված վարքագծի դրսևորումներին արձագանքել պետական քիչ թե շատ հոգաժողովամբ աչքի ընկնող սոցիալա-

¹¹ **Лебина Н.**, Советская повседневность: нормы и аномалии. От военного коммунизма к большому стилю, Новое литературное обозрение, Москва, 2015 <https://www.twirpx.com/file/2938029/> (дата обращения 01.12.2019).

կան քաղաքականությամբ, ինչը Լեբինսան անվանում է «սոցիալական մարդասիրություն», ապա ստալինիզմի ուշ շրջանում՝ 1950-ականների սկզբին, որն էլ հեղինակն անվանում է «ստալինիզմի կայսերական փուլ», «սոցիալական մարդասիրությունը» փոխարինվում է «սոցիալական ահաբեկչությամբ», որի հիմնական դրսևորումը սոցիալական անոմալիաների անտեսումն է, սրանց վերաբերյալ ցանկացած հիշատակություն լռության մատնելը, իսկ այս վարքագիծը դրսևորող սոցիալական խմբերի՝ հարբեցողների, մարմնավաճառների, թմրամոլների և այլոց նկատմամբ պետական անհանդուրժող քաղաքականության իրականացումը: Ըստ Լեբինայի՝ «սոցիալական պաթոլոգիաների նկատմամբ իշխանական վերաբերմունքի նորմա է դառնում խորհրդային պետությունում սրանց առկայության փաստի լռության մատնելը, ինչպես նաև սրանք արմատախիլ անելու և սոցիալական «շեղվածներին» օգնություն տրամադրելու իրավական բազայի բացակայությունը»¹³:

Լեբինայի մոտեցումները որոշ պատմաբաններ քննադատեցին: Մասնավորապես՝ Ալեքսանդր Սենյավսկին և Նատալյա Պուշկարյովան «դեհիանտ տեսության» համատեքստում քաղաքային առօրյայի ուսումնասիրությունը համարում էին ոչ արդյունավետ: Սենյավսկին նշում է. «Նման մոտեցման մեթոդոլոգիական աննրբանկատությունը դառնում է ակնհայտ, երբ տալիս ենք սովորական մի հարց. այդ ինչպե՞ս պատահեց, որ սովորական մարդիկ՝ Լենինգրադի բնակիչները (Լեբինայի աշխատությունների զգալի մասում խորհրդային առօրեականությունն ուսումնասիրված է Լենինգրադ քաղաքի օրինակով – **Գ.Ժ.**),

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում:

որոնք, եթե հավատանք հեղինակին, 1920–1930-ական թվականներին ամբողջովին «թաղված էին» սոցիալական անոմալիաների մեջ, ընդամենը մի քանի տարի հետո զանգվածային ձևով հերոսություն ցուցաբերեցին՝ պաշտպանելով իրենց քաղաքը և դիմանալով ծանր ու երկարատև շրջափակումին: Նման «հակասությունն» արդյունք է նրա, որ հեղինակի կողմից կանխակալ ձևով քաղաքային կյանքի առանձին կողմերը առանձնացվում են և ներկայացվում որպես ամբողջական քաղաքային կյանքի էություն և բովանդակություն»¹⁴:

Ակնհայտ է, որ այս մեթոդոլոգիական բանավեճի հիմքում ընկած է խորհրդային առօրեականության պատմության խնդիրների վերաբերյալ տարաբնույթ և իրարից տարբերվող մոտեցումների բախումն արդի ռուսաստանյան պատմագրության մեջ: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ դեռևս կան առօրեականության տարբեր ընկալումներ նաև ռուսական պատմագիտության մեջ: Մեր կարծիքով՝ անընդունելի է Լեբինային մեղադրել կանխակալ և կողմնապահ վերաբերմունքի մեջ միայն այն պատճառով, որ նրա նշված աշխատություններում գերակշռում են սոցիալական «շեղվածության» նկարագրությունները: Այստեղ ընդամենն արտահայտված է ուսումնասիրողի հետազոտական նախասիրությունը՝ առօրեականության պատմությունը դիտարկել միայն մեկ հիմնախնդրի, այս դեպքում՝ սոցիալական նորմայի և անոմալիաների համատեքստում: Իրականում, սա հեղինակի կողմից ընտրված հետազոտական մարտավարություն է և, կարծում ենք, սոցիալական պատմության

¹⁴ Пушкарева Н., «История повседневности» и этнографическое исследование быта: расхождения и пересечения, Гласник этнографского института сану, № 53,

հետազոտություններում չեն գործում ավանդական պատմագիտության մեջ ընդունված մեթոդաբանական կարծրատիպերը, որոնք հետազոտողին պարտադրում են թեմատիկ և բովանդակային օրակարգ: Առօրեականության պատմաբանն ինքն է որոշում՝ ի՞նչ հիմնախնդրի հետազոտման և մեթոդական ի՞նչ մարտավարության միջոցով հասնել սոցիալական կյանքի այս կամ այն կողմի լուսաբանմանը:

Այդուհանդերձ, զերծ մնալով գնահատականներից, նշենք, որ Ն. Լեբինայի հետագա աշխատությունները¹⁵ «նորմա-անոմալիա» հակադրություններից հեռանալով՝ հարցերի ավելի լայն շրջանակ են ընդգրկում՝ խորհրդային քաղաքացիների կենցաղ, նորաձևություն, սնունդ, սպասարկման ոլորտ և այլն:

Իգոր Օռլով: Պատմաբան Իգոր Օռլովին իրավամբ կարելի է համարել այն մասնագետներից մեկը, ով ռուսաստանյան պատմագիտական շրջանակներում զգալի աշխատանք կատարեց առօրեականության պատմության հիմնախնդիրները հանրայնացնելու ուղղությամբ: Պատմագիտական հետազոտությունների այս ուղղության վերաբերյալ Օռլովը 2008 թվականին հրատարակեց «խորհրդային առօրեականություն. սոցիոլոգիական և պատմական կայացման ձևերը» ուսումնասիրությունը, որում գրեթե դասագրքային մատչելիությամբ համակողմանիորեն լուսաբանվում են առօրեականության պատմության՝ որպես հետազոտական նոր ուղղության բովանդակությունը, խնդիրները, այս

2005, с. 21–34. <http://www.anthroserbia.org/Content/PDF/Articles/103020bbf8e14a1b8739c34cb8d89484.pdf> (дата обращения 01.12.2019).

¹⁵ **Лебина Н.**, Повседневность эпохи космоса и кукурузы: Деструкция большого стиля, Ленинград 1950–1960-е годы, Санкт-Петербург, «Победа», 2015, **Лебина Н.**, Пассажиры колбасного поезда: Этюды к картине быта российского города: 1917–1991, Москва, «Новое литературное обозрение», 2019.

ուղղության անցած ճանապարհը և Խորհրդային Միության
 պատմության ուսումնասիրություններում առօրեականության
 պատմության կիրառման կարևորությունն ու ուղիները: Օռլովը
 գտնում է, որ Խորհրդային առօրեականության ժամանակակից
 հետազոտական զգացողությունը մեծ մասամբ առնչվում է հասարակական և անձնական կենսատարածքների սահմանագծմամբ:
 Առաջինի դեպքում խոսքը գնում է պետության կողմից պարտադրվող կենցաղավարության մասին, որը կուսակցությունը
 ձգտում էր հասարակական գիտակցության մեջ ամրագրել
 որպես նորմա, իսկ մյուսը մարդկանց ինքնուրույն կենցաղի և
 մտածողության վրա հենվող առօրեականությունն էր, որը
 պետության կողմից դիտարկվում էր որպես անոմալիա և որը
 ամբողջատիրական վարչակարգը փորձում էր վերացնել կամ
 հարմարեցնել իր գաղափարախոսական արժեքներին: Որպես
 օրինակ Օռլովը ներկայացնում է այն իրողությունը, երբ
 Խորհրդային պետությունը կրոնական-եկեղեցական ինստիտուտների
 հետ քաղաքացիների առնչությունները բացահայտելու
 դեպքում հեռացնում էր նրանց կուսակցությունից և կոմերիտմիությունից,
 բայց միևնույն ժամանակ, գիտակցելով, որ հոգևոր պահանջմունքներն
 անհնար է հանել մարդկանց գիտակցությունից, Խորհրդային
 պետությունը հրամցնում էր հոգևոր կենսափորձի յուրօրինակ
 փոխարինող՝ ի դեմս «Խորհրդային գաղափարախոսության և
 կոմունիզմի հաղթանակի հանդեպ նրա հիվանաստական հավատի»
 (հիվանդանոցը կրոնական-միստիկական ուսմունք է Հիսուս
 Քրիստոսի հազարամյա երկրային թագավորության մասին – **Գ.Ժ.**):
 Օռլովի բերած երկրորդ օրինակը վերաբերում է արտասահմանյան
 ուղևորություններին, որոնց նկատմամբ Խորհրդային քաղաքացիների
 հակումը հնարավոր չէր վե-

րացնել, այդ իսկ պատճառով պետությունը հանրային գիտակցության մեջ արմատավորել էր «արտասահման» ընկալման փոխարինող՝ ի դեմս Արևելյան Եվրոպայի սոցիալիստական ճամբարի երկրների¹⁶:

Օղովը գտնում է, որ առօրեականությունը սոսկ «նորմայի» և «անոմալիայի» ուղղակի հակադրությունը չէ: Խորհրդային մարդկանց առօրյա կյանքի ամբողջական պատկերն ստանալու համար նա առաջարկում է կիրառել հետազոտական մոտեցում, որն անվանում է «օրինաչափ բացառություն»: Այն ներառում է սոցիալական պրակտիկայի այսպես ասած «վարքագծային» տարրերը, որոնց ուսումնասիրությունը պատասխանում է այն հարցին, թե արդյոք ի՞նչ գիտակցական արձագանքներ էին ունենում պետական և կուսակցական վճիռներն ու նախաձեռնությունները սովորական մարդկանց մոտ և թե ինչպե՞ս էին վերջիններս իրենց բարեկեցությունը փորձում ապահովել պետության գաղափարախոսական պարտադրանքի պայմաններում, ի՞նչ մեթոդներ ու հնարներ էին կիրառում այն շրջանցելու կամ իրենց անձնական շահերին հարմարեցնելու նպատակով: Իգոր Օղովն այսպես կոչված «վարքագծային պատմությունը» խորհրդային առօրեականության կարևոր բաղադրիչն է համարում՝ գտնելով, որ այն ուսումնասիրելու համար ռուսական պատմագրության մեջ դեռևս բավարար չափով մշակված չեն անհրաժեշտ մեթոդական և աղբյուրագիտական բազաները¹⁷: Մինչդեռ, ըստ նրա, մարդկային վարքագծի տարաբնույթ դրսևորումների հետազոտությունը պատմական իրողություններ-

¹⁶ Стів Орлов И., Советская повседневность: исторический и социологический аспекты становления (<https://www.twirpx.com/file/1401404/>) (дата обращения 10.11.2019).

րի համատեքստում չափազանց արդյունավետ և հեռանկարային հետազոտական մարտավարություն է: Այս համատեքստում հետաքրքիր են նրա դիտարկումները խորհրդային սոցիալական կյանքի տարբեր կողմերի վերաբերյալ՝ ընտանիք, սպասարկման ոլորտ, ակոհիոլային քաղաքականություն, իր իսկ բնորոշմամբ՝ «հարբած մշակույթ», հանգիստ, տուրիզմ և այլն, որոնք նշված աշխատության մեջ դիտարկվում են որպես խորհրդային առօրեականության պատմության հեռանկարային թեմաներ: Օղովի խորին համոզմամբ՝ առօրեականության պատմությունը, որպես «ինքնակատարելագործման» ձգտող հետազոտական ուղղություն, խորհրդային ժամանակաշրջանը համակողմանի ուսումնասիրելու լայն հնարավորություններ է ստեղծում:

Օլեգ Լեյբովիչ: Նշանավոր մշակութաբան Օ. Լեյբովիչի ներդրումը նույնպես մեծ է խորհրդային առօրեականության տեսական և մեթոդոլոգիական հարցերի լուսաբանման մեջ: Նրա «Երեք հարկանի տունը, կամ ինչպես պետք է հետազոտել ուշ ստալինյան դարաշրջանի առօրեականությունը» ծավալուն հոդվածը արժեքավոր ուղեցույց է խորհրդային առօրեականության հետազոտական խնդիրների լուսաբանման համար: Այս հոդվածում Լեյբովիչն առաջարկում է խորհրդային առօրեականության պատմության ուսումնասիրություններում առաջնորդվել հետազոտական այն հայեցակարգով, որը ձևակերպված է ֆենոմենոլոգիական տեսության ներկայացուցիչներ Ալֆրեդ Շյուցի, Փիթեր Բերգերի և Թոմաս Լուկմանի աշխատություններում, և որի ընդհանուր գաղափարն այն է, որ առօրեականությունը կենսագործում է մի ընդհանուր տիրույթում, որտեղ հանդիպում և փոխ-

¹⁷ Նույն տեղում:

գործակցում են մարդկանց կենսական աշխարհները՝ մեկ ամբողջության մեջ միավորելով արվեստը, քաղաքականությունը, բարոյականությունն ու կրոնը: Զարգացնելով այս գաղափարը՝ Լեյբովիչն ընդգծում է առօրեականության բազմաշերտությունն ու նրա համընդգրկվածությունը՝ նշելով, որ «այն իր մեջ պարունակում է ամբողջ մարդկային աշխարհը՝ սկսած նրա ամենագաղտնի, ինտիմ միջավայրից, որ նա կիսում է իր մտերիմների, հարազատների հետ, մինչև հանրային բնույթի գործողություններ. մանր գործընթացներից մինչև մարդկային ակտիվության բարձրագույն ձևեր»¹⁸:

Ուշ ստալինյան ժամանակաշրջանի առօրեականությունը Լեյբովիչն առաջարկում է հետազոտել «երեքհարկանի տան» մեթոդոլոգիական սկզբունքով, ըստ որի ստալինյան իրականությունը բաղկացած էր երեք աշխարհներից՝ գաղափարների (իմա՝ քարոզչության), որում խորհրդային կյանքը ներկայանում էր պայծառ, լավատեսական գույներով և էլ ավելի պայծառ ապագայի նկատմամբ հավատով, առօրեական կյանքը իր ամենօրյա խնդիրներով և գոյապահպանման մարտավարություններով և քրեական աշխարհը (այստեղ Լեյբովիչը մասնավորեցնում է՝ քրեական աշխարհի տակ հասկանալով առաջին հերթին ԳՈՒԼԱԳ-ը)¹⁹:

Լեյբովիչի մեթոդոլոգիական մոտեցումներն իրենց գործնական արտահայտությունն են գտնում նրա մյուս նշանավոր աշ-

¹⁸ **Лейбович О.**, Дом о трех этажах, или как изучать повседневность поздней сталинской эпохи, https://s3.amazonaws.com/academia.edu.documents/31019877/%D0%B4%D0%BE%D0%B8_%D0%BE_%D1%82%D1%80%D0%B5%D1%85_%D1%8D%D1%82%D0%B0%D0%B6%D0%B0%D1%85.pdf?response-content-disposition=inline%3B%20filename%3D31019877.pdf (дата обращения 17.11.2019)

¹⁹ Նույն տեղում: Տե՛ս նաև՝ **Кимерлинг А.**, Выполнять и лукавить: политические кампании поздней сталинской эпохи, Москва, ВШЭ, 2017, с. 18.

խատուությունում՝ «Մ քաղաքում. խորհրդային արվարձանի սոցիալական առօրեականության ուրվագծեր» մենագրության մեջ, որտեղ նա համակողմանի ներկայացնում է ստալինյան դառաշրջանում փոքր քաղաքների առօրյա կյանքի առանձնահատկությունները Պերմի շրջանի Մոլոտով քաղաքի օրինակով²⁰: Ընդ որում՝ այստեղ հեղինակը շեշտը դնում է քաղաքական առօրյայի լուսաբանման վրա: Գրքում մեկ քաղաքի օրինակով ներկայացված է խրուշչովյան անվանակարգի կայացումը՝ խորհրդային իշխանությունների կադրային, գաղափարական և կազմակերպչական աշխատանքների, ինչպես նաև տեղական բնակչության հետ առնչությունների համատեքստում:

Նշենք, որ մեր կողմից ներկայացված հեղինակների ուսումնասիրություններն ունեն մեկ ընդհանրություն՝ նրանք բոլորն էլ այս կամ այն չափով լուսաբանել են խորհրդային առօրեականության պատմության տեսական և մեթոդոլոգիական խնդիրները՝ դրանք մեկնաբանելով իրենց սեփական ըմբռնումներով: Սակայն նրանց հետազոտական մեթոդաբանության մեջ բավականաչափ կիրառություն չունի միկրոպատմական մոտեցումը, ինչի արդյունքում նրանց աշխատությունների մեջ հաճախ կորչում է առօրեականության պատմության գլխավոր հերոսը՝ սովորական մարդը: Նշված հեղինակների մոտ ընդհանուր առմամբ ներկայացված է միայն պատմա-սոցիալական այն միջավայրը, որում ապրել է մարդը. պատմական իրադարձությունների այսպես կոչված «բեմը» ներկայացված է լավագույնս, «գործող անձիք» խմբավորված են ըստ սոցիալական պատկանելության՝ հասարակության սոցիալական խմբերում, կան որոշակի,

²⁰ **Лейбович М.**, В городе М. Очерки социальной повседневности советской провинции, Москва, РОССПЭН, 2008.

հստակ պատկերացումներ քաղաքական կյանքի և առօրեական իրողությունների փոխգործակցությունների մասին, սակայն մարդն իր հոգսերով, հույզերով, սոցիալ-հոգեբանական անհատական վարքագծի բնութագրերով հիմնականում մղված է հետին պլան: Սա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ նշված հեղինակների կողմից ընտրված աղբյուրներում անձնական բնույթի նյութերը բացակայում են: Կարճ ասած՝ նրանց աշխատություններում կողմնակի ձևով է լուսաբանված խորհրդային պատմությունը մարդկային պատմությունների համատեքստում:

Այս առումով ռուս հեղինակ **Նատալյա Կոզլովայի** աշխատությունը՝ «Խորհրդային մարդիկ. պատմության տեսարաններ»²¹, նոր շունչ է խորհրդային ժամանակաշրջանն ուսումնասիրող աշխատանքներում: Կոզլովայի գիրքը հիմնված է բացառապես հուշագրությունների, նամակների և օրագրերի վրա: Սրանցում խորհրդային առօրեականությունը ներկայանում է մարդկային հույզերի, մտորումների, կենսագրական պատմությունների համատեքստում, ինչի շնորհիվ Կոզլովան փորձում է իր իսկ բնորոշմամբ՝ «միս ու արյուն» հաղորդել պատմությանը: Գրքում բավական հետաքրքիր է բացատրվում աշխատանքը գրելու շարժառիթները: Հիրավի հարգանքի է արժանի հեղինակի այն դիտարկումը, որ Խորհրդային Միության փլուզումից հետո նկատվում է յուրօրինակ «մշակութային ամենեզիա», որի արդյունքում արդեն խորհրդային պատմությունն է «սեփականաշնորհվում» (կամ գաղութականացվում) հետխորհրդային գաղափարախոսությամբ²²: Ենթադրում ենք՝ հեղինակն ի նկատի է

²¹ **Козлова Н.**, Советские люди. Сцены из истории, Москва, «Европа», 2005.

²² Նույն տեղում, էջ 13:

ունեցել այն միտումները, որոնք հետխորհրդային ժամանակաշրջանի պատմագիտական շատ ուսումնասիրությունների համար բնորոշ էին դարձնում խորհրդային անցյալն անվերապահորեն քննադատելն ու այն «ազատականության» և «Ժողովրդավարության» վերացական հասկացությունների հետ հակադրություններում «սևացնելու» ոչ գիտական և ոչ բարեխիղճ մոտեցումները: «Մշակութային ամենգիան» բացառելու համար Կոզլովան, փաստորեն, ձայն է տալիս խորհրդային պատմության ամենաանաչառ մասնակիցներին՝ խորհրդային շարքային քաղաքացիներին, և «խորհրդայինի» ֆենոմենը լուսաբանում է՝ խմբային, հանրային հիշողությունից հետազոտական հայացքը տեղափոխելով անհատական հիշողության վրա:

Կոզլովայի աշխատությունը լուրջ մարտահրավեր է խորհրդային կյանքը սուբյեկտիվիզմի և կանխակալ գնահատականների մոլորությունից հանելու և խորհրդային ժամանակաշրջանի անկողմնակալ հետազոտությունների մշակույթ ձևավորելու ճանապարհին: Աշխատության արժեքավորության մասին խոսելիս՝ ռուս ճանաչված հրապարակախոս Գլեբ Պոլլովսկին նշում է, որ Նատալիա Կոզլովան առաջիններից էր, ով սկսեց «խորհրդայինի» իմաստի գիտակցումն ու վերականգնումը ԽՍՀՄ-ից դուրս²³:

Վերջում ցանկանում ենք նշել նաև խորհրդային առօրեականության պատմության հետազոտողների մի խմբի մասին, որոնց հատուկ է այսպես ասած «թեմատիկ մասնավորեցումը»: Հաշվի առնելով սոցիալական պատմության բազմաշերտությունն ու հետազոտական խնդիրների բազմազանությունը՝ շատ

²³ Նույն տեղում, էջ 3:

հեղինակներ գերադասում են իրենց ուշադրությունը կենտրոնացնել խորհրդային կյանքի առանձին հիմնախնդիրների վրա: Այս հեղինակներից առանձնացնենք Վալենտինա Անտիպինային և Իլյա Ուտեխինին: Անտիպինայի գրչին է պատկանում ստալինյան դարաշրջանի խորհրդային առօրեականությանը նվիրված նշանավոր գրքերից մեկը՝ «խորհրդային գրողների առօրյա կյանքը (1930–1950-ական թվականներ)», որում հեղինակը հարուստ արխիվային նյութի հիման վրա ներկայացնում է Մոսկվայի և մասամբ Լենինգրադի գրողների կյանքը աշխատանքում և կենցաղում²⁴: Հեղինակը հատկապես ուշադրություն է դարձնում գրողների կողմից իրենց նյութական և կենցաղային դժվարությունները հաղթահարելու նպատակով կիրառվող տարաբնույթ գոյապահպանման մարտավարություններին, որոնցում խիստ հետաքրքիր դիտարկումներ կան խորհրդային իշխանությունների հետ նրանց հարաբերությունների վերաբերյալ:

Իլյա Ուտեխինի աշխատությունը՝ «Կոմունալ կենցաղի ուրվագծեր»²⁵, նվիրված է խորհրդային սոցիալական կյանքի երևի թե ամենաբնութագրական կողմերից մեկին՝ կոմունալ բնակարանների առօրյային, որտեղ հեղինակը հանգամանալից վերլուծության է ենթարկում խորհրդային այսպես ասած «կոմունալ համակեցության» մշակույթը՝ իր ավանդույթներով, սոցիալական նորմերով, նրանում առկա վարքագծային և մտածողական յուրահատկություններով: Ուտեխինի աշխատության մեջ կոմունալ բնակարանները ներկայանում են որպես սոցիալական հանրույթի փոքրիկ մոդել, որի միջոցով հեղինակը վեր է հանում

²⁴ Антипина В., Повседневная жизнь советских писателей 1930–1950 годы, Москва, 2005.

²⁵ Утехин И., Очерки коммунального быта, Москва, О.Г.И., 2004.

խորհրդային ստալինյան ժամանակաշրջանի առօրեականության ցավոտ կողմերը:

Ամփոփելով՝ նշենք, որ արդի ռուսաստանյան պատմագիտության մեջ խորհրդային առօրեականության պատմության ուսումնասիրությունները շարունակում են արդիական մնալ՝ ընդգրկելով նոր հիմնախնդիրներ, նոր մոտեցումներ, սոցիալական պատմության բովանդակության նորանոր մեկնաբանություններ: Հնարավորություն չունենալով խոսել բոլոր հետազոտողների մասին՝ այս ուղղությամբ հետազոտությունների շարունակականությունը խիստ կարևորում ենք՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Խորհրդային Միության մի մասն էլ կազմել է Խորհրդային Հայաստանը և ազգային առանձնահատկությունների համատեքստում խորհրդային առօրեականության հայաստանյան հետազոտությունների համար չափազանց կարևոր է ռուսական փորձի, առօրեականության պատմության ռուսական դպրոցի ուսումնասիրությունը:

Гагик А. Жамгарян, *Институт истории НАН РА, к.и.н., Советская повседневность времен позднего сталинизма в современной российской историографии.*

В российской историографии изучение советской повседневности началось еще в 1990-ых годах. С тех пор исследования в этом направлении обрели многосторонний характер, охватывая разные аспекты советской социальной истории. В трудах российских специалистов отражены вопросы касающийся не только теоретическому осмыслению предмета истории повседневности, но также и отдельных сторон повседневной жизни граждан в разные периоды советской эпохи. Так, как и по сей день история повседневности является актуальным направле-

нием исторической науки, проблемами которого занимается все больше ученых историков, в данной статье автор освещает исследования лишь некоторых специалистов, которые имеют выдающийся вклад в популяризации этого направления, в определении его основных исследовательских целей, а также основных методологических подходов изучения советской повседневности.

Gagik A. Zhamharyan, *Institute of History of the NAS RA, PhD in History, The History of Soviet Daily Life of Late Stalinism in Modern Russian Historiography.*

The study of Soviet everyday life in Russian historiography began as early as the 1990s. Since then, research in this direction has evolved multilateral character, covering different aspects of the Soviet social history. The works of Russian specialists reflect not only theoretical understanding of the subject matter of daily history, but also individual aspects of the daily life of citizens at different times of the Soviet era. As is the case today, the history of everyday life is the most pressing area of historical science, the problems of concern to more and more scholars of history, in this article the author covers studies of only a few professionals with outstanding knowledge contribution to the promotion of this area, to the definition of its as well as the main methodological approaches studying Soviet everyday life.

ԱՆՆԻ Ա. ՖԻՇԵՆԿԵԱՆ

ԳԱԱ պարամոնության ինստիտուտ, պ.գ.թ.

ՍՈՒՐԻԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ 1988 Թ. ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԷՆ ՏՈՒԺԱԾ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

Քանալի բառեր՝ Սուրիա, սուրիահայություն, Սպիտակի երկրաշարժ, Հայաստանի աղէտնալներու օգնութեան կեդրոնական յանձնախումբ, Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէ, Հայաստանի Օգնութեան Սուրիահայ Կանանց յանձնախումբ

1988 տարին ազգային Զարթօնքի, պայքարի ծաւալման նոր ընթացք առած էր երբ աննախատեսելի աղէտը՝ Դեկտեմբեր 7-ի երկրաշարժը, իր ամբողջ ուժգնութեամբ ցնցեց Հայաստանն ու հայ Սփիւռքը:

Համաշխարհային մակարդակով բարեսիրական ու մարդասիրական կազմակերպութիւններ օգնութեան փութացին առ Հայաստան: Սփիւռքը ոտքի էր. ցաւը՝ անդարման, կորուստը՝ մեծ: «... Երկրաշարժի առաջին իսկ օրից սփիւռքը մէկ մարդու նման ոտքի կանգնեց, դրսեւորեց հայրենիքին անմիջապէս օգնութեան հասնելու, ամէն կերպ նրան սատար լինելու հաստատ վճռականութիւն եւ կեցուածք»¹:

Երկրաշարժի առաջին իսկ օրերուն Հայաստան ժամանեցին արտասահմանէն մասնագէտներ՝ փրկարարներ, բժիշկներ,

¹ «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, 4 հունվար 1989, N 1 (1222), Երևան: Տե՛ս նաեւ՝ Հայաստանի ազգային արխիւ (յետայսու՝ ՀԱԱ), ֆ. 875, ց. 16, գ. 26, թ. 37:

դեղագործներ, սփիւռքահայ հասարակական եւ մշակութային գործիչներ, գործարար շրջանակներու ներկայացուցիչներ, ՀԲԸՄ-ի կեդրոնական վարչութեան փոխնախագահ Լուիզ Սիմոն-Մանուկեան, Ամերիկայի «Հայկական համագումար» կազմակերպութեան նախագահն ու Սփիւռքի ներկայացուցիչները, որոնց կարգին Սուրիայէն՝ Սուրէն Յարութիւնեան եւ ուրիշներ²: Հայաստան ժամանեցին նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Գարեգին Բ., Հայ կաթողիկէ եկեղեցւոյ պատրիարք Յովհաննէս-Պետրոս ԺԸ. Գասպարեանը, թեմակալ առաջնորդներ եւ այլ եկեղեցականներ:

Օգնութեան փութացին նաեւ Հայաստանաբնակ սփիւռքահայ ուսանողները. «Արմենփրես կը յայտնէ, որ Լիբանանէն, Սուրիայէն, Իրանէն սփիւռքի ուսանողներ բեռնակրութիւն կ'ընեն ... օգնելու համար աղէտեալներուն»³:

Սփիւռքի տարածքին արդէն ծաւալած էր օգնութեան հրատապ գործը, որ կը տարուէր ներհայկական եւ միջպետական ճանապարհներով եւ շօշափելի տարողութիւն ստացած էր:

Սուրիահայութիւնը (ազգային կուսակցութիւններ, մշակութային եւ մարզական միութիւններ, դպրոց ու եկեղեցի) եւս, առաջին իսկ օրէն լծուած էր Հայաստանի աղէտեալներու գործին. անմիջական կարիքի՝ պիտոյքներու, հաւաքումը մնայուն լարուածութեան մէջ պահած էր բոլոր շրջանները. ակումբներն ու կեդրոնները խճողուած էին տարբեր տեսակի մթերքներով, հանդերձանքով, որոնք Սուրիոյ պետութեան տրամադրած

² «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, 4 հունվար 1989, N 1 (1222), Երևան:

³ «Արարատ» օրաթերթ, ԾԳ. տարի, թիւ 13847 (48), 12 Յունուար 1989, Պէյրութ:

նպաստին հետ ու անոնց ճամբով մաս առ մաս պիտի ուղարկուէին Երեւան:

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը եւս ձեռնաձալ չմնաց: 11 Դեկտեմբեր 1988թ.-ին Անթիլիասի մայր տաճարի մէջ կաթողիկոսութիւնը խորհրդակցական ժողով գումարեց եւ առաջացուց պատուիրակութիւն մը, որ ՆՍՕՏՏ Գարեգին Բ.-ի հովանաւորութեամբ մեկնեցաւ Հայաստան: Պատուիրակութիւնը այցելեց աղէտի գօտի, հանդիպեցաւ Հայրենի պետական այրերուն եւ խորհրդակցեցաւ ՆՍՕՏՏ Վազգէն Ա. վեհափառ հայրապետի հետ այն միջոցներուն մասին, «որոնցմով միասնաբար եւ համազգային ամբողջական ու անխտրական տարողութեամբ», կարելի պիտի դառնար իրականացնել վերականգնումը աղէտէն քանդուած քաղաքներուն եւ գիւղերուն⁴:

Երկու վեհափառները «Կոչ մեր ժողովուրդին»⁵ հաղորդագրութեամբ հանդէս եկան համայն հայութեան. «Հոգեւոր արիութեամբ ու ազգային համախմբուածութեամբ՝ մէկ սիրտ, մէկ կամք դարձած, կազմակերպուած ու ծրագրուած ձեւով»⁶ շարունակեն իրենց աշխատանքը ամոքելու ցաւը իրենց ազգակիցներուն՝ հանգանակութեամբ նպաստելու կործանուած քաղաքներուն եւ շէնքերուն վերակառուցման աշխատանքին:

ՆՍՕՏՏ Գարեգին Բ. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս իր թեմերու Առաջնորդներուն ուղարկած նամակի մէջ կը յայտնէր

⁴ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, արխիւատուն, Բերիոյ թեմ, (յետայսու ՄՏԿԿԱ ԲԹ), հաւաքածոյ (հ.) 3, ց. 1, թղթ. 39, թ. 94, (համարակալ 444:88 նամակ, Անթիլիաս, 24 Դեկտեմբեր, 1988): (ուղղուած Տ. Սուրբէն արք. Գաթարոյեանին): Տե՛ս նաեւ՝ «Էջմիածին» ամսագիր, ԽԵ. տարի, Նոյեմբեր- Դեկտեմբեր, թիւ 11–12, Էջմիածին, 1988, էջ 24–33: «Վերածնված Հայաստան» հանդես, N 1 (514), Հունվար 1989թ., Երևան, էջ 29:

⁵ Տե՛ս «Բագին», ամսագիր, ԻԸ. տարի, թիւ 1–2, Յունուար-Փետրուար, 1989, Պէյրույթ, էջ 3–5, «Կոչ մեր ժողովուրդին»:

⁶ «Բագին», նոյն տեղը, էջ 4–5:

Վազգէն Ա. վեհափառի յանձնարարութիւնը, որուն համաձայն՝ հանգանակութիւնը կամ նուիրահաւաքը կատարել համազգային, միասնական ոգիով: Շարունակել սկսուած հանգանակութեան գործը եւ հաւաքուած գումարները յանձնել թեմական կառոյցներուն՝ մինչ նոր տնօրինում: Ժամանակաւորապէս հայրենիք չուղարկել աղէտեալներուն օգնութեան համար դեղորայք, սննդեղէն, բժշկական դարմանումի յատուկ գործիքներ, հագուստեղէն, ծմեռային պաշտպանութեան համար ծածկոյթներ՝ բաւարարուելով մինչ այդ ուղարկուած անհրաժեշտ օգնութեամբ հայկական եւ միջազգային կամակերպութիւններու կողմէ⁷:

8 Դեկտեմբեր 1988 թ.-ի երեկոյեան Բերիոյ թեմի առաջնորդ՝ Սուրէն արք. Գաթարոյեան, Յովսէփ արք. Պասմաճեան (կաթողիկէ հայոց առաջնորդ) եւ վերապատուելի Պարգեւ Աբարդեան (աւետարանական համայնքի), Բերիոյ թեմի ազգային իշխանութեան քաղաքական ժողովը, հայկական բարեսիրական, մշակութային, մարզական ու տիկնանց բոլոր կազմակերպութիւնները կը համախմբուին Հալէպի Ազգային Առաջնորդարանի դահլիճը խորհրդակցական հանդիպում ունենալու եւ յանձնախմբային աշխատանքները պատշաճ կերպով կազմակերպելու:

Միասնական էր ողջ հայութիւնը: Բժ. Թորոս Թորանեան կը գրէ. «Այսպիսի միասնականութիւն քիչ անգամ տեսնուած է: Արդեօք, մենք հայերս, միայն ահաւոր դժբախտութեան օրերո՞ւն իրար[ու] մօտ պէտք է ըլլանք»⁸: Կը Կազմուի «Հայաստանի [հայ] աղէտեալներու օգնութեան կեդրոնական յանձնախումբ» մը, որ-

⁷ ՄՏԿԿԱ ԲԹ, հ. 3, ց. 1, թղթ. 39, թ. 95–96:

⁸ **Թորանեան Թորոս**, Սուրիահայութիւնը եւ ... Հայաստանի երկրաշարժը, Պէյրութ, 1990, էջ 15:

պէսզի Հալէպի, Լաթաքիոյ, Քեսապի, Գամիշլիի, Հասաքէի ողջ հայութիւնը մասնակից դարձնեն կազմակերպուելիք ձեռնարկներուն: Յանձնախումբին մաս կը կազմէին իւրաքանչիւր քաղաքական կազմակերպութենէ եւ իւրաքանչիւր յարանուանութենէ մէկական ներկայացուցիչներ⁹. Իսկ նախագահին էր Բերիոյ թեմի Առաջնորդ Սուրէն արք. Գաթարոյեան: Յանձնախումբի կողքին պիտի գործէին ենթայանձնախումբեր՝ տնտեսական, ապրանքներու գնումը կազմակերպելու նուիրահաւաք, հանդերձահաւաք եւ անհրաժեշտ բժշկական, իրեր եւ դեղեր հայթայթելու¹⁰:

Կեդրոնական յանձնախումբի կողմէ կը հրապարկուի կոչ մը, որ կը բովանդակէր աղէտալի երկրաշարժը մանրամասնող տեղեկութիւններ եւ միաժամանակ կը թելադրէր.

ա. Փակել բոլոր հայկական վարժարաններն ու գործատեղիները:

բ. Հայկական եւ քրիստոնէական բոլոր եկեղեցիներուն զանգակները ղողանջել Ուրբաթ առաւօտեան ժամը 10-10.30:

գ. Կիրակի՝ 11 Դեկտեմբեր 1988 թ.-ին հայկական բոլոր եկեղեցիներուն մէջ հոգեհանգստեան արարողութիւն կատարել Հայաստանի աղէտեալներուն հոգիներուն համար:

դ. Առկախել բոլոր պարահանդէսներն ու խրախճանքները մինչեւ 31 Դեկտեմբեր 1988¹¹: «... Փակուեցան հայկական բոլոր վարժարանները, գործատեղիներն ու հաստատութիւնները,- կը գրէ Լեւոն Շառոյեան,- հայկական եւ քրիստոնէական բոլոր եկե-

⁹ ՀԱԱ, ֆ. 875, ց. 15, գ. 226, թ. 8:

¹⁰ «Ազդակ» օրաթերթ, ԿԲ. տարի, թիւ 244 (17201), 29 Դեկտեմբեր 1988, Պէյրութ:

¹¹ Նոյն տեղը: Տե՛ս նաեւ Թորանեան Թորոս, նշվ. աշխ., էջ 54–55:

ղեցիներու զանգերը կը ղօղանջէին Ուրբաթ առաւօտ, կ'առկախուէին բոլոր պարահանդէսներն ու խրախճանքները»¹²:

Անսալով զոյգ վեհափառներու կոչին նուիրահաւաքի եւ կազմակերպչական աշխատանքներուն, երէցներու կողքին իրենց մասնակցութիւնը բերաւ նաեւ նոր սերունդը:

8 Դեկտեմբեր 1988 թ.-ին նոյն նպատակով, Դամասկոսի հայոց առաջնորդարանի Ազգային քաղաքական ժողովի կողմէ կը հրապարկուի «Կոչ դամասկահայութեան», որ կը թելադրէր՝ սուգ 9–10 Դեկտեմբերը, հոգեհանգստան պաշտօն կատարել զոհուածներուն, դադրեցնել «ամէն տեսակի հրապարակային եւ ոչ մշակութային ձեռնարկներն ու խրախճանքները»¹³: Համայնքի նախաձեռնութեամբ կ'առաջանայ «Հայրենի աղէտեալներուն օգնութեան մարմին»¹⁴, որ նախօրօք կատարուած պայմանաւորուածութեան հիման վրայ հանդիպում կ'ունենայ Սուրիոյ Արաբական Հանրապետութեան վարչապետի հետ. «Այս հանդիպումը տեղի կ'ունենայ Սուրիոյ հանրապետութեան նախագահ Հաֆէզ ալ-Ասատի անմիջական ցուցմունքներով եւ հովանաւորութեամբ»¹⁵: «Հայրենի աղէտեալներուն օգնութեան մարմին»-ը հանդիպում կ'ունենայ երկրի փոխ նախագահի դոկտ. Մուհամմետ Ջուհէյր Մշարքայի հետ, ուր Դամասկոսի համայնքը իր պատրաստակամութիւնը կը յայտնէ ծրագրուած օժանդակութիւններու իր աջակցութիւնը:

¹² «Յառաջ» օրաթերթ, 64-րդ տարի, թիւ 16.930, 19 Յունուար 1989, Պոսթըն:

¹³ **Թորանեան Թորոս**, նշվ. աշխ., էջ 59:

¹⁴ **Թորանեան Թորոս**, նշվ. աշխ., էջ 60: Պէյրութի «Արարատ» օրաթերթի թղթակիցը Դամասկահայ «Հայրենի աղէտեալներուն օգնութեան մարմին»-ի փոխարէն կը յիշէ «Հայաստանի օգնութեան դամասկահայ յանձնաժողով». խօսքը նոյն յանձնաժողովի մասին է տարբեր անուանումներով: Տե՛ս «Արարատ» օրաթերթ, ԾԳ. տարի, թիւ 13846 (47), 11 Յունուար 1989, Պէյրութ, էջ 3:

¹⁵ **Թորանեան Թորոս**, նոյն տեղը:

Արաբական «Պաաս» ընկերվար կուսակցության բիրտն եւս կազմած էր «կեդրոնական հանգանակիչ վերին մարմին մը» դոկտ. Մուհամմէտ Զուհէյր Մշարքայի նախագահութեամբ¹⁶:

Հոմասահայ փոքրաթիւ համայնքը նոյնպէս Ս. Մեսրոպ եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր Ս.Պատարագ կը մատուցէ Հայաստանի աղէտի զոհերու յիշատակին նուիրուած (քարոզով հանդէս կու գայ Տ. Արարատ վրդ. Գալթաքճեանը)¹⁷:

Դամասկոսի թեմի առաջնորդ Տ. Ոսկան եպս.Գալփաքեան, թեմի անդամներէն ոմանց հետ աղէտէն ետք կ'այցելէ Հայրենիք եւ ականատես կ'ըլլայ «սրտակեղէք» տեսարաններուն: Առաջնորդը խօսելով Սուրիոյ հայ համայնքի ցուցաբերած օժանդակութեան մասին կը փոխանցէ, թէ «արդէն տասներորդ ինքնաթիռն է, որ սիրիաբնակ հայերը ուղարկում են իրենց եղբայրներին»¹⁸: Առաջնորդը անդրադառնալով Սուրիոյ նախագահի Հաֆէզ ալ-Ասատի ընծեռած հնարաւորութիւններուն կ'ընդգծէ՝ «Պրեզիդենտի յատուկ որոշմամբ մեզ հնարաւորութիւն է ընծեռուած ցանկացած ժամանակ անվճար օգտուել ատոտրանպորտից եւ Սիրիայի աւիաընկերութեան ինքնաթիռներից»¹⁹: Այս մասին կ'անդրադառնան Դամասկոսի ազգայիններէն Նուպար Մելիքեանն ու Սարգիս Քէշիշեանը²⁰ 1989թ.-ի գարնան, երբ յա-

¹⁶ «Ազդակ» օրաթերթ, ԿԲ. տարի, թիւ 244 (17201) 29 Դեկտեմբեր 1988, Պէյրութ, էջ 3:

¹⁷ «Արարատ» օրաթերթ, ԾԳ. տարի, թիւ 13846 (47), 11 Յունուար 1989, Պէյրութ, էջ 3:

¹⁸ «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, 13 դեկտեմբեր 1989, N 50 (1271), Երևան, էջ 7:

¹⁹ Նոյն տեղը:

²⁰ Նուպար Մելիքեան կը ներկայացնէր Սուրիոյ Համագգային մշակութային միութեան Դամասկոսի շրջանային վարչութիւնը: Սարգիս Քէշիշեան՝ Դամասկոսի Հայ կաթողիկէ համայնքը: Քէշիշեանի խումբը կը բաղկանար 6 անձերէ՝ Սուրէն Այոխեան (ՀԲԸՄ), Ժիրայր Գրիգորեան (Թեքեան մշակութային միութիւն), Ասատուր Հալուկեան (Նոր Սերունդ մշակութային միութիւն), Մանուկ Պալեան

տուկ առաքելութեամբ կը գտնուէին Երեւան. «8-ը յունուարի, 10 հոգի յանձնախումբով, ներկայացանք նախագահին (խօսքը Սուրիոյ նախագահի մասին է **Ա.Ֆ.**): Հոն տրուեցաւ մեր ըրածներու մանրակրկիտ զեկուցումը եւ մեր գաղութի շնորհակալական խօսքը կառավարութեան»²¹:

Սուրիոյ Նախագահ Հաֆէզ ակ-Ասատ, անդրադառնալով հայ ժողովուրդի զարթօնքին ու 1988 թ.-ի աղէտին այսպէս կ'արտայայտուի. «Հայը ամէն տեղ ներկայացուցիչներ ունի, ասորը շնորհիւ աշխարհի բոլոր ժողովուրդները ձեզի կը հասնին: ...Մի մտահոգուիք, եթէ որեւէ ժամանակ, որեւէ օգնութեան կարիք պիտի ունենաք ձեր արինակիցներու համար, դիմեցէք ինձի, դիմեցէք որեւէ նախարարի, որովհետեւ ձեզի կը սիրեն, չեն մերժեր ձեր խնդիրքները»²²:

Սուրիահայ պատուիրակութիւնը հանդիպում կ'ունենայ նաեւ պետական մարմիններուն հետ, որուն իբրեւ արդիւնք կը ստորագրուի համաձայնագիր՝ աղէտեալներուն համար կառուցուելիք բնակարաններու ներքին կահաւորումներու վերաբերեալ²³:

11 Դեկտեմբեր 1988 թ.-ին Դամասկոսէն Հալէպ կը ժամանեն սովետական դեսպանատան հայ կցորդը՝ Մարտին Շահնազարեանն ու Դամասկոսի ազգայիններէն Սուրէն Յարութիւնեանը՝ խորհրդակցելու Սրբազան հօր եւ Կեդրոնական մարմինին հետ²⁴:

(Յառաջդիմական միութիւն): Տե՛ս «Վերածնված Հայաստան» հանդես, N 6 (519), Հունիս 1989թ., Երևան, էջ 24:

²¹ «Վերածնված Հայաստան» հանդես, N 6 (519), Հունիս 1989 թ., Երևան, էջ 26:

²² Նոյն տեղը, էջ 26:

²³ Նոյն տեղը, էջ 24:

²⁴ «Ազդակ» օրաթերթ, ԿԲ. տարի, թիւ 244 (17201) 29 Դեկտեմբեր 1988, Պէյրութ, էջ 3:

Բերիոյ հայոց թեմի առաջնորդարանը, հայկական եկեղեցիները, մշակութային միութեանց բոլոր կեդրոնները նուիրահաւաքման աշխատանքներուն վայր դարձած էին: «... լծուեցան նուիրահաւաքի աշխատանքին եւ սկսան շրջիլ թաղ առ թաղ, այցելել հայկական բոլոր տուները եւ հաւաքել մեր ժողովուրդին լիաբուռն նուէրները»²⁵:

Այնուամենայնիւ, հանդերձահաւաքման եւ նուիրահաւաքման գլխաւոր կեդրոնը Հալէպ քաղաքի նորակառոյց ՀԱՅ ԿԵԴՐՈՆՆ էր, որ կ'անուանուէր Արամ Մանուկեան ժողովրդային տուն: Արամ Մանուկեան Հայ Տունը կեդրոն հանդիսացած էր Հալէպէն, Գամիշլիէն, Լաթաքիայէն, Ռազզայէն, Քեսապէն, Եագուպիէն, Տէր Զօրէն, Հոմսէն եւ Ճէզիրէի այլ շրջաններու հայութեան կողմէ առաքուած հանդերձանքին եւ այլ պիտոյքներու մթերման:

Սուրիոյ իշխանութիւնը, որ դիւանագիտական, մշակութային եւ տնտեսական կապեր ունէր Խորհրդային Միութեան հետ ոչ միայն իր ցաւակցութիւնը կը յայտնէ Հայաստանի եւ Խորհրդային Միութեան ղեկավարութեան, այլեւ նուիրահաւաքման աշխատանքին նուէրներով մեծապէս կ'օժանդակէ Հայաստանի աղէտեալներուն: Սուրիական կառավարութեան որոշումով ծնունդ կ'առնէ «Հայաստանի ժողովուրդին օգնելու վերին յանձնաժողով»²⁶, որ Սուրիոյ բոլոր նահանգներուն մէջ կ'ունենայ իրեն ենթակայ մասնաճիւղային յանձնախումբեր եւ տեղական թերթերու մէջ հրապարակուած կոչով տեղացի արաբ ժողովուրդը կը հրաւիրէ հանգանակութեան եւ նուիրահաւաքի: Դեկտեմբեր 13-ին Սուրիոյ կառավարութեան առաջին օժանդակութիւնը, 2 բեռ-

²⁵ «Յառաջ» օրաթերթ, 64-րդ տարի, թիւ 16.930, 19 Յունուար 1989, Պոսթըն:

²⁶ Նոյն տեղը:

նատար օդանավ Դամասկոսէն կ'առաքուի Հայաստան: Սուրիական կառավարութեան թոյլտուութեամբ Դեկտեմբեր 15-ին երկու բեռնատար օդանավ կ'ուղարկուի Երեւան: «Ռրպէս անմիջական օգնութիւն, սուրիական կառավարութիւնը երկու օրուան ընթացքին Հայաստան ուղարկեց 4 բեռնատար օդանաւեր մօտ 200 թոն դեղեր, ծածկոցներ, բրդեղէն, սննդամթերք եւ դաշտային հիւանդանոցի կազմաձեւեր»²⁷:

Սուրիոյ կառավարութեան եւ արաբ ժողովուրդի անսակարկ մարդասիրական օժանդակութիւնը բարձր կը գնահատուի Հայաստանի ժողովուրդի եւ իշխանութեան կողմէ ու առ ի երախտագիտութիւն 1995 թ.-ին նախագահական հրամանագիրով Երեւանի լաւագոյն կառոյցներէն մէկը կը տրամադրուի որպէս դեսպանատուն Սուրիոյ Արաբական Հանրապետութեան²⁸:

Ափիոքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի Արեւելեան երկիրներու բաժինի վարիչ՝ Լ. Գասպարեան Արեւելեան երկիրներու հայ համայնքներու օգնութեան մասին համառօտ տեղեկութեամբ կ'անդրադառնայ նաեւ Սուրիոյ հայ համայնքին ուր կը յայտնէ, որ համայնքը կառավարութեան հետ համատեղ օժանդակութիւն առաքած է աղէտեալներուն, «որոնք «Զուարթնոց» հասած են երկու օդանաւերով»²⁹: «Ալիք» օրաթերթը եւս անդրադառնալով սուրիական պետութեան մարդասիրական օժանդակութեան կը գրէ. «Սիւրիայից երեքշաբթի օրը, երկու օդանաւեր են առաքել Հայաստան, երկրաշարժի աղէտեալ-

²⁷ Նոյն տեղը:

²⁸ بولاديان أرشاك، العلاقات الأرمنية-السورية شراكة تاريخية بمناسبة مرور ٢٥ عاما على إقامة العلاقات الدبلوماسية، دمشق-٢٠١٧، ص ٩٣ .

(Փոլտեան Արշակ, Ալ-աալալաթ ալ-ալմանիէ-ալ-սուրիէ շարաքէ թարիիսիէ պի մունասապադ մրուր 25 աաման ալա իկամէթ ալ-ալակալթ ալ-տիպլումասիէ, Դամասկոս, 2017, էջ 93):

²⁹ «Յառաջ» օրաթերթ, 64-րդ տարի, թիւ 16.933, 24 Յունուար 1989, Պոսթըն:

ներին պետք եղած ապրանքներով բեռնաւորած»³⁰: Դամասկոսէն Նուպար Մելիքեան «Վերածնված Հայաստան» հանդէսի թղթակիցին, Երեւան, կը յայտնէ որ 1988 թ.-ի Դեկտեմբերէն մինչեւ 1989 թ.-ի Յունիս ամիս Սուրիայէն ուղարկուած են 14 ինքնաթիռ, որմէ 6-ը սուրիահայ համայնքի կողմէ է: «Փետրուարի 2-ին դարձեալ հոս էինք, զինուորական ինքնաթիռով ապրանք բերած էինք, յանձնեցինք Սփիւքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի տնօրինութեան»³¹: Այս օժանդակութիւններուն մաս կը կազմէին դեղորայք, ծածկոց, հագուստեղէն եւ այլ պիտոյքներ: Օդանաւի թռիչքի ժամանակ օդանաւակայան եկած են Սուրիոյ նախագահի փոխանորդը, որ միեւնոյն ժամանակ Սուրիոյ օժանդակութիւնները հաւաքող յանձնախումբի պատասխանատուն էր:

Հայ ժողովուրդին իրենց վշտակցութիւնը յայտնելու համար Բերիոյ թեմի Ազգային Առաջնորդարան³² եւ Դամասկոսի հայոց առաջնորդարան³³ կ'այցելէին պետական աւագանին, Իսլամ համայնքի կալուածոցի (Վազըֆի) տնօրէնը, Հալէպի բոլոր օտար պատուոյ հիւպատոսները (դանիական, շուէտական, պելճիքական, աւստրիական, յունական), քրիստոնեայ համայնքապետերը, պաղեստինեան կազմակերպութիւններ, բարեսիրական միութիւններ եւ այլն³⁴:

³⁰ «Ալիք» օրաթերթ, 58-րդ տարի, թիւ 269 (14.824), 14 Դեկտեմբեր 1988, Թեհրան:

³¹ Նոյն տեղը:

³² «Վերածնված Հայաստան» հանդէս, N 6 (519), Հունիս 1989, Երեւան, էջ 24:

³³ «Արարատ» օրաթերթ, ԾԳ. տարի, թիւ 13846 (47), 11 Յունուար 1989, Պէյրութ, էջ 3:

³⁴ «Վերածնված Հայաստան» հանդէս, N 6 (519), Հունիս 1989 թ., Երեւան, էջ 24:

Հալէպի հայ աւետարանական երեք եկեղեցիներուն մէջ՝ Հայ աւետարանական Էմմանուէլ, Նահատակաց եւ Բեթէլ, տեղի ունեցած են միջոցառումներ նուիրուած Հայաստանի երկրաշարժի զոհերուն յիշատակին, ուր բանախօսութեամբ հանդէս եկած են հանրաճանաչ մտաւորականներ եւ աւետարանական համայնքի ներկայացուցիչներ: Համայնքի անդամներու հրամայական պահանջքն էր ծրագրել յատուկ համահաւաք նուիրուած հայրենիքի աղէտեալներուն, որու նպատակն էր հանդերձահաւաքի եւ նուիրահաւաքի աշխատանքով նպաստել անօթեան հայրենակիցներուն³⁵:

Արդարեւ, 1988 թ.-ի Դեկտեմբերի կէսէն մինչեւ 1989 թ. Յունուար Հայաստան կ'ուղարկուի ութ «ապրանքատար հսկայ», իւրաքանչիւրը 40 թոն ապրանքով, որմէ հինգը սուրիական պետութեան կողմէ, երկուքը՝ հալէպահայութեան եւ մէկը դամասկահայութեան կողմէ³⁶:

Հետաքրքիր է այն փաստը, որ Պաղեստինի Ազատագրութեան Դեմոկրատական ճակատի ներկայացուցիչները եւս արեան տուչութեան ճանապարհով իրենց աջակցութիւնը յայտնած էին Հալէպի Ազգային Մշակութային միութեան վարչութեան՝ «տրամադրելու մարդկային արին եւ զայն ղրկելու Հայաստան եթէ նման օգնութեան»³⁷ կարիքը անհրաժեշտ է: Այս մասին Ազգային Մշակութային միութեան վարչութիւնը 22 Յունուար 1989 թուակիր նամակով կը տեղեկացնէ Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի նախագահ Կարլէն

³⁵ «Ջանաւեր» ամսաթերթ, ԾԲ. տարի, թիւ 1, Յունուար 1989, Պէյրութ, էջ 19–21:

³⁶ «Արարատ» օրաթերթ, ԾԳ. տարի, թիւ 13846 (47), 11 Յունուար 1989, Պէյրութ, էջ 3:

³⁷ ՀԱԱ, ֆ. 875, ց. 15, գ. 10, թ. 22:

Դալլաքեանին: Վերջինս իր պատասխան նամակին մէջ ուղղուած Ազգային Մշակութային միութեան վարչութեան շնորհակալութիւն կը յայտնէ Պաղեստինի Ազատագրութեան Դեմոկրատական ճակատի ներկայացուցիչներուն եւ կը փոխանցէ, որ «այժմ նման օգնութեան կարիքը չի զգացուում»³⁸:

10 Փետրուար 1989 թ.-ին Դամասկոսի ՀԲԸՄ-ի ՀԵԸ-ի գործադիր մարմինը նամակով կը դիմէ Կարլէն Դալլաքեանին՝ խնդրելով որ Դամասկոսի հայ համայնքը տեղեակ ըլլայ «Համազգային մեծ աղէտի՝ երկրաշարժի պատճառած վնասներուն, հետեանքներուն եւ այլ մանրամասնութեանց»³⁹ մասին, միաժամանակ յառաջիկայ շաբաթներու ընթացքին կոմիտէի կողմէ նշանակուած պատասխանատու մը ուղարկել Դամասկոս «սպառնալիչ լուսաբանութիւն տալու» համայնքի հասարակութեան⁴⁰:

9 Փետրուար 1989 թ.-ին Սուրիոյ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Շրջանային վարչութեան անդամներէն բժ. Ատանալեան, Լեւոն Գասպարեանին ուղարկած նամակով կը տեղեկացնէր 8 Դեկտեմբեր 1988 թ.-ին Հալէպի մէջ յառաջացած «Հայաստանի երկրաշարժի աղէտեալներու օգնութեան կեդրոնական» մարմինի մասին: Ատանալեան կը վկայէ որ ողջ սուրիահայութիւնը «առանց վերապահութեան, մեծ նուիրումով մասնակցեցաւ հանգանակութեան աշխատանքին.»⁴¹: Ան կը յայտնէ, որ Հայաստան ուղարկուած օգնութենէն բացի, հանգանակութենէն որոշ գումար մը աւելցած է եւ որովհետեւ «մենք փող չենք կարող փոխադրել, քանի որ Սուրիական օրէնք-

³⁸ Նոյն տեղը, թ. 21:

³⁹ Նոյն տեղը, գ. 226, թ. 1:

⁴⁰ Նոյն տեղը, թ. 1:

⁴¹ Նոյն տեղը, թ. 8:

ները արգելում են, եւ խիստ պատիժներու ենթակայ»⁴² ուստի կը մտածեն համագաղութային միասնական ձեռնարկներով աւելցնել այդ գումարը եւ Կոմիտէի հետ խորհրդակցաբար զանոնք յատկացնել վերաշինութեան գործին: Այս առնչութեամբ Կեդրոնական յանձնախումբը կը մտածէ 1989 թ.-ին աշնան խումբ մը արուեստագէտներ հրաւիրել Հալէպ, զանազան ձեռնարկներով հանդէս գալու, որուն եկամուտը պիտի ուղարկուէր վերաշինութեան գործին⁴³:

1989 թ.-ի Ապրիլ 2–10 հայ աւետարանական համայնքէն պատուիրակութիւն մը կ'այցելէ Հայաստան՝ մօտէն ծանօթանալու երկրաշարժի պատճառած աղէտին եւ տեղեակ ըլլալու վերապորոշներու կարիքներուն⁴⁴:

8 Յունուար 1989 թ.-ին սուրիահայութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը առաջնորդութեամբ Սուրէն արք. Գաթարոյեանի Բերիոյ եւ Ոսկան եպս. Գալբագեանի Դամասկոսի թեմերու Առաջնորդներու, Գէորգ. ծ. վրդ. Թայրոյեանի հայ կաթողիկէ պատրիարքութեան Դամասկոսի փոխանորդի եւ պետական երեսփոխան՝ իրաւաբան Գրիգոր Էպիփղաթեանի, Ազգային Իշխանութեան անդամներու, կը ներկայանայ Սուրիոյ նախագահին իր երախտագիտութիւնն ու շնորհակալութիւնը յայտնելու նախագահի թոյլտուութեամբ եւ բարձր տնօրինութեամբ կատարուած աշխատանքներուն, զորս ցուցաբերեցին աղէտեալ հայ ժողովուրդին իրենց արհաւիրքի օրերուն: «... այդ դիրութեանց ընծայումներէն մէկն է բեռնատար վեց օդանաւեր, որոնք սուրիահայութեան օժանդակութիւնները ձրիօրէն Հայաս-

⁴² Նոյն տեղը, թ. 9:

⁴³ Նոյն տեղը, թ. 9:

⁴⁴ «Ջանաւէր» ամսաթերթ, ԾԲ. տարի, Մայիս 1989, թիւ 5, էջ 112:

տան փոխադրեցին»⁴⁵: Պատուիրակութիւնը Նախագահին կը փոխանցէ Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետներու շնորհակալական եւ երախտագիտական խօսքերը, ուր ըստած է. «Սիրոյ, շնորհակալութեան, երախտագիտութեան անկեղծ զգացումները այն հայրական հոգատարութեան, զօրակցութեան եւ մեծագումար օժանդակութեանց համար, որ սուրիական իշխանութիւնը շուտափոյթ փոխանցեց Հայաստանի մեր ժողովուրդին, Մայր Հայրենիքը հարուածող աղէտին յաջորդող քանի մը օրերուն ընթացքին, եւ բացառիկ այն թոյլտուութեան համար, որոնց շնորհիւ սուրիահայութիւնը հնարաւորութիւն ունեցաւ իր նպաստը բերելու Հայրենիքի աղէտեալ մեր քոյրերուն եւ եղբայրներուն»⁴⁶: Նախագահը իր կարգին ջերմ, բարեկամական զգացումները կը յայտնէ, զորս կը տածէ հայութեան հանդէպ: Կ'անդրադառնայ դէպի Հայաստան իր այցելութեան մասին եւ կ'արտայայտուի, որ «այն սրտաբուխ եւ անկեղծ ընդունելութիւնը, որուն արժանացած էր պահ մը մտածել տուած էր, որ ինք կը գտնուէր Հալէպ քաղաքի ջերմութեան մէջ՝ շրջապատուած սուրիացիներով»⁴⁷:

Արդ, միայն հալէպահայութիւնը իր անձնական նախաձեռնութեամբ Երեւան կ'առաքէ սուրիական երկու օդանաւ, բեռնաւորուած 80 թոն՝ դեղորայք, բժշկական գործիքներ, ելեկտրական շարժակներ, բրդեղէն գուլպաներ, ներքնագգեստ, կօշիկ եւ

⁴⁵ «Ազդակ» օրաթերթ, ԿԲ. տարի, թիւ 266 (17223) 25 Յունուար 1989, Պէյրութ:

⁴⁶ ՄՏԿԿԱ ԲԹ, հ. 3, ց. 1, թղթ. 39, թերթ 88, 89:

⁴⁷ «Ազդակ» օրաթերթ, ԿԲ. տարի, թիւ 266 (17223) 25 Յունուար 1989, Պէյրութ:

այլն: Դամասկոսի հայութիւնը եւս Յունուար 1989 թ.-ին կ'առաքէ իր առաջին օդանաւը⁴⁸:

19 Յունուար 1989 թ.-ին Դամասկոսի մէջ «Նորութիւններ» մամուլի գործակալութեան եւ Սուրիոյ հայ համայնքի ներկայացուցիչներու նախաձեռնութեամբ բացում կը կատարուի Հայաստանի աղէտալի երկրաշարժը արտացոլող 63 լուսանկարներու ցուցահանդէսին: Միջոցառման ներկայ կ'ըլլան Սուրիոյ մշակութի նախարար Նաճահ ալ-Աթթար, Դամասկոսի եւ Յունաստանի հայոց թեմի առաջնորդ Ոսկան եպս. Գալիաքեան եւ Սուրիոյ հասարակութեան ներկայացուցիչները: ԹԱՍՍ-ի թղթակիցին հետ զրոյցի ընթացքին Սրբազանը կը յայտնէ, որ Սուրիոյ մէջ բնակող ողջ ժողովուրդը, անկախ կրօնքի կամ դաւանանքի, մասնակցած է աղէտեալներուն համար կազմակերպուած հանգանակութեան: «Մեր մարդկային պարտքն է թերթեացնել երկրաշարժից տուժածների վիշտը, որոնք կորցրել են իրենց հարազատներին ու բարեկամներին ...»: Հանդիպման ընթացքին Սրբազանը թղթակիցին կը յայտնէ որ մինչ սոյն թուականը աղէտեալներուն համար Սուրիայէն Հայաստան ուղարկուած է «40-ական տոննա պարենամթերք, դեղորայք, հագուստ, ծածկոցներ ...»՝ նպաստելու քաղաքներու եւ գիւղերու վերածնման աշխատանքներուն: «Վերջին ինքնաթիռը Սիրիայից Հայաստան ուղարկուեց վեց օր առաջ»: Եպիսկոպոսը փափաք կը յայտնէ որ լուսանկարները ցուցադրուին ոչ միայն Դամասկոսի, այլ նաեւ Հալէպի եւ Յունաստանի հայ եկեղեցիներուն մէջ⁴⁹:

⁴⁸ «Ազդակ» օրաթերթ, ԿԲ. տարի, թիւ 244 (17201) 29 Դեկտեմբեր 1988, Պէյրութ:

⁴⁹ «Սովետական Ղարաբաղ» օրաթերթ, N 18 (15414), 21 հունվարի 1989, էջ 3:

1989 թ. Ապրիլ 21-էն 29-ը Ամենայն Հայոց Կաթողիկոս ՆՍՕՏՏ Վազգէն Ա.-ի հրաւերով Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան շքախումբը, ՆՍՕՏՏ Գարեգին Ա. Վեհափառի հովանաւորութեամբ կը գտնուի Հայաստան: Այդ շքախումբին մաս կը կազմէր Բերիոյ թեմի Առաջնորդ Սուրէն արք. Գաթարոյեան:

Այդ այցելութեան գլխաւոր նպատակներէն էր մօտէն տեղեկանալ Լենինականի երկրաշարժէն աղէտեալ եւ ւերեալ քաղաքներուն եւ գիւղերուն վերաշինութեան եւ ժողովուրդի վերականգնումի աշխատանքներուն ու գործնական գետնի վրայ Հայաստանի պետական իշխանութեանց հետ ծրագրել Կիլիկեան կաթողիկոսութեան կողմէ իրականցուելիք ծրագիրները: Կաթողիկոսի շքախումբը հանդիպում կ'ունենայ Երեւանի մէջ Վարչապետի տեղակալի եւ անոր օգնականներուն հետ, որոնց հիմնական առաքելութիւնն էր զբաղիլ վերաշինութեան եւ վերականգնումի յատուկ գործերով:

Վերադարձին, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը այս մասին կը տեղեկացնէ իր թեմերուն՝ միաժամանակ յանձնարարելով «թեմի մասնայատուկ պայմաններու լոյսին տակ, ընծայելու համար Ձեր թեմի մասնակցութիւնը եւ բերելու Ձեր թեմի օժանդակութիւնը, միշտ տեղեակ պահելով մեզ այս ուղղութեամբ ձեր կատարած եւ կատարելիք աշխատանքներուն մասին»⁵⁰: Կաթողիկոսութիւնը հետեւեալ ցուցմունքները կը հաղորդէ իր թեմերուն.

«ա.-Անմիջական փութով սատարել ժամանակաւոր բնակարաններու (prefabricated) հայթայթման կամ կառուցման, աղէտեալ շրջաններու՝ Լենինականի, Ստեփանաւանի կամ Սպիտա-

⁵⁰ ՄՏԿԿԱ ԲԹ, հ. 3, ց. 1, թղթ. 40, թ. 20:

կի եւ այլ գիւղական շրջաններու մէջ, որովհետեւ զգացինք ու հաստատեցինք, որ մինչեւ յառաջիկայ ծմեռ հարկ է որ ապահովուին բնակարանային պայմաններ, որպէսզի աղէտեալ շրջանի հայութիւնը մնայ այդ շրջաններուն մէջ եւ չցրուին չորս դին Հայաստանի կամ Խորհրդային Միութեան այլ հանրապետութիւններու տարածքին վրայ: Ասիկա անմիջական նշանակութիւն ունի, որովհետեւ իմացանք որ բաւական թիւով հայեր արդէն հեռացած են շրջաններէն: Մեզի համար ցաւալի է տեսնել որ հայ դպրոցական մանուկներ պարտէզի մէջ հաստատուած վրաններու տակ կը յաճախէին դպրոց, Լենինականի մէջ:

բ.-Ուժ տալ դպրոցական եւ հանրային սպասարկութեան կոչուած այլ հաստատութիւններու սարքաւորումներուն, արդիական օգտաշատ արհեստագիտական (Թէքնոլոճիքըլ) տուեալներով ձեռք բերուած:

գ.-Սատարել փոքր գործարաններու, աշխատանոցներու հաստատման եւ սարքաւորման, որպէսզի արդիաբերական գործունէութիւնը զարգանայ Հայաստանի մէջ, յատկապէս Ստեփանաւանի եւ այլ շրջաններու մէջ»⁵¹:

Երկրաշարժի աղէտեալներուն համար հանգանակուած գումարին մնացեալ մասը Բերիոյ թեմի Ազգային վարչութեան խնդրանքով կը յանձնուի Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին, որ իր կարգին կը փոխանցէ Հայաստան Համահայկական հիմնադրամին՝ աղէտի գօտիի օժանդակութեան ծրագիրին: Ծրագիրը ի գործ կը դրուի «Գիւմրիի մէջ ամբողջացնել կառուցումը երկու բնակարային շէնքերու»⁵²: Բերիոյ թեմի հայ համայնքի աջակցութեամբ Գիւմրիի «ԱՆԻ» եւ «ՄՈՒՇ» թաղամասերու անօ-

⁵¹ ՄՏԿԿԱ ԲԹ, հ. 3, ց. 1, թղթ. 40, թ. 20 շրջ.:

⁵² «Գանձասար» բացառիկ, 1997, Հալէպ, էջ 10:

թեւան ընտանիքներու շարք մը բնակելի շէնքերու կառուցումը կը կատարուի⁵³:

1997 թ. Հոկտեմբերի կիսուն Հայաստան համահայկական հիմնադրամի իրագործումով, կառուցապատման ծրագիրը կը հասնի աւարտին եւ հիմնադրամի տնօրէնի հրաւերով Բերիոյ թեմի Առաջնորդ՝ Սուրէն արք. Գաթարոյեան ներկայ կը գտնուի կառուցուած 28 բնակարաններու յանձնման արարողութեան: 28 բնակարաններու մուտքերու վրայ կար հետեւեալ յիշատակութիւնը. «Նուէր Բերիոյ թեմի ազգ. առաջնորդարանի եւ Ժողովուրդի անունից»⁵⁴:

Երկրաշարժի աղէտեալ շրջաններու վերակառուցման ֆոնտին իր բարեգործական մասնակցութիւնը կը բերէ Հալէպի Ս. Գէորգ եկեղեցւոյ «Նանոր» երգչախումբը Յարութին Կէնտիմեանի խմբավարութեամբ⁵⁵:

Երկրաշարժի օրերուն սփիւռքահայ կանայք անկախ յանձնախումբեր կազմելով ձեռնամուխ եղան հայրենիքին օգնելու աշխատանքներուն: Ինչպէս Սփիւքի այլ համայնքներու, այնպէս ալ Սուրիոյ, Դամասկոսի մէջ, 1990 թ. Սեպտեմբեր 15-ին ծնունդ կ'առնէ «Հայաստանի Օգնութեան Սուրիահայ Կանանց Յանձնախումբ»ը, որ արգասիքն է 1987 թ.-ի Սեպտեմբերին Երեւանի մէջ կայացած հայ կանանց տասնօրեայ Ա. համագումարին ահագանգային կոչին⁵⁶: Յանձնախումբը բաղկացած էր Հալէպի եւ Դամասկոսի մշակութային, բարեսիրական եւ եկեղեցական 15

⁵³ «Գանձասար» բացառիկ, նոյն տեղը: Տե՛ս նաեւ՝ Պետրոսյան Ք., Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1988–2001 թթ., Երևան, 2011, էջ 68:

⁵⁴ «Գանձասար» բացառիկ, նոյն տեղը:

⁵⁵ ՀԱԱ, ֆ. 875, ց. 15, գ. 10, թ. 7:

⁵⁶ «Արարատ» օրաթերթ, 54-րդ տարի, թիւ 14270 (15), 25 Դեկտեմբեր 1990, Պէյրութ, էջ 3:

միութիւններու կին ներկայացուցիչներէ եւ յիշեալ համայնքներու կին մտաւորականներէ, որոնց գլխաւոր նպատակն էր.

ա- Համազգային միասնականութեան, միատարութեան եւ համագործակցութեան հրամայական անհրաժեշտութեան բարձրորակ դրսեւորում:

բ- Հոգեմտաւոր թռիչքի անբեկանելի սլացք:

գ- Հայրենանուէր աշխատանքի գիտակից պատրաստակամութիւն⁵⁷:

24 Սեպտեմբեր 1990 թ.-ին Հալէպի մէջ կայացած հանրաժողովի նպատակն էր փոխանցել Երեւանի մէջ կայանալիք հայ կանանց Բ. հաւաքին նախապատրաստական աշխատանքներուն մասին եւ զանոնք եւս ներգրաւել այդ ազգօգուտ ծառայութեան մէջ:

«Քեզ համար Հայաստան» կարգախօսով Հալէպի մէջ ծնունդ կ'առնէ կանանց յանձնախումբ մը, որ կը վայելէր երեք համայնքապետերու աջակցութիւնն ու հովանաւորութիւնը: Այս կանանց յանձնախումբը առաւել ծանօթ է «Քեզ համար կանանց յանձնախումբ» անունով⁵⁸: Կը յիշատակուի որ «Քեզ համար Հայաստան» անկախ միութիւն կամ յանձնախումբ եղած է «12 հայրենասէր տիկիններէ: Միութիւնը դիմած է Հալէպի մէջ գործող միութիւններուն՝ համագործակցութեան նպատակով, այդ համագործակցութիւնը երկար չէ տեւած: Յանձնախումբը գործած է

⁵⁷ Նոյն տեղը:

⁵⁸ Ազգեզեան Հուրի, Դամասկոսի հայ գաղութի մասին (համառօտ ուրուագիծ), «Հասկ հայագիտական տարեգիրք, նոր շրջան, Ժ. տարի, 2002–2006, էջ 352: 15 Յունուար 1994 թ. «Քեզ համար Հայաստան» Դամասկոսի կանանց յանձնախումբը յատուկ միջոցառումով կը ներկայացնէ անուանի դաշնակահար Վարդան Մամիկոնեանը: Տե՛ս «Չարթօնք» օրաթերթ, ԾԷ. տարի, թիւ 6 (16.507), 12 Յունուար 1994, Պէյրութ:

միայնակ⁵⁹: Սուրիահայ Կանանց յանձնախումբը շարունակելով իր ազգանուէր գործունէութիւնը առաջնահերթ խնդիր համարած է օգնութեան փութալ Արցախի երեխաներուն նաեւ: Այս առումով Հալէպի եւ Դամասկոսի կանանց յանձնախումբերը ձեռնարկած են Արցախի 1–14 տարեկան երեխաներու համար հանդերձահաւաքի եւ նուիրահաւաքի աշխատանքներուն: Կարճ ժամանակուան ընթացքին անոնք հաւաքած են շուրջ «400 քիլո-յէն անելի նոր զգեստ, նոր ներքնազգեստ, այլ եւ այլ առարկաներ՝ զանոնք փութացնելու Արցախի կարօտեալ երեխաներուն»⁶⁰:

Յանձնախումբի կողմէ ապրանքափոխադրութեան եւ Արցախի երեխաներուն յանձնելու համար կ'որոշուի Արցախ ուղարկել Դամասկոսէն Կիւլիզար Օգումուշեան (ՀՄՄ Նոր Սերունդ) եւ Հալէպէն՝ քոյր Թիոպիսթէ Պետրոսեան (Հայ կաթողիկէ համայնքէն), որոնց առաքելութիւնը յաջողութեամբ կը պսակուի⁶¹:

Սուրիահայ Կանանց յանձնախումբը Դամասկոսի եւ Հալէպի մէջ կը կազմակերպէ «Ձեռային աշխատանքներու» ցուցահանդէս մրցոյթ, որոնք գնահատուելով նշանակուած դատական կազմին կողմէ պիտի ուղարկուէին Հայաստան այնտեղ ցուցադրուելու եւ վաճառուելու 1991 թ.-ի Հոկտեմբերին կայանալիք

⁵⁹ Տե՛ս Պաքրիէեան Մարիա, Սուրիահայութեան օժանդակութիւններ երկրաշարժի 1988 թ.- աղէտեալներուն, Հալէպ, 2000 (անտիպ ուսումնասիրութիւն): Տե՛ս նաեւ՝ Ազէզեան Հուրի, Դամասկոսի հայ գաղութի մասին (համառօտ ուրուագիծ), «Հասկ հայագիտական տարեգիրք, նոր շրջան, Ժ. տարի, 2002–2006, էջ 352: 15 Յունուար 1994 թ. «Քեզ համար Հայաստան» Դամասկոսի կանանց յանձնախումբը յատուկ միջոցառումով կը ներկայացնէ անուանի դաշնակահար Վարդան Մամիկոնեանը: Տե՛ս «Չարթօնք» օրաթերթ, ԾԷ. տարի, թիւ 6 (16.507), 12 Յունուար 1994, Պէյրութ:

⁶⁰ «Արարատ» օրաթերթ, 54-րդ տարի, թիւ 14281 (26), 20 Յունուար 1991, Պէյրութ, էջ 3:

⁶¹ Նոյն տեղը:

Սփիւռքահայ Կանանց երկրորդ հաւաքին եւ վաճառքի հասոյթը յատկացնել՝ աղէտեալներու ֆոնտին⁶²:

Սուրիահայ կանանց յանձնախումբը կը գործէ մինչեւ 1994 թ., մինչդեռ Հալէպի յանձնախումբը մինչեւ 2011 թ.:

10 Դեկտեմբեր 1989 թ., Հայաստանի երկրաշարժի Ա. տարելիցի օրերուն, Հալէպ բժ. Ռոպեր Ճեպեճեանի տան մէջ տեղի կ'ունենայ ընկերային հաւաք, ուր ներկայ կը գտնուին հայրենի հիւրեր՝ Երեւանի համալսարանի աստրոֆիզիկայի (astrophysics-աստղաբնագիտութեան) դասախօս փրոֆ.Միքայէլ Ղազարեան⁶³ եւ Երեւանի արեւելագիտութեան ինստիտուտէն գիտութիւններու թեկնածու տիկ. Յասմիկ Մկրտիչեան⁶⁴: Այնտեղ կը ցուցադրուին երկրաշարժին նուիրուած Շարլզ Ազնաւուրի «Քեզ համար, Հայաստան» երգի տեսաներիզները: Հաւաքի ընթացքին տիկ. Լուիզ Ճեպեճեանի կողմէ կ'ընթերցուի «Հայրենիքի Ձայնին» մէջ լոյս տեսած «Բարի երթ Ամարասին» յօդուածը: «Ամարաս»-ը՝ Լեռնային Ղարաբաղի բարեգործական կազմակերպութիւնը հիմնուած էր 1989 թ.-ի Մարտ 5-ին⁶⁵ Ստեփանակերտի մէջ: Հասարակական բարեգործական կազմակերպութեան հիմնական խնդիրներէն էր օգնութիւն ցոյց տալ Արցախի կարիքաւորներուն, բարձրացնել ընտանիքի դերը հասարակութեան մէջ:

⁶² Նոյն տեղը:

⁶³ Փրոֆ. Միքայէլ Ղազարեան, տեղակայն էր ակադեմիկոս Վիքթոր Համբարձումեանին, Հալէպի համալսարանի կողմէ հիւրաբար կը գտնուէր այնտեղ: Տե՛ս «Ջանասէր» ամսաթերթ, ԾԳ. տարի, թիւ 2–3, Փետրուար-Մարտ 1990, Պէյրութ, էջ 59:

⁶⁴ Տիկ. Յասմիկ Մկրտիչեան Հալէպ ժամանած էր Հալէպի համալսարանի Արաբական գիտութիւններու պատմութեան ինստիտուտի (Թուրաս- تراث - ժառանգութիւն – Ա.Ֆ.) մէջ հետազօտութիւն կատարելու համար: Ան Հայաստանէն Հալէպ ժամանած «առաջին գիտաշխատողն էր: Տե՛ս «Ջանասէր» ամսաթերթ, ԾԳ. տարի, թիւ 2–3, Փետրուար-Մարտ 1990, Պէյրութ, էջ 59:

⁶⁵ Լեռնային Ղարաբաղի բարեգործական «Ամարաս» կազմակերպութեան կանոնադրութեան մասին տե՛ս «Սովետական Ղարաբաղ» օրաթերթ, N 6 (15402), 7 հունվարի 1989, էջ 4:

Կազմակերպությունը կը համագործակցէր «պետական եւ հասարակական պաշտօնական եւ ոչ-պաշտօնական կազմակերպութիւնների, ինչպէս նաեւ եկեղեցու հետ»⁶⁶:

Ներկաները առաջնահերթ կը համարեն զօրակցիլ Արցախին՝ անդամակցելով «Ամարաս» բարեգործական ընկերութեան շարքերը եւ այս աշխատանքին համար յարմար կը նկատեն կապ հաստատել Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի, ձեռագիրերու գիտական պահպանման բաժնի վարիչ, պատմաբան Վարդան Գրիգորեանի միջոցաւ⁶⁷:

1989 թ.-ի Օգոստոսին Դամասկոս կը ժամանէ Հայաստանի երկրաշարժէն փրկուած երեխաներու երկու խումբ (38–40 հոգի), որոնք կը հիւրընկալուին Դամասկոսի ՀՄՄ-ի կողմէ: Անոնք որոշ ժամանակ ՀՄՄ-ի սկաուտներուն եւ արենոյշներուն հետ Քեսապի մէջ կը մասնակցին անոնց տարեկան բանակումին⁶⁸:

1991 թ.-ի ամրան, նախաձեռնութեամբ եւ կազմակերպութեամբ Հալէպի հայ կաթողիկէ Առաջնորդի՝ արհի. Տ. Պետրոս եպս.(ներկայիս արք.) Միրիաթեանի, Քեսապի շրջանի Պաղճաղաս գիւղի հայ կաթողիկէ կազդուրման կայանի մէջ կը հիւրընկալուին Հայաստանի աղէտի գօտիէն՝ Սպիտակէն 23 աղջիկ եւ Գիւմրիէն 23 մանչ իրենց պատասխանատուներուն հետ, ընդամենը 50 հոգի: Այս ծրագիրը իրականութիւն դարձած է Հայաստանի Աշխատանքի եւ Ընկերային հարցերու նախարար Աշոտ

⁶⁶ «Ամարաս»-ը պիտի օժանդակէր նաեւ հայ մշակոյթի, լեզուի, արուեստի զարգացման, ազգային աւանդոյթներու, ծեսերու, արհեստներու վերածնման, պատմութեան եւ մշակոյթի յուշարձաններու պահպանման ու վերականգնումին: Տե՛ս «Ջանասէր» ամսաթերթ, ԾԳ. տարի, թիւ 2–3, Փետրուար–Մարտ 1990, Պէյրույթ, էջ 59:

⁶⁷ «Ջանասէր» ամսաթերթ, ԾԳ. տարի, թիւ 2–3, Փետրուար–Մարտ 1990, Պէյրույթ, էջ 59:

Եսայեանի, աշխատանքի եւ սոցիալական ապահովութեան փոխ նախարար Գեղամ Ղարիպճանեանի (փոխ նախարարի պաշտօն վարած է 1991–95-ին) եւ համանուն նախարարութեան միջազգային բարեսիրական կազմակերպութեանց բաժինի վարիչ Վարդուիի Մանուկեանի գործակցութեամբ⁶⁹:

Եզրակացութիւն. 1988 թ. ամերիչ երկրաշարժը խլեց հազարաւոր մարդոց կեանքը: Մեծ թիւով հայրենակիցներ այս բնութեան աղէտին հետեւանքով մնացին անօթեւան: Սփիւռքը մէկ մարդու նման ոտքի կանգնեցաւ, հայ եւ օտար մասնագէտներու օժանդակութեամբ վերականգնումի աշխատանքներ կատարուեցան: Սակայն վերքը բուժել անհնար էր:

Այսօր երեք տասնամեակ անցած է այդ օրերէն ու տակաւին որոշ մարդիկ անօթեւան կը շարունակեն ապրիլ անմխիթար պայմաններով: Յաւը համախմբեց համայն հայութիւնը եւ այս նոր սկիզբ էր Հայրենիք-Սփիւռք համագործակցութեան նոր ժամանակաշրջանի:

Ани А. Фишенкджян, *Институт истории НАН РА, к.и.н., Помощь сирийских армян пострадавшей от Спитакского землетрясения 1988 г. Армении.*

Прошло более тридцати лет после катастрофического землетрясения 1988 года в Спитаке. Катастрофа, постигшая армянский народ, привела к бесчисленным человеческим жертвам. Наряду с диаспорой, на помощь пострадавшим бросились страны мира, предоставив лекарства, продукты питания, одежду и другие

⁶⁸ Երկու խումբերու ղեկավարներն էին՝ Յովհաննէս Սարաֆեանն ու Ռուզաննա Սարգիսեանը: Տե՛ս «Արարատ» օրաթերթ, ԾԳ. տարի, թիւ 14068 (287), 4 նոյեմբեր 1989, էջ 3:

⁶⁹ «Արարատ» օրաթերթ, ԾԳ.-րդ տարի, թիւ 14670 (224), 31 Հոկտեմբեր 1991, Պէյրութ, էջ 3:

необходимые предметы. Как и другие общины диаспоры, армянская община Сирии также внесла свой вклад в эту обширную работу. Под эгидой епархиального руководства был образован Центральный Комитет Помощи Армении. Был создан сирийско-армянский Комитет Помощи женщинам Армении. Армянские организации Сирии были вовлечены в эту скоординированную работу внутри общины. Роль сирийских властей в успехе работы армянской общины была велика, они не щадили усилий и на государственном уровне, тем самым способствуя ликвидации последствий землетрясения.

Ani A. Fishenkjian, *Institute of History of the NAS RA, PhD in History, The Assistance of the Syrian Armenians to the Victims of the Spitak 1988 Earthquake in the Fatherland/Armenia.*

It has passed more than thirty years since the disastrous 1988 earthquake of Spitak. This misfortune, which engulfed the Armenian people, caused innumerable human losses. Many governments beside the diasporan communities throughout the world, hurried to the aid of the victims by supplying medicine, food, clothing and other necessities. The Syrian-Armenians, like their compatriots in other diasporan communities, participated in these immense aid-works. For this purpose, the Central Committee for Disaster Relief of Armenia was formed under the patronage of Diocesan Prelates. The Syrian-Armenian Women's Commission for Armenia was called to life. Syrian organizations were also involved by participating in this coordinated work of the Armenian community. In this regard, the role of the Syrian authorities was boundless in contributing in the relief works of the earthquake victims.

ՌՈՒԲԵՆ Լ. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ

ԳԱԱ պարմության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ

**ՀՀ ԵՎ ՌԴ ՄԻՋԵՎ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ
ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 1991–2008 ԹԹ.**

Քանալի բառեր՝ ՀՀ, ՌԴ, ԱՊՀ, ՀԱՊԿ, ռազմաքաղաքական համագործակցություն, ռազմավարական գործընկերություն, դաշնակցային հարաբերություններ:

ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստանի և Հայաստանի սերտ ռազմաքաղաքական համագործակցության անհրաժեշտությունը բխում էր երկու երկրների շահերից: Մի կողմից՝ Ռուսաստանը ձգտում էր պահպանել իր քաղաքական, տնտեսական և ռազմական ներկայությունը Հարավային Կովկասում, որի նվազումն ուղեկցվում էր Արևմուտքի և հատկապես Թուրքիայի կողմից այդ տարածաշրջանն իրենց ազդեցության ոլորտի մեջ ներառելու ձգտման անթաքույց ուժեղացմամբ՝ հանգեցնելով Ռուսաստանի համար անբարենպաստ զարգացումների ծավալմանն ու նրա դիրքերի թուլացմանը, ինչը չէր կարող չանհանգստացնել Մոսկվային, որը տարածաշրջանում, որպես ռեալ դաշնակից դիտարկում էր Հայաստանին¹: Մյուս կողմից՝ ոչ բարեկամական Թուրքիայի և Ադրբեջանի շրջապատում գտնվող Հա-

¹ Ռուսաստանը և Հայաստանը համաշխարհային և տարածաշրջանային քաղաքականության համատեքստում. հիմնախնդիրներն ու հեռանկարները, վերլուծական զեկույց, Մոսկվա-Երևան, 2010, էջ 6:

յաստանի համար Ռուսաստանը ազգային անվտանգության գլխավոր երաշխավորն էր: Ըստ էության, Մոսկվայի և Երևանի միջև ռազմաքաղաքական փոխգործակցության ծավալման անհրաժեշտությունը բխում էր անվտանգության բնագավառում հենքային շահերի համընկման կողմերի ըմբռնումով, որոնք ներառում էին երկու պետությունների անվտանգության ապահովումը, ԱՊՀ տարածքում կոլեկտիվ անվտանգության ամրապնդումն ու տարածաշրջանում (որն իր մեջ ներառում էր ոչ միայն Հարավային Կովկասը, այլև Իրանն ու Թուրքիան) կայունության պահպանումը:

Հետխորհրդային առաջին տասնամյակի ընթացքում հայռուսական հարաբերությունների բովանդակությունը և զարգացման հեռանկարներն ընդհանուր առմամբ ձևավորվում էին երեք, միմյանց հետ որոշակիորեն փոխկապակցված ներքոհիշյալ գործոնների ազդեցության ներքո:

Առաջին՝ ԽՍՀՄ փլուզումից հետո միության տարածքում ապակենտրոնացման գործընթացը կանոնակարգելու, փոխհամաձայնեցված քայլերի կիրառմամբ՝ նախկին Խորհրդային միությանական հանրապետությունների համագործակցության ու ինտեգրման նոր ինստիտուտներ ձևավորելու խնդիրներ էին ծագել: Վերջիններիս լուծմանն էր նպատակաուղղված 1991 թ. դեկտեմբերի 8-ին սլավոնական երեք երկրների կողմից Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) կազմակերպության ստեղծումը, որին Ալմա-Աթայի դեկտեմբերի 21-ի Հռչակագրով միացան նաև մյուս նախկին Խորհրդային հանրապետությունները (բացառությամբ Վրաստանի և մերձբալթյան պետությունների): Այն միտված էր ոչ միայն «քաղաքակիրթ բաժանման» պայմանների ստեղծմանը, այլև անվտանգության և սոցիալ-

տնտեսական բնագավառներում անհրաժեշտ համագործակցության մակարդակի պահպանմանը²: Սակայն, ըստ էության, ԱՊՀ կազմավորման առաջին իսկ օրերից Մոսկվայի կողմից կազմակերպությունը սկսեց դիտարկվել որպես հետխորհրդային տարածաշրջանում Ռուսաստանի շահերի իրագործման գլխավոր գործիքներից մեկը՝ մասնավորապես ՌԴ հետ երկկողմ բարիդրացիական հարաբերությունների հաստատման գործում կարևորվում էր ԱՊՀ շրջանակներում ծավալվող գործընթացներում ներգրավվելու նորանկախ պետությունների պատրաստակամությունը: Ուստի, տվյալ ժամանակափուլում Հայաստանի նոր իշխանությունները որդեգրեցին այսպես կոչված «միջին ուղին»՝ չնահանջելով անկախության և ինքնիշխանության հիմնադրույթներից՝ ակտիվորեն մասնակցել ԱՊՀ մարմինների ստեղծման աշխատանքներին³: Արտաքին քաղաքական նման ուղեգծի ընդունումը մի կողմից պայմանավորված էր ազգային անվտանգության նկատմամբ հնարավոր սպառնալիքները կասեցնելու ձգտումով, իսկ մյուս կողմից՝ լիարժեք ազգային բանակ ստեղծելու ճանապարհին պետական ռեսուրսների բացակայությունը որոշակիորեն փոխհատուցելու անհրաժեշտությամբ: Այդ տեսանկյունից պատահական չէր, որ Հայաստանը հարավկովկասյան հանրապետություններից միակն էր, որը 1992 թ. մարտի 20-ին ստորագրեց ԱՊՀ Միացյալ զինված ուժերի ստեղծման մասին համաձայնագիրը՝ արտահայտելով «նախկին Խորհրդային Միության զինված ուժերը համաձայնեցված

² Тоганян В., Геворкян Р., Формирование СНГ и Закавказье, Ереван, 1999, с. 34.

³ Նախկին ԽՍՀՄ հանրապետություններից Հայաստանը առաջինը հայտարարեց ԱՊՀ-ին միանալու իր պատրաստակամության մասին:

հիմքերի վրա բարեփոխելու» վերաբերյալ իր պատրաստակամությունը⁴:

Երկրորդ՝ հայ-ռուսական միջպետական հարաբերությունների կայացման և հետագա զարգացման վրա զգալի ազդեցություն ունեցավ Ռուսաստանի վարած քաղաքականությունը ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում: Հակամարտության հանգուցալուծմանն ուղղված ՌԴ գործունեությունը սկզբունքային նշանակություն ունեցավ նաև ԱՊՀ բազմակողմ համագործակցությանը Հայաստանի մասնակցության առումով, այդ թվում և նախկին խորհրդային տարածքում հակամարտությունների կարգավորմանն ուղղված միջոցառումներին⁵:

Երրորդ՝ Խորհրդային Միության փլուզումից հետո աշխարհաքաղաքական իրադրության փոփոխումը առանձնահատուկ կարևորեց ռազմաքաղաքական ոլորտում երկու պետությունների միջև սերտ կապերի հաստատումը, որն, ինչպես զարգացումները ցույց տվեցին, դարձավ հայ-ռուսական ռազմավարական համագործակցության ամուր հենքը: Մասնավորապես 1992 թ. երկրորդ կեսից Ռուսաստանի քաղաքական վերնախավում պետության առարկայական շահերի և դրանց պաշտպանությանն ուղղված միջոցների վերարժևորումը էապես անդրադարձավ Հայաստանի հետ դաշնակցային հարաբերություններ հաստատելու կողմնորոշման վրա⁶:

⁴ Соглашение о вооруженных силах на переходный период// Дипломатический вестник МИД РФ, 1992, № 7, с. 6–7.

⁵ Соглашение о группах военных наблюдателей и коллективных миротворческих силах СНГ// Дипломатический вестник МИД РФ, 1992, № 6.

⁶ Стратегия для России, Тезисы Совета по внешней и оборонной политике РФ // «Независимая газета», 19.08.1992.

Հայ-ռուսական ռազմական համագործակցության զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ Ռուսաստանի նախագահի 1992 թ. մայիսի 1-ի որոշումը՝ ՌԴ պաշտպանության նախարարության ստեղծման մասին, որը փաստորեն վերջ դրեց ԱՊՀ միացյալ զինված ուժերի կազմավորման գաղափարին: 1992 թ. հուլիսին Մոսկվան հայտարարեց, որ երկրի սահմաններից դուրս տեղակայված զորախմբերը (մոտ 250 հազ. զինծառայող) և նախկին Խորհրդային բանակի սպառազինության և գույքի 80%-ը անցնում են Ռուսաստանի իրավասության տակ: Նույն հուլիսին ԱՊՀ միացյալ զինված ուժերի բարձրագույն հրամանատարության գործառույթները սահմանափակվեցին և այդ մարմնի պատասխանատվության ներքո թողնվեցին միայն միջուկային (ռազմավարական) ուժերն ու ԱՊՀ խաղաղապահ ուժերի կազմավորումը⁷: 1992 թ. մայիսի 15-ին Տաշքենդում Ռուսաստանի նախաձեռնությամբ ստորագրվեց Հավաքական անվտանգության մասին պայմանագիրը (ՀԱՊ), որին մասնակից դարձան Ռուսաստանը, Հայաստանը, Ղազախստանը, Ուզբեկստանը, Ղրղզստանը և Տաջիկստանը: Պայմանագրի գլխավոր հիմնադրույթն էր ռազմական փոխօգնության ցուցաբերումը ՀԱՊ-ի անդամ պետություններին՝ արտաքին ռազմական սպառնալիքների առաջացման դեպքում⁸: Ըստ Հավաքական անվտանգության պայմանագրի՝ մասնակից երկրների միջև ստո-

⁷ 1993 թ. հունիսին ԱՊՀ միացյալ զինված ուժերի բարձրագույն հրամանատարությունը լուծարվեց, իսկ նրա փոխարեն հիմնվեց ԱՊՀ ռազմական համագործակցության և համակարգման շտաբը (**Webber M.**, CIS Integration Trends: Russia and Former Soviet South RIIA, London, 1997, p. 38).

⁸ Տաշքենդյան հանդիպման շրջանակներում իրավապայմանագրային որոշում ստացավ նաև խորհրդային բանակի սպառազինության և տեխնիկայի բաշխման չափաբաժինների հիմնահարցը՝ հիմք ընդունելով Եվրոպայում սովորական սպառազինությունների մասին պայմանագրում ամրագրված քանակական սահմանափակումները:

րագրված Ռազմատեխնիկական համագործակցության հիմնական սկզբունքների մասին համաձայնագրի (և հետագա լրացումների)՝ 1992 թ. մայիսի 15-ից Ռուսաստանի կողմից ռազմական նշանակության արտադրանքի մատակարարման արտոնյալ պայմանները տարածվում էին ՀԱՊԿ (2002 թ. մայիսի 14-ից ՀԱՊ-ը վերափոխվեց կազմակերպության՝ ՀԱՊԿ) անդամ պետությունների ազգային զինված ուժերի, այլ զորքերի, զինվորական կազմավորումների, իրավապաշտպան մարմինների և հատուկ ծառայությունների վրա: Արտոնյալ պայմանների հասկացության տակ ենթադրվում էր մատակարարումն ըստ սեփական զինված ուժերի կարիքների բավարարման համար նախատեսված գների⁹: Ըստ էության, ՀԱՊ-ի ստեղծումը ՌԴ առաջին լուրջ փորձն էր նախկին խորհրդային տարածքում պաշտպանական դաշինք ստեղծելու ուղղությամբ: Այդ ժամանակաշրջանում ՀԱՊ-ը կոչված էր ուրվագծելու Ռուսաստանի ընդհանուր պատասխանատվության գոտին և կրում էր ավելի շատ քաղաքական և աշխարհաքաղաքական իմաստավորում: Մինչդեռ անվտանգության գործնական ապահովման հիմնական ծանրությունը ընկավ երկկողմ ռազմաքաղաքական համագործակցության վրա:

Տարածաշրջանային անվտանգության ապահովման գործում Հայաստանի հետ ռազմական համագործակցությունը շեշտակիորեն ակտիվացնելու առաջին ազդակը 1992 թ. մայիսի 20-ին ՌԴ պաշտպանության նախարար Պ. Գրաչովի գլխավորությամբ ռուսաստանյան պատվիրակության արագընթաց այցն էր Երևան, որի հիմնական նպատակն էր նախևառաջ Թուրքիա-

⁹ St'u «Военно-промышленный курьер», 03.03.2010.

յին զերծ պահել Հարավային Կովկասում ռազմական որևէ միջամտությունից: Մասնավորապես ԱՊՀ միացյալ զինված ուժերի հրամատատար Ե. Շապոշնիկովը նախազգուշացրեց թուրքական ղեկավարությանը, որ «երրորդ կողմի միջամտությունը հակամարտությանը (Ղարաբաղյան) հղի է երրորդ համաշխարհային պատերազմի վտանգով»¹⁰: Նման հաստատական դիրքորոշումը զսպող ներգործություն ունեցավ Թուրքիայի վրա, և շուտով Անկարան դադարեց ռազմատենչ հայտարարություններ անել: Ըստ էության, Ռուսաստանն առաջին անգամ հանդես եկավ իբրև ՀՀ անվտանգության փաստացի երաշխավոր:

Այնուամենայնիվ, իրավիճակի բարդացումը տարածաշրջանում հրամայական դարձրեց իրավապայմանագրային հենքի վրա Հայաստան-Ռուսաստան հարաբերությունների կանոնակարգումը և հստակեցումը: 1992 թ. երկրորդ կեսին սկզբնավորվեց հայ-ռուսական երկկողմ հարաբերությունների և փոխադարձ շահերի ակտիվ ճշտորոշման ժամանակափուլը, որն իր արտահայտությունը գտավ մի շարք ստորագրված փաստաթղթերում: 1992 թ. հուլիսի 6-ին ստորագրվեց ՀՀ-ում տեղակայված ռուսաստանյան ստորաբաժանումների և զորամասերի սպառազինության և տեխնիկայի փոխանցման պայմանների և ժամկետների մասին միջկառավարական համաձայնագիրը¹¹: Այս փաստաթղթի դրույթների իրագործումը մեծապես նպաստեց կազմավորման փուլում գտնվող հայկական բանակի նյութատեխնիկական հենքի ապահովմանը՝ Հայաստանին փոխանցվեց նախկին 7-րդ բանակի մոտոհրաձգային դիվիզիայի

¹⁰ «Независимая газета», 13.05.1992.

¹¹ **Мещеряков В.**, Стратегия выживания // Азия и Африка сегодня, 1998, № 4, с. 15.

սպառազինությունը՝ զգալի քանակությամբ հրասայլեր, զրահամեքենաներ, համազարկային կրակի կայանքներ, հրետանային համակարգեր և այլն¹²: 1992 թ. օգոստոսի 21-ին նախագահներ Բ. Եցինի և Լ. Տեր-Պետրոսյանի միջև կայացած հանդիպման արդյունքում ստորագրվեց ՀՀ տարածքում տեղակայված ՌԴ զինված ուժերի իրավական կարգավիճակի մասին պայմանագիր և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող միջազգային հարցերի վերաբերյալ քաղաքական խորհրդակցությունների մասին համաձայնագիր¹³: Նույն հանդիպման շրջանակում ստորագրվեց նաև սպառազինությունների ու ռազմական տեխնիկայի մշակման և արտադրության ոլորտում համագործակցության և զինված ուժերի փոխադարձ տեխնիկական և նյութական ապահովման սկզբունքների մասին միջկառավարական համաձայնագիրը: 1992 թ. սեպտեմբերի 30-ին Երևան ժամանած ՌԴ վարչապետ Ե. Գայդարի և ՀՀ ղեկավարության միջև տեղի ունեցած բանակցությունների արդյունքում կնքվեց Հայաստանի տարածքում տեղակայված ՌԴ սահմանապահ զորքերի կարգավիճակի և նրանց գործունեության պայմանների մասին պայմանագիր: Ընդ որում, փաստաթուղթը ուժի մեջ մտավ ստորագրման պահից՝ առանց խորհրդարանական վավերացման անհրաժեշտության¹⁴: Ստորագրվեցին նաև առևտրատնտեսական համագործակցության, միջպետական տնտեսական կառույցների ստեղծման մասին համաձայնագրեր:

¹² **Фельгенгауэр П.**, Накануне решающих сражений // «Независимая газета», 18.07.1992.

¹³ Внешняя политика России: сборник документов 1990–1992 гг., МИД РФ, Москва, 1996, с. 503–504.

¹⁴ **Ступинин В.**, Моя миссия в Армении. 1992–1994. Воспоминания первого посла России, Москва, 2001, с. 63.

1993 թ. տարեսկզբին ՌԴ արտգործնախարար Ա. Կոզիրևի ելույթը, ըստ էության, ազդարարեց նախկին ԽՍՀՄ-ի տարածքում ռուսաստանյան քաղաքականության աննախադեպ ակտիվացման և կոշտացման սկիզբը: Փաստորեն, հենց այս ժամանակաշրջանից Ռուսաստանի արտաքին քաղաքականության հիմքում դրվեց Մոսկվայի «հատուկ պատասխանատվության» գոտու մասին թեզը: Նույն հունվարին հայտարարվեց, որ ԱՊՀ տարածքում Ռուսաստանը չի բացառում «խաղաղապահ և իրավական շրջանակներում ապավինումը ուժային միջոցներին»¹⁵: Նախանշվեցին ՌԴ հիմնական գերակայություններն ու նպատակները՝ համապատասխան իրավապայմանագրային հենքի վրա ռուսաստանյան ռազմական ներկայության պահպանում ԱՊՀ առանցքային շրջաններում և ընդհանուր անվտանգության համակարգի ստեղծում, Համագործակցության արտաքին սահմանների համատեղ պաշտպանություն, միասնական տնտեսական գոտու կազմավորում: Հատկանշական էր, որ այդ ուղեգծի ռազմավարական ուղղություններից մեկը հռչակվեց նախկին խորհրդային տարածաշրջանում «status quo»-ի պահպանումը, մինչդեռ այլ ուժերի հնարավոր միջամտության փորձերը որակվեցին «վտանգավոր և հակաարդյունավետ»: Որդեգրված մոտեցմանը համահունչ՝ Ռուսաստանը արագացրեց նաև ԱՊՀ ինստիտուցիոնալ կառույցի ձևավորման և ամրապնդման գործընթացը, որին իր ակտիվ մասնակցությունը բերեց նաև Հայաստանը: 1993 թ. հաստատվեց ԱՊՀ կանոնադրությունը, որտեղ որոշակիացան կազմակերպության նպատակները և սկզբունքները, անդամակցության չափանիշները հավաքական

¹⁵ Козырев А., Россия: год минувший и год пришедший, Дипломатический вестник, 1993, № 1–2, с. 31–37.

անվտանգության և ռազմաքաղաքական համագործակցության հիմնադրույթները, ինչպես նաև սոցիալ-տնտեսական համագործակցության գլխավոր ուղղությունները: Հաստատագրվեցին նաև Համագործակցության աշխատանքային մարմինները, պետությունների և կառավարությունների ղեկավարների խորհուրդները, համակարգող-խորհրդատվական կոմիտեն, սահմանապահ զորքերի հրամանատարների խորհուրդը, տնտեսական դատարանը, մարդու իրավունքների հանձնաժողովը, մասնաճյուղային համագործակցության մարմինները¹⁶: 1993 թ. սեպտեմբերին ստորագրվեց ԱՊՀ-ում միասնական տնտեսական գոտու մասին համաձայնագիրը:

1990-ական թթ. երկրորդ կեսին ԱՊՀ-ում ինտեգրման գործընթացներին օժանդակելու ՌԴ քաղաքականության մեջ շեշտադրումների որոշակի փոփոխություններ կատարվեցին: Հաշվի առնելով ռեսուրսների այն հսկայական ծավալները, որ անհրաժեշտ կլինեին ծախսել կուռ կազմակերպություն ստեղծելու համար՝ Մոսկվան ավելի նպատակահարմար գտավ հետայսու առաջնորդվել այսպես կոչված «տարբերակված» մոտեցմամբ: Ռուսաստանի ձեռքում գտնվող ազդեցության և ղեկավարման լծակների թուլության պայմաններում ռուսաստանյան ղեկավարության շրջանում բյուրեղացավ անվտանգության համակարգի համակենտրոն (ռուսաստանակենտրոն) մոդելի կիրառման անհրաժեշտությունը: «Տարբեր արագություններով» ինտեգրման հայեցակարգի կանխադրույթները հենվում էին պրագմատիկ նկատառումների վրա՝ խթանել ինտեգրացիոն գործընթացներն այն պետությունների հետ, որոնք առավելագույնս պատրաստ

¹⁶ Устав СНГ, Дипломатический вестник МИД РФ, 1993, № 9–10, с. 31–37.

են դրան և այն դեպքերում, երբ դա համապատասխանում է ՌԴ անմիջական շահերին: Ելնելով այն իրողությունից, որ տարածաշրջանում առավել մշակված և լայն իրավապայմանագրային դաշտ էր ստեղծված Հայաստանի հետ, ինչպես նաև նկատի ունենալով հեռանկարային քաղաքական և պատմական նախընտրելիության փաստն ու աշխարհաքաղաքական սթափ հաշվարկը՝ Մոսկվան նպատակահարմար գտավ ԱՊՀ հարավարևմտյան գոտում առավել ամրապնդել և «մասնագիտացնել» հարաբերությունները Հայաստանի հետ:

1993–1994 թվականները նոր երանգ հաղորդեցին հայ-ռուսական հարաբերություններին: Նախորդ տարիների համեմատ ավելի ակնառու էր դարձել երկու պետությունների միջև հարաբերությունների և փոխըմբռնման կայունացման մթնոլորտը: Հարաբերությունների նման մակարդակի ապահովումը մեծապես պայմանավորված էր ակտիվ քաղաքական երկխոսության ծավալումով: Նշյալ տարիներին Հայաստան այցելեցին ՌԴ ԱԳ նախարար Ա. Կոզիրևը, նրա տեղակալ Բ. Պաստուխովը, պաշտպանության նախարար Պ. Գրաչովը, վերջինիս առաջին տեղակալ Բ. Գրոմովը, ՆԳ նախարար Վ. Երինը, սահմանապահ ծառայության ղեկավար Ա.Նիկոլանը և այլոք:

Մասնավորապես 1994 թ. հունիսի 8-ին ՌԴ պաշտպանության նախարար Պ. Գրաչովի Երևան կատարած այցի ընթացքում հայտարարվեց, որ Մոսկվան հանդես է գալիս Անդրկովկասում իր ռազմակայանների տեղակայման հարցի արագ լուծման օգտին, քանի որ Ռուսաստանի ՊՆ-ն արտասահմանում գտնվող ՌԴ ՁՈՒ ռազմակայանները պաշտոնապես հայտարարել է ԱՊՀ երկրների կողեկտիվ անվտանգության համակարգի անբաժան տարրեր: Փաստորեն, այս հայտարարությունը հիմնականում

հասցեագրված էր Թուրքիային, որի զինված ուժերը հաճախ ցուցադրական զորավարություններ էին անցկացնում Հայաստանի հետ սահմանամերձ գոտում: Թուրքիայի կողմից լարվածության օջախի ստեղծման վտանգը որոշակիորեն խթանեց ՀՀ և ՌԴ ռազմական գերատեսչությունների հետագա մերձեցումը: 1994 թ. ամռանը քաղաքական որոշում կայացվեց ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմակայան հիմնելու մասին: Ընդ որում որոշվեց, որ ռազմակայանը կլինի աէրոմոբիլ՝ համալրված ռազմաօդային բաղկացուցիչով: 1994 թ. օգոստոսի 19–20-ը ՌԴ Դաշնային սահմանապահ ծառայության ղեկավար Ա. Նիկոլանի ՀՀ կատարած այցի ժամանակ կողմերի միջև ստորագրվեց պայմանագիր հայ-թուրքական և հայ-իրանական սահմանների համատեղ պահպանության, ինչպես նաև Հայաստանի և Ռուսաստանի սահմանապահ ծառայությունների համագործակցության մասին: Վերջինիս իրականացման շրջանակներում Հայաստանի տարածքում տեղակայվեց Հատուկ Կովկասյան սահմանապահ շրջանի ռուսաստանյան սահմանապահ զորքերի «Արմենիա» հատուկ խմբավորումը: Հիշյալ պայմանագրի ստորագրումից հետո ռուսական կողմը հայտարարեց, որ Հայաստանի արտաքին սահմանները նաև ՌԴ ու ԱՊՀ սահմաններն են: Նույն թվականի նոյեմբերի 3-ին Մոսկվայում ստորագրվեց հակաօդային պաշտպանության բնագավառում համագործակցության մասին պայմանագիր¹⁷:

1995 թ. մարտի 16-ին Մոսկվայում ՌԴ Նախագահ Բ. Ելցինի և ՀՀ Նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի միջև կայացած հերթական հանդիպման ժամանակ 25 տարի ժամկետով կնքվեց

¹⁷ Տե՛ս Ступинин В., նշվ. աշխ., էջ 276:

Հայաստանի Հանրապետությունում ռուսաստանյան ռազմակայանի մասին պայմանագիր¹⁸: Գյումրիում տեղակայված ՌԴ 102-րդ ռազմակայանի (4.300 զինծառայող, 74 հրասայլ, 158 զրահամեքենա, 84 համազարկային կրակի հրետանային համակարգեր, 1 ռազմաօդային էսկադրիլիա) կազմի մեջ մտավ նաև Երևանում գտնվող մոտոհրաձգային գունդը և օպերատիվ ղեկավարման մարմինը¹⁹: Թեև կողմերը հայտարարեցին, որ պայմանագիրը ուղղված չէ երրորդ կողմի դեմ, այլ հանդիսանում է տարածաշրջանում իրավիճակի կայունացման կարևոր պայման, սակայն այն քաղաքական ասպարեզում բազմաթիվ ենթադրությունների և կանխատեսումների տեղիք տվեց: Մասնավորապես միջազգային շատ տեղեկատվական միջոցներ, մեկնաբանելով պայմանագրի ստորագրման փաստը, նշում էին, որ Հայաստանը տարածաշրջանում հանդիսանում է Ռուսաստանի միակ հենարանը, որի միջոցով ապահովվում է վերջինիս գերիշխող դերն ու հիմք նախապատրաստվում Հարավային Կովկասում նրա դիրքերի ամրապնդման համար: Պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո՝ 1995 թ. մարտի 21–31-ը, Արմավիրի մարզում տեղի ունեցան հայ-ռուսական համատեղ զորավարություններ, որոնք սկզբնավորեցին ՀՀ տարածքում ռազմաուսումնական ամենամյա համատեղ զորավարություններ անցկացնելու ավանդույթը²⁰:

¹⁸ ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևի 2010 թ. օգոստոսին Հայաստան կատարած պետական այցի ժամանակ ստորագրվեց Գյումրիում ռուսական ռազմակայանի տեղակայման ժամկետը 49 տարով երկարաձգելու մասին արձանագրություն:

¹⁹ Stéu Тищенко Г., Вооруженные силы и военно-политический курс Армении // Армения: проблемы независимого развития, под. ред. Е. Кожокина, ИСИ, Москва, 1998, с. 560.

²⁰ Ռուսաստանյան կողմից զորավարություններին մասնակցեցին մոտոհրաձգային, հրետանային ու զենիթակոթիռային զնդերի, տանկային առանձին զումարտակների, կապի զորամասերի, թիկունքի, ինժեներասակրավորական, ՀՕՊ-ի ու

Ձորավարժությունների անցկացման փաստը մի շարք փորձագետներ գնահատեցին որպես Հայաստան-Ռուսաստան ռազմական դաշինքի ամրապնդում և Թուրքիայի հետ հեռակա դիմակայության շարունակություն: Թերևս այս համատեքստում էր տեղավորվում նաև վերոնշյալ պայմանագրի ստորագրումից մեկ ամիս անց հայ-ռուսական հարաբերություններում տեղի ունեցած ևս մեկ կարևոր քաղաքական իրադարձություն՝ 1995 թ. ապրիլի 14-ին ՌԴ Պետական դոմայի կողմից ընդունված «1915–1922 թթ. հայ ժողովրդի ցեղասպանության դատապարտման մասին» հայտարարությունը²¹: Ըստ էության, Ռուսաստանը աշխարհի մեծ տերություններից առաջինն ընդունեց Օսմանյան կայսրության կողմից իրականացված Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող բանաձև, որտեղ հիշատակվում էր Արևմտյան Հայաստանը: Փաստորեն, այդ կարևոր քաղաքական քայլով Ռուսաստանը նպատակ էր հետապնդում Թուրքիային ցույց տալ, որ Հարավային Կովկասում իր ազդեցությունը պահպանելու համար մտադիր է օգտագործել բոլոր հնարավոր քաղաքական լծակները:

Ռազմաքաղաքական համագործակցության զարգացման առումով կարևոր նշանակություն ունեցավ նաև 1995 թ. երկու երկրների միջև ռազմական հետախուզության բնագավառում փոխգործակցության և Երևանի ու Մոսկվայի միջև ուղիղ գաղտնի հեռախոսակապի հաստատման մասին համաձայնագրերի ստորագրումը: Հայ-ռուսական ռազմական համագործակցության զարգացման մակարդակն ու խորացման հեռանկարները

մարտական օդուժի ստորաբաժանումների 1205 զինծառայող, 225 միավոր տեխնիկա («Պայքար», 1995, փետրվար-մարտ, էջ 80–81):

հիմք տվեցին ՌԴ պաշտպանության նախարար Պ. Գրաչովին հայտարարելու, որ անվտանգության և ռազմատեխնիկական համագործակցությունը երկու երկրների միջև օրինակելի պետք է լինի նաև ԱՊՀ այլ մասնակից պետությունների համար: 1995 թ. փետրվարի 10-ին ստորագրվեց ԱՊՀ միասնական հակաօդային պաշտպանության համակարգի ստեղծման մասին համաձայնագիր, որին մասնակից դարձավ նաև Հայաստանը (չստորագրեցին միայն Մոլդովան և Ադրբեջանը)²²: Այդ համակարգի հիմնական նպատակն էր ապահովել ԱՊՀ պետությունների օդային տարածքների ռազմավարական հետախուզումը: 1996 թ. հունվարին կայացած ԱՊՀ գագաթաժողովում Ռուսաստանը համաձայնեց ֆինանսավորել Հայաստանի, Վրաստանի, Ղազախստանի, Տաջիկստանի և Ուզբեկստանի հակաօդային պաշտպանության ենթակառուցվածքների վերազինումը և կատարելագործումը: Նույն թվականի գարնանից ԱՊՀ հակաօդային միավորված համակարգը սկսեց գործել: Համագործակցության հակաօդային պաշտպանության համակարգը բարելավելու, ինչպես նաև պաշտպանության բնագավառի գիտատեխնիկական և արդյունաբերական ներուժը պահպանելու նպատակով՝ 1996 թ. օգոստոսին ՌԴ նախաձեռնությամբ հիմնվեց «Գրանիտ» ֆինանսարդյունաբերական համալիր, որին մասնակից դարձան նաև Հայաստանի պաշտպանական արդյունաբերության որոշ ձեռնարկություններ:

Հայ-ռուսական ռազմաքաղաքական համագործակցության խորացմանը զգալիորեն նպաստեց 1996 թ. երկու երկրների

²¹ Собрание законодательств РФ, Москва, 1995, № 17, с. 1497, Ведомости Федерального Собрания РФ, Москва, 1995, N 14, с. 1024.

²² «Российская газета», 25.02.1995.

Պաշտպանության նախարարությունների կողմից երկկողմ կոալիցիոն զորախումբ ստեղծելու մասին արձանագրության ստորագրումը: Փաստորեն, հենց այդ կարևոր փաստաթղթից ԱՊՀ տարածքում սկիզբ առավ միջպետական հարաբերությունների զարգացման նոր ժամանակաշրջան: 1990-ական թվականներին հայ-ռուսական հարաբերությունները ռազմավարական բարձր մակարդակի հասնելու վառ արտահայտությունն էր՝ 1997 թ. օգոստոսի 29-ին Մոսկվայում նախագահներ Բ. Ելցինի և Լ. Տեր-Պետրոսյանի կողմից կնքված «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» Մեծ Պայմանագիրը, որն իր մեջ ամփոփեց մինչ այդ երկկողմ և բազմակողմ ձևաչափերում մշակված սերտ համագործակցության հենքը: Պայմանագրի հանգուցային հիմնադրույթներն արտացոլված էին 2-րդ հոդվածում՝ «Բարձր Պայմանավորվող Կողմերը սերտորեն կգործակցեն Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և անվտանգության ապահովման գործում: Նրանք անհապաղ կխորհրդակցեն միմյանց հետ բոլոր այն դեպքերում, երբ, կողմերից որևէ մեկի կարծիքով, զինված հարձակման վտանգ առաջանա՝ համատեղ պաշտպանությունը, խաղաղության պահպանումը և փոխադարձ անվտանգությունը ապահովելու նպատակով» և 3-րդ հոդվածում՝ «Բարձր Պայմանավորվող Կողմերը համատեղ կձեռնարկեն բոլոր իրենց համար հասանելի միջոցները՝ խաղաղության սպառնալիքները վերացնելու և որևիցե պետության կամ պետությունների խմբի կողմից խաղաղության խախտման կամ ագրեսիայի գործողությունները կասեցնելու համար և կցուցաբերեն միմյանց անհրաժեշտ օգնություն, ներառյալ ռազմական՝ կոլեկտիվ ինքնա-

պաշտպանության իրավունքը իրագործելու ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածի համապատասխան»²³: Նույն թվականին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության խորհրդարանները վավերացրեցին ՀՀ տարածքում ռուսաստանյան սահմանապահ զորքերի, ինչպես նաև Գյումրի քաղաքում ռուսաստանյան 102-րդ ռազմակայանի կարգավիճակների մասին փաստաթղթերը: 1998–2000 թվականներին Ռուսաստանը, Հայաստանի համաձայնությամբ, միջոցառումներ իրականացրեց ՀՀ տարածքում գտնվող իր զորամիավորումները վերազինելու ուղղությամբ: Մասնավորապես, ուժեղացվեց հակաօդային պաշտպանության զորախումբը (այդ թվում տեղակայվեցին «Ս-300» զենիթա-հրթիռային համալիրներ), ուժեղացվեց ռազմաօդային ուժերի զորախումբը: Երկու պետությունների միջև ստորագրվեցին փաստաթղթեր հայ զինծառայողների ՌԴ ռազմական բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանելու վերաբերյալ: Հայաստանն ու Ռուսաստանն այն 6 պետությունների թվում էին, որոնք 1999 թ. հանդես եկան Հավաքական անվտանգության պայմանագրի երկարաձգման նախաձեռնությամբ²⁴: Այսպիսով, ՀՀ և ՌԴ միջև ռազմաքաղաքական համագործակցության հարաշարժ զարգացումը 1990-ականների երկրորդ կեսին հանգեցրեց Երևանի ու Մոսկվայի միջև ռազմավարական գործընկերության հաստատման:

Երկու երկրների միջև ռազմաքաղաքական հարաբերությունների զարգացման գագաթնակետը հանդիսացավ 2000 թ.

²³ ՀՀ արտաքին գործերի նախարարություն. արտաքին քաղաքականություն, երկկողմ հարաբերություններ, Ռուսաստան, ստորագրված փաստաթղթեր // www.mfa.am/hy/country-by-country/ru.

²⁴ **Шакарянц Сергей**, Вопросы коллективной безопасности СНГ и Армения // Ориентиры внешней политики Армении, Ереван, 2002, с. 100.

սեպտեմբերի 26-ին Մոսկվայում ՌԴ և ՀՀ նախագահներ Վ. Պուտինի և Ռ. Քոչարյանի կողմից ստորագրված «ՀՀ և ՌԴ միջև XXI դար ուղղված դաշնակցային փոխգործակցության մասին» Հռչակագիրը: Վերջինիս 5-րդ կետում մասնավորապես նշված էր «Կովկասյան տարածաշրջանում անվտանգության ամրապնդմանն ուղղված համատեղ կամ համաձայնեցված գործողությունների իրականացման նպատակով՝ Հայաստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը կհամադրեն իրենց արտաքին քաղաքական գործունեությունը»²⁵: Փաստորեն, տվյալ հռչակագրով երկու պետություններն իրենց հարաբերությունները XXI դարի նախաշեմին հասցրեցին դաշնակցային մակարդակի: Ըստ էության, թե՛ Ռուսաստանը և թե՛ Հայաստանը աշխարհի ոչ մի պետության հետ չէին ստորագրել ռազմաքաղաքական ոլորտում համագործակցության մասին նման քանակի և որակի փաստաթղթեր: Ավելին, կարելի է ասել, որ 2001 թ. Ռուսաստանի նախաձեռնությամբ սկիզբ առավ Երևանն աստիճանաբար ԱՊՀ ոչ պաշտոնական կենտրոններից մեկը դարձնելու գործընթացը: Տվյալ միտումը հատկապես ցայտուն դրսևորվեց 2001 թ. առաջին կեսին, երբ Հայաստանի մայրաքաղաքում տեղի ունեցան ԱՊՀ շրջանակներում բարձր մակարդակի մի շարք համաժողովներ: Վերջիններից հատկապես կարևոր էր 2001 թ. մայիսի երկրորդ կեսին կայացած Հավաքական անվտանգության խորհրդի (ՀԱԽ) նիստը, որը նախագահում էր ՌԴ ղեկավար Վ. Պուտինը: ԱՊՀ շրջանակներում Երևանի կշռի բարձրացման վկայություններից էր նաև նշյալ նիստում ՀՀ Նախագահ Ռ. Քոչարյանին մեկ տարով ՀԱԽ-ում նախագահող

²⁵ Александров М.В., Битва за Кавказ 2004–2008. Институт стран СНГ за национальные интересы России на Южном Кавказе, Москва, 2010, с. 430.

ընտրելու փաստը: Դրանով իսկ Ռուսաստանը, փաստորեն, ընդգծում էր ՌԴ և ողջ ԱՊՀ անվտանգության ապահովման բնագավառում «կովկասյան ուղղության» (ըստ էության «հայկական ուղղության») կարևորությունը: 2001 թ. մարտ-մայիս ամիսների ընթացքում Մոսկվան բազմիցս շեշտում էր, որ Անդրկովկասում հավաքական անվտանգության տարածաշրջանային համակարգը ստեղծվել և ամրապնդվելու է հենց Հայաստանի և Ռուսաստանի ռազմական, ռազմաքաղաքական և ռազմատեխնիկական համագործակցության հենքի վրա, որում գլխավոր դեր է խաղալու հայկական և ռուսական ուժերի արագ արձագանքման համատեղ Կոալիցիոն զորախումբը: Դրանից ելնելով՝ այդ փուլում կողմերը մշակում էին ռազմական ոլորտում իրենց հարաբերությունների ռազմավարությունը՝ առաջնային պլան մղելով Անդրկովկասում խաղաղ պայմանների, հանդարտության և փոխըմբռնման ապահովման խնդիրը: Այս առումով հատկանշական էր, որ դեռևս 2000 թ. սեպտեմբերի 27-ին ՀՀ-ն և ՌԴ-ն ստորագրեցին «Համատեղ անվտանգության նպատակով զորքերի կիրառման համատեղ պլանավորման հարցերի մասին» համաձայնագիր, որին լրացնում էր ՀՀ ազգային ժողովի կողմից 2003 թ. սեպտեմբերին վավերացված ռազմական օբյեկտների համատեղ օգտագործման հարցերը կարգավորող հայ-ռուսական համաձայնագիրը: Ըստ վերջինի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի տեղակայման համար վարձավճար չէր գանձվելու, բացի այդ փոխհատուցվելու էր էներգիայի և ջրամատակարարման ենթա-

կառուցվածքի պահպանման համար ռազմակայանի օբյեկտների ծախսերի 30 %-ը²⁶:

2003 թ. հունվարին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի ՌԴ կատարած այցի ընթացքում ստորագրվեց հայ-ռուսական համաձայնագիր՝ Ռազմատեխնիկական համագործակցության մասին, որը Հայաստանին թույլ տվեց զենքի մատակարարումների վերաբերյալ պայմանագրեր կնքել անմիջականորեն զինամթերք արտադրող ռուսաստանյան ձեռնարկությունների հետ, ընդ որում ռուսական բանակին տրամադրվող նույն պայմաններով: Համաձայն «Ռոստեխնոլոգի»-ի պետական ընկերության գլխավոր տնօրեն Ս. Չեմեզովի հայտարարության՝ «Ռոսօբորոնէքսպորտ»-ի պայմանագրերով Ռուսաստանից Հայաստան ռազմական նշանակության ապրանքների մատակարարումների ծավալը 2003 թվականից մինչև 2008 թվականը կազմել էր շուրջ 25 մլն ԱՄՆ դոլար²⁷:

Ռազմատեխնիկական բնագավառում համագործակցության խորացման համար կարևոր նշանակություն ունեցավ նաև Ռազմատեխնիկական համագործակցության հայ-ռուսական միջկառավարական հանձնաժողովի ստեղծումը, որի անդրանիկ նիստը կայացավ 2004 թ. սեպտեմբերի 7–10-ը՝ Մոսկվայում: Այդ ոլորտում կողմերի միջև տարբեր մակարդակներով կանոնավոր խորհրդատվություններ էին անցկացվում: Այսպես, նշյալ թվականի մայիսի 21-ին աշխատանքային այցով Հայաստանում էր գտնվում ՌԴ պաշտպանության նախարար Ս. Իվանովը, իսկ

²⁶ **Шакарянц Сергей**, նշվ. աշխ., էջ 100–103, Ռուսաստանը և Հայաստանը համաշխարհային և տարածաշրջանային քաղաքականության համատեքստում, էջ 11–12:

²⁷ ԱՄԻ «Նովոստի Արմենիա». Վերլուծություններ և մեկնաբանություններ: Ռուսական կապիտալը՝ Հայաստանի լոկոմոտիվն է, 22.01.2008 // www.newsarmenia.ru.

նոյեմբերի 1-ին՝ Հյուսիսկովկասյան ռազմական օկրուգի հրամանատար Ա. Բարանովը: 2006 թ. հունվարին Ս. Իվանովը արդեն պաշտոնական այցով էր գտնվում Հայաստանում, իսկ օգոստոսին Երևանում տեղի ունեցավ Հայ-ռուսական ռազմատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հերթական նիստը: Ռազմատեխնիկական բնագավառում Երևանի և Մոսկվայի համագործակցության առավել կարևոր իրադարձություններից էր նորագույն զենիթահրթիռային համալիրներով ապահովված հայ-ռուսական համատեղ հակաօդային պաշտպանության համակարգի մարտական հերթապահության սկիզբը: Այն ազդարարող արարողությանը մասնակցելու համար 2007 թ. փետրվարի 14-ին Երևան ժամանեց ՌԴ ռազմաօդային ուժերի հրամանատար, բանակի գեներալ Վ. Միխայլովը: Նա մասնակցեց նաև ՀԱՊԿ անդամ պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի նիստին: Նույն թվականի հոկտեմբերի 1-ին պաշտոնական այցով Հայաստան ժամանեց Ռուսաստանի պաշտպանության նախարար Ա. Սերդյուկովը, ով հանդիպումներ ունեցավ ՀՀ զինվորական և քաղաքական ղեկավարության հետ, ինչպես նաև տեսչական այցով եղավ Գյումրիում տեղակայված ռուսական 102-րդ ռազմակայանում: 2007 թ. վերջին ամբողջովին ավարտվեց 12-րդ և 62-րդ ռուսական ռազմակայանների անձնակազմերի և սպառազինությունների դուրսբերումը Վրաստանից և նրանց տեղակայումը Գյումրիի 102-րդ ռազմակայանում: Ըստ էության, ռազմական համագործակցության բնագավառում Հայաստանն ու Ռուսաստանը շատ առաջ էին գնացել ցանկացած այլ երկրների հետ հարաբերությունների համեմատ:

ՀՀ և ՌԴ ռազմական համագործակցության նման բարձր մակարդակի ֆոնի վրա որոշ չափով խնդրահարույց էր թվում ՀՀ ակտիվ համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ: Հայաստանի ղեկավար շրջանների ներկայացուցիչները բավականին հաճախ էին հանդիպում Դաշինքի ռազմական և քաղաքական ղեկավարության հետ, տարբեր հարցերի շուրջ անց էին կացնում խորհրդատվություններ: 2003 թ. հունիսին Հայաստանի տարածքում անցկացվեցին «Cooperative Best Effort-2003» ՆԱՏՕ-ի զորավարժությունները, որին մասնակցեց նաև Ռուսաստանը: Հայաստանը Կոսովոյում մասնակցում էր Դաշինքի խաղաղապահ գործողությանը, մշակում վերջինիս հետ անհատական գործընկերության ծրագիր և այլն: Սակայն այս ամենի հետ մեկտեղ, ՀՀ ղեկավարությունը մշտապես ընդգծում էր, որ երկրի՝ ՆԱՏՕ մտնելու հարցը օրակարգում դրված չէ, և Դաշինքի հետ Հայաստանի հարաբերությունները երբեք չեն զարգանա Ռուսաստանի հետ համագործակցության հաշվին: ՀՀ իշխանությունների կողմից ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների խորացման ուղեգիծը պայմանավորված էր Երևանի որդեգրած փոխլրացման քաղաքականությամբ: Ռուսաստանը հիմնականում ըմբռնումով էր մոտենում Հայաստանի և ՆԱՏՕ-ի միջև ծավալված համագործակցությանը, ինչը, թերևս, պայմանավորված էր նրանով, որ ՌԴ-ն մի շարք բնագավառներում ևս համագործակցում էր ՆԱՏՕ-ի հետ և, երկրորդ, Մոսկվայում գիտակցում էին, որ Հայաստանի համար կարևոր էր ՆԱՏՕ-ին չհակադրվել՝ Ղարաբաղյան հարցում Արևմուտքի կողմից Ադրբեյջանին հնարավոր միակողմանի աջակցության ցուցաբերումը կանխելու համար:

Դրա հետ մեկտեղ, Ռուսաստանը երբեմն դժգոհություն էր արտահայտում միջազգային ասպարեզում Հայաստանի ձեռնարկած քաղաքական քայլերից: Այսպես օրինակ, երբ ՀՀ ղեկավարությունը 2005 թվականին մտադրություն հայտնեց 40 հոգանոց ոչ մարտական զինվորական քանակակազմ (վարորդներ, բժիշկներ, սակրավորներ) ուղարկել Իրաք, ռուսաստանյան կողմը դա դիտարկեց իբրև ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների կողմից Իրաքում ծավալած «հակաիրավական» գործողությունների անուղղակի աջակցմանը նպատակաուղղված կարևոր խորհրդանշական քայլ, ինչն իրականացվել էր առանց Ռուսաստանի հետ համապատասխան խորհրդատվություններ անցկացնելու: Մինչդեռ քաղաքական առումով խաղաղապահ առաքելության մեջ նեգրավվածությունը բարձրացնում է ցանկացած երկրի, այդ թվում և Հայաստանի, միջազգային վարկանիշը: ՌԴ-ն անբավարարվածություն հայտնեց նաև, երբ 2004 թվականին ՄԱԿ-ի ԳԱ 59-րդ նստաշրջանում ՀՀ ԱԳ նախարար Վ. Օսկանյանը խոստացավ աջակցել Գերմանիային, Ճապոնիային և Հնդկաստանին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում մշտական անդամ դառնալու վերջիններիս ձգտումներին²⁸, ինչին դեմ էր Ռուսաստանը: Սակայն Հայաստանն առաջնորդվում էր իր որդեգրած փոխլրացման արտաքին քաղաքական ուղեգծով, որի գլխավոր առաջնահերթություններից էին հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունները:

ՀՀ և ՌԴ միջև կանոնավոր բնույթ էին կրում բարձր մակարդակներով՝ նախագահների, վարչապետների, արտգործնախարարների քաղաքական շփումները, երկխոսությունները,

²⁸ Александров М.В., նշվ. աշխ., էջ 431:

խորհրդատվությունները, բանակցությունները, որոնք տեղի էին ունենում ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափերում: Քննարկվում էին ռազմաքաղաքական, տնտեսական, հումանիտար ոլորտներում հայ-ռուսական փոխգործակցության գրեթե բոլոր հարցերը, ինչպես նաև մտքեր փոխանակվում կարևոր միջազգային և տարածաշրջանային խնդիրների վերաբերյալ: Առանձնահատուկ ուշադրություն էր հատկացվում Հարավային Կովկասում իրավիճակի բարելավմանը, տարածաշրջանի երկրների համագործակցության ներուժի բացահայտմանը, ահաբեկչության դեմ պայքարին, Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը, նոր հակամարտությունների ծագման կանխարգելմանը և այլն: 2000-ական թվականների սկզբներին տարածաշրջանային խնդիրների շուրջ քննարկումների ծավալման նպատակով Հարավկովկասյան երկրների և ՌԴ ղեկավարների բազմակողմ շփումներ կայացան: Մասնավորապես, ռուսական կողմի նախաձեռնությամբ տեղի ունեցան «Կովկասյան քառյակի»՝ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի նախագահների հանդիպումներ:

Քննվող ժամանակաշրջանում լայնորեն զարգանում էր նաև համագործակցությունը երկու երկրների խորհրդարանների միջև: Բարի ավանդույթ էր դարձել ՌԴ Դաշնային խորհրդի, Պետական դումայի և ՀՀ Ազգային ժողովի նախագահների, փոխնախագահների, խորհրդարանական պատվիրակությունների փոխալյցելությունները: 1998 թ. փետրվարի 18-ին Միջխորհրդարանական համագործակցության մասին համաձայնագրով հիմնվել էր մշտական գործող հայ-ռուսական միջխորհրդարանական համագործակցության հանձնաժողով, որը տարեկան երկու նիստ էր գումարում՝ հաջորդաբար ՌԴ-ում և

ՀՀ-ում: Մինչև 2008 թվականը նշյալ հանձնաժողովի 13 նիստ էր կայացել, որոնց ընթացքում հիմնականում քննարկվել էին երկու երկրների պայմանագրային և իրավական դաշտերին ու նրանց համապատասխանեցմանն առնչվող հարցեր, համագործակցությունը էներգետիկայի, տրանսպորտի, հեռահաղորդակցության, գիտության, կրթության, մշակույթի ոլորտներում, ինչպես նաև ներդրումային քաղաքականության և համատեղ ձեռնարկությունների ստեղծման հետ կապված խնդիրներ:

Արտաքին քաղաքականության բնագավառում երկուստեք հետաքրքրություն ներկայացնող խնդիրների քննարկման համար իրավական հիմք էր հանդիսանում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև 1992 թ. օգոստոսի 21-ին Մոսկվայում ստորագրված միջազգային հարաբերություններում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերին առնչվող քաղաքական խորհրդատվությունների մասին համաձայնագիրը²⁹: Վերջինից ելնելով՝ ՀՀ և ՌԴ արտգործնախարարությունների միջև կանոնավոր անց էին կացվում տարբեր մակարդակների խորհրդատվություններ, որոնց ընթացքում արձարծվում էին երկկողմ ու բազմակողմ հարաբերություններին առնչվող հարցեր, հստակեցվում ու համադրվում էին կողմերի դիրքորոշումներն ու մոտեցումները տարբեր միջազգային հիմնախնդիրների նկատմամբ: Ուշադրության կենտրոնում էին գտնվում նաև երկու երկրների համակարգված փոխգործակցության հարցերը միջազգային կառույցների՝ ՄԱԿ, ԵԱՀԿ, ԵԽ, ՄԾՏՀԿ, ԱԴՀ, ՀԱՊԿ, ԵվրԱզԷՍ և այլ կազմակերպությունների

²⁹ ՀՀ արտաքին գործերի նախարարություն. արտաքին քաղաքականություն, երկկողմ հարաբերություններ, Ռուսաստան, ստորագրված փաստաթղթեր // www.mfa.am/hy/country-by-country/ru.

շրջանակներում: Հայաստանի և Ռուսաստանի դիրքորոշումները միջազգային և տարածաշրջանային շատ խնդիրների շուրջ հիմնականում կա՛մ համընկնում էին, կա՛մ էլ խիստ մոտ էին: Երկու երկրները միջազգային կազմակերպություններում շատ հաճախ հանդես էին գալիս միասնական դիրքորոշմամբ: ՀՀ-ն և ՌԴ-ն հատկապես սերտորեն համագործակցում էին ԱՊՀ շրջանակներում՝ հանդիսանալով նրա «ինտեգրացիոն միջուկը»: Հայաստանը Ռուսաստանի ակտիվ գործընկերն էր Համագործակցության բոլոր բազմակողմ ճյուղային մարմիններում, նա աջակցում էր ԱՊՀ ամրապնդման՝ իր ներդրումն ունենալով կազմակերպության կանոնադրային մարմինների արդյունավետության բարձրացման ու դրանց կառուցվածքների օպտիմիզացման գործում: Երկու երկրները մեծապես կարևորում էին նաև համատեղ օրինաստեղծ գործունեությունը ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովում:

Աշխարհաքաղաքական վերջին զարգացումները վկայում են, որ համաշխարհային համակարգի ճգնաժամը շարունակվում է ծավալվել՝ սպառնալով երկրագնդի անվտանգությանը: Խորանում են հակասությունները կովկասյան տարածաշրջանում, որոնք նոր մարտահրավերներ և լուրջ սպառնալիքներ են պարունակում թե՛ ՀՀ և թե՛ ՌԴ ազգային անվտանգության համար: Ուստի, երկու երկրների օբյեկտիվ շահերը միանշանակ պահանջում են պահպանել և ամրապնդել միմյանց միջև հաստատված ռազմավարական դաշնակցային հարաբերությունները:

Рубен Л. Азизбекян, *Институт истории НАН РА, к.и.н., доцент*, Становление и развитие военно-политического сотрудничества между РА и РФ в 1991–2008 гг.

В 1991–2008 гг. важнейшим компонентом армяно-российских отношений являлось военно-политическое сотрудничество между двумя государствами. Именно в этот период формировался прочный фундамент на котором базировалось данное сотрудничество. В его основе лежали две ключевые составляющие: многовековые традиции дружбы и взаимодействия народов двух стран и солидная договорно-правовая база межгосударственных отношений, определенная часть которой касалась военно-политических вопросов, что отражало приоритет этой сферы сотрудничества в двусторонних отношениях. Такое положение было основано на понимании сторонами совпадения их национальных интересов в области безопасности. Эти интересы были триедины. Они состояли в обеспечении безопасности обоих государств, обеспечении коллективной безопасности на пространстве СНГ и поддержании стабильности в регионе, который включает не только Южный Кавказ, но также Иран и Турцию.

Краеугольным камнем российско-армянского военно-политического сотрудничества является Договор о дружбе, сотрудничестве и взаимной помощи, подписанный 29 августа 1997г., который предусматривает оказание сторонами военной помощи в случае агрессии извне. Другим важным документом в исследуемый период является Договор о российской военной базе на территории Республики Армения от 16 марта 1995 г.

Помимо военного сотрудничества на двусторонней основе, Россия и Армения являлись активными участниками Договора о коллективной безопасности от 15 мая 1992 года, в рамках которого взаимодействие Еревана и Москвы являлось существенным фактором повышения его эффективности.

В 1991–2008 гг. периодически проходили встречи высших руководителей двух стран. Регулярный характер носили встречи глав внешнеполитических ведомств РА и РФ, проводились консультации между МИДами на различных уровнях и по самой широкой проблематике.

Возрастал уровень армяно-российских межпарламентских связей. Законодатели Армении и России активно взаимодействовали как в двустороннем формате, так и в рамках МПА СНГ и других международных организаций.

Позиции РА и РФ по большинству региональных и международных проблем совпадали или были близки. В большинстве случаев обе страны выступали солидарно в международных организациях. Армения и Россия активно сотрудничали в рамках СНГ, составляя его «интеграционное ядро».

Интересы двух стран требуют сохранения и укрепления союзнических отношений и в дальнейшем.

Ruben L. Azizbekyan, *Associate Professor at the Institute of History of the NAS RA, PhD in History*, **The Formation and Development of Military-Political Cooperation between the Republic of Armenia and the Russian Federation in 1991–2008.**

During the 1991–2008 period, the most important component of the Armenian-Russian relations was the military-political cooperation between the two states. It was during this period that a solid foundation was formed on which this cooperation was based. It was based on two key components: the centuries-old traditions of friendship and interaction between the peoples of the two countries and a solid legal base of interstate relations, a certain part of which concerned military-political issues, which reflected the priority of this sphere of cooperation in bilateral relations. This situation was based on the understanding by the parties of the coincidence of their national security interests. These interests were triune. They consisted of ensuring the security of both states, ensuring collective security in the CIS and maintaining stability in the region, which includes not only the South Caucasus but also Iran and Turkey.

The cornerstone of Russian-Armenian military-political cooperation is the Treaty of Friendship, Cooperation, and Mutual Assistance signed on August 29, 1997, which provides for the provision of military assistance by the parties in case of aggression from outside. Another important document during the research period is the Treaty on the Russian military base on the territory of the Republic of Armenia dated March 16, 1995.

In addition to military cooperation on a bilateral basis, Russia and Armenia were active participants in the Collective Security

Treaty of May 15, 1992, under which the interaction of Yerevan and Moscow was a significant factor in increasing its effectiveness.

During the 1991-2008 period, meetings of the top leaders of the two countries were held periodically. Meetings of the heads of the foreign affairs agencies of the Republic of Armenia and the Russian Federation were regular, consultations were held between the Foreign Ministries at various levels and on the broadest issues.

The level of the Armenian-Russian inter-parliamentary relations increased. The legislators of Armenia and Russia actively cooperated both in the bilateral format and within the framework of the IPA of the CIS and other international organizations.

The positions of the Republic of Armenia and the Russian Federation coincided or were close to most regional and international problems. In most cases, both countries acted in solidarity with international organizations. Armenia and Russia actively cooperated within the CIS, making it the “integration core”.

Objectively, the interests of the two countries require the preservation and strengthening of allied relations.

ԱՆՈՒՇ Ս. ԱՄԻՐԲԵԿՅԱՆ
ԳԱԱ պարմության ինստիտուտ

**ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԱՌՕՐՅԱՆ ԱՐՑԱԽՅԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՓՈԽԼՈՒՄ
(ՏՈՂԻ ԵՎ ՍԱՐԻՆՇԵՆԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Քանալի բառեր՝ Արցախ, Տոդ, Սարինշեն, պատերազմ, առօրյա, կամավորական, զինվոր:

Արցախյան ազատամարտում 1991 թ. հոկտեմբերի 30-ը նշանավորվեց Հաղթության շրջանի Տոդ գյուղի ազատագրմամբ: Ուսումնասիրողներից և ռազմական գործիչներից շատերի կարծիքով հենց այս մարտական գործողությունն է ազդարարել Արցախյան պատերազմը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Տոդում առաջին անգամ հայ ազատամարտիկները բացեիքաց դուրս եկան ոչ միայն ադրբեջանական ուժերի, այլև՝ Խորհրդային Միության զորքի դեմ:

Տոդ գյուղի ազատագրման յուրահատկությունը ոչ միայն այս է, այլև այն, որ մարտական գործողություն էր իրականացվում մի տեղանքում, որտեղ բնակչությունը շարունակում էր իր առօրյա կյանքը: Ադրբեջանական կողմը չէր էլ կարող ենթադրել, որ դպրոցի ուսուցչուհու տունը վերածված է շտաբի, իսկ առավոտյան երեխային դպրոց տանող տղամարդը երեկոյան պատրաստվում է իրականացնել գյուղի պաշտպանությունը:

Տոդի գործողությունը տեղի է ունեցել երկարատև նախապատրաստական աշխատանքներից հետո, որի մեջ մտնում էին ինչպես հետախուզությունը, այնպես էլ եղած ուժերի գնահատումը և բաշխումը՝ ըստ ուղղությունների: Պատմական այս գյուղը բաժանվել էր երկու մասի, որի վերին հատվածում ապրում էին հայերը, իսկ ավելի հարթ տարածքներում՝ ադրբեջանցիները: Կարևոր է նշել, որ ադրբեջանցիները վերցրել էին ավելի հարմարավետ տարածքներ՝ քարքարոտ, անջրդի հողերը թողնելով հայերին: Ադրբեջանական ՕՄՕՆ-ը գյուղում իրեն թույլ էր տալիս ամեն տեսակի խուլիգանություն, անգամ 1991 թ. հոկտեմբերի 16-ին մտել էին Դանիելյանների տուն և սպանել ընտանիքի հինգ անդամներին¹: Գյուղն ազատագրելը դարձել էր օրհասական և հենց այս ժամանակ էլ Հադրութի շրջանի պաշտպանության ուժեղացման համար այստեղ են ուղարկվում ջոկատներ, որոնց գլխավորում էր Արկադի Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս)²:

Ինչպես հիշում է Կոմանդոսը, ազատամարտիկներն իրենք էին շտապեցնում, որպեսզի օր առաջ ազատագրեն գյուղը. «Թուղթ չունենալու պատճառով պատից պոկած պաստառների վրա էինք գծում ազատագրման քարտեզը: Տեղանքը մեր առաջ էր, համարակալել էինք ադրբեջանցիների տները, հատկապես այն տները, որտեղ ՕՄՕՆ-ականներ և զինտեխնիկա կային: Տոդը մեծ հաղթանակների սկիզբն էր, որի մեջ ընդգրկված էին ընտիր տղերք»³:

¹ Ղարաբաղի ազատագրումը տողից է սկսվել, «Հետք», 20 նոյեմբերի, 2006:

² Արկադի Տեր-Թադևոսյանի հետ հարցազրույցից:

³ Արկադի Տեր-Թադևոսյանի անձնական արխիվից:

Շտաբը տողեցի Կարինեի տունն էր (Կարինե Գրիգորյան)⁴, որտեղ ազատամարտիկները քննարկում էին հարձակման ուղղությունները, հանգստանում էին, անցկացնում իրենց առօրյան: Կարինեի հոր՝ Արմեն Գրիգորյանի խոսքով⁵ մինչդեռ տղաները պատրաստվում էին գյուղի ազատագրմանը, ինքը տունն էր վերանորոգում: Երբ հարցրել էին, թե ինչո՞ւ ես տունդ կառուցում, չէ՞ որ պատերազմ է, ի՞նչ իմանաս՝ ինչ կլինի, նա ասել է, որ չի պատրաստվում որևէ այլ տեղ տեղափոխվել՝ անգամ եթե ադրբեջանցիները գրավեն գյուղը: Միևնույն ժամանակ գործում էին գյուղի դպրոցն ու մանկապարտեզը: Հաճախ էին ազգամիջյան կոփվներ տեղի ունենում երեխաների միջև, որի հետևանքով օր օրի ավելի քիչ աշակերտներ էին հաճախում դպրոց ու մանկապարտեզ: Գյուղի մշակույթի տունը չէր գործում, որովհետև այն գտնվում էր հայկական և ադրբեջանական թաղերի միջակայքում:

Նախապատրաստական աշխատանքները զուգորդվում էր գյուղի բնականոն ընթացքի հետ: Անհրաժեշտ իրերի, զինամթերքի ձեռքբերման համար մշակվել էին ծածկանուններ: Դրանք երբեմն թույլընկալումների, զվարճալի պայմանների առիթ էին տալիս: Օրինակ՝ ռազմամթերքի անհրաժեշտության դեպքում խնդրում էին ուղարկել «օրագիր»: Այսպես՝ Տոդուն ռազմամթերքի պակաս կար, ինչի պատճառով գյուղից կապվել էին կենտրոն և ասել՝ անհրաժեշտ է «օրագիր»: Հաջորդ օրը ուղղաթիռով մեծ քանակությամբ դպրոցական օրագրեր էին ուղարկվել՝ զինամթերքի փոխարեն⁶:

⁴ Арутюнян Владимир, Флаг над Чинарой, Ереван, 2006, с. 26.

⁵ Հարցազրույցից հատված:

⁶ Ա. Տեր-Թադևոսյանի անձնական արխիվ:

Բացի հակառակորդի զինվորների շարժին հետևելուց, հայկական կողմը լսում էր նաև նրանց ռադիոհեռախոսները: Կապավորները՝ Գրիգոր Ամալյանը, Դավիթ Հարությունյանը, Արթուր Փափազյանը, նրանց հետ նաև մեկ տողեցի, պարզել էին, որ հակառակորդ կողմը նույնպես հետախուզություն է անցկացնում: Խորհրդային կապավորների զեկույցում մասնավորապես ասվել էր՝ տողեցի Վաչոյի տանը բնակվում է 5 հայ զինվոր: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Աշոտ Խաչատրյանը դիմում է ռազմական խորամանկության: «Մեր տղաներից մի քանիսն անցնում են խորհրդային զորքի զրահամեքենայի դիմացով, մենք լսում ենք, ասում են՝ հինգ հոգի հերթով անցան: Դա միտք առաջացրեց, որ կարող ենք խաղ սարքել, ցույց տալ, որ մարդիկ են գալիս, ինչ-որ տեղ են գնում: Մենք այդ ժամանակ 27 հոգի մարդ ունեինք: Մեր կողքին հենց գերեզմանոցն էր, շատ կարճ ճանապարհ կար այդտեղից դեպի գյուղ, մարդիկ հանգիստ գալիս էին, զրահամեքենայի մոտով անցնում, խորհրդային զինվորներին թվում էր, թե այդ մարդիկ իրենց չէին տեսնում, հետո կարճ ճանապարհով մի քանի հոգի վազելով գնում էին ու նորից զրահամեքենայի դիմացով հանգիստ անցնում: Մարդուն, որը նստած այդ ամեն ինչին էր նայում, թվում էր՝ զորք է, որ գալիս է: Ու սրանք անընդհատ զեկույցում են՝ 25 հոգի անցավ, 30 հոգի անցավ, 10 հոգի անցավ: Արկադին էլ էր լսում զեկույցը, երբ որ թիվը հասավ 200-ի, ասաց՝ Աշոտ, հերիք է, 200 հոգին լավ է, թե չէ կրոնեն մի գունդ կուղարկեն, որ հասկական՝ այդքան մարդ որտեղից է եկել: Հաջորդ օրն իմացանք, որ, բացի թվից, զեկույցել էին, որ զինտեխնիկա ունենք: Մի գիշերային ակնոց ունեինք, ամեն 5 հոգին անցնելուց հետո մի հոգուն փոխում

էինք, դա դրած էր անցնում: Ասել էին, որ վերջին մոդելի զենքեր ունենք», - պատմում է ազատամարտիկ Աշոտ Խաչատրյանը⁷:

Հայկական մեծաքանակ ուժերի մասին նշել էր նաև Ադրբեյջանի Հանրապետության գլխավոր դատախազ Իսմետ Գաիբովը՝ 1991 թ. նոյեմբերի 21-ին «Նովայա գազետա»-ին տված հարցազրույցում⁸:

Ճանապարհներն ականապատելու և թշնամու բոլոր հնարավոր ներխուժումները կանխելու համար Կարինեի եղբոր՝ Արթուրի արհեստանոցում պատրաստվեցին ականներ:

Այս գործընթացի ժամանակ գյուղացիներն անընդհատ անցնում էին արհեստանոցի կողքով և որպեսզի չխանգարեին նախապատրաստական աշխատանքներին, Արկադի Տեր-Թադևոսյանը հրամայել էր. «Оградите и поставьте плакаты» («Փակեք և ուղեկալ դրեք»): Նրանք էլ հասկացել էին, թե «շլանգ» ու բալոն պիտի դնեն: Գազի երկու բալոն էին բերել, մեջտեղով ռետինե խողովակ («շլանգ») անցկացրել:

Արմենյոն և իր ընկերներն ականապատել էին դեպի գյուղ տանող բոլոր ճանապարհները՝ բացառությամբ դեպի Ֆիզուլի տանող ճանապարհի, որպեսզի հակառակորդի խաղաղ բնակչությունն անարգել հեռանար գյուղից: Նրանք հայտնաբերեցին նաև թշնամու ականապատած տարածքները: Մարտական գործողությունը սկսելուց հետո դրանք ականազերծվեցին:

Շոշ գյուղի ջոկատի հրամանատար Արգամ Հարությունյանը (Ազոն) առաջին ալազան հրթիռները բերեց Տոդ. «Ուրիշ զենք մենք չունեինք այդ ժամանակ, որ որևէ արդյունավետություն

⁷ Հեղինակի անձնական արխիվ, հարցազրույց ազատամարտիկ Աշոտ Խաչատրյանի հետ, 2014 թ. հուլիսի 4:

⁸ «Новая газета», 21 ноября 1991.

ունենար, մեզ պետք էր զենք, որ թշնամու կրակակետերը հենց գործողության սկզբում լռեցնեինք, դրա համար էլ այդ ալազանը օգտագործեցինք», - հիշում է Աշոտ Խաչատրյանը⁹:

Տոդում առաջին անգամ դաշտային հիվանդանոց գործեց: Ստեփանակերտից եկավ բժիշկ Վալերի Մարությանը: Նրա հետ եկան 1 անեսթեզիոլոգ, վիրաբույժ Սերգեյ Մովսիսյանը, Վլադիմիր Մուսայելյանը և Նաիրան¹⁰: Նրանք գյուղի հիվանդանոցի բակում հիմնեցին դաշտային հոսպիտալ, որտեղ պետք է հիվանդներին և վիրավորներին անհրաժեշտ օգնություն ցուցաբերվեր: Դաշտային հիվանդանոցը համալրված էր անհրաժեշտ բոլոր սարքավորումներով, անգամ ամենաձանր վիրավորներին կարող էին ճիշտ ժամանակին օգնություն ցույց տալ:

Բժշկական օգնության առկայությունն ուներ նաև մեծ հոգեբանական նշանակություն, որովհետև մարտիկն ավելի վստահ է գնում կռվի այն ժամանակ, երբ գիտի, որ վիրավորվելու դեպքում իրեն ճիշտ ժամանակին օգնություն կցուցաբերվի:

Շուրջ երկշաբաթյա նախապատրաստական աշխատանքներից հետո՝ հոկտեմբերի 30-ին, ժամը 17.00-ին նախատեսված էր սկսել գործողությունը՝ Դավիթ Սարապյանի (Դևի)¹¹ և Արգամ Հարությունյանի (Շոշեցի Ագոյի) կրակային պատրաստությունից հետո: Դավիթը պետք է անցներ ադրբեջանական կողմը, նռնակը նետեր մորական պապի տան մեջ¹², որտեղ ՕՄՕՆ-ականներ

⁹ Հեղինակի անձնական արխիվ, հարցազրույց ազատամարտիկ Աշոտ Խաչատրյանի հետ, 2014 թ. հուլիսի 4:

¹⁰ **Марутян Валерий**, У войны долгий след, Ереван, 1996, с. 24.

¹¹ Давид был одним из лучших командиров, «Республика Армения», 03.02.1996 г.

¹² ДЭВ: жизнь, творчество, борьба, Ереван, 2006, с. 76.

էին գտնվում, իսկ Շոշեցի Ագոն պետք է կրակ բացեր ալազանից:

Գիշերը ժամը 02.00-ին Տողի ազատագրման գործողությունն ավարտված էր, գյուղն ամբողջությամբ հայկական կողմի վերահսկողության տակ էր: Արկադի Տեր-Թադևոսյանի տեղակալը՝ Աշոտ Խաչատրյանը, հիշում է, որ ադրբեջանցիների և հայերի բաժանման սահմանին էր մնացել գյուղի ակումբը և որևէ վնաս չէր կրել. «Բացեցի դուռը, տեսա՝ դաշնամուր է դրված: Գիշերվա լուսության մեջ սկսեցի նվագել, եկան տղաները, իսկական քեֆի վերածվեց, առավոտյան արդեն ողջ Հադրութի շրջանը գիտեր մեր հաղթանակի մասին»¹³:

Տող գյուղի ազատագրման ժամանակ հայկական կողմը կորուստներ և վիրավորներ չունեցավ, ինչն ավելի բարձրացրեց ազատամարտիկների և տեղի բնակչության ոգևորությունը: Մարտակերտի հրամանատար Վլադիմիր Բալայանն անգամ Մարտակերտ էր վերադարձել զենքն ուսին՝ ի տես ադրբեջանցիների և խորհրդային ուժերի, ինչն այն ժամանակ շատ վտանգավոր քայլ էր: Տողի ազատագրումով մարդիկ սկսեցին հավատալ տեղի ինքնապաշտպանական ուժերին և այն գաղափարին, որ մի օր Արցախը կազատագրվի ադրբեջանական հարձակումներից:

Նոյեմբերի 2-ին հայկական կողմի հետ բանակցություններ վարելու և ադրբեջանական խաղաղ բնակչությանը գյուղ վերադարձնելու համար Տող եկան խորհրդային հրամանատարներ, այդ թվում՝ ադրբեջանցիներ՝ գեներալ Լեբեդի գլխավորությամբ: Նրանց հետ բանակցությունների էին գնացել Վիգեն Գրիգոր-

¹³ Հեղինակի անձնական արխիվ, հարցազրույց ազատամարտիկ Աշոտ Խաչատրյանի հետ, 2014 թ. հուլիսի 4:

յանն ու Լևոն Մելիք-Շահնազարյանը: Խորհրդային հրամանատարներն ադրբեջանցիներին վերադարձնելու հարցում շեշտը դրել էին հատկապես մարդասիրական հանգամանքների վրա¹⁴:

Բանակցություններից առաջ Լևոն Մելիք-Շահնազարյանն ու Վիգեն Գրիգորյանն աղբյուրի մոտ հանդիպել էին խոհանոցում աշխատող մի զինվորի, որը բերել էր ավստները լվանալու: Երբ Մելիք-Շահնազարյանը հարցրել էր՝ որտեղի՞ց է, ասել էր՝ Ուզբեկստանից: «Ուզբեկերեն սկսեցի հետը խոսել, հետո շուտ եկա, Վիգենին ռուսերեն ասացի, որ հանկարծ այս «եղբորս» ոչ ոք չփորձի նեղացնել: Վիգենն էլ ի ծնե դերասան էր, ասաց՝ ի՞նչ ես ասում, որ քո բարեկամն է, շատ կհարգենք: Զինվորների համար տուփերով ձվեր էին դրված, նայեց, ասաց՝ երեք տուփ ձուկա, կբերես: Գեներալի հետ նստած ենք, գալիս է ուզբեկը՝ երեք տուփ ձուն ձեռքին, գեներալը մի քանի անգամ ասում է՝ զինվո՛ր, դուրս արի այստեղից, դուրս չի գալիս, ես ուզբեկերեն ասացի, որ դուրս գա, հետո կխոսենք, ինքը դուրս եկավ ու գնաց: Հետո եկավ կապիտան Միշալինը, չէր կարողանում ծիծաղը զսպել: Պատմեց, որ դռան մոտ ուզբեկին է հանդիպել, չի թողել ներս մտնի, երբ հարցրել է՝ ի՞նչ է եղել, Ժպիտը դեմքին ասել է. «Там большой человек, место армян переговоры ведет, мой земляк» («Այնտեղ իմ հայրենակիցն է, մեծ մարդ է, հայերի փոխարեն բանակցություններ է վարում»)¹⁵:

Տողի ազատագրումից հետո որոշվեց ազատագրել Հադրութի շրջանի մեկ այլ բարձունք՝ Սարինշենի հեռուստաաշտարակը, որի շնորհիվ կանխվեց հեռուստաաշտարակի բարձունքից

¹⁴ Հեղինակի անձնական արխիվ, հարցազրույց Լևոն Մելիք-Շահնազարյանի հետ, 2014 թ. օգոստոսի 15:

¹⁵ Նույն տեղում:

Հաղորդը կրակի տակ պահելու աղբրեջանական վտանգը, փակվեց աղբրեջանցիների՝ Ջաբրահիլից Հաղորութ օգնության հասնելու ճանապարհը:

1991 թվականի նոյեմբերի սկզբին իրավիճակը Հաղորութի շրջանում խիստ լարված էր: «Օղակ» գործողության իրականացման ճանապարհին աղբրեջանական ՕՄՕՆ-ը հայաթափում էր շրջանի գյուղերը¹⁶: Հեռուստաաշտարակը, որտեղից ոչ վաղ անցյալում եթեր էին հեռարձակվում հայկական հաղորդումները, դարձել էր ՕՄՕՆ-ականների որջ: Հեռուստաաշտարակի շրջակայքի հետախուզության հրամանը տրվել էր դեռևս սեպտեմբերի 28-ին, սակայն հանգամանքների բերումով առաջինն ազատագրվեց Տողը, հետո միայն Սարինշենը: Նոյեմբերի 10-ին արդեն հայ հետախույզները բերել էին Խորհրդային ներքին զորքերի եւ աղբրեջանական ՕՄՕՆ-ի վերաբերյալ տվյալները: Ըստ այդ տվյալների՝ Սարինշենի բարձունքում շուրջ 35 զինվոր կար՝ լավ զինված եւ անհրաժեշտ տեխնիկայով, իսկ խորհրդային զորքը կարող էր օգնություն ցույց տալ Արակյուկ-Ջաբրահիլ ուղղությամբ:

Ազատամարտիկ Անդրանիկ Սարիբեկյանը պատմում է, որ հետախուզության ժամանակ ինքն ընկերների հետ Հաղորութ էր մեկնել հասարակ հագուստով, որպեսզի չտարբերվեն տեղացիներից, գիշերներն անցկացնում էին հետախուզությունը. «Մեր մարտական ընկեր Համլետ Մարտիրոսյանի տանն էինք մնում, իսկ գիշերները հետախուզում էինք տարածքը, քնում քնապարկերում՝ հենց ձյան վրա»¹⁷:

¹⁶ «Авиация в Армяно-Азербайджанском конфликте», с. 2, док. архива.

¹⁷ Հեղինակի անձնական արխիվ, հարցազրույց ազատամարտիկ Անդրանիկ Սարիբեկյանի հետ, 2014 թ., հուլիսի 17:

Նոյեմբերի 15-ին, առավոտյան ժամը 4-ին Արկադի Տեր-Թադեոսյանը ջոկատներին հրաման տվեց սկսելու գործողությունը: Մարտը ծանր էր, ազատամարտիկների շարքերում կային վիրավորներ: Հայկական կողմի մարտիկներից մեկն անզգուշաբար կրակել էր խորհրդային զինվորների ուղղությամբ, ինչի հետեանքով փոխադարձ կրակ էր բացվել: Աշոտ Խաչատրյանի խոսքով՝ իրենք ստիպված էին դադարեցնել գործողությունը եւ բանակցել խորհրդային կողմի հետ: Շուրջ քսան րոպե բանակցություններից հետո մարտը վերսկսվեց: Անդրանիկ Սարիբեկյանը հիշում է, որ իրավիճակը փոխվեց հոգուտ հայկական կողմի այն բանից հետո, երբ ինքը հրանոթից կրակեց հեռուստաաշտարակի պատուհանի մեջ: Զգալով պարտության վտանգը՝ ադրբեջանցիները կապվել էին Ջաբրաիլ եւ օգնություն խնդրել յուրայիններից, ինչպես նաեւ դիմել էին խորհրդային հրամանատարությանը: «Եթե օգնությունը հասներ տեղ, գործողությունը կտապալվեր, որովհետեւ մենք չունեինք ռազմամթերք, որոշեցինք հեռուստաաշտարակում գտնվող ադրբեջանցիներին առանց զենքի հանձնել խորհրդային կողմին», - նշում էր Արկադի Տեր-Թադեոսյանը: Շրջափակված զինվորներին հանձնելուց հետո՝ հայկական կողմը մտավ հեռուստաաշտարակ: Ներսում բավականին մեծ քանակությամբ ռազմամթերք կար, որ թողել էին ադրբեջանցիները, ճաշարանում սնունդ էր մնացել. «Պատերին փակցված էին ճաշացանկը եւ այլ գրություններ, որոնցից տարբերվում էր մեկը՝ «Здесь был Джабраильский ОМОН и Тигр-2», հետո, երբ տեսա այդ վագրերի վիճակը՝ արյունոտ ընկած...»¹⁸:

¹⁸ Հեղինակի անձնական արխիվ, հարցազրույց ազատամարտիկ Անդրանիկ Սարիբեկյանի հետ, 2014 թ. հուլիս:

Ներկայացնենք նաև մի միջադեպ՝ Արակյուլի ուղղությամբ հսկողություն սահմանած Համլետ Մարտիրոսյանի դիրքից: Նա ժամը 06:00-ի սահմաններում իր դիրքի ուղղությամբ ծայներ է լսել. «Ընտրելով լավ դիրք նշված տեղում՝ սկսեցինք գաղտնի հետևել Զաբրաիլից եկող ճանապարհի անցուդարձին: Առավոտ էր և ցուրտ, որոշեցի մի քիչ շարժվել և սկսեցի ֆիզիկական վարժություններ անել: Հենց այդ թույլին թիկունքից շշուկներ լսվեցին և տեսնելով երկու հոգու ուրվագիծը՝ ռուսերենով բղավեցի. «Գաղտնաբա՛ռը»: Ինչպես որոշվել էր շտաբում, եթե ինչոր մեկը գա, պետք է գաղտնաբառն ասի, որը «խողովակ» (“труба”) բառն էր, որն ադրբեջանցիները հստակ չեն արտաբերում): Մթության միջից լսվեց.

- Ո՞վ եք:

Ես պատասխանեցի.

- N 7 դիրքի հրամանատար սերժանտ Պետրով:

Ի պատասխան՝ լսեցի.

- Այնտեղ հայերն են հարձակվել, այնտեղ հայերն են հարձակվել՝ ասես փչացած մագնիտոֆոն լիներ միացրած:

Նրանք մոտեցան ինձ և առանց կանգնելու կորան մթության մեջ՝ դեպի Զաբրաիլ տանող ուղղությամբ: Ես կրակ բացեցի նրանց ուղղությամբ: Սպանվածների փաստաթղթերի մեջ գրված էին անունները՝ ոստիկանության լեյտենանտ Սամեդով Ահմադագա Ասլան Օղլի և Մամեդով Կազիմ Էրշադ Օղլի:

Նրանցից վերջինին տրվել է Ադրբեջանի Հանրապետության Ազգային հերոսի կոչում, զոհվելու տարեթիվը նշված է՝ 15.11.1991, վայրը՝ Զաբրաիլ¹⁹:

¹⁹ Ինքնության վկայականը պահվում է Արկադի Տեր-Թադևոսյանի անձնական արխիվում:

Այսպիսով՝ Սարինշենի հեռուստաաշտարակի ազատագրումը Տոդից հետո երկրորդ գործողությունն էր, որն իրականացվեց ըստ մարտական պլանի, ազատագրվեց տարածք և որ ամենակարևորն է՝ ազատամարտիկները կռվեցին բացեիբաց:

Այս գործողությամբ հայ կամավորական ջոկատները չեզոքացրին Զաբրախիլից սպասվող հարձակումը Հադրութի և շրջակա գյուղերի ուղղությամբ: Չեզոքացնելով Սարինշենի հենակետը՝ հայ բնակչությունը խաղաղ ապրելու հնարավորություն ստացավ:

Խորհրդային ուժերն ու ադրբեջանական ուժային կառույցները ստիպված եղան ճանաչելու Արցախի ինքնապաշտպանական ուժերը, սկսեցին բանակցություններ վարել նրանց հետ:

Մարտական գործողության ժամանակ հակառակորդն ունեցավ ոչ միայն տարածքային և նյութական, այլև մարդկային կորուստեր: Ցավոք, հայկական կողմը ևս ունեցավ կորուստներ՝ 4 զոհ և 21 վիրավոր:

Ադրբեջանական ՕՄՕՆ-ի շարքերում Սարինշենի ազատագրումից հետո առաջացած խուճապը հայ կամավորականների և Արցախի բնակչության մեջ առաջացրեց ոգևորություն՝ Արցախն ադրբեջանական զորամասերից մաքրելու գործում:

Ануш С. Амирбемян, *Институт истории НАН РА, Повседневная жизнь добровольцев в начальный период Арцахской войны (по примеру Того и Сариншена).*

В статье описана повседневная жизнь добровольцев в 1991 году, до освобождения сел Тог и Сариншен. Описывается ход подготовительных работ и боевых действий. В статью включены также записи из интервью с добровольцами.

**Anush S. Amirbekyan, *Institute of History of the NAS RA*,
The Everyday Life of Volunteers in the First Days of the War
in Artsakh (on the example of villages Togh and Sarinshen).**

The article describes the daily life of the volunteers in 1991, before the liberation of the villages of Tog and Sarinshen. The course of preparatory work and military operations is described. The article also includes transcripts from interviews with volunteers.

ՆԱՐԻՆԵ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԱԱ պարմության ինստիտուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Քանալի քառեր՝ եկեղեցի-պետություն փոխհարաբերություններ, արժեքային ճգնաժամ, հոգևոր անվտանգություն, ազգային ինքնության պահպանում, բնականոն արդիականացում, հոգևոր զարթոնք:

Հայաստանում գիտության արդիական մարտահրավերների և կարևոր խնդիրների թվին են դասվում **եկեղեցի-պետություն** փոխհարաբերությունների, հասարակական կյանքում եկեղեցու դերակատարության, կրոնական բազմախոհության և հանդուրժողականության, խղճի ազատության, ավանդական եկեղեցիների և ոչ ավանդական կրոնական կազմակերպությունների փոխհարաբերությունների ուսումնասիրությունը: Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները հատուկ ենք համարում ուսումնասիրել ազգային ինքնության պահպանության համատեքստում, որ պայմանավորված է պատմական հոլովույթում Հայ Առաքելական Եկեղեցու ունեցած տեղով, դերով և այն մարտահրավերներով, որ ներկայումս ծառացել են հայ հասարակության առջև:

Արդի ցանցային կառավարման պայմաններում պետականաշինության, եկեղեցաշինության և ազգապահպանման գոր-

ծընթացները մեծապես առնչվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացու հոգևոր անվտանգության ապահովմանը: Անցել են այն պատմական ժամանակները, երբ պետականազուրկ հայ մարդը Հայ Առաքելական Եկեղեցու (ՀԱԵ) միջոցով փորձում էր լուծել իր գոյաբանության խնդիրները: Չթերագնահատելով ՀԱԵ տեղն ու դերը, նշենք, որ այսօրվա ցանցային կառավարումը, գլոբալացումը և ինտեգրացումը նոր մարտահրավերներ են նետել և՛ հայ եկեղեցու, և՛ հայ պետության առջև, ուստի դրանք պահանջում են օբյեկտիվ վերաբերմունք և լուծումներ: Այդ նկատառումներով էլ աշխատանքի հետագա զարգացումներում կկարևորենք պետության և եկեղեցու հարաբերությունների կայացման, զարգացման և բնականոն արդիականացման անհրաժեշտությունը՝ ելնելով նրա ինստիտուցիոնալ գործառման կառուցակարգից և սահմանադրությունից սահմանադրականության անցման հրամայականներից¹:

1991 թ. սեպտեմբերին Հայաստանի անկախության հռչակումից հետո մշակվեց եկեղեցի-պետություն համագործակցության նոր ուղի:

Քաղաքական անկայունության պայմաններում 1995 թ. հունիսի 5-ի հանրաքվեով ընդունվեց ՀՀ Սահմանադրությունը, որի մեջ Հայ Առաքելական Եկեղեցու մասին չկար որևէ դրույթ՝ բացառությամբ 23-րդ հոդվածի, որով մասնավորապես նշվում էր. «Յուրաքանչյուր մարդ ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք: Կրոնի և համոզմունքների արտահայտման

¹ Հարությունյան Գ.Գ., Սահմանադրությունից՝ Սահմանադրականություն, Երևան, Նժար, 2004, էջ 140:

ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով»²: Հայ Առաքելական եկեղեցու դերը գնահատվեց 2005 թ. նոյեմբերի 27-ին ընդունված Սահմանադրությամբ, որում առկա է նախկին սահմանադրության համանուն 23-րդ հոդվածը, սակայն, սրանից զատ, ավելացել է նաև 8.1. հոդվածը, որն է՝ «Հայաստանի Հանրապետությունում եկեղեցին անջատ է պետությունից: Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում: ՀՀ-ում երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով գործող բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը: Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով»³: Այս հոդվածում ակնհայտ է պետության կողմից եկեղեցու դերի արժևորումը թե՛ պատմական անցյալում, թե՛ ներկա կյանքում: Հոդվածում Հայոց եկեղեցին համարվում է ազգային, որը մատնանշում է Հայ Առաքելական եկեղեցու ամենամեծ առաքելությունը՝ ազգային ինքնության պահպանումը և մշակույթի զարգացումը: Հոդվածի վերջին հատվածը մատնանշում է **եկեղեցի-պետություն** հարաբերությունը:

Քննարկվող հարցադրումները նորովի մեկնաբանվեցին 2015 թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրությամբ: Նոր սահմանադրության մեջ «Պետությունն ան-

² Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունված 1995, հոդված 23:

ջատ է եկեղեցուց» դրույթը փոխարինվել է «կրոնական կազմակերպություններն անջատ են պետությունից» դրույթով⁴։ Հայ Առաքելական Եկեղեցուն նվիրված է առանձին հոդված, որտեղ խոսվում է վերջինի բացառիկ դերակատարության մասին⁵, հոդված 41-ում՝ «Մտքի, խղճի և կրոնի ազատության» երկրորդ դրույթում ավելացել է «պետական անվտանգությունը»՝ որպես միջամտելու իրավաչափ նպատակ։ «Մտքի, խղճի և կրոնի ազատության արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»⁶։

Ինչպես հայտնի է, Հայ Առաքելական Եկեղեցին իր գործունեության իրականացման համար համագործակցում է պետության հետ համաձայնագրերի միջոցով, ապահովելով իր մուտքը տվյալ ինստիտուտների իրավասության ու գործունեության դաշտ։

«ՀՀ խղճի ազատության և կրոնական կազմակերպության մասին» օրենքի համաձայն, ՀՀ-ն Հայոց եկեղեցուն, ի թիվս այլ արտոնությունների, որպես մենաշնորհ և օրենքով սահմանված

³ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունված 2005 թ., հոդված 8.1։

⁴ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունված, 2015 թ., հոդվ. 17, http://www.parliament.am/law_docs5/Sahmanadrutyun_06.12.2015.pdf

⁵ Նույն տեղում, հոդվ. 18։ http://www.parliament.am/law_docs5/Sahmanadrutyun_06.12.2015.pdf

⁶ Նույն տեղում, հոդվ. 41.2 http://www.parliament.am/law_docs5/Sahmanadrutyun_06.12.2015.pdf

կարգով արտոնում է նպաստել հայ ժողովրդի հոգևոր կրթությանը պետական կրթական հաստատություններում⁷:

ՀՀ կրթական հաստատություններում Հայ Առաքելական եկեղեցու գործունեությունն իրականացնում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը (ՔԴԿ), որի նպատակն է կերտել ազգային ինքնությամբ, ազգային մշակութային և հոգևոր-բարոյական արժեհամակարգով պետության օրինակելի քաղաքացիներ և որի գործունեության ոլորտներն են՝ նախադպրոցական կրթությունը, միջնակարգ ընդհանուր կրթությունը, հատուկ ընդհանուր կրթությունը (նաև մանկատները), մեկօրյա կրթությունը, նախնական, միջին մասնագիտական կրթությունը, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունը⁸: Պետական կրթական հաստատություններում պետության և եկեղեցու համագործակցության արդյունք է 1995 թվականին ԵՊՀ-ում Աստվածաբանության ֆակուլտետի հիմնումը⁹, Հայոց եկեղեցու պատմության առարկայի դասավանդումը ՀՀ հանրակրթական դպրոցներում (2002 թ. օգոստոսի 22-ին ՀՀ և Հայոց եկեղեցու միջև կնքվեց համաձայնագիր, ըստ որի բոլոր դպրոցներում սկսեց դասավանդվել Հայոց եկեղեցու պատմության առարկան):

Հոգևոր անվտանգության տեսակետից կարևոր համաձայնություն է 1997 թվականին Գարեգին Ա կաթողիկոսի նախաձեռնությամբ ստեղծված «ՀՀ Ձինված ուժերի հոգևոր ծառայութ-

⁷ ՀՀ օրենքը «փոքրի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին, հոդվ. 17, ինչպես նաև ՀՀ օրենքը «ՀՀ և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին», հոդվ. 8:

⁸ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի գործունեության հայեցակարգ, <http://www.armenianchurch.org/index.jsp?sid=1&id=105&pid=4>

⁹ Նույն տեղում:

յունը», որի նպատակն էր զինծառայողներին և սպայական կազմին քրիստոնեա-բարոյական և ազգային հայրենասիրական ոգով դաստիարակելը: Դրանից զատ հետամտվում է հոգևոր գիտելիքների հարստացումը, որպեսզի Հայոց եկեղեցու կողմից մերժված կրոնական ուսմունքները և աղանդները չներթափանցեն ՀՀ Զինված ուժեր¹⁰: Հոգևոր ծառայողը զորամասի դաստիարակչական գծով տեղակալի հետ կազմում է կրթական ծրագրեր և դրանց հիման վրա զինծառայողների հանգստի ժամերին անցկացնում է հոգևոր դասընթացներ: Թեմաները տարատեսակ են: Չնայած այս ծառայությունն իր նպատակներով և խնդիրներով զուտ կրոնական-հոգևոր առաքելություն է իրականացնում, սակայն ակնհայտ են այդ հոգևոր առաքելության նաև սոցիալ-հոգեբանական, միջանձնային հարաբերություններին վերաբերող տեսանկյունները, որոնց հաղթահարման նպատակով հոգևոր ծառայողը ընտրում է տվյալ միջավայրում առավելապես «արդիական» թեմաներ:

Այս խմբային և անհատական հանդիպումները հիմնված են լինում հոգևոր, քրիստոնեական արժեքների վրա: Հաճախ նաև հոգևոր ծառայողն ինքն է հանդիսանում անհատական հանդիպման նախաձեռնողը, երբ զինծառայողի մոտ նկատում է խիստ ընկճվածություն, հոգեկան ծանր վիճակ կամ ոչ համարժեք վարքային դրսևորումներ:

Նմանօրինակ համագործակցություն է Մայր Աթոռի և Արդարադատության նախարարության միջև կնքված համաձայնագիրը, որով բոլոր քրեակատարողական հիմնարկներում և նույնիսկ քննչական մեկուսարաններում պետք է ապահովված լինի

¹⁰ Հայաստանի Հանրապետության Զինված ուժերում Հայ Առաքելական եկեղեցու հոգևոր ծառայության կանոնադրություն, 14.09.2000 թ.:

ՀԱԵ հոգևոր սպասավորի ներկայությունը¹¹: Առաքելությունը նույնն է, ինչ-որ «Զինված ուժերի հոգևոր ծառայության» պարագայում:

ՀԱԵ համագործակցում է նաև տեղական և միջազգային հասարակական, բարեգործական կազմակերպությունների հետ:

Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի «ԵՀԽ» Հայաստանյան կլոր սեղանը (ՀԿՍ) ստեղծվել է 1996 թ. Հայ Առաքելական Եկեղեցու և ԵՀԽ-ի համատեղ նախաձեռնությամբ, Հայ Ավետարանական ու Հայ Կաթոլիկ Եկեղեցիների մասնակցությամբ: ՀԿՍ-ն իր ստեղծման օրվանից աշխատում է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն պատրիարք և Ամենայն Հայոց կաթողիկոսի հովանու ներքո և համախմբելով հայ եկեղեցիների, տեղական հասարակական կազմակերպությունների, եկեղեցուն հարող գործընկերների ուժերը՝ միասնաբար պայքարում է երկրի առանցքային սոցիալական և տնտեսական հիմնախնդիրների լուծման համար¹²: 2003 թվականից կազմակերպությունն ունի հիմնադրամի կարգավիճակ և գրանցված է ՀՀ Արդարադատության նախարարությունում «Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական Կլոր սեղանի հիմնադրամ» անվամբ: ՀԿՍ ղեկավար մարմինը պարբերաբար գումարվող Հոգաբարձուների խորհուրդն է, որը բաղկացած է վերոհիշյալ երեք հայ եկեղեցիների և երկու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից:

¹¹ Հայ Առաքելական եկեղեցին Հայաստանի անկախությունից հետո: Տե՛ս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական կայքէջ՝ <http://www.armenianchurch.org/index.jsp?sid=1&id=5624&pid=61>

¹² Ենգիբարյան Վ., Չախոյան Ա., Հոգևոր իրավունքի հիմունքներ, «Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական կլոր սեղանի հիմնադրամի (ՀԿՍ) ստեղծումն ու գործունեության հիմնական ոլորտները», Երևան, 2011, էջ 103:

ՀԿՍ առաքելությունն է. եկեղեցիների և քաղաքացիական հասարակության խմբերի գործունեության միջոցով աջակցել Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի կարիքավոր բնակչությանը:

ԵՀԽ Կլոր սեղանն օժանդակում է Հայ եկեղեցու սոցիալական դերի բարձրացմանը, նպաստում է վանքապատկան հողերի և տնտեսությունների վերականգնմանը, ֆինանսավորում է եկեղեցու կողմից իրականացվող առանձին կրթական և սոցիալական ծրագրեր: Բավական սերտ է համագործակցությունը նաև թեմերի հետ¹³:

Ծրագրերի մեծամասնությունում եկեղեցին ունենում է մարդկային ռեսուրսների ներդրում՝ հոգևորականներ, շինարարության անցկացման դեպքում՝ կամավորներ և այլն: Շատ դեպքերում (ծրագրի կարիքներից ելնելով) տրամադրվում է համապատասխան տարածք թեմերում (եկեղեցիների և վանքապատկան հողերի շրջանակներում), իսկ Կլոր սեղանի գործունեության համար հատկացվել են գրասենյակներ Էջմիածնում՝ Մայր Աթոռի տարածքում:

Հայ Առաքելական Եկեղեցու մշտական հոգածության ներքո են եղել նաև մանկատներն ու ծերանոցները¹⁴: Բացի շարունակական ֆինանսական և նյութական աջակցությունից, եկեղեցու անդամները սեփական նախաձեռնությամբ այցելում են այս հաստատությունները նաև սոցիալ-հոգեբանական աջակցության և հոգևոր ծառայություններ իրականացնելու համար: Այս ոլորտում հատկապես ակտիվ է եկեղեցու «Երիտասարդաց միությունը»: Միության խմբերը հաճախակի այցելում են ման-

¹³ Նույն տեղում, էջ 103:

¹⁴ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական կայքէջ՝ <http://www.armenianchurch.org/index.jsp?sid=1&id=5624&pid=61>

կատներ և տարեցների տուն-ինտեռնատներ, կազմակերպում են մեկանգամյա միջոցառումներ կամ երկարատև գործունեության խմբակներ: Հիմնական նպատակն է դժվար պայմաններում գտնվող երեխաների ու տարեցների շփման և ժամանցի կազմակերպումը, հոգեբանական աջակցությունն ու հոգևոր թեմաներով զրույցները:

2001 թվականից Երևանում սկսեց գործել Թուֆենկյան բարեգործական հիմնադրամի «Մենք պարտավոր ենք ապրել»¹⁵ ծրագիրը: 2002 թ. ծրագիրը մեկնարկեց Մեծամորում՝ Արմավիրի թեմի առաջնորդ Սիոն Եպիսկոպոս Ադամյանի հրավերով: Արմավիրի թեմի շահագրգռվածության գլխավոր պատճառը՝ ծրագրի իրականացման համար, մարզում աղանդավորության մեծ տարածվածությունն էր և դրանից բխող այլ հիմնախնդիրները: 2003 թ. այն իր շարունակությունը ստացավ Վանաձորում: Ծրագրի նպատակն է՝ տարբեր ծառայությունների միջոցով օգնել սոցիալապես անապահով ընտանիքներին ինտեգրվել հասարակությանը և սոցիալականացվել: Սկզբնապես ծրագրի հիմնական ուղղությունը ֆինանսական և նյութական աջակցության ցուցաբերումն էր, սակայն 2002 թ. սկսած՝ շեշտադրումները փոխվեցին: Ծրագրի մեջ առանցքային նշանակություն ստացավ հոգևոր առաքելության իրականացումը, առանձնակի կարևորվեց շահառուների հոգևոր կարիքների բավարարման անհրաժեշտությունը:

Ծրագրում ներգրավված են հիմնականում այն ընտանիքները, որոնք ունեն դպրոցահասակ երեխաներ, սակայն ծրագիրն

¹⁵ <http://hetq.am/arm/news/38070/metsamorom-angortsutyuny-kortsanum-e-yntaniq-nerin.html>. Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական կայքէջ՝ <http://www.gov.am/am/news/item/2653/>

ավարտածները շարունակում են իրենց համագործակցությունը։ Ստեղծվել է «Երիտասարդաց միություն», որի անդամները շաբաթը 2 անգամ հանդիպումներ են ունենում հոգևորականների հետ։

Հոգևորականների դերը առանցքային է նաև բուն ծրագրի մեջ։ Ենթադրվում է ընտանիքի հետ շարունակական հանդիպումների և հոգևոր զրույցների միջոցով սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրների լուծում։ Առանձնահատուկ դեպքերում, երբ հոգևորականն ու մյուս մասնագետները գործ են ունենում միևնույն խնդրի հետ, երբեմն ավելի կիրառական և արդյունավետ է լինում հոգևորականի մոտեցումը։ Օրինակ՝ երեխաների ունեցած վախերի հետ աշխատելիս հոգեբանական մեթոդներն ու ձևերը հաճախ իրենց արդյունավետությամբ և ազդեցությամբ զիջում են հոգևոր զրույցների ու աղոթքների միջոցով ձեռք բերված արդյունքներին։ Ծրագրի որոշակի փուլերում այն ընտանիքները, որոնք մինչ այդ շահագրգռված էին առավելապես նյութական օգնությամբ, ցանկություն են հայտնում հանդիպել քահանային։ Ծրագրի ընթացքում իրականացված մոնիտորինգն ու գնահատումը ցույց են տվել, որ գրեթե բոլոր ընտանիքները մեծապես բավարարված են այդ հանդիպումներից և ցանկանում են տեսնել դրանց շարունակությունը։

2007 թ. փետրվարի 22-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության և Հայ Առաքելական եկեղեցու հարաբերությունների մասին» օրինագիծով¹⁶ ազգային եկեղեցին տարանջատվեց երկրում գործող մյուս կրոնական կազմակերպություններից՝

¹⁶ Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական կայքէջ՝ http://www.gov.am/u_files/file/kron/kekegeci.pdf

հայ ժողովրդի կյանքում ազգային եկեղեցու բացառիկ դերի ու նշանակության ընդգծումով:

Փաստորեն, ՀԱԵ-ն կարողացել է քաղաքական ժամանակ և տարածություն անցնել՝ պահպանելով իր ինստիտուցիոնալ կարգավիճակը, սակայն, արդի գլոբալացման պայմաններում հայտնվել է լուրջ և բազմամակարդակ ցանցային մարտահրավերների տիրույթներում: Մի կողմից քաղաքական զարգացման ճգնաժամերը, մյուս կողմից ժողովրդավարության որակի բարձրացման հրամայականներն անտեսել են դարերի ընթացքում Հայ Առաքելական Եկեղեցու և պետության երկխոսության կուտակած փորձը: Ազատական ժողովրդավարության հետևանքով առաջացած սոցիալական բևեռացումը երկրում ստեղծել է արժեքային ճգնաժամ: Ուստի պետք է սկիզբ դնել հոգևոր զարթոնքին՝ բնականոն ընթացքով արդիականացնելով ազգային ինքնության արժեհամակարգը:

Нарине А. Арутюнян, *Институт истории НАН РА, Из истории деятельности Армянской Апостольской церкви в Республике Армения.*

Армянская Апостольская Церковь в Республике Армения выполняет свои функции на основании соглашений, регулирующих церковно-государственные отношения. В то же время решается вопрос повышения социальной роли Армянской Апостольской церкви, для чего реализуются различные программы благотворительной и социальной помощи.

Narine A. Harutyunyan, *Institute of History of the NAS RA,*
From the History of the Activity of the Armenian Apostolic
Church in the Republic of Armenia.

The Armenian Apostolic Church in the Republic of Armenia performs its functions based on the agreements regulating church-state relations. At the same time, the issue of increasing the social role of the Armenian Apostolic Church is being addressed, for this purpose various charitable and social assistance programs are being implemented.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿ Շ. ՄԱՀՏԵՍՅԱՆ

Անդրկովկասի վարչատարածքային բաժանման խնդիրը
թիֆլիսյան զեմսովային խորհրդակցության քննարկում-
ներում (1917 թ. հոկտեմբերի 14–15) 3

ԱՐԱՄ Ս. ՍԱՅԻՅԱՆ

Պոնտոսի հարցը և հայ-հունական չստացված համագոր-
ծակցությունը 18

ՄԱՐԻԱՄ Վ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Միացյալ և անկախ Հայաստանի մասին հայտարարու-
թյան արձագանքը պոլսահայ մամուլի էջերում 52

ԳՈՒՐԳԵՆ Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Խորհրդային Հայաստանում միջին մասնագիտական
կրթական համակարգի ձևավորման պատմությունից
(1921–1925 թթ.) 67

ՀԱՄՈՎ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Հոգևորականները Խորհրդային Հայաստանում 1920-
ական թվականներին (առօրեականության դրվագներ) ... 83

ՍՏԵՓԱՆ Գ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

Հայաստանի տրոպիկական ինստիտուտի ստեղծումն ու
գործունեությունը 108

ՍԵՂԱ Տ. ՕՀԱՆԵԱՆ

Իրաքի Հալեզք և յարակից գիւղերու հիմնադրումը,
գարգացումն ու անկումը (1929–1970-ական թթ.) 124

ԳԱԳԻԿ Ա. ԺԱՄՀԱՐՅԱՆ

Ուշ ստալինյան դարաշրջանի խորհրդային առօրեակա-

նության պատմությունը արդի ռուսաստանյան պատմագրության մեջ	142
ԱՆԻ Ա. ՖԻՇԵՆԿՃԵԱՆ	
Սուրիահայության օժանդակությունը 1988 թ. Սպիտակի երկրաշարժին տուժած հայրենիքին	166
ՌՈՒԲԵՆ Լ. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ	
ՀՀ և ՌԴ միջև ռազմաքաղաքական համագործակցության սկզբնավորումն ու զարգացումը 1991–2008 թթ.	191
ԱՆՈՒՇ Ս. ԱՄԻՐԲԵԿՅԱՆ	
Կամավորականների առօրյան Արցախյան պատերազմի սկզբնական փուլում (Տոդի և Սարինշենի օրինակով)	221
ՆԱՐԻՆԵ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	
Հայաստանի Հանրապետությունում Հայ առաքելական եկեղեցու գործունեության պատմությունից	234

СОДЕРЖАНИЕ

ГАЙК Ш. МАЙТЕСЯН

Вопрос административно-территориального деления Закавказья в обсуждениях земского совещания (1917 г., 14–15 октября)	3
--	---

АРАМ С. САИЯН

Понтийский вопрос и несостоявшееся армяно-греческое военное сотрудничество	18
--	----

МАРИАМ В. ОВСЕПЯН

Отклик прессы издаваемой в Константинополе на объявление о Единой и Независимой Армении	52
---	----

ГУРГЕН В. ВАРДАНЯН

Из истории формирования средне-специального образования системы в Советской Армении (1921–1925 гг.)	67
---	----

АМО К. СУКИАСЯН

Священнослужители в Советской Армении в 1920-е гг. (эпизоды повседневной жизни)	83
---	----

СТЕПАН Г. ГАРИБДЖАНЯН

Создание и деятельность Тропического института Армении	108
--	-----

СЕДА Д. ОГАНЯН

Возникновение и упадок армянского Хаврезка и прилегающих деревень (1929–1970-е годы)	124
--	-----

ГАГИК А. ЖАМГАРЯН

Советская повседневность времен позднего сталинизма в современной российской историографии	142
--	-----

АНИ А. ФИШЕНКДЖЯН

Помощь сирийских армян пострадавшей от Спитакского землетрясения 1988 г. Армении	166
--	-----

РУБЕН Л. АЗИЗБЕКЯН

Становление и развитие военно-политического сотрудничества между РА и РФ в 1991–2008 гг.	191
---	-----

АНУШ С. АМИРБЕКЯН

Повседневная жизнь добровольцев в начальный период Арцахской войны (по примеру Тога и Сариншена)	221
--	-----

НАРИНЕ А. АРУТЮНЯН

Из истории деятельности Армянской Апостольской церкви в РА	234
--	-----

CONTENT

HAYK SH. MAHTESYAN

The Issues of Administrative and Territorial Divisions of the Transcaucasus in the Discussion of the Zemstvo Sessions (14–15 October, 1917)	3
---	---

ARAM S. SAYIYAN

The Pontic Question and the failed Armenian-Greek Military Cooperation	18
--	----

MARIAM V. HOVSEPYAN

The Reaction of the Statement on United and Independent Armenia on the Pages of the Armenian Press of Constantinople	52
--	----

GURGEN V. VARDANYAN

From the History of the Formation of the Secondary Specialized Education in the First Republic of Armenia (1921–1925)	67
---	----

HAMO K. SUKIASYAN

The Clergy in Soviet Armenia in the 1920s (episodes of everyday life)	83
---	----

STEPAN G. GHARIBJANYAN

The Establishment and Activities of the Tropical Institute of Armenia	108
---	-----

SEDA D. OHANIAN

The Establishment and Decline of the Armenian Havrezq and its Surrounding Villages (1929–1970s)	124
---	-----

GAGIK A. ZHAMHARYAN

The History of Soviet Daily Life of Late Stalinism in Modern	
--	--

Russian Historiography	142
ANI A. FISHENKJIAN	
The Assistance of the Syrian Armenians to the Victims of the Spitak 1988 Earthquake in the Fatherland/Armenia	166
RUBEN L. AZIZBEKYAN	
The Formation and Development of Military-Political Cooperation between the Republic of Armenia and the Russian Federation in 1991–2008	191
ANUSH S. AMIRBEKYAN	
The Everyday Life of Volunteers in the First Days of the War in Artsakh (on the example of villages Togh and Sarinshen) ...	221
NARINE A. HARUTYUNYAN	
From the History of the Activity of the Armenian Apostolic Church in the Republic of Armenia	234

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» տարեգրքին հոդվածներ ներկայացնելու չափորոշիչները.

- Հեղինակի անունը, հայրանունը, ազգանունը, գիտական աստիճանը, կոչումը, աշխատանքի (ուսման) վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն:

- Հոդվածները ներկայացնել մինչև 15 էջ ծավալով, հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերով (10-15 տող): Տառատեսակը հայերենի դեպքում՝ Sylfaen, այլ լեզուների՝ Times New Roman, տեքստի տառաչափը՝ 12, տողատակում՝ 9, միջտողային հեռավորությունը՝ 1.5, լուսանցքները՝ վերևից՝ 2, ներքևից՝ 2.5, ձախից՝ 3, աջից՝ 1:

- Գիտական աստիճան չունեցող հեղինակները պարտադիր պետք է ներկայացնեն հոդվածի մասին երաշխավորական գրություն գիտական ղեկավարից կամ գիտական (գիտակրթական) հաստատության համապատասխան մասնագիտական ստորաբաժանման կողմից:

- Հոդվածները պարտադիր ուղարկվում են գրախոսության, գիտական նորույթ չպարունակող կամ նախկինում հրատարակված հոդվածները չեն տպագրվում:

«Հայոց պատմության հարցեր» տարեգրքի բոլոր
համարները էլեկտրոնային տարբերակով տե՛ս

<http://serials.flib.sci.am/openreader/test/index.html>

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
(A COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES)

ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
(СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

20

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Ադամյանի
Անգլերենով ամփոփումների խմբագրումը՝ Հ. Խուդանյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Տպաքանակը՝ 100 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
<http://www.academhistory.am>